Գ. Ս. ՌԵՆԻ
ՍԱՍԱՑԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ
ՏԱՄԱՐ

Գուրգեն Սեմերճյան

ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՀԱՄԱՐ

"Գիտություն"
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Երևան
1965

Ար 3
Ս 84

«Հայրենիքիս համար» ներկա ժողովածուն ամփոփ գաղափար է տալիս Գ. Սվազլյանի հրապարակախոսական գործունեության մասին։ Ժողովածուում զետեղված են հեղինակի գրական-հրապարակախոսական, երգիծական բնույթի մի շարք անտիպ ու տպագրված հոդվածներ և մի քանի ծաղրանկարներ։

Անցյալում հրապարակված նյութերը ժողովածուում ներկայացված են իր ժամանակին հեղինակի կողմից կատարված որոշ կրճատումներով։ Նյութերը դասավորված են ժամանակագրական կարգով։ Հեղինակը մամուլում հանդես է եկել «Վիշապորդի», «ՀՕԿ-յան», «Խարազան», «Մտրակ», «Երեվանցի» և «Գործազուրկ» կեղծանուններով։

ГАРНИК СВАЗЛЯН

ЗА МОЮ РОДИНУ

(На армянском языке)

Издательство «Айастан»
Ереван 1965

ԳԱՌՆԻԿ ՍՎԱԶԼՅԱՆ
(1904—1948 թթ.)

Եգիպտահայ անվանի հասարակական գործիչ, հրապարակախոս, գրող և ծաղրանկարիչ Գառնիկ Սվազլյանը ծնվել է 1904 թվականին Կեսարիայում, սովորել է Զմյուռնիայի Մեսրոպյան ազգային վարժարանում և ապա՝ տեղի ֆրանսիական գիմնազիայում:

1922 թվականին թուրքական ջարդարարների հալածանքից Սվազլյանների ընտանիքը ևս փրկություն է գտնում Հունաստան փախչելով, ապա գաղթում է Եգիպտոս ու հաստատվում Ալեքսանդրիայում:

Արևմտահայերի նկատմամբ Թուրքիայի կառավարող շրջանների վայրագությունը, տարագիր հայերի տառապանքներն ու թշվառությունը խոր հետքեր են թողնում երիտասարդ Գառնիկ Սվազլյանի հոգու խորքում: Նա գալիս է այն խոր համոզման, որ աշխարհով մեկ ցրված տարագիր հայերի փրկության միակ խարիսխը հայրենիքն է՝ Սովետական Հայաստանը: Ուստի, նա իր ամբողջ հասարակական գործունեությունը նվիրում է վերածնվող հայրենիքի նկատմամբ գաղութահայերի մեջ սեր, հավատ ներշնչելու և նրա վերաշինությանն օգնելու գործին:

Հանդես գալով որպես ՀՕԿ-ի ակտիվ գործիչներից մեկը,

նրա փոխնախագահը, Գ. Սվազլյանը միաժամանակ հրապարակախոսական լայն աշխատանք է ծավալում, կոչ անելով գաղութահայերին՝ բարոյական և նյութական միջոցներով օգնել վերածնվող հայրենիքին:

1935 թվականին ՀՕԿ-ի դեմ դաշնակների սկսած պրովոկացիոն կամպանիայի հետևանքով բանտ են նետվում ՀՕԿ-ի 12 ակտիվ գործիչներ: Ընդհատակ անցած Գ. Սվազլյանի ջանքերով առաջադիմական մամուլում և Ալեքսանդրիայի հայ գաղութում բողոքի լայն շարժում ծավալելու շնորհիվ ազատ են արձակվում հայրենասերները: Գ. Սվազլյանը իր հրապարակախոսական գործունեության սուր ծայրը համարձակորեն ուղղում է դաշնակցության ավգադավ քաղաքականության դեմ: Երևնական թվականներին Սովետական Հայաստանի կառավարությունը կազմակերպեց թշվառության մեջ տառապող մի մեծ խումբ տարագիր հայերի ներգաղթը: Գ. Սվազլյանը, արձագանքելով այդ նվիրական գործին, գրեց «Ներգաղթ» պիեսը, որի մեջ պատկերում է տարագիր հայերի ողբալի վիճակը, նրանց խանդավառ երթը դեպի հայրենիք և մերկացնում դաշնակների դավադրությունը հայրենադարձության դեմ: Դաշնակ կեղծարարները, այդ պիեսը որակելով իբրև «կոմունիստական պրոպագանդա», հասնում են այն բանին, որ պիեսի տպաքանակը բռնագրավվում, իսկ հեղինակը ձերբակալվում ու դատի է տրվում: Դատարանում Գ. Սվազլյանը համարձակորեն դիմակազերծ է անում դաշնակ պրովոկատորներին:

Չնայած իր նյութական ոչ նախանձելի վիճակին, Գ. Սվազլյանը պիեսի բեմադրության հասույթը ամբողջովին հատկացնում է ներգաղթին: «Երբ նյութապես ի վիճակի չեմ ներգաղթին սատարելու,— գրում է նա,— այս գործս կտրամադրեմ անոր ի նպաստ»:

Ավելի քան տասը տարի գաղութահայ թատերական խմբերը պիեսը բեմադրեցին ամենուրեք՝ ստացված հասույթը հատկացնելով հայրենադարձությանը, իսկ պատերազմի ժամանակ՝ Կարմիր բանակի օգնության ֆոնդին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Գ. Սվազլյանը հանդես է գալիս որպես Կարմիր բանակի օգնության ֆոնդի ստեղծման համար սփյուռքում ծավալված հայրենասիրական շարժման կազմակերպիչներից մեկը: Իր բազմաթիվ հոդվածներում նա տարագիր հայերի մեջ հավատ է ներշնչում Կարմիր բանակի հաղթանակի նկատմամբ և կոչ անում՝ ակտիվ կերպով մասնակցել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան օգտին կատարվող հանգանակությանը:

Լինելով ոսկերիչ, Գ. Սվազլյանը, ի պատիվ Կարմիր բանակի, իր արհեստանոցում գաղտնի պատրաստում ու ձրի տարածում է կրծքանշաններ: Դաշնակների մատնությամբ իշխանությունները բռնագրավում ու ոչնչացնում են 300 այդպիսի կրծքանշան, իսկ հեղինակին ձերբակալում՝ որպես «չեկոք մտքեր պղտորող»:

Բայց ո՛չ հալածանքները, ո՛չ ձերբակալությունները և ոչ էլ դաշնակների սպառնալիքները չկասեցրին Գ. Սվազլյանի հայրենասիրական բուռն գործունեությունը: Նրա ջանքերով Ալեքսանդրիայում հիմնվում է հայաստանյան ճակատի «Սևան» կազմակերպությունը, որը նպատակ էր դրել սփյուռքահայ երիտասարդությանը նախապատրաստել առաջիկա հայրենադարձության համար, նրանց ծանոթացնել հայրենիքում սոցիալիստական համակեցության կանոններին, սովետական մարդու բարոյական կերպարի բնորոշ գծերին, որպեսզի հայրենիք վերադառնալով, արժանի լինեն սովետական քաղաքացու բարձր կոչմանը:

Երբ սկսվեց 1946—1947 թվականների վանգվածային հայրենադարձությունը, չնայած առողջական ծանր վիճակին, Գ. Սվազլյանը իր ամբողջ ջանքերը, հրապարակախոսական գործունեությունը նվիրում է հայրենադարձության կազմակերպմանը:

1947 թվականին հայրենադարձների վերջին քարավանների հետ Գ. Սվազլյանը ընտանիքով հայրենիք է վերադառնում և առաջին իսկ օրից շարունակում իր հրապարակախոսական գործունեությունը հայրենիքի և սփյուռքի մամուլում: Դժբախտաբար, պանդուխտի դժվարին, կրկնաքներով լի կյանքը, հալածանքները, կենսապայմանների ամենօրյա մտա-

հոգություններն ու լարված աշխատանքը քայքայել էին Գ. Սվապյանի առողջությունը. նա չկարողացավ իրականացնել հայրենիքին նույնպիսի կրքոտությամբ ծառայելու իր երազանքները:

1948 թվականի մարտին նա կնքեց իր մահկանացուն:

Գառնիկ Սվապյանի կարճատև, բայց բովանդակալից կյանքը հայրենիքին և իր ժողովրդին անհուն նվիրվածության վառ օրինակ է:

Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ



ՀԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՈՂՈՐՄԱՆ ԿՈՊԱՍԵՆՔ[1]

Անցյալ դարերու դաժան վերիվայրումները, վայրագ բռնակալներու կրունկին տակ մեր պապենի քաղաքներն ու գյուղերը ավերակներու վերածեցին և շեն ու բարի արտերը՝ խոպան դաշտերու։ Մեր հայրենիքը բարբարոս խուժաններու որջ և բուներու ապաստան դարձավ։ Եվ մենք մեր արդար իրավունքներուն տեր կանգնելու մաքառումներեն խոշտանգված ու հալածական ինկանք օտար ափերու վրա, հոն ապաստան մուրալու և մեր գոյությունը քաշկռտելու համար։ Եվ որքան երկար տևեց այս մաշեցնող վիճակը, այնքան տաժանելի եղավ մեր կենցաղը խորթ հորիզոններու տակ։

Աշխարհի շատ պետություններ խաբեցին մեզ իրենց նենգ խոստումներով, մեր լեռնացած տառապանքը շահագործելու գերագույն նպատակեն մղված։ Եվ հայը դարձավ օտարին ստրուկը, պատառ մը հացի փոխարեն՝ անոր կամակատարը։

Մեր տեղը ուրիշ որևէ ցեղ, ուրիշ որևէ ժողովուրդ պիտի հալեր մեզի վիճակված այրող դառնություններու կրակին տակ և պիտի անհետանար ընդմիշտ՝ կյանքի թատերաբեմեն։

Բայց մենք մեզ ճնշող բոլոր պայմաններուն կուրծք տվինք արիաբար և բոլոր ցնցող դժբախտության տոկացինք համառորեն։ Որովհետև կհավատայինք։

---

[1] «Արև», Կահիրե, 1932 թ. դեկտ. 16։

Կհավատայինք դարձյալ վերադառնալ օր մը մեր հայրենիքը և հոն ողջունել ծագող նոր արշալույսը։

Եվ այսպես ալ եղավ։

Մեր դարավոր երազը իրականություն է այսօր։

Այժմ ունինք մեր հայրենիքը։

Հոն դարերու շրջանին կատարված ավերները այսօր տասնյակ տարիներու ընթացքին կվերականգնին։ Կյանքը կաճի, դաշտերը կծաղկին, հայ բեղմնավոր քրտինքի տակ հովիտները վերստին կփթթին, ճահիճները կչորնան, լեռները իրենց մեջքերը կծռեն, գետերը իրենց ընթացքը կփոխեն, ապառաժներու կողքին նոր ավաններ կցցվին օրեօր։

Հոն հայ ստեղծագործ հանճարը հրաշքներ կգործե հրսկայական ճիգերով, պատմության մեջ կատարված բոլոր շինարարական աշխատանքները գերազանցող վիթխարի թափով։

Հզոր աշխատանքը որպես մեկ սրտապարար երգ, կհնչե հայ աշխարհի մեկ ծայրեն մյուսը և անոր հպարտ թրթռացումներուն տակ անցյալի բոլոր վերքերը կսպիանան և բոլոր ցավերը կանցնին։

Եվ մենք, տարաշխարհիկ հայերս ի՞նչ կընենք, երբ հոն մեր եղբայրները մեր հայրենիքը կկերտեն։

Ավա՜ղ, մենք դեռ կշարունակենք ապրիլ օտարության մեջ, մեր խանութպանի ճղճիմ հաշիվներով պաշարված, հեռո՜ւ, հայրենի վերաշինության մեծ տոնեն և անմասն հոն արձանագրվող հաղթանակներու խրախճանություններեն։

Ոչինչ ավելի ստորացնող է, քան մեր այս խորթ կեցվածքը։ Երբ մենք մեր շինարար հատկություններով օտար աշխարհներ ենք շենցուցեր և Տեր-Զորին դեղին ավազներն անգամ բուրաստաններու ենք վերածեր, այժմ, որ հայրենիքի մեջ հնչող մուրճի հարվածները մեզ մեր պարտականությանը կհրավիրեն՝ կվարանինք, կհամենանք և վճռականություն ցույց չենք տար։

Ո՞ւր են մեր հավաքական զոհաբերումները հայրենիքի վերաշինության սրբազան գործին համար։

Ո՞ւր է մեր մեջ նվիրումի այն ոգին, որ երբեմն կյանքեր տրամադրեց և երակները բացավ ի սեր հայրենիքի։ Ինչո՞ւ այս թուլությունը։ Ո՞ր օրվան կսպասենք մեր հայրենասիրության ապացույցը տալու և մեր ցեղային ազնիվ առաքինությունները հայրենիքին տրամադրելու համար։

Ե՞րբ պիտի սկսինք գործի։ Ո՞ւր է բարեգործականը իր հետ ունենալով մեր բոլոր միությունները, մեր բոլոր հայրենակցականները։ Ինչ ավելի արգավանդ գործունեություն անոնց համար, քան լրջորեն փափագող զանգվածները շարժման մեջ դնել և հասարակական բոլոր շերտավորումները դեպի հայրենիքի վերականգնումի գործին լարելը։

Մեր ժողովուրդին մեջ տրամադրությունները օրեօր կաճին։ Այսօր Դամասկոսեն ձայն մը մեկ դոլարի «Հայրենի տուրք» կթելադրե։ Վսե՛մ գաղափար։ Վաղը ուրիշ նոր թելադրություններ կրնան հաջորդել ասոր։ Պետք է ընթացք և ուղղություն տալ, ընդհանրացնել այս կարգի նվիրական շարժումները, եթե կուզենք արժանի հարազատները կոչվիլ մեր հայրենիքին։

Պետք է գործի լծվինք բոլորս ալ մեկ գաղափարի շուրջ, որ է հայրենիքի օժանդակության գործը, մեկ մտասևեռում ունենալով՝ հայրենիքի վերականգնումը, և մեկ կարգախոս մեր բոլորին շրթունքներուն ծայրը՝ դեպի հայրենիք։

Առիթը բացառիկ է, մեզ բախտավոր պետք է համարենք, որ կրնանք հայրենիքի վերածնումը ողջունել ու անոր մասնակից ըլլալու գերագույն հաճույքը վայելել։

Օ՜ն ուրեմն, ո՛վ հայրենիքի դարավոր կարոտով այրող զարիբներ, ո՛վ հայրենաբաղձ եղբայրներ, բերե՛ք ձեր բարոյական և նյութական պարտքի բաժինը հայրենիքի վերաշինության նվիրական գործին համար։ Հարուստներ՝ ձեր դրամը, արհեստավորներ՝ ձեր մուրճը, երկրագործներ՝ ձեր մանգաղը, գործավորներ՝ ձեր բազուկները, մտավորականներ՝ ձեր պաշարը, մասնագետներ՝ ձեր գիտությունը, նկարիչներ՝ ձեր վրձինը, գրականագետներ՝ ձեր գրիչը, Մամուլյան՝ քո տաղանդը և փոխ առնենք Պեշիկթաշլյանի երգը «Եղբայր եմք մենք» ու զայն հնչեցնելով մտնենք հայրենիք, հոն է մեր փրկությունը, հոն է ազատ երջանկությունը, ուր մեզ կսպասե ալևոր Մասիսը։

Եվ ալ մի լաք, ո՛վ ծերունիներ, դուք որ մաշված ցուպե-

րով անապատները չափչփեցիք, գացեք հոն՝ խաղաղությունը ձեզ կսպասե։

Եվ դուք, ո՛վ որդեկորույս մայրեր, ո՛վ սգավոր քույրեր, գացեք հոն, ուր ձեր կորսված զավակներուն և եղբայրներուն փոխարեն պիտի գտնեք հայրենիքի խանդավառ երիտասարդությունը, որոնք ձեզ դիմավորելու պիտի գան գրկաբաց, երգելով։

Եվ դուք, ո՛վ օտար ափերու դառնությունները ճաշակած և տոօրյա խորթ աշխատանքներե վաստակաբեկ հայեր, գացե՞ք, գացե՞ք, հայրենիքը կկերտվի։

Գացե՛ք, և ձեր հետ փրկեցեք նաև ձեր զավակները, որոնք այլասերումի թունավոր ժանիքները ամեն օր ավելի կզգան իրենց հոգիներուն խորը։ Գացե՛ք և հաղորդվեցեք հոն հայ լեզվի ու հայ մշակույթի գեղեցկություններուն ու քաղցրություններուն, որոնց դարավոր ծարավը ունիք։

Եվ այն ատեն ձեր ցավատանջ հոգիները պիտի խայտան հիացիկ ու զմայլագին, հայ տաղանդը պանծացնող ու անոր ստեղծագործ հանճարը փառաբանող գեղեցկություններու ճառագայթումեն։

Ալեքսանդրիա, 1932 թ.։

ԱՆՑՅԱԼԵՆ ԴԵՊԻ ԱՊԱԳԱՆ։

Առաջին անգամն էր, որ այս գիծով կճամփորդեի, ուստի մասնավոր հաճույքով մը կդիտեի շուրջս փախչող բնանկարները։

Միապաղաղ ու լերկ բացատներեն հետո, դալարագեղ և զվարթ դաշտերու մեջեն կսուրայինք այժմ։ Մայիսի վերջին օրերն էինք, և ես կես մը ընկողմանած վագոնիս նստարանին վրա, լիաթոք կշնչեի պատուհանես խուժող զեփյուռը, որ կգգվեր այտերս, ավելի ևս շեշտելով ուրախ տրամադրությունս։

Ուրախ էի անոր համար, որ Հավրան կառախումբ մտած պահուս, այդտեղին որբանոցի տեսուչը՝ հին ծանոթ մը, իմանալով իմ դեպի Բեյրութ ուղևորությունս, ինձի վստահած էր ութը որբ պատանիներ, որոնք Հայաստան կմեկնին, որպեսզի Բեյրութ հասնելուս զանոնք Պիրեա մեկնող շոգենավը առաջնորդեմ հոնկե ալ հայրենիք փոխադրելու համար։ Ահա այս երևույթը կխանդավառեր զիս, երբ կխորհեի, թե մեր հայրենիքը կերտող աշխատավորության վրա նոր բազուկներ կերթային ավելնալ։

Այսպես խորհրդածություններուս մեջ թաղված, չէի նըշմարած գնացքին հետզհետե դանդաղիլը։

Հանկարծ ցնցում մը զգացի։ Կառախումբը կանգ առած էր նորահաստատ փոքրիկ կայարանի մը առջև՝ հոն սպասող մի քանի ճամփորդները ընդունելու։

Ոտքի ելա և սկսա դուրսի տարածությունը դիտել, դյութիչ համայնապատկերի մը մեջտեղ կգտնվեինք, ուր բնությունը իր բոլոր բարիքները շռայլած էր։ Վճիտ առվակ մը կհոսեր գիծին երկայնքեն՝ եզերքին խիտ կանանչությունը քերելով, կերթար, կանհետեր հեռուն, բուրումնավետ հովիտին մեջ։ Հափշտակված կդիտեի շրջակա լեռները։ Ավելի վարը, ավելի մոտիկ ցորենի արտերը կտարածվեին զմրուխտագեղ։ Կդիտեի պայծառ երկինքը։ Կլսեի թռչունների ճռվողյունը, որ կխառնվեր վարը խաղացող մանկանց ձայնի հետ։ Քիչ մը հեռուն, ուռենիներու շուքին տակ, քանի մը գեղջուկ հյուղակներ կային իրենց պարզության մեջ շքեղ։ Դարբինի սալը կհնչեր, աշխատանքի կշռույթը բնության ներդաշնակության մեջ։ Եվ այս ամենը անհուն երանությամբ մը կլցներ էությունս։

Շուրջս կնայեի, մեկը կփնտրեի այս չքնաղ վայրին անունը հարցնելու համար, երբ տաք շունչ մը զգացի ծոծրակիս վրա։ Ետիս դարձայ, բարձրահասակ, թուխ դեմքով երիտասարդ մը կանգնած էր արցունքով լճացած աչքերը հեռուն սևեռած։

— Ի՞նչ է այստեղին անունը,— հարցուցի հայերենով։

— Քանլը դերե[1]*,—պատասխանեց խռոված շեշտով մը։*

[1] «Ակե», Կահիրե, 1933 թ., № 4339։

[1] Արյունոտ ձոր (Թուրք)։

Քանը դերե՜... այս եղերական անունը էլեկտրական ցնցումի մը տպավորությունը ըրած էր վրաս։

Արյունի և նախճիրներու մռայլ էջեր կդառնային երևակայության աչքերուս առջևեն։

— Այս լեռներուն ստորոտն է, որ,— կշարունակեր խոսակիցս, թևն այդ ուղղությամբ տարածելով,— հազար երկու հարյուր հայ կտրիճներ անխնայորեն գնդակահարվեցան։ Հոս, այս բացաստաններուն մեջ հեք ծերունիներ և մատաղ կույսեր, այնքա՜ն հեռավոր վայրերեն, դահիճներու մտրակներուն տակ հալածական, հևասպառ եկան և ինկան անոնց սվիններեն շանթահար։ Հոս, այս ժայռին տակն է, որ ինկավ մայրը, որ իր նազելի աղջկան պատիվը պաշտպանելու համար կմաքառեր դահիճներուն հետ, որոնք գետին փռեցին զայն։ Մահը խնայեց անոր իր զավակին ամոթը տեսնելե։ Հոն, ավելի վարը, վիհ մըն է, ուր հազարավոր կիներու և մանուկներու դիակներ կան նետված։ Անոնց կմախքները դեռ կմնան կուտակված։

Եվ պահ մը լուռ մնալե հետո.

— Ես երեխա էի այն ատեն,— ըսավ,— հրաշքով ճողո...։

Չի կրցավ լրացնել խոսքը, սիրտեն դեպի կոկորդը խուժող հուզումը կարգիլեր ավելին ըսել։ Հանկարծ պոռթկաց, արցունքի հեղեղներ սահեցան այտերեն վար, նստարանին վրա ինկավ և սկսավ հեծկլտանոք լալ։

Այս ընդհատ նախադասությունները հալած կապարի պես սահած էին ականջներուս մեջեն։ Հիմա այրող ոսկորի ծուխ մը կարծես կծավալեր էությանս մեջ։ Սահմռկած կնայեի հեռուն։ Ավա՜ղ, այս դրախտը մեռելաստան մըն էր։ Այս գեղատեսիլ համայնապատկերը եղերական կերևար այլևս աչքերուս։

Կիզիչ արևուն տակ, հրաշեկ ավազին վրա, օրերով քալած բոբիկ, քաղցած, կիսամեռ հազարավոր հայ աքսորականներու գերեզմանն էր այս տարածությունը։ Անկե այսքան առատ բուսականություն։

Մայր բնությունը, որ այնքան փութկոտ է մարդկային ավերածությունները դարմանելու մեջ, շուտով ծածկած էր տգեղությունները զարդարած այդ մահաստանը ծաղիկներով գույնզգույն։

Կդիտեի ձորը, որ հիմա հրաբերանի մը կնմաներ, առվակը, որ իր գալարումներուն մեջ օձի մը ցուրտ տպավորությունը կթողուր վրաս և լեռները, որոնք մարտիրոսացած ժողովրդին գերմարդկային տառապանքը դիտող հսկաներու կնմանեին։

Կուզեի խուսափիլ և այլևս չտեսնել այս ամենքը, բայց կարծես ձգողական զորություն մը կգամեր նայվածքս այդ վայրերուն։

Կդիտեի նոր բացված շուշան մը, որ իր շուքին տակ նընջող կույսին հոգին կցոլացներ։ Ավելի անդին վայրի տատասկ մը, որ հոն պառկող կտրիճի զայրույթը կխորհրդանշեր։

Աչքերս կմթագնեին, արյունս սիրտես ուղեղս կխուժեր, կուզեի լալ և չէի կրնար, երբ կառաշարը սուլեց։ Կամացկամաց կհեռանայինք այդ եղերական, այլ սուրբ վայրեն, որ հետզհետե կնահանջեր, կսրբվեր, մինչև աներևույթ եղավ։

Մտածկոտ ինկա նստարանին վրա։ Դեմս էր այն երիտասարդը, որ թրջված թաշկինակը ափին մեջ կոլորեր։ Վարը քովիկս, որբուկներս ծրարի մը շուրջը բոլորված կճաշեին։ Քանի մը արմավ, կտոր մը պանիր և խոշոր հաց մը, զոր շարունակ կկտրտեին իրենց ձեռքերովը։ Կուտեին և կկատակեին միանգամայն։ Կդիտեի անոնց այս զվարթ ընթրիքը և իրարու հանդեպ ցույց տված խանդակաթ վերաբերմունքը, որ ժողովրդիս ասպնջական ոգին կցոլացներ։ Կդիտեի մեկը խոիվ մազերով, որոնց տակ պայծառ իմացականություն մը կվառեր, մյուսը, որ իր թավ հոնքերուն տակ զույգ մը ածուխ ուներ, որոնք ստվերի մեջ կկայծկլտային և որոնցմե ուշիմություն կկաթկթեր, ուրիշ մը հաղթանդամ պատանի մը, որ ըմբիշ մը հիշեցնել կուտար, ուրիշ մը իր վարվուն շարժուձևերով, կանացի կազմին տակ քաջ սիրտ մը կմատներ և այս բոլոր հատկանշական գեղեցկությունները մրրկած էությունս կխաղաղեցնեին, երբ կխորհեի, թե ասոնք մեր նահատակներուն ավանդներն էին, հաղթական ապագայի մը գրավականները, որոնք երազներու և ար-

յունում զոհաբերումներու մեջեն դեպի բեղմնավոր իրականությունը կդիմեին, ուր անոնք իրենց որբությունը մոռցած, հայրենիքին քաղաքացիները պիտի դառնային նոր նվաճումներու նկրտող, նոր դափնիներ խլելու համար։

Քանի կառաշարը կարագացներ իր ընթացքը, այնքան կհրճվեր հոգիս և կուրծքս նոր կյանքի մը կենսապարար շունչովը կուռեր։

Արյունի, նախճիրներու, զարհուրանքներու և բռնություններու անցյալեն դեպի մեծ ապագան, դեպի մեծ արշալույսը, դեպի վերածնվող հայրենիքը կսուրայինք, ժամը հիսուն կիլոմետր արագությամբ, անոր վիթխարի վերելքը կերտող աշխատանքի բագինին սպասարկող նոր բուրմեր՝ կամքի և աշխատության նոր ընծաներ մատուցելու համար։

Ալեքսանդրիա, 1933 թ. ապրիլ։

ՁԵԶԻ՝, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՑԻՆԵՐ ՈՏՔԻ՝, ԱՌՆԱԿԱՆ ԿԵՑՎԱԾՔՈՎ[1]

Ընտրություններու թվականը մոտալուտ է, և Ալեքսանդրիայի հայությունը քիչ օրեն պիտի հրավիրվի քվեատուփին առջև իր ազատ քաղաքացիի նվիրական իրավունքը արժեցնելու, այսինքն՝ իր ձայնը նետելու համար նժարին մեկ կամ մյուս կողմը, իր վարչական մեքենան լավ կամ գեշ իշխանությամբ մը օժտելով։

Ասիկա թեև երևույթեն դատելով պարզ գործողություն մըն է, սակայն ճակատագրական նշանակություն ունի ձեզի համար, ալեքսանդրիացինե՛ր։

Դո՛ւք, որ ուրիշ գաղութներու նման և անոնցմե բա՛ն մըն ալ ավելի տեսաք և ճաշակեցիք, դաշնակ ոհմակին իշխանության գլուխ գտնվելու միջոցին գործած բարոյական և նյութական ավերներեն, դո՛ւք, որ դաշնակ բռնապետության ներքո սպառիչ վերիվայրումներու մեջ տրորվեցաք, դո՛ւք, որ դաշնակ չեթեներուն՝ օտարներու առջև գործած գիշերային ոճրագործ հարձակումներուն ամոթը ճաշակեցիք և որոնց անխիղճ մատնիչներու զրպարտություններուն հետևանքով ձեր տուները արցունքի հովիտներու վերածվեցան ու ձեր հայրենասեր զավակներուն ձեռնակապերով բանտեն դատարան և դատարանեն բանտ քաշկռտվելուն ականատեսները եղաք, մոտ օրեն քվեարկության առջև պիտի հրավիրվիք՝ ըսենք, ձեր խղճին ու մտքին հասունությանը չափանիշը տալու, ձեր մորթին վրա գործված ոճիրներեն ու շահատակություններեն ձեր բաղած փորձառության ապացույցը տալու և ձեր քվեներով դատապարտության վճիռը արձակելու—բարոյական այս շանթահարիչ ապտակը իջեցնելու համար քու ծոցիդ մեջ ծվարած, քու էությունդ կրծող, քո սնունդը շահագործող, քեզմե սնանվող և քեզի դեմ, քու հայրենիքիդ դեմ հայհոյող ու դավաճանող դաշնակներու երեսին՝ ղանոնք վերջնականապես, վճռականապես արտաքսելու համար քու մեջեդ և ազգային մեքենադ պարկեշտ ու հայրենասեր ձեռքերու հանձնելու համար։ Ահա թե ինչու պիտի կանգնիս քվեատուփին առջև։

Մեկ նպատակ պեսք է ունենաք բոլորդ ալ՝ դաշնակ չարագործները դուրս վտարել ազգային բոլոր գործերեն։ Ուրեմն մեկ կարգախոս բոլորիդ համար՝ ոչ մեկ քվե դաշնակցության։

Ասոր մեջն է քու փրկագործումդ, քու կյանքիդ անդորրությունն ու ապահովությունը և ազգային գործերուդ կանոնավորման միակ միջոցը։ Ասկե զա՛տ, ասկե դո՛ւրս, ուրիշ միջոց գոյություն չունի։

Եվ եթե կան տակավին մարդիկ, որոնք սխալ հասկցված համերաշխության մը մասին կճառեն, այդպիսիները դաշնակցությունը իր բոլոր ետին միտքերուն և ազգաքանդ գործունեությանը մեջ դեռ լավ մը ճանչցած չըլլալնին կապացուցանեն և հետևաբար արդահատանքի միայն արժանի միամիտներ են։

Արդարև, ի՞նչ հիմերու վրա կարելի է համերաշխել մար-

[1] Այս թռուցիկը լույս է տեսել Ալեքսանդրիայում 1935 թ. սեպտեմբեր 24-ին։

[1] Հրոսակներ։

դոց հետ, որոնք ո՛չ խիղճ ունին, ո՛չ բարոյական ունին, և ոչ ալ հայրենիք կճանչնան։ Որոնք երբ կխոստանան՝ կխաբեն, երբ կերդվին՝ կստեն, երբ ճշմարտության մասին կխոսին՝ կկեղծեն, երբ ուղղամտության մասին կխոսին՝ կխարդախեն, երբ խղճի մասին կխոսին՝ արդեն ոճիր մը կորոճան, երբ դպրոցի բարձրացման մասին կխոսին՝ քանի մը դատարակապորտ գործիչներ հոն տեղավորելու համար է, երբ եկեղեցիին բարեզարդության մասին կճառեն՝ անոր եկամուտները թալանելու համար է, երբ հոն աղոթելու կը-մտնեն՝ գրպաննին մսագործի դանակ մը պահած են, երբ հոս եղբայրասիրության մասին կբարբառին՝ անդին եղբայ-րասպանություն մը կգործեն, երբ հայրենասիրության մա-սին կերդվին՝ հայրենիքը Թուրքիային կծախեն, երբ աղգա-յին շահերու մասին կվիճաբանին՝ անդին իրենց շեֆերը գաղթաշխարհի մեջ արյուն կհոսեցնեն, երբ ամբողջ հայու-թյունը Հայաստանեն հասնող առաջադիմություններուն սփո-փարար լուրերեն կխայտա՝ իրենք, անդին, փողոցներու ան-կյունը «Մեր հայրենիք թշվառ անտեր» կոռնան, երբ ներ-գաղթի մասին կպնդեն՝ Հայաստանը կսեցնեն և ներգաղթի կամավոր ՀՕԿ-ի անդամները հրեշային զրպարտություններ-ով դատարան կքաշեն, նկուղները նետել կուտան։

Ահա՛, ապազգայնացած դաշնակներու իրական, իսկա-կան դիմագիծը, ամբողջ հոգերանությունը։ Ո՞վ, մետա-սաներորդ ժամու համերաշխության մունետիկներ, բարի, այլ միամիտ բարեկամներ։ Դո՛ւք, գիտակցաբար կամ անգի-տակցաբար, դաշնակցություն կոչված այս ապականությունը կուզեք վերստին խառնել մեր համայնքի կյանքին մեջ, երբ ան վճռած է արմատախիլ ընել և դուրս նետել զայն փշա-լից տատասկի մը նման կամ մաքրել թարախոտած վերքի մը պես, որպեսզի մարմնին մնացյալ մասը ամոքվի, հան-դարտի, բուժվի։

Համերաշխություն չըլլար ապգադավներու հետ։

Համերաշխություն չըլլար հայրենադավներու հետ։

Համերաշխություն չկա՛ սրբապիղծներու հետ։

Համերաշխություն չի՛ կրնար ըլլալ տիրասպաններու և եղբայրասպաններու հետ։ Ահիկա վճռական և անդառնալի

պետք է ըլլա և անոնք, որ այդ տեսակ համերաշխության մը մասին կխոսին՝ պետք է միանգամընդմիշտ լավ ըմբռնեն սա պարզ ճշմարտությունը, որ եթե փորձվածը կրկին փոր-ձելը հիմարություն է, 45 տարիներե ի վեր հարյուր անգամ փորձված դաշնակցությունը կրկին փորձելը ոճիր է։

Նայեցեք անգամ մը սա դաշնակ կոչված կուսակցության՝ մեկ ձեռքին մեջ մսագործի դանակը ամուր սեղմած, մյուս ձեռքն անամոթաբար, անպատկառորեն քեզի կերկարե, ժո-ղովո՛ւրդ, քվեդ մուրալու համար, երբ այդ ձեռքին հինգ մատներեն դեռ գետին կկաթի իր հայրենակիցներու արդար և կարմիր արյունը։

Ասիկա չի՞ սահմռկեցներ ձեզի, ձեռնպահնե՛ր, դաշ-նակցության այս անլուր հանդգնությունը չի՞ զայրացներ ձեզի, ձեռնպահնե՛ր, և պժգանքը չի՞ խուժեր, չե՞ռար ձեր երակներուն մեջ, չի՞ ցնցեր, չի՞ բռնկեցներ ձեր էությունը, որ տակավին կհամենաք ձեր քվեներուն տեր կանգնելու, զանոնք արժեցնելու, մյուս բոլոր քույր գաղութներու պես, ջախջախիչ պարտության և խայտառակ փախուստի մատնե-լու համար դաշնակցությունը։

Ձեզի, ձեռնպահնե՛ր, սուտ քուն ձևանալու չէ, ո՛չ ալ անտարբերության պատանին մեջ կծկվելու։

Դուք չե՛ք կրնար քնացած ձևանալ, երբ ուրիշներ արթուն կաշխատին ձեր վնասին համար, ու չե՛ք կրնար չըլլալ ա-նոնց հետ, որոնք ձեզի համար կաշխատին։

Դուք չե՛ք կրնար անտարբեր ձևանալ, երբ դաշնակցու-թյունը կուզե ձեր զգացումները ոտնակոխ ընել և ձեր իրա-վունքները բռնաբարել, ատիկա ձեր գոյության դեմ դավա-ճանել է, ատիկա կամավոր անձնասպանություն է։

Ոտքի՛, ուրեմն, երբ բոլոր բարի տրամադրություններուն զորակոչը հայտարարված է։

Ոտքի՛ ձեռնպահներ, ոտքի՛ անտարբերներ, ոտքի՛ հե-տամնացներ, քնացողներ։ Ոտքի՛ մեռյալներ, ինչպես կպո-ռար Մամիկոնյան հրամանատար մը վճռական հաղթանակի պահուն, և առանց օր մը, ժամ մը, վայրկյան մը կորցնելու, տեր կանգնեցեք ձեր քվեներուն, վերջին զղջումը օգուտ չու-նի։ Խորհեցե՛ք, որ ձեր արժանապատվությունն է խնդրո

առարկա, ձեր ճակատագիրն է, որ պիտի վճռվի սեպտեմբեր 29-ին։ Միացուցեք ձեր քվեները մյուսներուն, դաշնակ մաքրագործումի սրբազան աշխատանքին փրկարար արդյունքը դուք ալ միասին ճաշակելու համար։ Եվ քաջ գիտցեք, որ աշխարհի չորս ծայրերեն բոլոր հայրենասեր հայերը ձեզի կդիտեն, ձեր հաղթանակին կսպասեն։

Եվ հաղթանակը ձերը պիտի ըլլա անպայման։

Եվ այդ հաղթանակը հաղթանակ պիտի ըլլա նաև բովանդակ ողջամիտ, ժողովրդասեր և հայրենասեր հայության։ Ոտքի՛։

Ալեքսանդրիա, 1935 թ.։

ՄԵՆՔ, ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐՍ[1]

Հայրենակիցնե՛ր,

Ձեզմե յուրաքանչյուրին ծանոթ է «ՀՕԿ» հայրենասիրական կազմակերպության հանդեպ հայրենադավ դաշնակցության գործած ահավոր մատնությունը և այդ պատճառով մեր շղթայակապ բանտերը նետվելու պարագան։

Դուք բոլորդ ալ գիտեք, թե վատաբարո «Հուսաբեր»-ի վատահամբավ արտոնատերը՝ Օննիկ Մաճառյանը, իր ցինիկ լուսաղբոր Վահան Նավասարդյանի հետ օրերով նյութված ու խնամքով պատրաստված ժուռնալներու և մատնության դոսիեներու[2] շնորհիվ ամենազազրելի կասկածներու բեռան տակ, մեզ խլեցին մեր գործերեն, մեր տուներեն ու մեր զավակներեն ու մենք ամենախիստ հսկողության տակ, ձեռնակապերով կապկպված նետվեցանք Հատրայի[3] բանտերը ի փա՞ռս վայրագ ու դավադիր դաշնակցության։

Հայրենակիցնե՛ր, մենք հայրենիքի օգնության աշխատավորներ էինք և այս «մեղքը» անմարսելի, անհանդուրժելի էր հայրենավաճառ ու հայրենուրաց դաշնակցության։

[1] *Այս թռուցիկը լույս է տեսել Ալեքսանդրիայում 1935 թ. սեպտ. 28-ին։*
[2] *Գործ, մեղադրական փաստաթղթի իմաստով։*
[3] *Ալեքսանդրիայի մի ետ ընկած թաղամաս։*

Ու մենք, մեր բանտի խոնավ պատերուն մեջ արգելափակված, դեկտեմբերի ցուրտերուն այդ սառեցնող մթնոլորտին մեջ կսրսփայինք ու պաղ և թաց սալաքարերու վրա կպառկեինք։ Մեր կիները, չհասկնալով, թե ճակատագիրը ի՞նչ կուզեր մեզմե, մեր բանտերուն առջև շարված աղի արցունքներ կթափեին ու մենք մեր նկուղներուն երկաթապատ լուսանցքներեն մեր զավակներուն սրտապատառ հեծկլտանքը կդիտեինք ու անոնց «հայրի՛կ, հայրի՛կ» հառաչանքները կլսեինք։ Ու վայրագ դաշնակցությունը մեզ հարվածելով՝ կհարվածեր նաև մեր կիներն ու զավակները, որոնք իրենց նեցուկներեն զրկված՝ չքավորության մեջ ինկան, անոթության դառնությունները ճաշակեցին։ Ու նոր տարվա գիշերն անգամ խավարածին դաշնակցության ձեռքով խավարեցավ մեր և մեր սիրելիներուն համար։ Եվ դուք, ո՞վ մեր սրտակիցներ, ո՞վ մեր սիրելի հայրենակիցներ, ձեր կաղանդի պտղասեղանը սուգ ու շիվանով վայելեցիք։ Մենք չենք կրնար մոռնալ, թե ձեր ծնունդի սեղաններուն շուրջը աղի արցունքներ թափեցիք մեզի համար։

Ու մենք, տեսնելով դաշնակցության մեր շուրջ թանձրացուցած զրպարտությունները և լարած սադրանքները, երբ լսեցինք դաշնակցության ցուցմունքներու վրա 73 պարկեշտ ու պատվավոր հղբայրներու տուներուն խուզարկվիլը և հայ անունին օտարներու առջև ցեխերու մեջ նետվիլը, երբ տեսանք դաշնակ մեծ ու փոքր խաֆիեներու[1] մատնության դոսիեները նոր զրպարտություններով ճոխացնելու համար կատարած եռանդագին դիմումները և դատախազության սեմերը մաշեցնելը, ու իրենց տարած «հաղթանակին» համար գիրար շնորհավորելով և հուդայական հրճվանքով իրարու ականջն ի վեր փսփսալները, խնդալով իրարու պատմելը մեր բանտարկվածի դժբախտ կացությունը՝ պահ մը փորձվեցանք մտածել, թե մենք մինակ մնացած էինք և լքված մեր ճակատագրեն։

Բայց ո՛չ։

[1] *Գաղտնի լրտես։*

Փա՜ռք և պատիվ, եգիպտահայ եղբայրասեր և հայրենասեր աշխատավորության։

Դաշնակ խաֆիեներեն դուրս, դաշնակ հայրենուրաց մատնիչներեն դուրս կար ժողովուրդը, հայրենասեր ու ազգասեր զանգվածը, որ մեզ պաշարեր էր, շրջապատեր էր իր աղապատանքովը, իր հուզիչ ներկայությամբը և իր սրտաբուխ գուրգուրանքովը։

Երբ մենք բանտերու մեջ արգելափակված՝ չէինք հասկնար, թե օրենքը ի՞նչ կուզեր մեզմե՝ անդին հայության խիղճը խլրտեր էր ու արդար ղայրույթի ընդվզումը կալեկոծեր Եգիպտահայ գաղութը, ամբո՛ղջ գաղթաշխարհը։

Ու սենք սփոփանքի զովարար ու խանդավառ օրեր ապրեցանք մեր բանտերուն մեջ, ձեր ուխտավորի լեգեոնները դիտելով մեր բանտի դուռներուն առջև։

Ու ձեր մեջեն, ի պատիվ ձեզի կըսենք, դուրս եկան անձնվեր ու դաշնակ խաֆիեներու զրպարտությունները չքացնելու վճռականությամբ, պողպատյա կամքով հայեր, հայրենասերներ, որ մեր դատը յուրացուցին, սեփականացուցին։

Ու մինչ, իրենց մատնություններուն և զրպարտություններուն փլուզումը նշմարող դաշնակ ոճրագործները լուսաբանվող արդարությունը անգամ մըն ալ մոլորեցնելու համար Ալեքսանդրիա կղրկեին ազգադավ և հայրենուրաց Օննիկ Մաճառյանը մատնության նոր դոսիեով մը բեռնավորված, որ դատախազության առջև և մե՛ր իսկ ներկայությամբ, Համիդյան խաֆիեները կարմրցնող սուտերով մեզ և մեզ հետ ամբողջ հայությունը կզրպարտեր, այդ ոռնացող դավաճանության օգնության կհասներ «Հուսաբեր»-ի հայրենավաճառ խմբագիրը՝ Վահան Նավասարդյան, իր թերթին տղմաթաթավ էջերեն առօրյա ժուռնալներ հրամցնելով իշխանությանց, ու «Գաղթաշխարհի մեջ ՀՕԿ-երը դարձան բոլշևիզմի սերմնացանները՝ իրենց շուրջը համախմբելով մեր ժողովրդի ամենեն աղտոտ, ամենեն անպատիվ, ամենեն կասկածելի տարրերը» կգրեր «Հուսաբեր»-ի մեջ իր հունվարի 14-ի 1935 խմբագրականով։

Այն ատեն, ուրի՛շ հայ մը, ուրի՛շ հսկա մը, որ պարծանք

կբերե հայության, իր հեղինակավոր ձայնը բարձրացուց ու մամուլի էջերեն իր մագիստրական հոդվածներովը և խմբագրականներովը չքացուց մեզ պաշարող բոլո՛ր դավերը, բոլո՛ր սադրանքները և ոչ միայն մեզ փրկեց՝ այլև բովանդակ գաղութահայության պատիվը, Ձե՛ր պատիվը խլեց դաշնակցության ճիրաններեն։

Հայրենակիցնե՛ր. մենք չենք մոռցած մեզ ղրպարտող, մեզ բանտերը նետել տվող, մեր անունները արատավորող, ամբողջ գաղութահայության պատիվը սևացնող, պղծող դաշնակցության մեզ հասցուցած նյութական և բարոյական վնասները, և արդեն իսկ դատական ճամփով սկսած ենք անոր օրինավոր հետապնդումին։

Հայրենակիցնե՛ր, այդ ճգնաժամային օրերուն էր, որ մեզ օգնության ձեռքեր կարկառող, հազարներով բանտերու առջև գիշերող ու մեր դատը հետապնդող, մեր ազատության համար աղոթող, լացող, բարի, ազնիվ ու հայրենասեր ժողովուրդը մեզմե խզելու, մեզմե հեռացնելու և մեզ մեր ահավոր ճակատագրին հետ առանձին, լքված, անպաշտպան, անօգնական տեսնելու և մեզ կառավարության աչքին ավելի ևս կասկածելի ցույց տալու հրճվանքով՝ Կահիրեի մատնության լաթը՝ «Հուսաբեր»-ը ամենուր կոռնար։

Ու սարսափահար, տեսնելով, որ մեզ հանդեպ իրենց կատարած հրեշային զրպարտությունները ոչ միայն վիժած էին՝ այլ ընդվզեցնելով հանրային խղճմտանքը շարք մը անձնվեր հայրենակիցներ դատական ճամփով մեր ազատագրումին կհետամտեին ու համայն օտար մամուլը արդարություն կաղաղակեր՝ «Հուսաբեր»-ի անխիղճ և վայրագ խմբագիրը՝ Վահան Նավասարդյանը, վախնալով, որ միգուցե մենք ազատ կարձակվինք և ինք չի հասնիր իր եղբայրասպան ու ազգակործան նպատակին, վատության և շնականության բոլոր մրցանիշները կոտրած ըլլալու համար կդրեր. «Ու չես գիտեր, թե խումբ մը սրիկաներ՝ անպատիվ ու անազնիվ, ի՛նչ կպաշտպանեն. «ՀՕԿ»-ե՞ր, թե՞ բանտ նետված քանի մը թշվառական ճոկճիներ»։

Ո՛չ, հայրենակիցներ, վասակները և վեստ սարգիսները երբեք չհասան, չճանչցան մատնության և դավաճանության

այս խուլ անդունդները, ուր խրած է, ուր գլխովին մխրճված է հայակեր և հայրենուրաց դաշնակցությունը։

Եվ այս ոճրագործներն են, այս եղբայրադավ դաշնակցությունն է ահա, որ այսօր կանգնած է քու դեմդ, հա՛յ ժողովուրդ, և լորձնոտած շրթունքներով ու մեղրածորան լեզվով քեզմե քվե կմուրա, քու քվեդ կջանա կորզել, վաղը քու գլխուդ Դամոկլյան սուրի նման սպառնալիք, աղետ դառնալու համար։ Քու քվեներովդ կուզե, որ իշխանությունդ իրեն հանձնես, որպեսզի վաղը քու մայրդ լացնե, քու օջախդ մարե, քու զավակներդ շղթայակապ բանտերը լեցնե և դուն, հա՛յ ժողովուրդ, ափ ի բերան քու հոգեհատորներուդ վտարումին կարավանները դիտես ու մազերդ փետտես, լաս ու զղջաս։

Բայց ի՞նչ կարժե վերջին զղջումը։ Եվ քանի ձեր քվեներուն տերն եք տակավին, նայեցեք անգամ մը դաշնակ ցանկին մեջ գտնվող մարդոց, որոնց մեջ մատնիչներ կան, որոնք դեռ երեկ մեզ մատնելե կվերադառնային կառավարատունեն և անոնց մատներուն վրա իրենց պատրաստած մատնության ժուռնալներուն մելանին հետքը կա տակավին։ Նայեցե՛ք անգամ մը, եթե կրնաք առանց խորշելու, անոնց երեսին, և դուք դյուրավ պիտի նշմարեք հուդայական հրեշային այն ժպիտը, որ ունեցան անոնք, երբ մեր ձեռնակապերով քաշկռտվիլը կդիտեին։

Անոնց ցանկին գագաթը բազմած անխիղճ Ագտարյանը չէ՞ր, որ մեր ճգնաժամային օրերուն, իր տրամադրության տակ գտնվող ամեն օժանդակություն զլացավ մեզի, վատաբար լքեց մեզ ու իր ծունկերուն փաթթվող, իրմե օգնություն հայցող մեր կիները, մեր զավակները, մեր եղբայրները վտարեց ազգին տունեն. «Մենք այդ տեսակ խնդիրներեն փարսախներով հեռու ենք» պոռալով անոնց երեսին։

Ուրեմն, այդ Ագտարյա՞նն է իրենց գլխավոր մարդը, որ այդ ցանկին գագաթը կզարդարե։ Դատեցե՛ք ուրեմն, թե ի՞նչ կարժեն մնացյալները իբրև խիղճ, իբրև բարոյական։ Ու ի՞նչ իրավունքով այս կարգի մարդիկ իբր ընտրելի, իբր երեսփոխան, ազգային շահերուն պաշտպան կներկայանան հանրության։ Եվ ի՞նչ յրբությամբ այս մարդիկը այսքան թեթևությամբ կխաղան այս ժողովուրդի խղճին, արժանապատվությանը և համբերությանը հետ, երբ այս ժողովուրդը տեսած, ճանչցած, հասկցած է իր թշնամիներն ու բարեկամները, երբ այս ժողովուրդը վճռած է դանազանել կայենները իր հարազատ եղբայրներեն։

Հայրենակիցնե՛ր, բարի, ազգասեր և հայրենասեր հայեր, զզվանքով ու նողկանքով հեռացեք ձեզ համոզել, ձեզ խաբել ջանացող դաշնակ տգրուկներեն և ուխտեցեք ոչ մեկ քվե տալ ձեր պատիվը արատավորող և ձեր կյանքին սպառնացող դաշնակ Մաֆիային։ Խորհեցեք, որ դաշնակցության տրված յուրաքանչյուր քվե մեյ մեկ կաթիլ թույն է, որ ձեր կյանքը պիտի թունավորե, մեյ մեկ լուցկի է, որ ձեր տունը պիտի բռնկցնե։

Զգույշ և արթուն կեցե՛ք ուրեմն և զգուշացուցե՛ք նաև ուրիշները։ Բացատրեցեք անոնց, թե հակառակ դաշնակ խաֆիեներու պնդումին ու հետապնդումին ու խոստացած կաշառքներուն, ամեն հայ ազատ է իր խղճին համաձայն քվեարկելու, քանի որ քվեատուփին դեռ չմոտեցած, հոն առանձին է իր խղճին և իր քվեին հետ և բացարձակապես ազատ է իր հավնած ցանկին համար քվեարկելու։

Եվ որպեսզի հաղթանակը ջախջախիչ ըլլա, բոլորդ միասին կենտրոնացուցեք ձեր քվեները այն պատկառելի ցանկին վրա, ուր ճանչված, հարգված ազգասեր և հայրենասեր հայերն են։

Ահա՛, հայրենակիցներ, այդ ցանկին պետք է քվեարկեք ամենքդ ալ։

Այդ ցանկին պիտի քվեարկենք նաև մենք, «ՀՕԿ»-ի բոլոր անդամներս ու այդ ցանկին պիտի քվեարկեն մեր բոլոր համակիրները, բարեկամները և ամբողջ ազգասեր ու հայրենասեր ժողովուրդը։

Անկցի՛ն դավաճանները, անկցի՛ն մատնիչներն ու հայրենադավները։

Կեցցե՛ն մեր ընտրյալները։

Կեցցե՛ն մեզի հետ քվեարկող հայրենասեր հայ աշխատավորները։

Աղեքսանդրիա, 28 սեպտեմբերի 1935 թ.։

ԲԱՑ ՆԱՄԱԿ «ՀՈՒՍԱԲԵՐ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

«Վերաշինվող Հայաստանը» ֆիլմի ներկայացման առթիվ ձեր «Հուսաբեր»-ի ապրիլի 11-ի 1937 թվի մեջ մի ոմն «Ս.», այսինքն՝ «ստահակ», գրություն մը ստորագրած է, որուն մեջ մեր պանծալի խորհրդային հայրենիքի և ՀՕԿ-երի հասցեին խեղաթյուրումը, սուտը և կատաղությունը իրար կհրմշտկեն՝ ցույց տալով, թե այդ ֆիլմին ցուցադրությունը պետք եղածից ավելի դիմակազերծ ըրած է ձեզ հանրության առջև, ինչ որ մեր նպատակն էր տարիներով շարունակ, մեր հայրենիքի հրաշալի վերելքի և նրա հերոս աշխատավորության հասցեին ձեր ըրած ցեխարձակումների մեջ հանկարծակիի բերելով ձեր ամբողջ կամուրիլլան...[1]։

Ձեր գրած լպիրշ նկարագրականներեն հայտնի կերևի, թե ոչ միայն հաճույք չեք առած այդ ֆիլմեն, այլ զզջացած ալ եք ներկա գտնվելնուդ համար...։

Իրավունք ունիք։ Այդ ներկայացումը մենք տվինք անկեղծ հայրենասերներուն համար և ոչ թե ձեզի պես հայրենադավ և այլասերված հացկատակներուն համար։ Եվ եթե կափսոսաք ձեր 8 ղուրուշին, որ վճարեցիք, մենք ևս կափսոսանք, որ քանի՞-քանի՞ անկեղծ հայրենասերներ աղապատանքով աթոռ մը խնդրեցին մեզմեն և մեր հարկադրական մերժումին առջև արցունքոտ աչքերով ձեռնունայն տուն վերադարձան. մինչ ձեզի պես անարժան մը աթոռ մը գրաված էր սրահին մեջ...։ Կրսեք, թե տեսնելու արժանի բան չկար։

Խե՜ղճ, միամիտ մանուկներ...։ Ի՞նչ կուզեիք տեսնել. Կարսի ձեր խայտառակ փախո՞ւստը և կամ, միգուցե, եկած էիք տեսնելու, թե ձեր քանդածները ինչպես կվերաշինվի՞ն։

Այդ ֆիլմին տևողության ցուցադրվող հոյակապ շենքերուն, հսկայական ֆաբրիկներուն, դպրոցներուն, համալսարաններուն, թատրոններուն, մանկամսուրներուն, ջրանցքներուն, էլեկտրակայաններուն, այգիներուն և ծառաստաններուն առջև ժողովուրդը հուզումեն կուլար և ծափերը առաստաղը կթնդացնեին, իսկ դուք «Բան չիկար, բան չտեսանք»,—կրսեք և միայն հավերու, խոզերու, ոչխարներու և կովերու խոսքը կընեք։ Ճաշակի խնդիր է։ Իզուր չէ, որ ըսած են. «Նմանն ղնմանս սիրե»...։

Եվ քանի որ տակավին կհամառիք ձեր հայրենադավ նպատակներուն մեջ և հայրենի վերաշինության հրաշալի վերածնունդը ոչինչով կխոսի ձեր սրտին՝ դուք ոչ միայն այդ հայրենիքի մասին գրելու կամ խոսելու, այլ Հայաստանի ֆիլմը անգամ տեսնալու արժանի չեք։

Ալեքսանդրիա, 1937 թ. ապրիլ։

[1] *Անձնական շահերի համար պետական գործերի վրա ազդող պալատական խմբակ։*

ՇԻԹ ՄԸ ԱՐՅՈՒՆՔ։

(Դոկտոր Տ. Էնֆիեճյանի ճիշատակին)

Ուրեմն այսպե՞ս... Դոկտոր Էնֆիեճյան մեռա՞ծ...

Ուրեմն ոչ ևս է ՀՕԿ-ի երբեմնի կորովի նախագահը, Հայաստանի գաղափարին այս վետերան զինվորը...

Իր մահվան լուրը իմանալուս խայթվածի մը տպավորությունը ունեցա։ Մարդ մը ևս կանհետեր գաղութահայ իրականության արդեն իսկ ամայացած հորիզոնեն, Մա՛րդ մը, որոնցմե լապտերով կփնտրենք այսօր, ինչպես կըներ Դիոգինես և հազի՞վ թե կարողանանք գտնել։ Այդ հազվագյուտներեն էր ողբացյալ դոկտոր Էնֆիեճյանը։ Զոհողության, նվիրումի, մանավանդ հավատքի տեր մարդն էր ան։ Այո՛, գրանիտե հավատք մը ուներ իր սրտին խորը մեր ներկա բաբախուն իրականության—աճող, կառուցվող և սլացող մեր պանծալի հայրենիքին հանդեպ։ Եվ այս հավատքը ստացական չէր իր մեջ, այլ երկար մաքառումներու, դառն հուսա-

[1] *«Վերածնունդ», Աթենք, 1939 թ. մարտ 25։*

խաբութիւններու, սպառիչ պայքարներու և կուսակցական ամուլ վատնումներու դնով սուղ վճարված փորձառության արդյունք։

Հայ իրականության բոլոր բովերեն անցնելե, բոլոր դառնությունները ճաշակելե հետո սա եզրակացության հասած էր. «Հայուն համար Հայաստանեն դուրս չի՛ք փրկություն»։ Ասիկա կկրկներ շարունակ, ասիկա կքարոզեր շարունակ և վստահ եմ, որ ասիկա եղած է դարձյալ իր վերջին խոսքը

Իբրև բժիշկ, դարմանումի մարդ, իրեն դիմող և կյանքի դժբախտությանց և տառապանքներու մասին դարման աղերսող բոլոր շվարածներուն հայուն արշալույսը ցույց կուտար և հոն կսեւեռեցներ անոնց աչքերը։ Այս մասին այնքան տրամաբանական, այնքան համոզիչ էին իր խոսքերը և այնքան սրտառուչ, որ ամենեն բիրտ ընդդիմախոսն անգամ կհարկադրվեր ընդունիլ այս ճշմարտությունը։

Տակավին աչքիս առջևն է իր հաղթանդամ ծերունիի քայլվածքը, երբ ժողովի որոշյալ ժամուն, միշտ ճշտապահ. դանդաղ, բայց հաստատ քայլերով ՀՕԿ-ի գրասենյակին սանդուխներեն վեր կբարձրանար, առանց երբեք փույթ ընելու Աթենքի ամառվան ճնշիչ տոթը և իր այդ տարիքին մեջ մանավանդ հանգչելու հարկադրանքը։ Այդ բոլորը ոչինչ էին իր աչքին։ Չէ՞ որ սա ջարդված, թալանված գաղթական ժողովուրդը փրկելու, զայն իր մայր երկիրը փոխադրելու համար կաշխատեր։ Այս համոզումը բավական է զինք իր հոգնությունեն կազդուրելու և իր հոգին հրճվեցնելու համար։ Հազարավոր հայ գաղթականներ, որոնք ներգաղթի հաջորդական քարավաններով Պիրեայեն ճամփա կելլեին դեպի հայրենիք, որդիական փարումով մը կողջագուրվեին իրեն հետ՝ ընդունելով անոր բարեմաղթությունները։ Մինչ ինք, ծերունի դոկտորը, ալեհեր Մովսեսի մը նման, ուրախության արցունքի կայլակները աչքերուն մեջ կդիտեր իր տառապակոծ ժողովրդին դեպի Քանանու երկիր ուղեկցիլը։

Այսպես, հազարավոր գաղթականներու փրկագործումին առաջապահը դառնալե հետո, այժմ ինք կիյնա օտար հորիզոններու տակ, հեռո՞ւ մայր երկրեն...

Գ. Սվազլյանի նկարած օրացույցը, որը մեծ տպաքանակով վաճառվել է Եգիպտոսում, և ստացված նյութական հասույթը հատկացվել է Սովետական Հայաստանի վերաշինության նպատակին։

Հե՞ք դոկտոր Էնֆիեճյան։

Գնա՜, գնա՜, բայց գիտցիր, որ մենք քու այս բաժանումդ մահ չենք համարեր երբե՛ք։

Քանի Հայաստանի գաղափարը վառ կմնա գաղութահայության սրտին մեջ, քանի մենք, քու հաջորդներդ, կանք ու կմնանք այդ գաղափարին վրա իբրև մեյ մեկ զինվորներ, դուն ևս կաս ու կապրիս մեր սրտերուն մեջ։

Գնա և սակայն գիտցիր, որ այժմ, երբ քո թարմ հողակույտիդ վրա քեզ սիրող բարեկամներդ ու գաղափարի ընկերներդ իրենց հարգանքի տուրքը կմատուցանեն քեզի, անդին հեռավոր Մասիսի ստորոտը հազարավոր ներգաղթողներ կան քեզ ճանչցող, որոնք, երբ քո մահվան ցավագին լուրը իմանան, երախտագետ հուզումով պահ մը պիտի ինքնամփոփվին, իրենց մտածումին մեջ՝ քու առաքյալի դեմքդ իր ամբողջ պայծառությամբ դիտելու և քո անմոռաց հիշատակդ իրենց տաք արցունքներովը ցողելու համար։

Գնա, բայց երբ գնացքի ճամփուդ վրա հայ ժողովրդին ցավերով տառապած անմահ հոգիներու հանդիպիս, պատմե անոնց մեր, վտարանդի հայերուս, սա ներկա դժբախտ, մռայլ վիճակը։

Ըսե՛ Թումանյանին, թե գաղութներու մեջ հազարավոր Անուշներ և Սարոներ կան այսօր, որոնք իրենց ջահել հասակին մեջ անօթության և անգործության ճիրաններուն մեջ բռնված կթոռմին, կհյուծին և կմեռնին իրենց նորաբողբոջ սերը միասին գերեզման տանելով։

Պատմե՛ ճարտարապետ Թորոմանյանին, թե այս բարի, ստեղծագործ, աշխատավոր ժողովուրդը չքավորության պատճառով վատառողջ նկուղներու մեջ խճողված կապրի և կամ թիթեղյա տնակներու կամ քուրջերով ագուցված վրաններու տակ կբնակի։

Ըսե՛ Միքայել Նալբանդյանին, թե կուսակցությունները այս ժողովրդի գլխուն ճշմարիտ աղետներ դարձած են, որոնք ժողովուրդը և հայրենիքը ճարտարարվեստի վերածած, ամեն աղնիվ ճիգ կապականեն, հայությունը հակընդդեմ ուժերու կվերածեն և պառակտումները կխորացնեն, որպեսզի այս կերպով անոր հյուծած թիկունքին կառչած ժամանակը մը ևս քաշկռտեն իրենց մակաբույծի գոյությունը։

Բացատրե՛ Կոմիտասին, թե, գաղութներու մեջ իր կրած զրկանքներուն և քաշած տառապանքներուն հետևանքով, հայության խանդը քարացած է ու շրթներուն վրա ժպիտը սառած և լեզուն կարկամած, ու այլևս սիրտ չունի՞ իր խանդավառ քայլերգները և հոգեզմայլ մեղեդիները երգելու։

Գնա՛ և ըսե վերջապես Աբովյանին, թե անծանոթ հորիզոններու տակ դեգերող այս շվարած, թշվառ, անոթի պանդուխտ ժողովրդին համար կյանքը տառապանքի անվերջ շղթա մըն է այլևս, որուն կապարե ծանրությանը տակ ինք օրըստօրե կկքի, կծյուրի, մինչև՞ որ հայրենիք սևեռած աչքերը կփակե անոր կարոտը սրտին մեջ ու իբրև պարարտանյութ կխառնվի օտար հողերուն։ Ու հիմա երթաս բարով, սիրելի դոկտոր Էնֆիեճյան, թող այս տողերս բուրգերու ստորոտեն ձոնված քո հիշատակիդ՝ սփոփին թարմ հողակույտիդ վրա իբրև շիթ մը արցունք։

Ալեքսանդրիա, 1939 թ.։

ՊԵՏՔ Է ԶԱՐՆԵԼ ՆՇՏՐԱԿԸ։

Գիտենք, լռությունը ոսկի է կըսե իմաստուն առած մը, բայց այս ճշմարտությունը իսկույն կփոշիանա, երբ հայրենիքի հանդեպ պարտականություններ հիշեցնելու հարկադրանքին տակ կգտնվինք։

Արդարև, լռե՛լ, երբ հայրենիքի օգնության նվիրահավատությունը մոտ երեք ամիս է, որ բացված է և ճղճիմ արդյունքի վրա կկաղա, լռե՛լ, երբ անիկա դժկամություններու և զանցառություններու կբախվի, լռե՛լ, երբ այսքան նվիրական ձեռնարկի մը շուրջ ակնկալված խանդավառությունը

---

[1] «Արև», Կահիրե, 1943 թ., № 7572։

կպակսի՝ պիտի նշանակեր ընդունիլ, հավանիլ և լռելյայն մեղսակից ըլլալ...

Անհրաժեշտ է ուրեմն խզել լռությունը, հակազդելու համար այդ լճացումին՝ երագելու համար նվիրահավաքության ընթացքը։

Պետք է ըսել այս ժողովրդին, թե որո՞ն կրնե այս օգնությունը և ի՞նչ բանի համար կրնե։

Գիտցողները գիտեն, բայց չգիտցողները պետք է գիտնան, թե երեք տարի առաջ, օր մը, մթնշաղին՝ Խորհրդային Միությունը հեղակարծորեն հարձակումի կենթարկվեր ահարկու թշնամիի մը կողմե։

Իսկույն Միությունը իր բոլոր բաղկացուցիչ հանրապետություններով կպրկվեր և մեկ մարդու պես ոտքի կկանգներ։

«Հայրենիքը վտանգի տակ է» ահազանգը կհնչեր Խորհրդային աշխարհի մեկ ծայրեն մյուսը։ Այրերը հրացանները շալակած ճակատ կվազեին, կիները գործարաններեն ներս կխուժեին մեկնող այրերուն տեղերը գրավելու համար։

Խորհրդային Հայաստան, իբրև բաղկացուցիչ մեկ միավորը խորհրդային մեծ ընտանիքին՝ իր պարտականությունները կստանձներ խիզախորեն, իր ճիգը միացնելու ընդհանուրի ճիգին և իսկույն իր զավակներեն բաղկացած զորաբաժիններ կուղարկեր ռազմաճակատ։ Երևանեն սկսյալ մինչև ետին դյուղի մեջ բնակվող յուրաքանչյուր անհատ, մեկ կողմ ձգած ամեն նախասիրություն և վայելք՝ ինքզինքը կտրամադրեր պատերազմական ճիգին։ Գրողները իրենց գրիչները կհատկացնեին ժողովրդին կորովը պողպատելու, նկարիչները՝ դյուցազնական դրվագ մը պատկերացնելու, արձանագործները՝ ճակատին վրա ինկող հերոսները անմահացնելու գործին։ Հայ կինը, իր անցյալին հավատարիմ դյուցազնական հայ կինը, խիզախորեն կստանձներ աշխատանքի և պարտականության բոլոր ձևերը։

Ա՛լ հերոսներու շարանը ռազմաճակատներու վրա չէր սահմանափակվիր միայն։ Աշխատանքի մյուս մարզերուն մեջ ալ հերոսները իրարու կհաջորդեին։ Գյուղացին, այն

պատվական գյուղացին, որ դարերու հալածանքներու ընդմեջեն մեր լեզուն, մեր ոճը պահեր, պաշտպաներ ու մեզի հաստատեր է, այս անգամ ալ իր բոլորանվեր աջակցությունը կբերեր հայրենական պատերազմի ճիգին։ Գեղջկուհիներ, ամեն հանգիստ մեկդի նետած, առավոտյան լուսաբացին դաշտերը կխուժեին հողը հերկելու, այրող արևին տակ ցորենը ամբարելու և բամբակահավաքի մեջ իրար գերակատարելով հերոսի շքանշաններ վաստակելու համար։

Դպրոցական աշակերտությունը, Հայաստանի այս ապագա վարիչները, ասոնք ալ անմասն չմնացին հայրենիքի փրկության գործին մեջ ու հազիվ դպրոցեն արձակված, վարչական մարմիններու մոտ կխուժեին, հոն գրական աշխատանքներ վերցնելու և կամ թղթատարը ցրվելու համար, հիվանդանոցները կվազեին՝ հոն օժանդակ աշխատանքներու լծվելու և կամ վիրավորներու մոտ նստած ընթերցանություններ կընեին, օրվան լուրերը կկարդային, անոնց ձանձրույթը փարատելու համար։

Հայրենիքի պաշտպանության ի խնդիր տարվող այս համատարած պայքարին առջև ի՞նչ կընեին գաղութահայերը, որոնք միևնույն հայրենիքի զավակներն են՝ միսը միսեն և ոսկորը ոսկորեն։

Հոս չենք ուզեր ցավալի մանրամասնություններու մեջ մտնել։ Միայն սա չափը կըսենք, որ տարրական հայրենասիրությունը և տրամաբանությունը կհրամայեին մեզի իսկույն գործի լծվիլ և որևէ ձևով օգնության հասնիլ մեր պայքարող եղբայրներուն և քույրերուն։ Եվ եթե ուրիշ ուղղությամբ օգնության հասնելու միջոցները անհնարին էին մեզի՝ նյութական օժանդակությամբ գոնե պետք էր մեր զգացումներուն հարազատության ապացույցը տալ անոնց, ինչ որ ինքնին բարոյական մեծ իմաստ ուներ, իրենց դժնդակ պայքարի մեջ զիրենք սրտապնդելու տեսակետեն։

Այս ուղղությամբ առաջին ազդանշանը տվողը եղավ ամերիկահայությունը, որ հակառակ շրջապատին տարբալուծող պայմաններուն՝ հայկական մեծ և բյուրեղյա հոգի մը ցույց տվավ քանիցս տասնյակ հազարավոր դոլլարներ ու-

զարկելով Հայաստան և արժանանալով քույր գաղութներու հիացումին։

Ու հետզհետե մյուս գաղութներու մեջ ալ սկսավ հնչել պարտականության ձայնը ու Սիրիայեն, Պաղեստինեն, Իրաքեն, Իրանեն և ափ մը կիպրոսահայությունեն ալ ետք վերջապե՜ս եգիպտահայությունը ևս բացված հոչակեց օժանդակության գործը։

Այժմ շուրջ երեք ամիս է, որ կշարունակվի նվիրահավաքությունը և ցարդ հավիվ 6—8 հազար ոսկիի խեղճ գումար մը կներկայացնեն Կահիրեի և Ալեքսանդրիայի միացյալ ցանկերը, ինչ որ հեռու է պատվաբեր ըլլալե այս փարթամ գաղութին համար։ Առնելով միայն Ալեքսանդրիան, որ ասկե չորս ամիս առաջ վեց հազար ոսկի հանդանակած էր ազգային կալվածի մը նորոգության համար, ցարդ շուրջ երեք հազար ոսկի միայն տրամադրած է Հայաստանի օգնության ֆոնդին, երբ այս գումարը առանձին տալու ի վիճակի եղող տասնյակներով հարուստներ կհաշվե իր մեջ։ Եվ ի՞նչ պիտի ըսեն մեր հասցեին մեզ դիտող քույր գաղութները։ Կարմրիինք գոնե ափ մը կիպրոսահայությունեն, որ 15 օրվան մեջ երկու հազար ոսկիի կլորիկ գումար մը ղրկեց նպատակին։

«Միայն Թեհրան քաղաքում,—կգրե Թեհրանեն բարեկամ մը,—15 հազար ոսկի հանգանակեցինք Հայաստանի օգնության ֆոնդին»,—իսկ ասդին, եգիպտահայությունը, իր ծոցեն բարեգործականի նման խոշոր կազմակերպություն մը ծնած եգիպտահայությունը ութ հազար ոսկի տակավին... Ասկե ավելի ծանր նվաստացում կրնա՞ք երևակայել այս գաղութին համար։ Արհեստավորը և միջակ դասակարգը կուտա իր կարողությունեն շատ ավելին. հարուստ դասակարգեն է, որ կուգա հարվածը այս գաղութին արժանապատվության։ Անպայման որբեր կերակրելու և գաղթականներ տեղավորելու տագնա՞պ պետք է ծագի, որ մեր հարուստները բարեհաճին գրպաններին բանալ... Ե՞րբ պիտի հասկնանք սա պարզ ճշմարտությունը, թե այլևս որբեր խնամելու, ջարդվածներու բեկորներ ժողվելու և գաղթականներու օգնելու շրջանները իսպառ փակված են մեզի համար և եթե պետական, ռազմական և հաղթական ժողովրդի մը զավակները ըլլալու գիտակցությունը հպարտությամբ պետք է ուռեցնե մեր կուրծքերը։ Հո՞ն, ռազմաճակատներու վրա իրենց արյան գնով մեր հայրենիքը պաշտպանող և համաշխարհային հիացումի արժանացած մեր հերոսներուն սրտագին օժանդակություն մը հասցնել կարենալու առիթը պետք է խանդավառե և բռնկցնե մեր էությունը և մանավանդ անոնց առջև օր մը ամոթով չմնալու մտասևեռումը պետք է խթանե յուրաքանչյուր հայու խղճմտանքը։

Ուրեմն լրջությո՛ւն, բարեկամնե՛ր։ Կատարվելու վրա եղող նվիրահավաքությունը մեր ճանչցած բոլոր հանգանակություններուն ամենեն նվիրականն է։ Անոր արդյունքը պիտի ըլլա եգիպտահայության գիտակցության ու հայրենասիրության չափանիշը հանդեպ հայրենիքին։

Գործի՛ ուրեմն։ Պետք է քնացողները արթննան և թըմրած խիղճերը խլրտին։ Պետք է մեր հարուստները ցույց տան, թե իրենք միայն ոսկիով հարուստ չեն, այլև՝ սրտով։ Ու ամեն անոնք, որ իրենց կարողության անվայել չափով մասնակցեցան հանգանակությանը՝ վերաքննեն իրենց խղճմտանքը և փութան դարմանել սխալը, ինչպես ըրին ուրիշները։

Այժմ, որ ցանկերը սկսան հրատարակվիլ, պետք է խթանել գործը և զորացնել նվիրահավաքումը։ Այդ մասին ևս հեղինակավոր անձնավորություններ չեն պակսիր այս գաղութին։ Ալեքսանդրիան կրնա իր ծոցեն քանի մը Արթին Սրենչյաններ տալ, Կահիրեեն ալ քանի մը Նասիպ-Թորգոմի նման տաք սիրտ հայրենասերներ։ Այն ատեն կտեսնենք, թե ինչպես այս նվիրահավաքությունը կանցնի ամեն ակնկալություն, այսպիսով միայն այս գաղութը կրնա պարտազերծ զգալ ինքզինքը հանդեպ հայրենիքին։ Այն ատեն է, որ այս գաղութին պարտաճանաչ տարրը կրնա ինքզինքը սփոփված զգալ անտարբերներու պատճառով հայրենիքին առջև ամոթահար մնալու մղձավանջեն։

Ալեքսանդրիա, 1943 թ.։

ՊՈՌԹԿԱՅՆ'Ք, ՀԱՅ ԶԳԱՅՈՒՄՆԵՐ[1]

Հայաստանի օգնության նվիրահավաքությունը կշարունակվի և պիտի շարունակվի, մինչև որ պատվաբեր արդյունքի մը հասնի, մինչև որ յուրաքանչյուր անհատ իր պարտքի բաժինը հատուցանե։

Մեր նախկին հոդվածով այս նվիրահավաքության շուրջ տիրող անտարբերության մասին կխոսեինք և այսպիսի անանխընթաց և նվիրական ձեռնարկի մը շուրջ տիրող խանդավառության պակասին դեմ կբարձրացնեինք մեր ձայնը։

Ուրախ ենք այժմ հայտարարելու, որ հոգեկան հեղաշրջումը, որ կակնկալեինք և որ անհրաժեշտ էր այս ձեռնարկին հաջողությանը համար՝ թեև դանդաղ, բայց վերջապես կատարված իրողություն է այսօր։

Ամեն օր այս մասին հուզիչ և ինքնաբուխ արտահայտություններու ականատեսը կըլլանք այլևս։ Քանի մը օր առաջ մեզի իմացուցին, թե որբուհի մը իր ամբողջ խնայողությունը եղող տասը ոսկին անձամբ տարած էր Առաջնորդարան և հանձնած Պսակ Թումանյանին՝ Հայաստանի համար։ Փողոցի շրջուն ներկարար մը նույնպես իր խնայողությունը՝ վեց ոսկի՝ նվիրած է նույն ֆոնդին։ Գործավորներ, ավուր հացի համար պայքարող ընտանիքի հայրեր, մրոտած ձեռքերով արհեստավորներ ինքզինքնին կգերազանցեն, իրենց կարողությունեն ավելին կտրամադրեն այս ֆոնդին, ափսոսալով և ներողություն խնդրելով, որ շատ ավելին տալու ի վիճակի չեն, ու կմերժեն մխիթարվիլ, երբ իրենց կհավաստվի, թե իրենց տվածը հայրենասիրական տեսակետով խոշոր նշանակություն ունի հայրենիքին առջև։

Ահա այս կարգի սրտառուչ և ինքնաբուխ հայրենասիրության արտահայտություններն էին, որ մղեցին նվիրահավաք կենտրոնական հանձնախումբերը ընդլայնել իրենց գործունեության մարզը, բոլոր վարժարաններուն, բոլոր բարենպատակ հաստատություններուն, բոլոր գեղարվեստական միություններուն, բոլոր գրական և մարզական ակոմբներուն

[1] «Արև», Կահիրե, 1943 թ., № 7599։

վրա պարտք ու պարտականություն դնելով, որ իրենց շրջանակին մեջ ալ տարվին հանգանակության աշխատանքները։ Ու ի պատիվ այդ միություններուն պետք է ըսել, թե բոլորն ալ ժրաջան, մեղվաջան աշխատանքի լծված են այս ձեռնարկին շուրջ։

Գեղարվեստասիրաց միությունը, զոր օրինակ, գլխավորությամբ իր ժրաջան ատենապետ Էոժեն Փափազյանի, կոչ մը հրատարակած է այս ուղղությամբ, զոհողության հրավիրելով բոլոր անդամները։ Եվ արդյունքը խրախուսիչ է։

Պարագան բոլորովին հուզիչ է դպրոցներեն ներս, ուր աշակերտությունը անօրինակ խանդավառությամբ փարած է այս հանգանակության։ Առնելով միայն Ալեքսանդրիայի ազգային Պողոսյան վարժարանը, ուր աշակերտության կեսեն ավելին ձրի է, իր տնօրենին առաջնորդությամբ արդեն իսկ հանդանակած է հարյուր ոսկի։ Հոն, առավոտյան առաջին ժամերեն սկսյալ զբոսանքներու ամբողջ տևողության այդ փոքրիկ բերանները «Հայաստան» կհոլովեն, թերթերու մեջ հրատարակվող ցանկերը խմբովին կքննեն ու իրենց բերած փոքրիկ մասնակցություններուն մասին կհովողեն՝ տեսակ մը մրցում և նույնիսկ բարի նախանձ դնելով իրենց մասնակցության մեջ։ Բարեկամ մը կպատմեր, թե իր տասը տարեկան մանչուկը մերժած էր հիսուն դահեկան տանիլ Հայաստանի համար և բողոքած, լացած էր, մինչև որ հաջողած էր ոսկի մը առնել հորմեն։ Ալ փոքրիկ գանձանակները գզրոցներեն դուրս կհանվին ու փոքրիկ թաթիկներով կխորտակվին՝ պարունակությունը Հայաստանի հանգանակության ֆոնդին նվիրելու համար։ Այրի կնոջ մը 12 տարեկան զավակը Հայաստանի ֆոնդին համար տնօրենին հանձնած է 78 դահեկան, իր գանձանակին ամբողջ պարունակությունը, այսինքն՝ իր ամբողջ գանձը։ Հե՛յ ձեր հոգուն մատաղ, հայու ձագուկներ։ Եվ ո՞վ գիտե, թե այս 12 տարեկան փոքրիկ հայրենասերին մեջ ապագա Նելսոն Ստեփանյան մը չէ պառկած...

Այս փոքրիկ հոգիներուն արտահայտած բուռն պոռթկումին առջև ալ որքան ողորմելի կմնան իրենց ոսկիներուն կառչած և ճղճիմ գումարներով միայն մասնակցող հա-

ռուստները։ Բարեբախտաբար այդպիսիներուն թիվը հետզհետե նվազելու վրա է։ Արդեն իսկ ունևոր դասակարգին պատկանող անձերեն շատեր վերաքննելով իրենց մասնակցության անբավարարությունը, կփութան երկրորդել իրենց բաժինը։ Անոցմե շատեր նույնիսկ առիթը չեն փախցներ որևէ նշանախոսության կամ հարսանեկան ուրախ առիթով հիսուն և նույնիսկ հարյուր ոսկի նվիրելու Հայաստանի օգնության ֆոնդին։

Այս ամենքը կուգան մեզի փաստել, թե այս ժողովրդին մեջ հայրենիքի հանդեպ սերը խորունկ է և անվթար։ Եվ թե ոմանք, եթե առաջին օրերուն ճղճիմ բաժին մը միայն բերած էին՝ պատճառը այն էր, որ այս ձեռնարկին տարողությունը և իմաստը չէին ըմբռնած անմիջապես։

Այժմ, որ բոլոր բարի տրամադրություններուն զորակոչը հայտարարված է, այժմ որ հանձնախումբերը նոր և ժրաջան տարրերով ուժեղացած են, այժմ, որ հանրությունը ըսկըսած է գիտակցիլ իր պարտականություններուն՝ հանդեպ իր հայրենիքին, և այս ձեռնարկին շուրջ ամեն հայ եղբայրակցած է առանց կուսակցական, առանց դավանական խտրության, այս ուղղությամբ պետք է համադրվին մեր բոլորին ճիգերը։

Այս անհրաժեշտության լավագույն մեկ արտահայտությունն է արդեն մեր սրամիտ բարեկամ Բոնշոնի վերերևումը «Արև»-ի էջերեն։ Բայց այս մեկը չի բավեր։ Այս գաղութը բազմաթիվ հեղինակավոր դեմքեր կհամրե իր մեջ, և անոնց գրչին և խոսքին պետք ունի այսօր, այս նվիրահավաքությունը իր առավելագույնին հասցնելու համար։

Նաև դո՛ւք, հայ կինե՛ր, ինչո՞ւ ցարդ անմասն մնացած եք հայրենիքի օգնության նվիրական ֆոնդին ձեր բաժինը բերելու հրճվանքեն։ Ինչո՞ւ ցանկերուն մեջ ձեր անունները չեն երևիր։ Ո՞ւր են ձեր, կիներուդ հանգանակիչ երբեմնի հանձնախումբերը, բոլոր դուռները ափ առնող, բոլոր սրտերը թունդ հանող ձեր անձնվեր անդամուհիներով։ Պե՞տք է ձեզ հիշեցնել, թե հայրենիքը միայն այրերուն սեփականությունը չէ, այլև ձեր՝ կիներուդ, որ հերոսներ և հերոսուհիներ տված եք մեր պատմության արյունոտ էջերուն մեջ։ Օ՛ն,

գործելու ժամն է։ Եվ այս անգամ ոչ թե որբի խնդիր, չքավորներու սնունդ ճարելու հարց ունինք, այլ, ո՞վ երանություն, հայրենիքի օգնության սրբազան պարտականություն։ Եվ եթե կենտրոնական հանգանակիչ հանձնախումբը տակավին դիմում չէ կատարած ձեզի՝ ինչ փույթ, դուք անձամբ ընդառաջեցեք հայրենիքի կոչին և պարտադրեցեք ինքզինքնիդ։ Գիտե՞ք, որ ամեն տան մեջ հայուհիներ կան, որոնք իրենց լուման պատրաստած են և ձեզի կսպասեն։ Գիտե՞ք, որ ամեն տան մեջ հայ մամիկ մը կա, որ իր օրհնությունը կուզե տալ ձեզի։

Օ՛ն ուրեմն, գործի, հայրենիքը մեզ կդիտե։

Ալեքսանդրիա, 1943 թ.։

ԱՐԹՆՑՈՂ ՇԱՐՔԱՅԻՆՆԵՐԸ ՄՈԼՈՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԱՇՆԱԿ ՇԵՖԵՐՈՒ ՆՈՐ ԼԱՐԱՀԱՂԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ներգաղթի հաջորդական քարավաններուն խանդավառ մեկնումին և դաշնակ շարքայիններու մեջ արթնցող հայրենասիրության ու ներգաղթին մաս կազմելու համար անոնց ստորագրած խմբական հրաժարումներուն առջև շվարած, շշմած դաշնակ շեֆերը նոր և ապերախտ խաղարկության մը ձեռնարկած են ներգաղթի և անոր կազմակերպիչներու հասցեին, խնամքով ծածկելով իրենց հետին միտքը։

25 տարիներե ասդին գաղութներու մեջ ծվարած և դատարկապորտության, ձրիակերության վարժված դաշնակ շեֆերուն համար անտանելի, անհանդուրժելի, անմարսելի երևույթ է սա զանգվածային ներգաղթի իրականությունը, որ կուգա գունդ առ գունդ իրենց ձեռքեն խլել դաշնակ շարքայինները, որոնք ատեն մը հայրենասիրական աղնիվ գործ կատարել կարծելով մտեր էին դաշնակ շարքերեն ներս, որ զիրենք օրորեր, քնացուցեր, ժամավաճառ ըրեր էր տարիներով ու կապեր ու կաշկանդեր էր իրենց հայրենասիրական բոլոր խոյանքները՝ արգիլելով քար մը իսկ չդնել, լուսա իսկ չտալ իրենց վերաշինվող խորհրդային հայրենիքին, ուր հայության ամբողջ ապագան կդարբնվեր։

Տարիներ շարունակ դաշնակ շեֆերը անխնա կերպով շահագործել են անոնց, արյունն ու քրտինքը ծծեր են տարիներով՝ հանո՞ւն եռագույնի, հանո՞ւն գույնզգույն խաչերու, հանո՞ւն «ազատ-անկախ» Հայաստանի և այլևայլ շողշողուն նշանակներու...

Ահա այս մոլորության ցանցեն և հավերժացող լաբիրինթոսեն է, որ կհրաժարի հայ երիտասարդը և կդիմե դեպի մեր շոշափելի, բաբախող, ապրող իրականությունը, դեպի մեր պանծալի Սովետական Ազատ Աշխարհ Հայաստանը՝ անոր ընծայաբերելու իր ուժն ու կարողությունը և զոհաբերելու իր արյունն ու քրտինքը։

Այս պարագան դաշնակ շեֆերու քունը փախցուցած է։

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից առաջ և խորհրդային կարգերի հաստատման օրերին իսկ իրենց ոճիրներովը հայտնի դաշնակ շեֆերը, որոնք խորհրդային Հայաստանի դատարաններու վճիռով մահապատիժի ալ արժանացած են՝ այժմ կսարսափին տեսնելով աշխարհի բոլոր անկյուններեն ծայր առած ներգաղթի համատարած շարժումը և շվարած հարց կուտան իրարու, թե ի՞նչ պիտի ըլլա ասոր վերջը, եթե ներգաղթը նույն թափով շարունակվի, և շարքայիններու խմբական հրաժարումները նույն թափով շարունակվին և նույն թափով հաջորդեն իրար։

Արդարև, ի՞նչ պիտի ըլլա դաշնակ շեֆերուն վախճանը, երբ շարքերը պարպվին... Ի՞նչ կըլլա ջուրեն դուրս հանված ձկներուն վախճանը։

Ահա այս է պատճառը, որ դաշնակ շեֆերը իրենց խաբեություններեն արթնցող շարքայիններու միտքը անգամ մը ևս մթագնելու և խոսքի ու թղթի սադրանքներեն վերջնականապես հրաժարվողները անդամ մը ևս մոլորեցնելու համար կեղծիքի և խաբեության նոր ձևեր կորոնեն, կճգնին ներգաղթի փրկարար իմաստն ու արժեքը նենգափոխել...

Եվ իրենց այդ ապերախտ աշխատանքին իբրև վկա՝ օգնության կկանչեն Հայկն ու Բելը, Արամն ու Արշակը, Տիգրանն ու Տրդատը... Այս առաջին անգամը չէ սակայն, որ դաշնակ շեֆերը մեր դիցաբանական հերոսները իրենց կառքին կլծեն և իրենց հաշիվներուն կծառայեցնեն անպատկառորեն, որպես դաշնակ սեփականություն։ Ըստ դաշնակ շեֆերուն՝ հայրենասիրություն է, երբ դաշնակ Ս. Վրացյան մը Աղեքսանդրապոլի խայտառակ դաշնագիրը կստորագրե և Հայաստանը Թուրքին կնվիրե իբրև գաղթավայր։

Հայրենասիրությո՞ւն է, երբ դաշնակ շեֆերը հրացանազարկ կընեն հայ ժողովրդի փրկության նախակարապետներեն 26 կոմիսարներ՝ մեջն ըլլալով Ստեփան Շահումյանը։

Հայրենասիրությո՞ւն է, երբ դաշնակ «սպարապետ» Նրժդեհ հայ բանակի թնդանոթները գիշերանց պարսիկներուն կվաճառեր։

Հայրենասիրությո՞ւն է, երբ դաշնակ կամարիլլան Հայաստանի պետական գանձը՝ մեկուկես միլիոն ոսկեդրամ, կողոպտելով արտասահման կփախչի։

Հայրենասիրությո՞ւն է, երբ դաշնակ Դրոն իր արբանյակներով գերման ելուզակներուն կմիանա՝ խորհրդային իշխանության տապալումովը Հայաստանի փլատակներու վրա տիրելու ցնորքով։

Դարձյա՛լ, հայրենասիրությո՞ւն է իրենց կոնակը օտար տերության, օտար շահերուն տված հայուն և իր հայրենիքին դեմ հայհոյելն ու ներգաղթի, ազգահավաքման սրբազան գործը առօրյա քաշկռտուքի նյութ դարձնելը...

Ինչպես ճպուռին խափանարար հրճռոցը, նույնպես ալ դաշնակ շեֆերը 25 տարիե ի վեր իրենց փուչ վեճերով գաղութները տակնուվրա ըրին և ամեն շինարար աշխատանք խափանեցին իրենց թերթերեն արձակված առօրյա հայհոյանքներով, ՀՕԿ-երի մատնություններով և իրենց շարքերը խրախուսելու համար սարքված հանդես-քյաբարասեղաններով, իբր հայրենասիրական աշխատանք հրամցնելով այս բոլորը իրենց շարքայիններուն։ Երբ մեր հայրենի քույրերն ու եղբայրները այդ միևնույն ժամանակաշրջանի մեջ մրջնային ժրաջան աշխատանքով Հայրենիք մը, Աշխարհ մը կառուցեցին...

Այժմ ալ ազատ ու անկախ Հայաստանի կեղծիքը կշողացնեն հեռացող, հրաժարվող շարքայիններու աչքին և դաշնակցության «անելիք»-ներեն կճառեն, երբ դաշնակցու-

թյունը անելիք չունի կպոռա Քաչազնունին 25 տարիե ի վեր և երբ արդեն մեր դարավոր դատի լուծման բանալիները Խորհրդային Հայաստանի վարիչներուն և Մոսկվայի կենտրոնական կառավարության ափին մեջ կգտնվին, վճռականապես, վերջնականապես։

Այս ճշմարտությունը ծանոթ է ամեն հայու սկսյալ օրորոցի մանուկեն մինչև՝ զառամյալ ծերունին։ Միայն դաշնակ շեֆերն են, որ ինչպես կերևի իրենց առօրյա վայնասուններեն տակավին չեն հասկցած, կամ չեն ուզեր հասկնալ այս ճշմարտությունը և դեռ կհամառին կառչած մնալ հին ֆրազներուն, հին հանգերգերուն և հին մեթոդներուն՝ առանց նոր բան մը սորվելու աշխարհի իրադարձություններեն, երբ հրսկայական արմատական փոփոխություններ իրագործված են մեր մոլորակին վրա, հայ կյանքեն ներս ու հայ դատին շուրջ։

Այսքան տարրական հասկացողություն և քաղաքական պարկեշտություն չունեցող մարդիկ ալ ի՞նչ իրավունքով ղեկավարի անուն կուտան ինքզինքնուն և ղեկավարի դեր ալ կուզեն խաղալ սփյուռքահայության կյանքին մեջ...

Ահա՛ այս է շարքայինները զայրացնող, ընդվզեցնող պարագան, ինչպես նաև հրաժարականներուն գաղտնիքը։

Ալեքսանդրիա, 1945 թ.։

ԼԻԲԱՆԱՆԵՆ ԿՎԵՐԱԴԱՐՆԱՄ[1]

Կենսապայքարի առօրյա մտահոգություններուս առընթեր մեր գաղութին մեջ ևս հայաստանյան կազմակերպություն մը ունենալու անհրաժեշտությունը զգալով «Սևան» միությունը կազմակերպելու համար թափած հոգնաբեռն ջանքերս պիտի զգետնեին և շորս ամիս անկողին պիտի գամեին զիս՝ պահ մը բժիշկները հուսահատեցնելու աստիճան մտահոգություն պատճառելով։ Հիվանդությունե ետքն ալ, կազդուրումի շրջանին օդի և ջրի փոփոխություն մը անհրաժեշտ նկատեցին բժիշկները։ Ես օգոստոսի 2-ին ճամփու ընկեր և նեցուկ ունենալով 15-ամյա աղջիկս՝ Ալեքսանդրիայեն ճամփա ինկանք դեպի Լիբանան, ուր առիթ պիտի ունենայինք այդտեղի բնական գեղեցկություններեն զատ գաղութահայ մեծագույն զանգվածին հետ հաղորդվելու։

Բեյրութ հասնելնուս իսկույն կբարձրանանք Բրումանա, ժամ մը հեռավորությամբ, ինքնաշարժով, սիրուն կյուղ մը, կանանչախիտ ծառերով ու եղևնիի անտառներով շրջապատված, զորս այնքան գեղեցիկ կերպով երգած է Սողոմոն իր տաղերուն մեջ. ու մենք կհյուրասիրվինք համաքաղաքացի և մեր ընտանիքի բարեկամ դոկտոր Ղազարյանի հարկին տակ։ Բրումանա գյուղին մեջ կա մնայուն վեց տուն հայ բնակչություն, բոլորն ալ ակնիվ, բարի մարդիկ։ Ունին իրենց փոքրիկ միությունը՝ «Հայ ձայն», կենտրոնատեղի ունենալով Ղազարյաններու բնակարանը, ուր հաճախ ընտանեկան հավաքույթներ կամ հանդեսներ սարքելով կջանան վառ պահել հայ զգացումը, մինչև իսկ հայերեն դասեր ավանդելով շրջակա գյուղացներ հաճախող և միայն արաբերեն ու ֆրանսերեն սովորող հայ մանուկներուն։

Այս փոքրիկ հայկական կենտրոնը հանդիպումի վայրն է նաև Բեյրութեն, Հալեպեն, Դամասկոսեն, Պաղեստինեն և այլ վայրերեն եկած հայերու և հոն առիթը կունենամ ծանոթանալու զանազան շրջաններե հասած հայրենակիցներուս հետ ու տեղեկանալու իրենց պայմաններուն։ Ամենքն ալ իրենց պատմությունը ունին, տունեն-տեղեն խլված պատմություն։ Ունին նաև սփոփանք մը, ներկա Խորհրդային Հայաստանի պանծալի իրականությունը և հոն վերադառնալու բոցավառ հույսը։

* *
*

Շաբաթ օր, կեսօրվան ճաշեն հետո սենյակս քաշված եմ։ Հանկարծ, երգեցիկ խումբի մը և երգեհոնի մը ձայներեն ընդոստ կարթննամ։ Բակին մեջ դպրապետ և երգեհոնահար պարոն Պողոսի գլխավորությամբ ութ-տասը դպրոցական տղեկներ, որոնք նոր հասած են Բեյրութեն, շարական

[1] «Արև», Կահիրե, 1945 թ., № 8191, 8192, 8194։

մը կգոռացնեն՝ վաղվան արարողությանց իբրև նախափորձ։ Դուրսը պատշգամին տակ խռնված ամենազգի բազմություն մը զարմանքով կունկնդրե իրեն համար նորություն եղող երբեմն դղրդագին, երբեմն մելանուշ մեղեդիներուն։ Վարը. պարտեզին մեջ տան մայրիկը ընկերակցությամբ երկու տիկիններու վաղվան պատարագի մասը կպատրաստե, մետաղե սկավառակին վրա եփելով անոր թերթերը ու թոնիրին տակ ճարճատող շոր խոտի և տատասկի ծուխը ինձ կհիշեցնե մեր բնագավառի հին օրերը։ Գիշերը. փոքրիկ դպիրները կտեղավորենք մոտակա դրացիներուն քով, որոնք կանուխեն պատրաստված են զանոնք ընդունելու և հարկ եղածը տնորինած անոնց գիշերվան հանգստին համար։

Կիրակի առավոտ շատ կանուխեն գյուղը ոտքի վրա է արդեն։ Ամեն կողմ շարժում, եռուզեռ։ Երիտասարդները ամեն ուղղությամբ կվազվզեն և մինչև մերձակա գյուղերը կերթան նոր հայեր գտնելու և մատուցվելիք պատարագին լուրը անոնց ալ հաղորդելու, որ տեղի պիտի ունենա առավոտյան ժամը 10-ին՝ ետ ավարտման հույն օրթոդոքս եկեղեցվո։ Որոշյալ ժամեն առաջ կիներու, մանուկներու, ծերերու բազմություն մը խռնված է եկեղեցու բակը, բոլորն ալ հայեր ու մենք ևս կհասնինք։ Պայմանադրական ծանոթացումները հուզիվ սկսած բազմությունը կխռնվի մեր շուրջը։

Եգիպտահայ մը իրենց մեջ հյուր ունենալու պարագան բացառիկ խանդավառությամբ կլցնե այս բարի հոգիները, որոնք հաճախ առիթ չեն ունենար այսքան հեռավոր հյուրի մը հետ ծանոթանալու։ Խնկաբույր մայրիկներ, առավոտյան աղոթքը դեռ շրթունքներնուն վրա մամիկներ, թոռնիկներուն ձեռքեն բռնած պապեր՝ իրենց հարսերովը, իրենց ջիվան զավակներովը ինձ կդիմեն, իրենց պարագաները կփնտրեն։ Մեկը Եգիպտոս քույր մը ունի. մյուսը՝ զավակ մը։ Ոմանք կճանչնամ, ուրիշներ՝ անծանոթ են։ Կրցածիս չափ գոհացում կուտամ բոլորին։ Ամենքն ալ վիրավոր եղնիկներու կնմանին, տրտունջնե՞ր ունին, արյունոտ պատմությունն՞ր ունին ու իրենք հասկցող մը կփնտրեն պատմելու համար։ Ու ամեն կողմե կսկսին իրենց քաշածներուն, տեսածներուն մասին հատուկտոր հատվածներ պատմել։ Բոլորին ալ կունկնդրեմ, ըսվածները լրացուցիչը կամ փոփոխակն են մեր գիտցածներուն։ Ու կդիտեմ հալածանքեն ու տառապանքեն եղծանված սա բարի դեմքերը։ Մոտ տասը վայրկյան տևող մեր այս մտերմիկ տեսակցությունեն քաջալերված՝ հանկարծ ամենքը միաբերան՝ «Եղբայր ջան, ե՞րբ պիտի երթանք Հայաստան, ե՞րբ պիտի երթանք մեր տեղերը»... Շուտո՛վ, շա՛տ մոտ ատենեն, կփութամ խրախուսել ամենքը ու կբացատրեմ, թե երբեք մեր դարավոր իրավունքը այնքան պայծառ չէր փայլատակած հայության երկնակամարին վրա և երբեք մեր արյունոտ դասը այսքան ամուր ու վստահելի ձեռքերու մեջ չէր դրված։ Ոմանք կխանդավառվին, ուրիշները՝ ուրախությունեն կուլան։ Զանգակի ղողանջ մը մեզ ներս կհրավիրե։ Ակնթարթի մը մեջ հայ հավատացյալներով լեցված է եկեղեցին, որ ժուժկալ մեկ արտահայտությունն է բյուզանդական ոճի։ Արարողությունը կանցնի խիստ տպավորիչ... քահանան քարոզ մը կխոսի ցրված հայության հայրենիք վերադարձի հույսն ու հավատքը վեր առնելով...

Բեյրութի մեջ սակայն ավելի ուժգին կզգացվի հայության սրտին զարկը։ Մեզ Բեյրութ տանող ինքնաշարժին մեջ արդեն ականջալուր կըլլանք քնքույշ ոսկեղնիկ հայերենի մը, որ ականջները կգգվե։ Բեյրութ առաջին մուտքին իսկ (Նահրի շրջան) կհանդիպինք բազմաթիվ հայ հաստատություններու, գործատեղիներու, աշխատանոցներու, նաև մեծ պողոտաներու վրա ցուցատախտակներու բժշկի, փաստաբանի, հարտարագետի, դեղագործի, բոլորն ալ հայերեն վերտառություններով՝ հստակ ու մեծագիր։ Դարձյալ ինքնաշարժերու վրա, հանրակառքերու կամ կառախումբերու մեջ, անդին պատերուն վրա կամ այլուր՝ բոլոր պաշտոնական հայտարարություններուն երեք գլխավոր լեզուներեն մին հայերենն է, որ արաբերենի և ֆրանսերենի քով իր պատվո տեղը կգրավե։ Թրքախոս հայերը հայերեն խոսելու հրավիրող պայքարին հայտարարությունները դեռ կերևին հոս-հոն. «Հայորդի՛, հայերեն խոսե»։ Ալ շուկաներու, փողոցներու երկայնքին ամեն ուղղությամբ, ամեն քայլափոխին կհանդիպինք հայերու։ Կիներ, մանուկներ, երիտասարդներ կարծես մեզ կպաշարեն, մեզ կխաչաձևեն հայերեն խոսելով,

հայերեն վիճելով ու այս բոլոր հիացումով ու անհուն հրճվանքով կլցնե մեր էությունը։

Բայց կխորհրդածեմ հանկարծ ինքնիրենս, այս հողը, որուն վրա կքալենք, փյունիկեցիներուն երկիրն է։ Ահավասիկ Բեյրութը, որ հին Բիբլոն է, ավելի հեռուն՝ Սիդոնն է, ավելի հեռուն՝ Դյուրուսն է։ Այս քաղաքները ատեն մի փյունիկեցիներու խոշոր կենտրոններ էին, ուր կյանքը կեռար, կժպտեր, ամեն կողմ եռուզեռ ու շարժում կար. կշինեին, կշենցնեին, կառնեին, կծախեին։ Իսկ այսօր, ու՞ր է գացեր այդ ժողովուրդը, որուն անունը չկա, որուն հետքը չկա։ Անցորդի մը կհարցնեմ, թե ու՞ր կարելի է գտնել փյունիկեցիներուն հետքերը։ «Թանգարան գացեք, պարո՛ն» կըլլա պատասխանը։ Այո՛, իսկապես պետք է թանգարան դիմել անոնց նշխարները տեսնելու համար... Իսկ հայ ժողովուրդը, իսկ իմ ժողովուրդս, փյունիկեցիներեն ավելի հին ըլլալով հանդերձ, առույգ ու մշտանորոգ, դարերու փոշիներուն մեջեն հոսեր ու մեր օրերուն հասեր է՝ ինչպես Արաքսը ու փոթորիկներու և կայծակներու կուրծք է տվեր, ինչպես Արարատը, որ բյուրիցս իր սուրը մերկացուցեր է բռնությունը տապալելու և խավարը ճեղքելու համար, ինչպես ֆաշիզմի դեմ վերջին հաղթանակը և հավիտենական երիտասարդության գաղտնիքին տեղյակ, այսօր ալ իր ընդերքեն նոր Խորենացիներ կծնի, Հայաստանի մտավորականությունը վկա ու նաև նոր Մհերներ, նոր Սասունցի Դավիթներ կծնի, մեր շքանշանակիր հերոսները վկա։

Ասոր պատճա՞ռը։ Ասոր պատճառը այն է, որ երբ ուրիշ ժողովուրդներ երկիրե երկիր կարշավեին ուրիշները գերեվարելու և անոնց ոսկին, ադամանդը կողոպտելու համար, անդին Մեսրոպ Մաշտոց երկաթե մուճակներ հագած երկրե երկիր կդեգերեր՝ հայ տառերը փնտրելու, գտնելու համար։ Ու մինչ անոնց երգիչները քաղաքե քաղաք պտտելով վայրագ կիրքերը կտարփողեին՝ ասդին հայ աշուղներ, սազը ձեռքին գյուղե-գյուղ կշրջեին «դավթար սիրե, ղալամ սիրե» երգելով...

Ալ մեր շրջագայության ընթացքին քանի նոր դեմքերու ծանոթանայինք, այնքան զմայլելի հայրենասիրական պոռթկումներու ականջալուր կըլլայինք։ Երիտասարդ մը մեզի կպատմեր, թե Բեյրութի մեջ նմանը չտեսնված տոնակատարություն մը եղած էր Կարմիր բանակի կողմե Բեռլինի գրավման գիշերը։ Կեսգիշերին Պուրճի հրապարակին վրա քսան հազարե ավելի հայերե բաղկացած հսկա թափոր մը, կիներու և աղջիկներու շղթայով եղերված, ձեռքերնին հազարավոր ջահեր, լիբանանյան և այլ դաշնակից դրոշներով՝ Լիբանանի նախագահին պատշգամին տակ խռնված անոր երևումը պահանջելե, զայն տեսնելե և բարևելե հետո՝ կուղղվին քաղաքին գլխավոր պողոտաներեն, պատշգամները խուժած, պատուհաններեն կախված տեղացի տարրին ծափահարությանց և հուրրաներուն մեջեն՝ «Կարոտցել եմ քեզի, շքեղ Երևան, հեյ ջան Երևան»-ը երգելով, գոռացնելով։

Սույն երիտասարդը խանդավառությամբ մեզի կպատմեր, թե զինք ամուսնացնելու համար ծնողքին կողմե ի գործ դրված ամեն ճնշում ի դերև ելած էր, որովհետև ինք ուխտած էր Հայաստան երթալ և հոն ամուսնանալ։ Հանդիպեցա հայերու, որոնք տարիներով մերժած էին հողի և տնտեսության տեր դառնալ և առժամյա միջոցներով կերպ մը կապրվեին, հավատալով, որ մոտ է հայրենիք վերադարձի օրը։ Հաճախ ծանոթներու և բարեկամներու մոտ մեր տված այցելություններեն երևան կուգար, որ շատ մը ծնողքներ իրենց ութ-տասը տարեկան զավակները տակավին դպրոց չէին ճամփած, այլևս հայրենիք վերադարձի օրը մոտեցած զգալով և հոն մեկ անգամեն այդտեղի ուղղությամբ, այդտեղի ծրագիրով սկսելու համար ուսումնառությունը։ Հայրենիք վերադարձի մասին այս ժողովուրդին մեջ հույսը այն աստիճան բարախուն և շոշափելի է, որ, ինչպես Հալեպեն եկողները պատմեցին, Ռումինիայեն մեկնելիք քարավանը աչքի առջև ունենալով, շատերը կմերժեն ձմեռվան պաշար և վառելիք ամբարել՝ մոտալուտ, նույնիսկ օրերու խնդիր համարելով ներգաղթի հրահանգը...

Առավոտ մը լեռներու մեջ շրջագայութենեն կվերադառնանք։ Քանի մը օրե ի վեր գլխավոր ճամփուն նորոգությունը և ասֆալտապատումը սկսած է ու կուպրի ծուխը պաշարած է շորս դին։ Բանվորներու խումբի մը մոտեն կանցնինք,

դանդաղ խոսակցելով։ Հազիվ քանի մը քայլ հեռացած ձայն մը մեզ կկանչե.

— Ներողություն, եղբայր ջան, դուք հա՞յ եք։

— Այո՛,— կպատասխանեմ ետիս դառնալով ու կսեղմեմ ձեռքը։

— Գաղթականներու մասին բարի լուր մը ունի՞ք։

Հարցական երեսը կնայիմ հարցումին ուղղությունը փնտրելով։

— Ներգաղթի մասին ըսել կուզեմ,— կփութա ճշտել,— ե՞րբ պիտի երթանք Հայաստան։

— Մոտ ատենեն, շատ մոտ ատենեն,— կփութամ խրախուսել, ցույց տալով Ռումինիայեն մեկնելու պատրաստվող 170 ընտանիքներու պարագան։

— Դուք ո՞րտեղացի եք,— կհարցնեմ իմ կարգիս, երբ երկու ուրիշ երիտասարդներ մեր մոտ կանգնած մեզ կունկընդրեն։

— Երեքս ալ մուսադաղցիներ ենք, Այնճարի գաղթականներեն հոս եկած ենք աշխատելու համար։

Էլեկտրական ցնցում մը կզգամ հոգիիս խորը։ Ու երեքը միասին կսկսին բացատրել իրենց վիճակը։

— Շատ դժբախտ ենք մենք հոս, եղբայր ջան, մալարիան կհյուծե, կհատցնե մեզ, հարյուրավորներ զոհ տված ենք մինչև հիմա, հոն ամեն բան կպակսի մեզի, և՛ ջուր, և՛ բուսականություն, եղբայր ջան, մենք շեն տուն տեղ ունեինք, բաղեր-բաղչաներ ունեինք, ամենքն ալ լքեցինք ու եկանք և հիմա...

Տխուր մտիկ կընեմ զիրենք. աղջիկս քովս ի վեր կուլա, կդիտեմ իրենց բզկտված զգեստները ամեն ուղղությամբ կարկատված, ոտքերնին կոշտ մուճակներ, որոնց ներբանները պոկված ըլլալուն երկաթե թելով մը ագուցված են ոտքին շուրջը։

— Այնճար հոսկե ո՞րքան հեռու է։

— Հինգ ժամ կըլլա,— կպատասխանվի։

— Ամեն օր ի՞նչպես կուգաք և կերթաք,— կհարցնեմ շվարած։

— Մենք հոս կմնանք, շաբաթը մեկ անգամ Այնճար կերթանք ու հաչորդ օրը կվերադառնանք։

— Հոս ու՞ր կպառկիք, ի՞նչ կուտեք։

— Բացօթյա ծառի մը տակ կամ ժայռի մը կողքին և որևէ բան մը կուտենք։

— Կապրինք,— կմիջամտե մյուսը հեգնական քրքիջ մը արձակելով, որ մարդկության քիթին բերնին նետված նախատինքի մը համազոր է։

Պահիկ մը լուռ մնալե հետո՝

— Ֆրանց Վերֆելն[1] ալ մեռեր է,— շարահարեց հոր մը մահը ծանուցանողի կսկիծով։

— Այո՛, տեղեկացանք թերթերեն,— կփութամ պատասխանել ու կրցածիս չափ կմխիթարեմ, կհուսադրեմ զիրենք մեր ներկայի հույսերով և կարելիություններով։ Ու երբ կբաժանվինք իրարմե,— լավ որ,— կրսեմ մտովի,— Ֆրանց Վերֆել մեռեր է։ Այս զմայլելի ժողովրդին հերոսական դյուցազներգությունը անմահացնելե հետո, իրեն խնայվեցավ զոնե այս միևնույն ժողովրդին այսօրվան հյուծած, թշվառ վիճակը տեսնելու և զգալու տառապանքը...

Այիբսանդրիա, 1945 թ.։

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁԸ ՍԻՐԻԱ—ԼԻԲԱՆԱՆԵՆ[2]

(Ականատեսի վկայություններ և տպավորություններ)

Ինչ զմայլելի ժողովուրդ է սա մեր ժողովուրդը, որուն հայրենադարձի սա պատմական շրջանին հայտնաբերած հայրենասիրությունը ու ներգաղթին հանդեպ ցույց տված կեցվածքը հիացում ու հարգանք կպդեն զինք շրջապատող ժողովուրդներուն։

Արդարև, ամսե մը ավելի է, որ Սիրիայի և Լիբանանի հայության ծոցին մեջ կգտնվիմ և ամեն օր հիացումով ականատես կըլլամ անոր հայրենասիրական պոռթկումներուն՝ ամեն տեղ, տունը թե շուկան, գյուղը թե քաղաքը։ Բոլորին ընթացիկ խոսակցությունը կդառնա ներգաղթին շուրջ և բո-

[1] «Մուսա լեռան քառասուն օրերը» հերոսավեպի հեղինակը։

[2] «Արև», Կահիրե, 1946 թ., № 8440, 8441, 8442, 8444, 8449, 8451։

լոր շարժումներուն և ճիգերուն առանցքը կկազմե ներգաղթը։ Եվ ասիկա առանց դասակարգի խտրության՝ հարուստեն մինչև հետին աղքատը։ Առանց տարիքի խտրության՝ մանուկեն մինչև ծերը։

Ծերերեն, տարիքոտներեն շատերը նորահաս սերունդեն ավելի կորավոր պատճառներ ունին հայրենադարձին մեջ մասնավոր եռանդ մը դնելու։ Անոնք հայրենի հողին վրա ծնած ըլլալուն ծանոթ են այդտեղի դրախտանման գեղեցկություններուն, ծանոթ են այդտեղի պատմական վայրերուն և հուշարձաններուն, խմած են հայրենի նեկտար-գինիեն և սառնորակ զուլալ աղբյուրներեն, անոնցմե շատեր տեսած են Արարատը, անցած են Արաքսը, որով և ձգողության բնական օրենքով հասկանալի է, որ իրենց մտածումները, իրենց զգացումները դեպի հոն հոսին։

Բայց ի՞նչ ըսել սա նորահաս սերունդին, որ օտար հորիզոններու, օտար աստղերու տակ բացավ իր աչքերը լույսին, որ օտար աղբյուրներեն հագեցուց իր պապակը, որ մամիկի մը, հոր մը կամ մոր մը, եթե ուներ, պատմություններուն մեջեն ճանչցավ, երազեց իր հայրենիքը, որ գրքի մը սև գիրերուն մեջեն ծանոթացավ Հայաստանին, որ Արարատը տեսավ նկարի վրա լոկ, որ Արաքսը տեսավ քարտեզին վրա միայն և որուն հոգին և որուն սիրտը և միտքը օտար միջավայրերու, օտար ազդեցություններու տակ տարիներո՞վ, տարինե՛րո՞վ ճանկռտվեցան, բզկտվեցան։ Ու այժմ, օտար միջավայրերու մեջ ծնած, հասակ նետած այս երիտասարդությունը հայրենասիրական որպիսի սրբազան հուրով մը բռնկած է, որ Նալբանդյանը պիտի շվարեցներ, որ Բաֆֆին պիտի շփոթեցներ... Անոնք արդեն իսկ խորտակեցին, քանդեցին ժողովրդական սա հին ասացվածքը, որ կրսեր. «Աչքե հեռու՝ սրտե ալ հեռու»։ Անոնք իրենց գործոն հայրենասիրությամբ փաստեցին, թե հայրենիքը թեև աչքեն հեռու էր, սակայն իրենք սրտին խորը կկրեին զայն՝ օրորոցեն սկսյալ...

Այս զմայլելի երիտասարդներու ներկայացուցիչներեն պատկառելի հույլ մը ահա, մեկ կողմ նետած ամեն անձնական գործ և մտահոգություն, զեկավար տարեցներու հետ կողք-կողքի, ներգաղթի կոմիտեի գրասենյակներեն ներս իր խանդավառ մասնակցությունը կբերե ներգաղթի աշխատանքներուն, պատրաստ ամեն զոհողության, հոժար ամեն պարտականություններու։ Պարագան նույնն է դուրսը ազատ ասպարեզի հետևորդներուն մեջ։ Ճանչցա երիտասարդ ջութակահար մը, եգիպտահայ Որբախնամի երբեմնի սաներեն, որ հարգանքով կհիշե Որբախնամի նախագահուհի տիկին Վիկտորյա Արշարունին—այժմ 35 տարեկան է և արդեն հինգ զավակներու տեր, հաջորդ քարավանով հայրենիք մեկնումին առիթով 300 օսմ. դեղին ոսկի արժող իր տունը 100 օսմ. ոսկիի ծախելե կվերադառնար։

— Աժան տվեր ես, չմեղքցա՞ր,— կընդմիջե քովեն բարեկամ մը։

— Մեղքնա՞լ։ Ի՞նչ բան։ Երբ ներգաղթի վիզաս ստացեր եմ արդեն և կուզեմ օր առաջ, ժամ առաջ հայրենիքս վերադառնալ։ Կկարծես, որ դրամը, աղտոտ դրամը և կամ տան մը չորս պատե՞րն են, որ պիտի կասեցնեն զիս...

Ու այս խոսքերը արտասանեց խրոխտ վճռականությամբ և ընդգծված ձեռքի բուռն շարժումներով։ Տեսե՞ր եք երբեք իր վանդակին երկաթները խորտակող առյուծ մը։

Ուրիշ պարագա մը։

Բարեկամ մը զիս կառաջնորդե իր մեկ ծանոթին այգին։ Անոնք ալ պիտի ներգաղթեն առաջիկա քարավանով։ Տեր-Զորի սպանդեն մազապուրծ խույս տված որբուհիի մը հետ ամուսնացած, այժմ վեց զավակներու տեր գաղթական հայ մըն է ասիկա, որ քսան տարի առաջ հաստատված է հոն և վարձած խոպան տարածություն մը։ Ներգաղթի և մեկնումի պատրաստություններու խոսակցության ընթացքին, այս հայը մեզի կպատմե, թե ինչպես շտկած, հարդարած է այդ խոպան հողը, ինչպես իր խիճերեն ու տատասկներեն մաքրած է այդ տարածությունը, թե ինչպես քովի լեռան կողեն կաթկթող խոնավությունեն կռահելով լեռան խորքը ակի մը ներկայությունը, շաբաթներով փորած է այն մասը, այդպիսով 15 մետր խորությամբ քարայր մը ձևացնելով, մինչև որ գտած է ակնարունը և պոռթկացուցած ակը, որ այժմ դուրս կհոսի քարայրեն՝ հագեցնելով իրենց ծարավը և ոռոգելով այդ տարածությունը իր զուլալ բխումներով։ Դարձյալ այս

հայը կպատմե մեզի, թե ինչպես ձմեռ ժամանակ լեռներեն իջնող հեղեղները կքշեին, կտանեին այգիի տունկերը և ցանված հողերը։ Ու ինքը հարկադրված, օրվան աշխատանքեն վերադարձին գիշերներով աշխատած էր բուքին ու ցուրտին, իրեն գործակից ունենալով իր կինը, լամպի մը լույսին տակ՝ քար կրելով, պատ հյուսելով, խարխուլ հողերուն առջև պատնեշներ շինելով, հաճախ լեռան կողերը փորելով և տեղ տեղ թումբեր կանգնեցնելով, հեղեղին ուղղությունը փոխելու համար։ Ահա այսպիսի մաշեցնող հոգնություններով և գերմարդկային զոհողություններով մեջտեղ եկած այգի մըն էր ասիկա։ Խորքը խրճիթ մը, դարձյալ իր ձեռքերովը շինված, որ իրենց բնակարանն է։ Քովը՝ գոմ մը, մեջը՝ կաթնատու կով մը և տասնյակ մը հավեր։

— Ուրեմն հաջորդ քարավանով կմեկնի՞ք,—կխզե լռությունը առաջնորդս։

— Այո՛, կմեկնինք։

— Եվ այս ամենը կթողուք ու կերթա՞ք։

— Այո՛, կթողունք ու կերթա՛նք։ Քանի հողը մերը չէ, վարձքով է, այս ծառերն ու պարտեզները գնող չըլլար, այսպես է օրենքը։

Կդիտեմ շարքով ծիրանի ծառերը, սալորենիները, խնձորենիները, որոնց վրա խնձորները կկարմրին, նաև թզենիները, որոնց վրա թուզերը դեռ նոր կհասուննան... Ավելի վարը այգին է, որթատունկերու շարքերով և անհամար խաղողի ողկույզներով։ Ավելի անդին բանջարանոցն է, կանանչ տերևներուն մեջեն կփայլին լոլիկը, սմբուկն ու լուբիան...

— Բայց այս ամենքին համար,—կշարունակե առաջնորդը,— ահագին աշխատանք և հոգնություն թափեր եք, այսպես լքելով երթա՞լ...

Կժպտի այգեպանը ուսերը վեր նետելով։

— Հայրենիքիս մեջ նորը կշինեմ...

Ու ես բուռն փափագ մը կզգամ գրկելու, համբուրելու այս պարզ մարդը, որ իր խիզախ ու աննկուն հայրենասիրությամբ հերոսի մը համեմատությունները կառնե իմ աչքիս։

Այս քանիերորդ անգամն է, կխորհիմ ինքնիրենս, որ այս

ժողովուրդը կշինե, կշենցնե, կթողու ու կհեռանա... Ասկե 2 հազար 500 տարի առաջ, երբ Էսքիլես «Պրոմեթեոս»-ը կգրեր, մտքեն կանցնե՞ր, արդյոք, թե ժողովուրդ մը պիտի ապրեր այդ առասպելական տառապանքը, պարագաներուն և պայմաններուն կեր դառնալով այսպես... Եվ ըսել, թե այս հայը մինակը չէ։ Իրեն պես հազարավորներ, տասնյակ հազարավորներ կան այս պայմաններուն, այս զոհողություններուն ենթակա...

Բայց, կմխիթարվիմ հանկարծ.— Ասիկա վերջի՛նն է։ Ասիկա վերջնակա՛ն զոհաբերությունն է։ Ա՛լ լմնցավ։ Ա՛լ այսուհետև Հայաստանի մեջ մեր դրած յուրաքանչյուր քարը, զարկած յուրաքանչյուր գամը, տնկած յուրաքանչյուր ծառը մե՛րն է, մե՛ր զավակներունն է, մե՛ր թոռներունն է։ Ասկե՝ այնքան իանդավառություն ներգաղթին շուրջ։ Ասկե՝ զոհողություններու այնքան սրտաբուխ պատրաստակամություն ամենքին մոտ։ Այս է պատճառը, որ այնքան նավարեկություններե հետո այս ժողովուրդը ամուր փարած է ներգաղթի նավուն, անոր մեջ տեսնելով իր փրկությունը։ Այս է պատճառը, որ հոս մեկնումի վիզան ստացողները առտվնե մինչև գիշեր կերգեն ու կպարեն, իսկ հիվանդները՝ անկողնեն դուրս կցատկեն, հրաշքով բուժվածներու նման, նոր ուժ, նոր եռանդ զգալով իրենց մեջ և հաճախ ոտքով կտրելով կարանտինա տանող երկար ճամփան։

Կարանտինա՜ն, ո՛հ, այդ կարանտինան...

Տակավին երեք ամիս առաջ ծովեզերյա լքված, մոռացված, արևախանձ այս տարածությունը, զոր սիրահոժար կերպով ներգաղթի կոմիտեին տրամադրեց Լիբանանի բարեխնամ կառավարությունը, իբրև ներգաղթող հազարավոր հայերու ընդհանուր կենտրոնատեղի, շեն ու զվարթ ուխտատեղիի մը վերածված է այժմ, ուր եռուզեռը դարձյալ իր գագաթնակետին հասած է ներգաղթի նոր նավուն ժամանումեն ի վեր։

Արդարև, կարանտինան ներկայիս ձգողության կենտրոնն է ոչ միայն ներգաղթող բազմություններուն՝ այլ նաև ընդհանուր առմամբ բեյրութահայության, որոնք առավոտյան առաջին ժամերեն մինչև ուշ գիշեր գունդ առ գունդ կհոսին

հոն, դիմավորելու, գտնելու և բարի ճանապարհ մաղթելու Հալեպեն, Դամասկոսեն, Սելիմիեեն, Հոմսեն, Համայեն հասնող իրենց սիրելիներուն, ազգականներուն և բարեկամներուն, որոնք գնացքներու և ինքնաշարժներու հաջորդական քարավաններով կհասնին կարանտինայի կենտրոնատեղին։ Ասոնց մեջ կան նաև օտարացած հայեր արևախանձ մորթով, երկար մորուքով, որոնք ինքզինքին վերագտած՝ իբրև օրինավոր հայեր կմասնակցին խորերեն հասնող քարավաններուն՝ իրենց արաբական տարազներովը։

Վերջին պահուն, սակայն, գավառներեն հասնող ներգաղթողներեն կտեղեկանանք թե հոն ներգաղթող հայերուն և արաբներուն միջև բաժանումի արարողությունները սրտաշարժ համեմատություններու հասած են։

Առաջին քարավանին մաս կազմելու համար Հալեպեն մեկնող ներգաղթողները արար և հայ եղբայրության գեղեցիկ ցույց մը կազմակերպած էին սրդեն նրանց մեկնումին օրն իսկ և հայ երիտասարդներու շքերթի մը առաջնորդությամբ, ներգաղթողներու թափորը թարմ ծաղկեպսակներ դետեղած էր Սիրիայի ազգային ազատագրական շարժումին ժողովրդի հերոսներուն հուշարձաններուն։ Այդ արարողությանը ներկա են Հալեպի կուսակալը, ոստիկանության հրամանատարը և բազմաթիվ արաբ բարձրաստիճան անձնավորություններ, մտավորականներ, ինչպես նաև արաբ մամուլը։ Հոն խոսված են արաբներու և հայերու իրարու հանդեպ ունեցած եղբայրական փոխադարձ զգացումներուն և Սիրիայի ժողովրդի ազատագրական պայքարին հայոց ընծայաբերած սրտագին աջակցության մասին հուզիչ և խանդավառ ճառեր, որոնց պատասխանած են ներգաղթի կոմիտեի անդամները, պանծացնելով արաբ ժողովրդի ասպնջական ոգին և ընդգծելով հայոց հանդեպ ցույց տրված եղբայրական վերաբերումին անմոռանալիությունը։ Այդ օրը, ոստիկանության հրամանատարը ի պատիվ ներգաղթողներուն բացառիկ հրահանգով մը ընթացիկ օրենքներե զերծ կացուցած է ներգաղթող հայեր փոխադրող բոլոր ինքնաշարժները՝ արտոնելով որևէ թիվով ճամփորդներու կամ որևէ ծանրությամբ բեռներու փոխադրությունը ի Բեյրութ։ Իսկ ինքնաշարժի վարիչները, բոլորն ալ հայեր, մերժած են որևէ վարձատրություն և սիրահոժար կերպով կատարած փոխադրությունը։

Այս անգամ դարձյալ, Սելիմիեեն ներգաղթող հայերը հրավիրված են փաստաբան Յուսուֆ Ապու Համուդի բնակարանը ընդունելության մը։ Ներկա եղած է նաև գայմագամը[1] ու խոսված են արաբ ու հայ ժողովուրդներու եղբայրակցության մասին հուզիչ ճառեր։ Գայմագամ բեյը խոսք առնելով դրվատած է հայ ժողովրդի շինարար ոգին և երախտագետ հատկությունները, որուն պատասխանած է տեղվույն քահանան՝ վեր առնելով արաբ ժողովրդին ազնվական, ասպետական հատկությունները։ Ներգաղթողները հրաժեշտ առած են նույնպես Երեսփոխան Սյուլեյմանե, նախկին գայմագամ Միա Միրզայե, քաղաքապետության նախագահ Մուստաֆա Թեմիրե, որուն հանգուցյալ հայրը առաջին համաշխարհային պատերազմին մոտ տասը հազար հայերու կյանքը փրկած է ջարդարարության համար Սյուլեյմանիե ուղարկված թուրք ժանդարմներու ջոկատի մը ձեռքեն։ Ահա այս հայությունեն ցարդ Սյուլեյմանիե մնացած 56 ընտանիք հայությունն է, որ ամբողջությամբ հայրենիք կներգաղթե։

Հալեպեն հասնող ներգաղթողները Ռայաքի հայության կողմե խանդավառ ցույցերու առարկա եղած են՝ դեպի Բեյրութ իրենց ուղևորությանը ընթացքին։ Երբ Հալեպ-Դամասկոս գնացքը կանգ կառնե փոխանցման կենտրոն Ռայաքի կայարանը, Բեյրութ տանող գնացքին փոխանցելու համար բեռներն ու ուղևորները, Ռայաքի հայությունը՝ որ կանուխեն տեղեկացած ըլլալով ներգաղթողներուն ժամանումին, խրոնված էր կայարանին մեջ՝ իսկույն անօրինակ խանդավառությամբ գործի կանցնի և մեկ կառաշարեն մյուսը կփոխադրե ներգաղթողներուն բոլոր գույքերն ու ծանր բեռները և ասիկա 15 վայրկյանի մրցանիշ-ժամանակամիջոցի մը մեջ, որ գնացքին շարժելու ժամկետն է։

Ահա այսպես, Սիրիայի և Լիբանանի բոլոր անկյուններեն հասնող ներգաղթողները՝ իրենց ճամփու ընթացքին սի-

[1] Գավառապետ։

ռալիր հոգածության, սրտագին ջանդակության և խանդավառ ցույցերու առարկա, կհոսին կարանտինայի կենտրոնացման վայրը։ Ու ամփոփ ընթացքին բոլորն ալ կերգեն, անդադար կերգեն։

Կերգեն նոր ու խանդավառ երգ մը, որուն թախծոտ երաժշտությունը չես գիտեր ինչ ունի իր մեջ մեր ականջ Ղարիբի երգերը հիշեցնող, որ սիրտդ կհուզվի և աչքերդ կարցունքոտին։ Մանավանդ երբ երիտասարդները կլռեն և աղջիկները խումբով կսկսին երգել...

Հարցուցի, պրպտեցի, իմանալու համար այս երգին հեղինակը, ոչ ոք սակայն կրցավ պատասխանել։

— Ժողովուրդը ինքը հորինած է,—լուսաբանեց ներգաղթող մը։

Ուրեմն ինքնեկ, ինքնաբուխ բանաստեղծություն մըն է ասիկա, ներգաղթի քարավաններուն առջև հուզված, խանդավառված, ներշնչված ժողովրդին հոգիեն բխած և գուցե անոր համար ալ՝ հարազատ և հուզիչ։

Ներգաղթողները այս երգը երգեր են ամբողջ ճամփու տեվողության։ Այժմ կերգեն նաև հոս՝ կարանտինայի մեջ։ Պիտի երգեն նավուն մեջ՝ մինչև Բաթում։ Պիտի երգեն նաև գնացքին մեջ՝ մինչև Երևան, ինչպես որին նախորդ քարավաններով մեկնողները...

Կարանտինայի տարածության ընդարձակ դուռնեն ներս հոսող ներգաղթող բազմություններուն մեջ երիտասարդները իրենց նվագարանները հետերնին կկրեն։ Ու ամեն անկյուններեն բարձրացող երգի ու նվագի ձայները ուրախությամբ կլցնեն մթնոլորտը։ Դափն ու թմբուկը, կիթառն ու սազը, ջութակն ու մանդոլինը կերգեն, կգոռան, հարատևական խնջույքի մը շենշող ոգևորությունը սփռելով շրջադին, հաճախ ընկերանալով պարողներու աշխույժ խումբերուն, երբեմն ալ՝ շուրջպարի նյած սա հեզաճկուն օրիորդներու խումբին... Հո՛ս, հո՛ն օդին շչերը կփայլին, որոնց շուրջ բոլորված ներգաղթողները ճշմարիտ խրախճանության մեջ են, շեն ու զվարթ կուտեն, կխմեն ու կերգեն։ Հրճվեցե՛ք, ուրախացե՛ք, ցնծացե՛ք, հայու լամուկներ, դուք շա՜տ եք տառապեր, շա՜տ տրտրվեր։ Երգեցե՛ք, նվագեցե՛ք, երիտասարդներ, դուք շա՜տ եք լռեր, շա՜տ եք տանջվեր։ Կերե՛ք, խմեցե՛ք, ծերեր, դուք անոթի, ծարավ շա՜տ եք մնացեր։ Հրճվեցե՛ք, մայրե՛ր, դուք շա՜տ եք լացեր։ Պարեցե՛ք, աղջիկներ, դուք շա՜տ եք տառապեր։

Անդին, հսկա ծառի մը տակ բազմությունը խռնված է, բան մը կդիտե։ Կմոտենամ։ Յոթանասունհինգնոց ծերունի մըն է, որ ծառին տակը բազմած կպատմե շուրջի բազմության, թե՝ ինչպես երեսունմեկ տարի առաջ 1915-ի արյունազանգ օրերուն՝ գաղթականներու կիսամեռ թափոր մը, որոնց մեջ նաև ինք իր ընտանիքով, թուրք վայրագ ժանդարմներու խարազաններուն և սվիններուն տակ, բերած և նետած էին այս միևնույն կարանտինայի վայրը՝ երկու օր հետո քշելու համար Տեր-Զորի սպանդանոցը։ Այս ծառին տակն է, որ— կբացատրե ծերունին,—երկու օր մնացինք անոթի, ծարավ և հետո քշվեցանք Տեր-Զոր, ուր կորսնցուցի կինս և զավակներս... Ու պահ մը լուռ մնալե հետո,—այժմ երեսունմեկ տարի անցեր է այդ սև օրերեն ի վեր ու այսօր, դարձյալ այս միևնույն ծառին տակը, նստած եմ ու կսպասեմ ոչ թե աքսորի հրամանին, այլ՝ ներգաղթի փրկարար նավուն, որ զիս պիտի տանի իմ սիրելի հայրենիքս...—ու արցունքով լճացած աչքերուն հետ տառապանքեն կարկամած ձեռքերը վեր վերցնելով,— փառք, հազար փառք, այս շեն օրերը մեզի պարգևողին, սովետական հայրենիքի մեր հերոս բույրերուն ու եղբայրներուն...

Ներգաղթի տիրող այս համատարած եռուզեռին և մեկնումի պատրաստություններուն, թոհուբոհին առընթեր՝ գթության գործն ալ իր դերը ունի կարանտինայի խճողումեն ներս։ Ու մենք հոն մեր շրջագայության ընթացքին կհանդիպինք տիկիններու ու օրիորդներու, որոնք դալ տարի ներգաղթող բլլալով հանդերձ՝ անտարբեր չեն ներկայիս ներգաղթող թշվառ ընտանիքներու վիճակին։ Անոնք իրենց թևերուն տակ ծրարներ սեղմած կամ ձեռքերնին տուփեր բռնած կշրջեին ներգաղթողներու խումբերուն մեջ, երբեմն ծրարին մեջեն դուրս քաշելով մանուկներու համար կոշիկներ կամ բուրդե սիրուն վերարկուներ և ներքնազգեստներ, հագցնելով, նվիրելով սա կամ նա բոկոտն մանչուկին

կամ աղջնակին, որոնց աչքերուն մէջ իսկույն կփայլին ուրախութեան արցունքները, չմոռնալով անոնց ճակատին դրոշմել նաև «Երթաք բարով»-ի տաքուկ համբույր մը։ Իսկ այդ տուփերուն մէջ քաղցրավենիներ կան, տունեն պատրաստված, նվիրելու համար բազմանդամ ընտանիքներու մայրերուն, որոնց շուրջը կթռչկոտին, կճռվողեն երբեմն վեց, երբեմն ութ մանուկներ։

Սեպտեմբեր 8-ի կիրակի գիշերը ժամը 9-ին կարանտինայի ներգաղթող հյուրերը անօրինակ եռուզեռի մէջ էին։ Ոմանք ծովափ կվազեին, ուրիշներ քնացողները կհրմշտկեին. կարթնցնեին ու ամենքը կխուժեին ծովեզերք։ Հսկա նավ մը ամբողջովին սպիտակ, որ էլեկտրական լույսերու մէջ կլողար, դանդաղ կառաջանար դեպի քարափ։ Ի՞նչ նավ էր ասիկա։ Ո՞ւրկէ կուգար։ Հանկարծ վիթխարի ծխնիին վրա մեծադիր մուրճ-մանգալը կնշմարվեր։ Նոյեան Տապանը կուգայ... աղաղակները կթռչեին բոլոր բերաններեն և կտարածվեին մինչև հեռավոր թաղեր։ Ու բոլոր շրջաններեն հայությունը դուռ առ դուռ կդիմեր ծովեզերք, դիմավորելու, ողջունելու, ծափահարելու համար նավը, որը խարիսխ կնետեր նավամատույցին ձախ եզերքը։ Կարանտինայի մէջ խրախճանք էր մինչև լուսաբաց։ Երիտասարդները հայրենասիրական երգերով օդը կթնդացնեին, նվագախումբերը աշխույժ կնվագեին ու խումբերը կպարեին հայկական և կովկասյան պարեր։ Դուրսը ամեն թաղ թափորներ կազմած, երգելով կշրջեին թաղե թաղ ձեռքերնին ջահերով, նավուն գալուստը ավետելով։

Ներգաղթի առաջին նավուն առթիվ տեղի ունեցած մեծ խրախճանութիւնները հիշեցնող այս ցնծութեան պատճառը այն էր, որ նավուն ժամանումով կհերքվեին ներգաղթի կասեցումին մասին հնարված բոլոր սուտերը։ Արդարև Ե. քարավանը տանելու սահմանված «Ռոսիա» նավը երեք շաբաթով ուշացեր էր Բուլղարիայեն և Հունաստանեն նոր քարավաններ փոխադրած ըլլալուն համար դեպի Բաթում (ինչպես տեղեկացանք վերջերս անձնական նամակե մը)։ Այս պարագան հիանալի առիթ սեպած էին արհեստով խառնակիչները և սկսած էին սուտեր հնարել և միամիտներուն քշել իբրև կեղծ

դրամ, տիրող ներգաղթի ընդհանուր խանդավառությունը խանգարելու համար։ Օր մը՝ «Պոբեդա նավը Բաթում չէ հասած» կտարածայնեին, ուրիշ օր մը՝ «Նեղուցները գոցված են» կսպրդեցնեին, ուրիշ օր մը՝ «Նավերը... Դամասկոսեն պիտի գան» կհեգնեին։ Եվ իրենց վատությանը մէջ քայլ մը ևս առաջ երթալով և իրենց դարբնած սուտերուն ի վերջո իրենք ալ հավատալով՝ իրարու հետ գրավի կելլեին, թե «Այլևս նավ պիտի չգա»... Ու հիմա այդ նոր նավը կուգար մուրճի հարվածով քարուքանդ ընելու ափ մը այլասերածներու հորինած հականերգաղթ ելույթները։ Ասկե՝ այս անօրինակ խանդավառությունը։ Խանդավառության երկրորդ պատճառն ալ այն է, որ մինչ մենք ամսույս 13-ին «Տրանսիլվանիա»-ն կսպասեինք՝ ահա անկե առաջ անակնկալորեն կհասներ այս նավը, գալով Նյու-Յորքեն, իր վրա ունենալով երեք հազար ռուս գաղթականներ, որոնք հայրենիք կվերադառնային։

Հինգշաբթի առավոտ նավամատույցն եմ։ Հոն են նաև Եգիպտոսի հայաստանյան ճակատի մեր ընկերներեն՝ Գալընյան, Ջամպազյան, Արելյան, Թյուրապյան և ուրիշներ։ Ու բոլորս ալ զմայլանքով ու նաև բարի նախանձով կդիտենք նավ բարձրացող հայրենակարոտ բազմություններու անվերջ շարանը։ Լիբանանի ներգաղթի կենտրոնական կոմիտեի գանձապահ և փոխադրական գործողություններու վարիչ, եգիպտահայության ծանոթ Հակոբ Թրյանց, նավամատույցին ծայրը վրանի մը տակ նստած քանի մը օգնականներով, նավ մտնողներուն վերջին ստուգումները կընե։ Ամեն կողմ երիտասարդական ջոկատներ, ժիր ու կարգապահ, կհսկեն մուտքին, հասնող ավտոմեքենաները առաջնորդելով մինչև ըստուգման կայանը, նաև նավուն սանդուխներուն վրա օգնելով նավ բարձրացող ծերունիներուն, երեխաներուն, մանուկներ շալակած մայրերուն և հղի կիներուն։

Ներգաղթողներուն մէջեն երիտասարդ մը ինքաշարժին վրա կանգնած կբարձրացնե բազուկները և հուժկու ու խանդավառ ձայնով մը կսկսի խոսիլ. «Հայրենակիցնե՛ր, ահավասիկ մենք կերթանք, ցտեսությո՛ւն բոլորիդ։ Մենք ձեզ կըսպասենք հոն, մեր սիրելի հայրենիքին մէջ։ Մեր եղբայրները և քույրերը մեզի համար կերտեցին, շենցուցին, այժմ մենք

կերթանք ձեզի համար շինելու։ Գիտցեք սպասել կորովով ու հավատքով, այս սպասումին ետև կա մեծ երջանկությունը, հայրենիքը տեսնելու երջանկությունը։ Սերունդներ զոհվեցան այս օրերուն համար։ Բախտավոր ենք մենք, որ կապրինք այս շեն օրերը։ Եվ ասիկա շնորհիվ Հայաստանի մեր քույրերուն ու եղբայրներուն անձնուրաց զոհողությանց, շնորհիվ մեր պետական մարդոց իմաստության ու մանավանդ շնորհիվ մեր կոմունիստական պարտիային»։

Ու ծափերը և ուրախության աղաղակները կդղրդացնեն մթնոլորտը։ Եվ այս խանդավառ եռուզեռը կշարունակվի մինչև կեսօրե վերջ ժամը 3-ը։ Ժամի 3-ին ամեն աշխատանք լրացած է։ Բոլոր ներգաղթողները տեղավորված են նավուն մեջ։ Ներգաղթողներու կողմե պատրաստված տասնյակ մը կարմիր մետաքսե դրոշակներ՝ վրան մուրհ մանգաղ, կծածանին նավուն վերևեն։ Չորս մեծադիր պաստառներ, մին հայերեն, մյուսները արաբերեն արձանագրություններով կզարդարեն նավուն կողերը։ Հայերեն պաստառին վրա գրված է. «Շնորհակալություն մայր Հայաստանին։ Գալիս են երկիր ֆո որդիները»։ Իսկ արաբերեն պաստառները շնորհակալություն կհայտնեն Սիրիայի և Լիբանանի բարեխնամ կառավարություններուն և արաբ ազնիվ ժողովրդին, 25 տարիներ շարունակ հայ ժողովրդին հանդեպ իրենց ցույց տված եղբայրական վերաբերումին և ասպնջականության համար։

Նավուն առաջին սուլոցին կրացվին նավամատույցին երկաթյա արգելակները և դուրսի բազմահազար բազմությունը կխուժե քարափ, մինչև նավուն ծայրը։ Այս միջոցին բազմության կողմե նավ կտանին երկու գեղեցիկ ծաղկեփնջեր, իսկական կարմիր վարդերով կազմված և մետաքսե շղարշով մը պաշտպանված։ Այս ծաղկեփնջերեն մին նավապետին համար է, իսկ մյուսը՝ Սովետական Միության Բեյրութի հյուպատոս Ռուբեն Ահարոնովի համար, որ նույնպես հայրենիք կմեկնի և որուն այնքան կպարտի Լիբանանի հայությունը Սովետ-Լիբանան դիվանագիտական հարաբերություններու սկսման օրերեն մինչև ներգաղթի այս փրկարար ձեռնարկին հոգնեցուցիչ աշխատանքները։ Երկրորդ սուլոց մը ու նավեն վար կիջնեն ներգաղթի կոմիտեի անդամները, Սովետական Հայաստանի նախարարաց խորհրդի լիազոր պատվիրակները, որոնց երևումը սանդուխին վրա կդիմավորվի բուռն և խանդավառ ծափերով։ Դուրսը, Բեյրութի մեջ փողոցները ամայացած են արդեն և խանութներուն կեսը փակ։ Ամեն մարդ նավամատույց կվազե նավուն մեկնումը դիտելու։ Արդեն իսկ սանդուխը վեր քաշված է ու պարանները կքակվին։ Ու «բարի երթաք»-ի, «շուտ եկեք»-ի, «շուտով գրեցեք»-ի և «ցտեսություն» աղաղակները իրար կխաշաձևեն, գոռում գոչումի փոթորիկ մը առաջացնելով նավուն մեջը, դուրսը, վարը և վերը։ Ժամը երեք ու կեսն է։ Վերջին սուլոց մը՝ և նավը կշարժի։ Ու բոլոր բերաններեն կերգվին Սիրիայի, Լիբանանի քայլերգները և «Սովետական ազատ աշխարհ Հայաստան»-ը։ Հազարավոր, տասնյակ հազարավոր թաշկինակներ կծածանին օդին մեջ։ Քանի մը երիտասարդներ իրենց շապիկները հանած կշարժեն թաշկինակի տեղ։ Սիրտերը թունդ ելած են, վարը թե վերը նավուն մեջ. լացի թե հեծկլտանքի ձայներ կլսվին, ոմանք իրենց սիրելիներեն կբաժնվին, ուրիշներ՝ իրենց ուրախություններն կուլաէ։

— Դուք ո՞վ ունիք,— կհարցնեմ քովս ի վեր լացող կնոջ։

— Մայրս կմեկնի,— կըլլա պատասխանը։

— Մի՛ լաք, հաջորդ քարավաններով դուք ալ կմեկնիք,— կմխիթարեմ զինքը։

— Դուք ի՞նչու կուլաք, պարո՛ն, դո՞ւք ալ ներգաղթող ունիք,— կհարցնե նույն կինը։

— Այո՛,— կպատասխանեմ։

— Ձեր ի՞նչը կմեկնի։

— Երեք հազար քույրերս և եղբայրներս կմեկնին և ես ուրախություններս կուլամ,— կպատասխանեմ աչքերուս արցունքը սրբելով։

Նավուն մեջեն դեռ դուրս կթավալին ու մեր հոգիներուն մեջ կթափեն մեր հաղթական հզոր հայրենիքի հիմնին գոռ շեշտերը.

«Փառք մեզ միշտ փառք,
Հերոսական Հայաստան»։

Ու պահ մը այսպես քարացած կդիտեմ հեռացող, հորիզոնին կապույտին մեջ սուզվող նավը, երանի տալով անոնց,

որոնք իսպառ փշրեցին իրենց գաղթականի ցուպը և թոթափեցին աքսորի ճամփաներուն արյունն ու փոշին։ Ու այժմ կերթան իբրև ազատ քաղաքացիներ ապրելու, վայելելու մեր պանծալի հայրենիքին ծով բարիքները և փառք կուտամ այս օրերը մեզի պարգևողներուն... «Մինչև որ երթա՛նք, պարոն Սվազլյան», կսթափեցնե զիս ժառանգավորաց վարժարանի տեսուչ Սերովբե վարդապետ Մանուկյանը...

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԳԱՂԹԸ

(Ճառ արտասանված 1946 թվականի հոկտեմբերի 19-ին ներգաղթին նվիրված ժողովրդային մեծ հավաքույթին)

Զանգվածային ներգաղթի հոչակումի առիթով աշխարհի բոլոր մասերու վրա ի հայտ եկած է խանդավառ երևույթ մը ըլլա մայր հայրենիքի, ըլլա գաղթաշխարհի մեջ։ Այս իրողությունը կփաստե ինքն իրեն։ Ներկայիս գաղութներու մեջ ներգաղթի հսկայական շարժումի սիրտը կհանդիսանա Սիրիա—Լիբանանը, որտեղից կվերադառնամ և որոնց մասին է, որ կուզեմ պատմել ձեզ։

Երբ 1945 թվականի նոյեմբերի 11-ին Մոսկվայի Կենտրոնական կառավարության հրահանգով աշխարհի ընդհանուր հայության համար հայրենիք վերադարձի արտոնությունը կըհրամանգրվեր, և առաջին հերթին Սիրիա—Լիբանանի հայությունը կկոչվեր ներգաղթելու, խանդավառությունը ամեն չափ ու սահման անցած էր և ժողովրդական խրախճանությունները տևել էին օրեր։ Իսկույն կազմվել էին ներգաղթի կենտրոնական կոմիտեներ 80 գրասենյակներով և իսկույն 200 հազար հայության 165 հազարը արձանագրվել էին երկու ամսվա կարճ շրջանի մը մեջ։ Խանդավառության այս հոսանքը շարունակվել էր ամիսներով. ըլլա կարանտինայի կենտրոնացման վայրը, ըլլա ներգաղթի նավերու ժամանումի և մեկնումի պահերուն, որոնց նմանը այս ժողովուրդը չէ տեսած ոչ հարսանեկան խրախճանքներում և ոչ ալ Երուսաղեմի ուխտավայրերե դարձի ընթացքին։ Նավերու մեկնումի պահին, մանավանդ, անկարելի է չհուզվիլ, երբ օտարներն անգամ մեզի հետ կերգեն «Կարոտցել եմ բեզի, շքեղ Երևան», «Հեյ, քարավան» երգերը և Սովետական Հայաստանի Պետական հիմնը։ Ներգաղթի այս խանդավառ շարժումը ներկայիս կտիրե ամեն տեղ՝ Բուլղարիա, Հունաստան, Ռումինիա, Պարսկաստան, Ամերիկա, մեզ մոտ՝ Եգիպտոս և այլ վայրերում։ Երբ Երուսաղեմ երթալու համար Պաղեստին ժամանեցի, հոն ևս 14 հազար հայության 13 հազարը արձանագրված էին։ Նաև Ս. Հակոբա վանքին 2 հազար 500 բնակիչները ամբողջությամբ արձանագրված էին։ Հոս, Եգիպտոս հասնելուս միևնույն խանդավառ երևույթը դտա. ամեն սեռի, ամեն հասակի հայեր գունդ առ գունդ կդիմեին արձանագրվելու։ Եվ ասիկա այլ կերպ չէր կրնար ըլլալ. ինչո՞ւ մեր լեզուն և մեր ինքնությունը անվթար պահելու համար դարերով գերմարդկային պայքար, կռիվ ենք մղեր...

Ինչո՞ւ այս ժողովուրդը, որ շարունակ գաղթել է և ուր որ կանգ է առել իսկույն դպրոց մը և եկեղեցի է շիներ...

Ինչո՞ւ մեր հոյակապ մտավորականները և կրթականները կախաղաններու վրա հանվել են...

Ինչո՞ւ Տեր-Զորի մեջ միլիոն մը անթաղ դոհեր տվեր ենք...

Ինչո՞ւ մեր քույրերը իրենց պատիվը դահիճներու ձեռքեն խլելու համար ձեռք-ձեռքի բռնած Եփրատի հորձանքներու մեջ գահավիժեր են՝ մահն արհամարհելով...

Մենք տվեր ենք այս անհամար զոհերը, թափեր ենք այս ծով արյունն ու արցունքը՝ անվթար պահելու համար ժողովրդի իդեալը և կանգուն պահելու համար հայրենիքի գաղափարն ու գիտակցությունը։

Հաջողե՞ր ենք մեր այս առաքելության մեջ։ Ասոր պատասխանը վիթխարի «ԱՅՈ» մրն է։ Եվ ասոր փաստը այն է, որ այսօր աշխարհի բոլոր ցամաքամասերուն բոլոր անկյուններեն՝ սկսյալ Սիրիա—Լիբանանեն, Հունաստանեն, Բուլղարիայեն, Եգիպտոսեն, Սուդանեն, Հարեշստանեն, Ֆրանսայեն, Ամերիկայեն, Հնդկաստանեն մինչև հեռավոր Հնդկաչինը, որտեղ 10 հայ կա, մինչև հեռավոր Ավստրալիան, որտեղ 15 հայ կա՝ հայրենիքի ներգաղթի կոչին կպատասխանեն՝ «ՆԵՐԿԱ»...

Այս պատիվը իսկույն կանդրադառնա Ձեզի, դաստիա-

բակներ, կրթական մշակներ և գործիչներ, որ կրցեր եք այս ժողովրդին ուղեղին մեջ վառ պահել հայրենիքի գաղափարին ջահը։ Ներգաղթի ներկա համատարած շարժումին առիթով երևան եկած խանդավառ պոռթկումը պսակումն է ձեր ջանքերուն, ձեր զոհողություններուն և ձեր թափած արյուն քրտինքին։

Այս հանդիսավոր առթիվ ձեր գնահատանքի արդար բաժինն ունիք նաև դո՛ւք, հայ մայրեր, որ, հակառակ ձեր գլխուն տեղացող հազար ու մեկ դժբախտության, մնացեր եք ձեր ընտանեկան հարկի պահապան հրեշտակը և հաղորդեր եք մեր մայրենի լեզուն սերունդե-սերունդ. մինչև որ այսօր բախտավորությունը ունեցաք հայրենի ծագող Կարմիր աստղալույսը ողջունելու...

Գնահատանքի ձեր արդար բաժինը ունիք նաև դուք, հայ աղջիկներ, որ ամեն տեղ, ամեն առիթով բարձր պահեր եք ձեր հայու պատիվը և անոթության, թշվառության ճիրաններուն մեջ գալարվելով հանդերձ չեք բծներ, չեք ստորացեր և ծերունի հայր մը կամ անկարող մայրիկ մը խնամելու համար տարիներով, սենյակի մը մութ անկյունը կծկված աշխատեր եք, աչքի լույս թափեր և երբ օտար երիտասարդ մը ձեզի մոտեցեր է, ակնածանքով անցեր է քովերնեդ, որովհետև հայ աղջիկը կատակ չի վերցներ. և այսօր ճակատաբաց հայրենիք կմեկնի...

Նաև դո՛ւք, հայ երիտասարդներ, դուք ալ ունիք ձեր գնահատանքի բաժինը, դուք, որ հակառակ ձեզ շրջապատող, ձեզ պաշարող մտավոր, հոգեկան և նյութական զրկանքներուն մազաչափ անգամ չեք զիջեր ձեր հայությունեն, դուք որ տարիներով կտոր մը չոր հաց ունեցեր եք իբր սնունդ ու փոսացած աչքերով կես անոթի, կես կուշտ գնացեր եք դպրոց, հաճախ դասարանին առաջինը հանդիսանալու համար։ Հազիվ գրիչ բռնած, սովորած Խորհրդային Հայաստանի քարտեզը, այսօր հայրենիքի առջև կներկայանաք իբր կտրիճներ և կյանքի հարվածներուն դեմ պայքարած և անկե հաղթական դուրս եկած հերոսներ...

Գնահատանքի ձեր արդար բաժինն ունիք նաև դուք, ընտանիքի հայրեր, որ ամեն օր անկայուն կյանքի մը ալեկոծությունը եղեր է ձեր կյանքը, որ տարիներ շարունակ գաղթականի անիծյալ ցուպը ձեր ձեռին գերմարդկային կռիվ մղեր եք հանուն պատառ մը հացի, այն ալ հաճախ դուք չեք կերեր, ձերիններուն, ձագուկներնուդ եք կերցուցեր, աշխարհի բոլոր հաճույքներեն զրկվեր եք ծայրագույն խնայողությամբ ի խնդիր զավակներու ուսման ճամփելու համար, զանոնք հայ պահելու համար, քաջ գիտնալով, որ պիտի գա անպայման այս օրը, ինչպես հասած է ներկայիս և բովանդակ հայության հետ դուք ևս կներգաղթեք խորհրդային հայրենիք։

Սրտերը վե՛ր և ճակատները բա՛րձր. հայությունը իր խորհրդային հայրենիքը, իր հարազատ հայրենիքը կվերադառնա։

Հայրենիք մը, որ ոչ միայն պատիվ կբերե հայությանը, այլ և պատիվ կբերե մարդկությանը, պատիվ կբերե մանավանդ քաղաքակրթությանը։

ԱՐԹՆՑԻ՛Ր, ՇՈՒՇԱՆԻԿ, ՆՈՅԵՄԲԵՐ 29 Է ԱՅՍՕՐ[1]

(Շուշանիկ Կուզինյանի հիշատակին)

Ներե՛, Շուշանի՛կ, որ գերեզմանիդ վրա կուգամ պահիկ մը, քո հանգիստդ խանգարելու և քունդ ընդհատելու։

Արթնցի՛ր, նոյեմբերի 29 է այսօր։ Հայ ժողովրդի մեծագո՛ւյն տոնը, քո արյունակիցներուդ ցնծության օրը։

Դո՛ւն, որ գրիչդ ղենք և կուրծքդ զրահ դարձուցիր անոնց պաշտպանության ի խնդիր և մայրական սիրտդ հորդառատ աղբյուրի մը պես պոռթկա՛ց տառապող դասակարգին վիճակեն գալարատանջ, որ բոցաշունչ գրչովդ սերունդներ խանդավառեցիր և անոնց ներսիդին արդարության հուրը բռնկցուցիր, արթնցի՛ր և տե՛ս, թե ինչպիսի՛ խրախճանության մեջ են անոնք այսօր, նոյեմբերի 29-ի այս հոյակապ տոնին առթիվ, ուր անոնք իրենց կուրծքով փշրեցին ստրուկի շղթան և նոր ուղի հարթեցին իրենց նմաններուն...

Արթնցի՛ր, նոյեմբերի 29 է այսօր, և տես, թե անոնք

[1] «Արաքս», Ալեքսանդրիա, 1946 թ., Ֆ 16։

այլևս մարդկության խորթ զավակները չեն, անոնք այլևս անվարձ մշակներ չեն, այլ՝ հայրենիքին հարազատ քաղաքացիները, իրենց վաստակին մեջ վարձատրված և աշխատանքի շքանշանակիր հերոսներ, այնպես՝ ինչպես դուն երազեցի՞ր, այնպես՝ ինչպես դուն հավատացի՞ր։

Բայց դուն կքնանաս ու չես լսեր։

Ա՜հ, ինչպես չի պայթիր այս հողը քեզի պես ուժանակ հոգի մը իր ծոցին մեջ պարփակած ըլլալուն համար...

Արթնցի՞ր, արթնցի՞ր, նոյեմբերի 29 է այսօր, Շուշանի՛կ. արթնցի՞ր և գերեզմանդ եզերող շուշաններուն արանքեն դիտե սա առաջացող շքախումբը։ Հերոսնե՛ր են բոլորն ալ, Բեռլինի գրավումեն վերադարձողներ։ Սա մեկը իրենց հրամանատարն է, հերոս զորավար Սաֆարյանը։ Լսե անոնց երկաթյա քայլվածքը, ականջ տուր սա հաղթական ռազմերգին, որ ուրի՛շ հերոսի մը՝ Արամ Խաչատուրյանի հորինածն է։

Լսե՜, Շուշանի՛կ, և հրճվե։ Հերոս հայրենակիցներուդ շարքերեն են՝ Բաղրամյան, Ստեփանյան, Իսահակյան և քաջամթիվ մեր պողպատասիրտ հրամանատարներ, որոնք ֆաշիստ յոթգլխանի վիշապը զգետնելե կվերադառնան։

Ու այժմ, ականջ դիր, Շուշանի՛կ։ Ահա նոյեմբեր 29-ի հաղթական տոնին առթիվ թնդանոթների հարյուր մեկ հարվածները կգոռան։

Այո՛, այդպես, լսե՛ և հրճվե՛։

Այո՛, կուզեմ, որ հոգիդ հրճվի գաղափարներուդ հաղթանակը ըմբոշխնելով և երազներուդ կենսագործումը դիտելով շուրջդ։

Ո՛հ, դուն կժպտիս և հոգիդ կխայտա և հրճվանքը կհայելիանա դեմքիդ վրա...

Լավ ուրեմն, բան մը ևս, որպեսզի հրճվանքդ կատարյալ ըլլա։

Լսե, Շուշանիկ, հայրենի վեհանձն ժողովուրդդ, իր եղբայրական ձեռքը պարզած, սրտաբաց, գրկաբաց, Սփյուռքի ցանուցիր հարազատնե՛րը կկանչե իր հաղթական վաստակին, իր շեն ու երջանիկ կյանքին մասնակից դարձնելու համար զանոնք ևս։ Եվ բոլոր գաղութներե քո զավակներդ,

դեն շպրտած գաղթականի անիծյալ ցուպը, գունդ առ գունդ կդիմեն իրենց պանծալի հայրենիքը, իրենց մայրենի աշխարհը։ Զանգվածային ներգաղթը սկսա՞ծ, ի՞նչ երանություն։ Տե՛ս, Շուշանիկ, քարավանների այս անհատնում շարանը, տե՛ս հայրենի հողին վրա անոնց դրոշմած արտասվաթոր համբույրները, տե՛ս մրրկավ զատված եղբայրներու և քույրերու սիրազեղ գիրկընդխառնումը, տե՛ս և ուրախացի՞ր։

Ո՛հ, այո՛, այդպես ուրախացի՞ր, երջանկացի՞ր, դուն շա՞տ ես տառապած։ Այո, կտեսնեմ, ուրա՞խ ես և երջանկության արցունքի կայլակներ կլճանան աչքերուդ մեջ։

Ալ բավական է, հոգնեցար։

Ալ հիմա քնացիր և շարունակե հանգիստդ։ Գուցե օր մը դարձյալ արթնցնեմ քեզ, նոր հաղթանակներու, նոր նվաճումներու ավետիսը հաղորդելու համար քեզի։

Անշուշտ ներեցիր ինձի, Շուշանիկ, նոյեմբեր 29-ի տոնին առթիվ մեր մեծ երջանկության քե՛զ ալ հաղորդակից ընելու ցանկությունեն մղված, քեզ պահիկ մը արթնցուցած, հանգիստդ խռոված ըլլալուս համար։ Ալ հիմա քնացի՞ր։

Փա՜ռք գաղափարներուդ հաղթանակին։

Փա՜ռք նոյեմբեր 29-ի հաղթական մեծ տոնին։

Այեքսանդրիա, 1946 թ., նոյեմբեր։

ՆՈՅԵՄԲԵՐ 29-ԻՆ։

Բայց դուն թվական մը չես։

Դուն մեր հույսերուն, հույզերուն, մեր իղձերուն, մեր մաքառումներուն պսակումը խորհրդանշող դիցուհի՞ն ես մեզի համար։

Դուն մեր բոլո՞ր հին աստվածները համադրող, մարմնավորող, միավորող ոգին ես, մեր անթի՞վ հերոսներու արյունի և անհամար մայրերուն արցունքի ծովերեն ծնած։

Դարերի պատմությո՞ւն ունի քո երկունքդ։

Քանի՞-քանի՞ անգամներ այս ժողովուրդը, քեզի ծնունդ տալու համար, մահվան ցավերուն մեջ գալարվեցավ։

Քանի՞-քանի՞ անգամներ քո հրափայլ դիմագիծդ կեր-

[1] «Արև», Կահիրե, 1946 թ., № 8498։

տելու նկրտող տիտաններ արյունախանձ ոհմակներու կողմե խոշտանգվեցան, բզկտվեցան և մարդակերպ բորենիներու ձեռքով կախաղաններու վրա ճռճվեցան։

Սերունդներ շարունակ ծնան ու մեռան, քու հրաշափայլ գալուստիդ հավատքը կտակելով որդվոց-որդի։

Մարդակուլ անապատներու մեջ, իրենց հոգեհատորներուն անշնչացած մարմինը իրենց ձեռքերով թաղած հերոսակա՜ն մայրեր քու պայծառ գալուստիդ սևեռած փակեցի՜ն իրենց աչքերը։

Ու ալեհեր ծերունիներ, իրենց երկար սպասումին մեջ սպառած, քու լուսածիր պատկերդ ամուր սեղմած իրենց սրտին մեջ՝ մտան գերեզման։

Բայց դուն պիտի գայիր անպայմա՜ն։

Եվ քանի հայ ժողովուրդը կգալարվեր իր ընդերքեն, այնքան ավելի մոտալուտ էր քո ծնունդը։

Եվ օր մըն ալ, ո՜հ, օրերուն օ՜րը, դուն ծնար, ցնծության և կյանքի հազար արշալույսնե՜ր ծագեցնելով հայության մոայլամած երկնակամարին վրա և երջանկության հազար աղբյուրներ հորդեցնելով հայության հրակեզ հոգիներեն ներս։

Այդ օրը մեր միլիոնավոր նահատակներուն ոսկորները խայտացին իրենց գերեզմաններուն մեջ։

Եվ մայրեր, իրենց օրորոցներուն քով ծունկ չոքած, քեզ օվսաննա երգեցին։

Քու ծնունդդ ծագող արևուն նախաշառափին պես եղավ, որ մեր արցունքի գետերը ցամքեցուց և մեր արյան լճերը կարմիր վարդի և կակաչի բուրաստաններու վերածեց։

Քու կենսունակ ճառագայթներուդ ջերմությունը թափանցեց, ներգործեց մինչև՜ հեռավոր աշխարհները և տաքցուց. հոն տարտղնված հայորդիներուդ մսած հոգիները։

Ու անոնց բոլորին նայվածքները քեզի ուղղվեցան, ինչպես առավոտյան բացվող շուշանները ծագող արևուն։

Դու մեծ էիր ու հրաշափայլ։

Աչքերդ մեյ մեկ անօրինակ արևներու կնմանեին, որոնց մեջ ցեղիդ համբավյալ հանճարը կկայծկլտար, կբոցավառվեր։

Ու քեզի ծնունդ տվող ժողովուրդին զավակները ծնած օրեն վայրկյան մը իսկ չդադրեցան քեզ սիրելե, վրադ գուրգուրալե, քո փա՜ռքդ երգելե։

Որովհետև քո շնորհիվդ էր, որ հայրենի հողին վրա ապրիլը՝ երջանկություն, աշխատանքը՝ օրհնություն և կյանքը՝ երգ դարձավ։

Քո շնորհիվդ է դարձյալ, որ հայությունը տիրացավ քաղաքակիրթ կոչված մարդագայլերու կողմե վեց հարյուր տարիներե ի վեր մերժված իր ազատության, իր փառքին և արյունկզակ քաղաքագետներու կողմե դրժված, ուրացված իր պետականության։

Ու դուն դարձյալ չբավականանալով շուրջդ սփռած բյո՜ւր բարիքներեդ՝ ուզեցիր աշխարհի բոլոր անկյունները ցրված թափառական որդիներդ ևս մասնակից դարձնել ընդհանուրին երջանկության, հոգեկան ու մտավոր ինչքերուդ և հրամանագրեցիր արտաշխարհի բովանդա՜կ հայության ներգաղթը, լա՜յն բանալով թևերդ, հույսի և երանության դուռներդ մեր տարահալա՜ծ, մեր հայրենակարոտ հոգիներուն առջև, դարերո՜վ փնտրված, երազված ու երգված երանությունը պարգևելով մեզի։

Ներգա՜ղթ... Այդ օրը Տեր-Զորի գեհենեն խույս տված կույսերը ճերմակնե՜ր հագան, իրենց հոգիներուն անմեղությունը մատուցանելով քեզի։

Ներգա՜ղթ... Այդ օրը ծերունիներ իրենց կարկամած ձեռքերը վեր բարձրացուցին և երանության արցունքներն աչքերնուն քեզ փառաբանեցին։

Ներգա՜ղթ... Ու մեր երիտասարդներուն ճակատները վեր բարձրացան, արմենական արյունը եռաց անոնց երակներուն մեջ, հայրենիքին հպարտության սրբազան սարսուռը ղգացին իրենց հոգիներուն խորը։

Ներգա՜ղթ... Այդ օրը բովանդակ սփյուռքահայությունը իր ճակտեն քերթեց, նետեց դարերու նախատինքը և գարշանք եղող «աղտոտ օտարական»-ի այրող խարանը։

Ներգա՜ղթ... Ու սպիտակ նավերը, իբրև փրկության լաստեր, գաղութե-գաղութ թառեցան, որպես Նոյան աղավնիներ, արյան և արցունքի փոթորիկներեն հետո Սփյուռքի հայու-

թյան երկնակամարին վրա ճառագայթող ծիածանը ավետելով։

Ներգա՜ղթ... Ու քարավանները մեկնեցան, մեկնեցան ոչ թե սուգով ու արցունքով բեռնավոր, ինչպես էր երբեմն, այլ՝ ուրախության և խնդության երգերով, ծափ ու ծիծաղով և ցնծության աղաղակներով ծանրաբեռն։

Ներգա՜ղթ... Ահա աշխարհի բոլո՜ր անկյուններեն քեզի կուգան շարա՜ն, շարա՜ն, որպես հիացիկ ուխտավորներ։

Քեզի՜ կուգանք նաև մե՛նք, մե՛կ միտք, մե՛կ նպատակ, մե՛կ մտասևեռում ունենալով։ Քո փառքիդ համար ճգնիլ, քո փառքիդ համար ապրիլ և քո փառքիդ համար մեռնիլ։

Փա՜ռք քեզ կերտող հսկաներուն, որոնք անմահությո՜ւնը ճանչցան։

Եվ ծաղի՜կ անոնց պաշտելի գերեզմաններուն։

Ալեքսանդրիա, 1946 թ., նոյեմբեր։

ՆԵՐԳԱՂԹԻ ԻՄԱՍՏՆ ՈՒ ԱՐԺԵՔԸ

(Ճառ արտասանված 1946 թվականի մայիսի 9-ին Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի առաջին տարեդարձի առթիվ՝ Ալեքսանդրիայի հայ ազգային խորհրդի կազմակերպած հանդեսին)

5 տարի տևող արյունռուշտ պատերազմը վերջացավ ու արդեն առաջին տարեդարձն է, որ կտոնենք։ Ամեն ժողովուրդ ներքին և արտաքին դժվարությունների մեջեն կքայլե, որոնց հետ սերտ կապված կմնան ֆիզիկական և տնտեսական գոյության կնճիռները։ Մենք սփյուռքահայերս բացառաբար այս անգամ բախտավոր քիչերու շարքին կպատկանինք, ու մեզ համար այդ կրծող հարցերը գոյության իրավունք ունենալե դադրած են։

Ավելին, հայ ժողովուրդը այս պատերազմեն դուրս եկավ ոչ միայն հզոր ու հաղթական, այլ իր դարավոր երազը եղող ազգահավաքումի համար բոլոր հնարավորություններով օժտված։ Ներկայիս սփյուռքահայությանս համար մի գլխավոր հարց գոյություն ունի։

Այդ ներգաղթի հարցն է։

Ներգաղթը արդեն իսկ վճռված, որոշված և գործնական հունի մեջ դրված հարց է, բովանդակ հայության համար։ Սակայն ներգաղթի իմաստն ու արժեքը բացատրելե առաջ նախ ակնարկ մը նետենք արտագաղթի այն աղետավոր դրվագներուն վրա, որոնք հայության կյանքը թափառական և անկայուն դարձուցին։ Մեր հայրենիքի աշխարհագրական դիրքի բերումովը Հայաստանը միշտ ասպատակվել է վայրագ ու մոլեռանդ հարստահարիչների կողմից, ավերվել ու հրկիզվել է անընդհատ։ Հայությունը բռնադատվում էր հատվածաբար գաղթելու։ Սակայն հակառակ այդ բոլորի հայ ժողովրդի հոծ զանգվածը կմնար իր երկրում, շարունակելով պայքարել և ստեղծագործել իր անխոնջ եռանդով։

Արտագաղթի զորավոր շարժում մը ունեցանք Անիի անկումից հետո (1045 թ.) և հայ ժողովրդի ցիրուցան բեկորները մինչև Ռումինիա, Լեհաստան, Հնդկաստան նետվեցան։

Արտագաղթի ուրիշ ցնցող շարժում մը Կիլիկիայի պետության կազմության շրջանին եղավ (1080 թ.), որը ունեցավ 300 տարվա կարճ շրջանն։

1375 թվականին կիլիկյան թագավորության անկումով արտագաղթը հայակործան համեմատություններ առավ և հայությունը գաղթեց ամեն ուղղությամբ և աշխարհի ամեն կողմը՝ ի խնդիր հացի և ազատության։ Այդ մասին կենդանի վկայագիրներ են ժողովրդական անտունիները, «Կոունկ» ու պանդխտի երգերը։

Արտագաղթի ուրիշ զորավոր շարժում մը սկսվեց 1895 թվականից մինչև 1915-ը։ Այս ջարդերի, կոտորածների ընթացքում հայությունը ստացավ մեծագույն հարված մը ևս։ Հայ ժողովրդի երեք միլիոնի կեսը փշացավ Սուլթան Համիդյան արյունռուշտ կոտորածներից, իսկ մնացած կեսը ցիրուցան ցրվեց աշխարհի ամեն կողմը։

Վերցնենք ամենահեռավոր երկրներուն մեջ հրատարակվող թերթերու մեջ ծանուցվող առօրյա մահերու մասին երևցող մահազդները, և ձեր մարմինը պիտի փշաքաղվի գաղափար կազմելով մեր ժողովրդի ցիրուցանության մասին. արտասահմանի հայությունը տեսակ մը ապրող մսեղեն աշխար-

հագրություն մը դարձած է և դատապարտված է փչացումի։

Այս պայմաններում կարո՞ղ էր ապրիլ և հարատևել հայ ժողովուրդը արտասահմանի մեջ։ Այս հարցը ավելի ճիշտ կըլլար ուղղել Լեհաստանի և Հոլանդիայի մեջ ձուլված և կորսված, Ավստրիայի, Հունգարիայի մեջ մեռած ու փչացած, ինչպես նաև զանազան երկրներու մեջ հյուծված և փոշիացած հարյուր-հազարներով հայերուն, որոնք սակայն այսօր, ավա՜ղ, ի վիճակի չեն մեզի պատասխանելու, որովհետև հայության համար ձուլված և կորսված են իսպառ։ Գաղթականության, ջարդի, աքսորի բոլոր դառնությունները ճաշակած և անցյալի մեջ կորսված հայ գաղութներու պատմության տեղյակ արտասահմանի հայությունը սարսափով կդիտեր իր և իր զավակներուն սպառնացող ձուլումի և այլասերումի ահավոր վտանգը և իր աչքերը դեպի մեր Մեծ Արշալույսին, դեպի մեր պանծալի խորհրդային հայրենիքին հառած, հուզումով ու աղապատանքով կսպասեր հոն գաղթելու, հոն ներգաղթելու մեծ ու փրկարար օրվան։ Եվ իր հույսերն ու սպասումները անօգուտ չանցան և օր մըն ալ, օրերուն օրը, նոր արշալույս մը ճառագայթեց արտասահմանի հայության համար ևս։ Խորհրդային Հայաստանի կառավարության խնդրանքին վրա Խորհրդային Միության Կենտրոնական կոմիտեն 1945 թվականի նոյեմբերի 21-ին հրամանագրեց աշխարհի բոլոր անկյունները ցրված, գաղթական, թափառական հայության հայրենիք վերադարձ՝ ներգաղթը։

1920 թվականի նոյեմբերի 29-ին Հայաստանի հայության հարության թվականն էր։ Այսօր, 1945 թվականի նոյեմբերի 21-ին Խորհրդային Միության փրկարար որոշումով արտասահմանի հայությունը ևս հարություն կառներ իր գերեզմանային դրությունեն, ուր նոր և հրաշալի կարելիություններու հեռանկարը կխանդավառեր, կբոցավառեր հայության էությունը։

Հոս պահ մը կենանք, արդարության տուրք մը ունինք տալու։ Եթե Խորհրդային Միության կենտրոնական կառավարությունը ներկա քաղաքականության դժվարությանց մեջեն ամբողջ աշխարհի հայության ներգաղթը կհրամանագրեր,

ասիկա կպարտինք այն բացառիկ վստահության, գնահատանքին, որուն արժանացան համայնորեն մեր Հայաստանի եղբայրներն ու քույրերը։ Անոնք ըլլա՛ պատերազմեն առաջ, ըլլա՛ պատերազմի ընթացքում, ցույց տվին այնպիսի գերմարդկային զոհողություններ, այնպիսի մեծ նվիրվածություն, որ հայ անունը պանծացումե պանծացում բարձրացուցին, մանավանդ պատերազմի ընթացքում անոնք քաջության և հզորության զմայլելի փաստեր տվին աշխարհին, երբ այրերը ճակատի վրա հաղթանակե հաղթանակ կքայլեին, մայրերը իրենց զավակները երգելով ճակատ կճամփեին՝ հին Սպարտայի մայրերին գերազանցելով։ Կիները իրենց աշխատանքի ժամերեն հետո արյան փոխներարկման կայանները կդիմեին իրենց արյունը վիրավորված բանակայիններուն հասցնելու։ Երիտասարդները կամավոր կզինվորագրվեին, խորհրդային հայրենիքի պաշտպանության ի խնդիր կյանքն էին զոհում, մահն էին գրկում...

Ահա՛ թե որպիսի վստահության և զոհողություններու փոխարեն էր, որ արտասահմանի հայության համար ներգաղթը կհրամանագրվեր, որպես Հայաստանի մեջ ապրող միևնույն հայության եղբայրները, որպես միևնույն հայրենիքի զավակները. միսը՝ մսեն, ոսկորը՝ ոսկորեն։

Ի՞նչ եղավ այս մեծ ավետիսին ազդեցությունը Հայաստանի մեջ ապրող մեր եղբայրներու և քույրերու համար, ինչպես նաև մեզի՝ արտասահմանի ցիրուցան հայությանս համար։

Կարծեք հոգեբանական միևնույն զսպանակից մղված ըլլայինք ամենքս ալ. խանդավառության և խրախճանքի ալիք մը հորդեց ու տարածվեց ամբողջ հայության վրա։ Ըլլա՛ Հայաստանի, ըլլա՛ արտասահմանի բոլոր անկյուններեն շնորհակալության հեռագրեր ուղարկվեցին Խորհրդային Միության, Խորհրդային Հայաստանի կառավարություններուն։

Հայաստանի մեր եղբայրները և քույրերը սկսյալ մտավորականներեն, իրենց գլուխն ունենալով ականավոր ներկայացուցիչներ, մինչև սնագործ բանվորները, իրենց գլուխն ունենալով հարվածայիններ, հավաքույթներ ու միտինգներ

կազմակերպեցին և իրենց ճառերովը, իրենց երգերովը պանծացուցին իրենց արտասահմանի քույրերը և եղբայրները, օր առաջ, ժամ առաջ իրենց մոտ ունենալու, զանոնք գրկելու, համբուրելու մասին իրենց բուռն փափագն ու սերը արտահայտելով՝ ուրախության և խանդավառության արցունքներ խլելով մեր աչքերից։ Ու երբ Երևանեն առաջին հրահանգը հասավ Սիրիա, Լիբանան «արձանագրել գաղութի հայությանը անխտիր», ամբողջ գաղութը խանդավառության մեջ կալեկոծեր, ծեր, տղա, հարուստ, աղքատ, բանվոր, մտավորական խուռներամ խուժել, պաշարել էին արձանագրության գրասենյակները։

Լիբանանի ներգաղթի կոմիտեի անդամ մը ինձի գրած իր նամակին մեջ կըսեր. «Արձանագրվողներու ամբոխը մեր բոլոր նախատեսությունները խորտակեց և անցավ։ Արդեն իսկ հայության 90 տոկոսը արձանագրված է և արձանագրությունները կշարունակվին»։ Սիրիա—Լիբանանի մեջ կատարվող արձանագրության ընթացքին հայրենասիրական բուռն պոռթկումի հուզող, լացացնող տեսարաններ անպակաս եղան. Տեր-Զորի սպանդեն խույս տված և բռնություններու տակ թուրքացած, քրդացած հայեր վկաներ կճարեին, փաստեր կհայթայթեին՝ իրենց հայությունը ապացուցանող, որպեսզի արձանագրություններին կարենան մաս կազմել։ Այս քրդացած հայերուն հայրենասիրական զգացումներու մասին դրվագ մը պատմեց մեզի՝ վերջերս քաղաքս ժամանած սիրիահայ ազգային խորհրդի նախագահը, որ կաթողիկոսական ընտրությունների առթիվ այցելած էր Հայաստան։ «Երբ Հայաստանեն վերադարձա,— կըսե ան,— ինչպես ուրիշ պատգամավորներ, ես ևս Սիրիայի զանազան շրջանները կերթայի բանախոսելու և հայությանը բացատրելու համար մեր խորհրդային հայրենիքի ներկա հրաշալի առաջդիմությունները։ Օր մըն ալ պատվիրակություն մը եկավ զիս հրավիրելու այն վայրը, ուր քրդացած և քրդախոս հայեր կային և կփափագեին Հայաստանի մասին լսել. և երբ բանախոսությունս ավարտեցի, մի բուռ հայրենի հող ուզեցի նվիրել՝ ակամայից օտարացած այդ հայերուն։ Տեսնեմ անոնք շարք, շարք մոտեցան ինձ, կարծեցի պիտի համբուրեն հողը, բայց զարմացա, երբ տեսա, թե նրանք ինչպիսի ագահությամբ կերան հայրենիքի հողը»։

Հայրենիքի հանդեպ սփյուռքի մեջ տիրող այս խանդավառ տրամադրություններուն առընթեր հայրենիքի մեր հերոս եղբայրներն ու քույրերը, որոնք խոսքից ավելի գործի կհավատան, իսկույն ներգաղթի մասին միջոցառումներ ըսկըսան։ Միտինգներ կազմվեցան՝ ներգաղթի ֆոնդին ի նպաստ, ինչպես նաև բնակարանային շինության ի խնդիր։

Հայաստանի մեր քույրերու, եղբայրներու դյուցազնական այս զոհողություններու առջև ինչ է մեր վիճակը՝ մասնավորելով մեր խոսքը Եգիպտոսի գաղութին վրա, որ «երջանիկ, բարեկեցիկ» ալ կկոչվի...

1944 թվականին «Սասունցի Դավիթ» զրահապատ զորասյունին ի նպաստ մեր նվիրատվությունը հասարակ հանգանակության մը ձև առավ և 20 հազար ոսկիի վրա շրջեցավ... Կոշիկի ֆոնդը վեց ամիս քաշկռտվեցավ և վեց հազարի վրա կեցավ, մինչդեռ Սիրիա—Լիբանան 20 հազարի հասնեցին կոշիկի ֆաբրիկա մը հիմնելու իրենց ճիգը։

Եգիպտահայության համար վերջին պատեհություն մը ևս կա հայրենիքի առջև ճերմակերես ելնելու։ Այդ վերջին պատեհությունն այն է, որ եգիպտահայ աշխատավորությունը պետք է անհապաղ կազմակերպե ներգաղթի ֆոնդը՝ իր հաստատեին դատավճիռե մը խուսափելու համար, որովհետև շատ մոտ օրեն այստեղ ևս պիտի բացվին ներգաղթի արձանագրությունները և, եթե ցարդ ուշացավ՝ պատճառն այն է, որ մեր հայրենիքը կուզե հատուկ դասավորումով սկսիլ ներգաղթը՝ գործարաններ, բնակարաններ և ուրիշ հարմարություններ ստեղծելե հետո։ Այժմեն մեր կարելի բոլոր միջոցները պետք է տրամադրենք ու մեր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնենք ներգաղթին կազմակերպումի ու հաջողության գործին, որովհետև ներգաղթին մեջ է սփյուռքահայության փրկությունը, ինչպես խորհրդային հայրենիքի մեջն է ամբողջ հայության ապագան։

Այլևս պետք է դադրին կողմնակի և անիմաստ արտահայտությունները. «Սփյուռքն ալ պետք է մեզի»-ի նման և կամ «խոհեմություն դնել մեր արածներու մեջ»-ի նման քա-

բոզներն ու խրատները։ Արդարև, երբ կհանդիպինք մարդոց, որոնք սփյուռքի պահպանման մասին կճառեն, ուղղակի կզարմանանք անոնց միամտության վրա, ի՛նչպես և ի՛նչ միջոցներով կարելի է, երբ մենք սփյուռք մը ունենալու համար չէ, որ աշխարհի ամեն կողմը ցրված ենք, այլ՝ բռնությունից ու հալածանքից ստիպված։ Ու երբ այսօր այդ ամենը վերջ գտած են ու մեր հայրենիքը լայն բացած է իր դռները, ալ ի՞նչ սփյուռք պահելու մասին կխոսին մեզի, այդպիսով գավաթ մը պաղ ջուր լցնելով այս աշխատավոր ժողովրդին եռացող հայրենասիրության վրա։ Պահ մը քննենք այս հարցը և տեսնենք, թե ներկայիս մեր հայաբնակ գաղութները ինչ կներկայացնեն իբրև բարոյական ուժ, իբրև արժեք։ Առնենք մշակութային մարզը, որ ժողովրդի մը կենսունակության ջերմաչափն է։

Այսօր, երբ Հայաստանի մեջ ունինք բազմաթիվ դրպրոցներ ու համալսարաններ, որտեղ սովորողներու թիվը հարյուր հազարների կհասնի, որտեղ ամեն տարի սովորողներու համար նորանոր հրատարակություններով դասագրքեր կտպագրվին, այնինչ մեր հայաշատ սփյուռքահայության խղճուկ դպրոցները ստիպված են բավարարվիլ 50—60 տարի առաջ լույս տեսած և սերնդից սերունդ ժառանգված խեղճ ու կրակ գրքերով։ Ողբալի է նաև մեր սփյուռքահայ մամուլի վիճակը, որի թերթերուն կեսը օտար լեզվով կտպվին։ Ողբալի է նաև իր հոգեվարքը ապրող մեր սփյուռքահայ թատրոնը, իր անգործ արվեստագետներով։ Ողբալի է նաև սփյուռքահայ մտավորականության ու գրողների վիճակը, որոնք իրենց նյութական դժվարին միջոցներով և կամ մեկենաս մը ճարելով հազիվ մեջտեղ կհանեն իրենց հոգու և մտքի արդասիքը, բայց լույս ընծայված գրքերը կփոշոտվին, կմաշվին գրախանութների ցուցափեղկերուն մեջ՝ գնորդներուն ակնկալած։

Ողբալու շատ բաներ ունի սփյուռքահայությունը և նրա բոլոր արյունոտ վերքերը պիտի սպիանան միայն ու միայն իր հարազատ մոր գրկին մեջ, միայն հայրենի հողի վրա, միմիայն մեր Խորհրդային հզոր Միության ամենաշեն ու ամենաբույժ շնչին բալասանով։

Այստեղ ունինք զմայլելի երիտասարդություն մը, որոնք ուսանիլ կուզեն ու միջոցներ չունին, կտանջվին, կտառապին, կճանկռտվին և կհուսահատվին։ Երիտասարդություն, որ երբ մեր հայրենիքի գիրկը նետվի, նոր Բաղրամյաններ, նոր Վիկտոր Համբարձումյաններ պիտի դառնա։ Այսօր մենք հոս ունինք գրողներ, որոնք նպարավաճառություն կընեն, երգիչներ, որոնք երկաթագործություն կընեն, ջութակահարներ, որոնք հնակարկատություն կընեն, դերասաններ, որոնք մանրավաճառությամբ կզբաղին... Ասկե ավելի խոշոր քայքայում կրնա՞ք երևակայել սփյուռքահայության համար։

Գուցե վերևում նստած մեր պարոն ազգայիններն առարկեն, թե «Այստեղ քաղաքական խնդիր մը կա», սակայն ինչ քաղաքականության մասին է խոսքը, երբ 20—40—60 տարիներ առաջ բռնություններու և հալածանքներու մեջեն եկել ենք այս երկիրը և եգիպտական աշխատավոր ազնիվ ժողովուրդն իր թևերը լայն բացած հյուրընկալել է մեզի և (որուն համար երախտապարտ ենք) մենք ալ մեր կարգին ջանացել ենք արժանի ըլլալ իրենց վստահությանը, աշխատել ենք ստեղծագործ տարր մը դառնալ, արհեստներ ներմուծել ենք և տեղացի վարպետներ ենք հասցուցել, որոնք վարպետ արհեստավորներ են դարձել մեր ձեռքին տակ։ Եգիպտացի աշխատավոր ժողովրդի հետ միասին տարիներ շարունակ պայքարել ենք նրա անկախության ի խնդիր։ Եվ նրա պայքարի մեջ մենք եղել ենք ուրիշ որևէ ժողովրդե ավելի իրենց հետ, իրենց մոտ, իբրև դարերից ի վեր մեր անկախության համար պայքարած և նրանց խորապես հասկացող ժողովուրդ, իրենց դժբախտությունը մերը ըրել ենք և իրենց հետ տխրել, իրենց հաջողությունները մերը համարել և իրենց հետ ուրախացել. այժմ՝ այժմ մեր հայրենիքը մեզ կրկանչե, մեր մայրը մեզ կկանչե, կուզենք երթալ մեր մոր մոտ ու երբ արձանագրությունները լրանան, և մեկնումի ժամը հնչե, մենք պիտի դիմենք եգիպտական կառավարությանը իր ալ օգնությունը խնդրելու մեր մեկնումի առթիվ։ Եվ մենք վստահ ենք, որ այն պիտի ընդառաջե մեր խնդրանքին, մեզի ընձեռելով ամեն դյուրություն, ինչպես ցույց տվավ հունական կառավարությունը՝ 1932 թվականին, երբ

ներգաղթը մեկնեց Հունաստանեն, ինչպես այդ արեց ֆրանսական կառավարությունը՝ 1936 թվականին, երբ ներգաղթը մեկնեց Ֆրանսայեն, որովհետև անկարելի է, որ իր ազատագրության համար պայքարող եգիպտական ժողովրդի կառավարությունը չհասկնա մեր զգացումները և հայրենիք վերադարձի մեր այրող կարոտը։

ՃԱՌ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ԲԱԹՈՒՄԻԻ ՆԱՎԱՀԱՆԳՍՏՈՒՄ

Ընկերնե՛ր.

Այս պահը մեր կյանքի ամենաերջանիկ պահն է, մեր դարերի երազն է, որ իրականություն դարձած է այսօր։ Մենք երջանկությունն ունինք մեր հայրենի նվիրական հողին վրա ողջունելու Ձե՛զ՝ մեր հարազատ քույրե՛ր և եղբայրնե՛ր, և զմայլելու Ձեր հերոսությունների և մեծագործությունների վրա, որոնք պատիվ կբերեն ոչ միայն հայ ժողովրդին, այլ բովանդակ քաղաքակիրթ մարդկությանը։

Մեր հրճվանքը մեծ է մանավանդ անոր համար, որ մենք ալ վճռականապես սպատագրված ենք կապիտալիստական աշխարհի անարդ լծից և դարձած ենք խորհրդային ազատ աշխարհի քաղաքացիներ։ Ալ մեզի համար վերջնականապես, վճռականապես փակված է զուլումի, ջարդի, հալածանքի, աքսորի և գաղթականության արյունոտ ու արցունքոտ անցյալը և մենք կանգնած ենք պայծառ և երջանիկ իրականության առջև՝ լի ապագայի հոյակապ կարելիություններով, որին պիտի հասկացնենք մեր բովանդակ կորովը։

Այս հանդիսավոր պահուն, ընկերնե՛ր, մենք բոլորս մեր սրտագին շնորհակալությունը և երախտագիտությունը կհայտնենք Խորհրդային Միության կոմունիստական պարտիային, որի շնորհիվ իրականացավ սփյուռքահայության դարավոր երազը։

Մեր սրտագին շնորհակալությունը կհայտնենք նույնպես Խորհրդային Հայաստանի արի և իմաստուն ղեկավարներին ու հերոսական ժողովրդին, որոնք իրենց բովանդակ կորովն ի գործ դրին ներգաղթի այս պատմական, հսկայական գործը գլուխ հանելու համար։

Կեցցե՛ ժողովուրդների մեծ եղբայրակցությունը։

Կեցցե՛ հանճարեղ, շինարար ու հերոսական սովետական ժողովուրդը։

Սեպտեմբեր, 1947 թ., Բաթումի։

ՈՂՋՈՒՅՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՂԹԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ

Փետրվար 23...

Ողջո՜ւյն քեզ սովետական հզոր և հաղթական բանակ, որ Սովետական մեծ Միության ժողովուրդների սխրագործություններին և հերոսություններին ջահակիրը հանդիսացար ողջ մարդկության առաջ։

Քո դղրդացող քայլվածքների ներքո է, որ կործանվեցին գահերը, գերեզմանվեցան, և ֆաշիստական յոթնագլուխ հրեշը քո պողպատյա հարվածների ներքո իր շունչը փչեց, և ողջ մարդկությունը ազատվեց նրա թունավոր գալարումներից։

Դո՛ւ էիր, ո՜վ սովետական մեծ ու հզո՛ր բանակ, որ ահեղ փոթորիկի նման շանթեցիր գերման հորդաների գլխին և հորձա՛նք տվեցիր ֆաշիստական գեհենին դեմ, քանդելո՛վ, խորտակելո՛վ մարդկության և քաղաքակրթության թշնամի բոլոր մութ ուժերը, նոր այգաբաց բերելով ֆաշիզմի կրունկների տակ հեծող ժողովուրդներին, նրանց հավերժական սիրուն ու երախտագիտությանը արժանանալով։

Դո՛ւ եղար, ո՜վ հերոսական բանակ, ճնշված ժողովուրդների հայրենիքից ֆաշիզմի մահաստվեր ուրվականը վտարողը, դո՛ւ եղար նրանց շղթայող տգիտությունների, նախապաշարումների և շովինիստական ատելության կապանքները խորտակողը՝ նրանց առաջ լայն բանալով առաջադիմության, եղբայրության լուսավոր և արևաշող ճանապարհները։

Եվ սակայն, ո՜վ սովետական փառապանծ բանակ, աշխարհում գտնվեցան նաև քո մեծությանը նախանձող ճըղճիմ և ստորին արարածներ։ Քո ծննդյան և պատանեկության թվականներին՝ մանավանդ, նրանք կասկածանքով և նենգությամբ վերաբերվեցին քեզ հետ։ Նրանց քսու և թունավոր լեզուն ամեն ուղղությամբ գալարվեց սուտ մը, խաբեություն մը ավելի կուտակելու համար քո վրան և քո հզորության

մասին։ Այդ ստորին արարածները՝ կապիտալիստական աշխարհի ծեր գայլերը, տարիներո՞վ վարկաբեկիչ առասպելներ հյուսեցին քո հասցեին. մինչ դու մեծանո՞ւմ և հզորանո՞ւմ էիր անդադար և երկրագունդը շարժելու չափ ուժ և կորո՛վ ունեիր քո մեջ։ Այդ գարշելիների համար պետք էր հասներ 1941 թվականի հունիս 22-ը, պետք էր Լենինգրադի, Սմոլենսկի, Ստալինգրադի և Ղրիմի տիտանամարտերը թավալեին, գերման միլիտարիզմի վիթխարի ռազմամեքենան խորտակվեր քո հուժկու հարվածների ներքո, պետք էր քո մրրկանման գրոհների տակ հալչեին, փոշիանային ֆաշիստական արյունարբու բանակները, պետք էր այդ գազանացած հորդաների քարուքանդ դարձրած տարածությունները նրանց գերեզմանները դառնային, ու ողջ մարդկությունը, աչքերը քեզ սևեռած քո ճանապարհին նայեր, քեզ ապավիներ, քո փրկարար դրոշի՛դ հուսար և քո գալուստը երազեր, պետք էր քո հաղթական քալվածքի առաջ թշնամու բարձրացրած դարբասները իրար ետևից փլչեի՛ն, քանդվեի՛ն, տապալվեի՛ն և քո շնորհիվ աշխարհի ողջ մարդկության վրա ծագեր ազատության կարմիր արշալույսը, որպեսզի այդ գարշելի ստախոսները վերջնականապե՛ս պապանձեին՝ ողջ մարդկության առաջ անգամ մը և՛ս խաղք ու խայտառակ լինելով...

Դո՛ւ տվիր այս դասը, այս շառաչուն ապտակը նրանց երեսին և քեզմով ողջ մարդկությունը խորունկ և զորավոր շունչ քաշեց, ո՞վ սովետական մեծ և անպարտելի բանակ, ողջո՞ւյն քեզ։

Քո շնորհիվ է, որ դարերից ի վեր ստրկացած ժողովուրդները իրենց շղթաները թոթափում են և ազատ կյանք վարում։

Դարձյալ քո շնորհիվ է, որ պատերազմի հրձիգներն այլևս սարսափում են ժողովուրդների զայրույթից և հաշվի են առնում նոր պատերազմի մը հետևանքները և անդրադարձումները իրե՛նց իսկ վրա, որովհետև պատերազմների այդ հին հրձիգները քո մեջ տեսան աշխարհի մեծագույն կազմակերպությունը և մեծագույն ուժը, որ չի կատակում և երբ հարվածի՝ անպայման կխորտակե։

Քո հաղթական կարմիր դրոշի ներքո, ո՞վ սովետական հզոր բանակ, ազգերի և ազգությունների խտրություն չկա, փոխադարձ ատելության և թշնամանքի զգացումներ չկան և ոչ ալ ուրիշներին գերեվարելու և ստրկացնելու ձգտում. այլ՝ եղբայրության, համերաշխության, փոխադարձ օգնության և հավասարության մեծ ու հոյակապ սկզբունքներ են միայն, որ քո հաղթանակներին օթևան են տալիս և քո պողպատյա բազուկը զինում։

Աշխարհում դո՛ւ կաս միայն տկար և ճնշված ժողովուրդների զորավիգը, բոլոր կեղեքվածների պաշտպանը։

Եղբայրական հայ ժողովուրդը շատ վաղուց ճանաչել է քո մեծությունն ու հզորությունը և ստացել քո բարերար և եղբայրական օգնությունը։

Քո հերկուլեսյան բազուկն էր, որ հայ ժողովուրդը փրկեց վայրագ իմպերիալիզմի ծառա, արյունարբու դաշնակների ստրկացնող լծից, նաև հայության հայրենիքը՝ նրանց խոշտանգող գարշապարներից, ազատ և երջանիկ կյանքի բոլոր հնարավորությունները տալով և բոլոր առաջադիմությունների ճանապարհը լայն բանալով հայ ժողովրդի առաջ։

Քո պանծալի շարքերում է, որ հայ ժողովրդի զավակները հնարավորություն գտան իրենց նախնիքների դասական հերոսությունը հայտնաբերելու և արժեցնելու։

Քո պանծալի շարքերում կոփվեցան հայ ժողովրդի զմայլելի զավակներ և սովետական հերոսներ ու հրամանատարներ՝ Բագրամյանը, Նելսոն Ստեփանյանը, Նվեր Սաֆարյանը, Ղազարյանը, Իսակովը և այնքա՞ն ուրիշներ, որոնք հայրենական գոռ մարտերում ոչ միայն բարձր պահեցին սովետական հաղթական դրոշը, այլև շառաչուն հարվածը տվին գերման միլիտարիզմին։

Քո տարած փառահեղ հաղթանակների շնորհիվ է դարձյալ, ո՞վ սովետական հզոր բանակ, որ իրականացան հայ ժողովրդի դարավոր երազը, ներգաղթը և արտասահմանյան երկրներում ցիրուցան եղած գաղթական հայ ժողովուրդը ազատություն գտավ իր պանծալի հայրենիքը՝ Սովետական Հայաստան վերադառնալու, իսպառ ազատագրվելով կապի-

սալիստական կարգերի անարդ լծից, շահագործումի սոսոր դրությունից, ինչպես նաև օտարականի, հանդուրժվածի դժբախտ և անտանելի կացությունից։

Քո շնորհիվ է, որ այսօր նրանք իրենց հայրենիքում լծվել են խաղաղ, շինարար և ստեղծագործ աշխատանքի և իրենց բոլոր ուժովն ու միջոցներովը սատարում են նրա վիթխարի վերելքին։

Եվ այսօր՝ քո պանծալի 30-ամյակի հոյակապ տոնին տոթիվ, ո՞վ սովետական հզոր բանակ, ամբո՛ղջ հայ ժողովուրդը, թե՛ մայր հայրենիքում և թե՛ արտասահմանի հեռավոր հորիզոններում, հարգանքով և երախտագիտությամբ խոնարհվում է քո առաջ։

Երևան, 20 փետրվարի 1948 թ.։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ ՉՐԻ Է, ԻՍԿ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ՝[1]

Դժբախտություններ կան, որոնք բարեբախտության համազոր են։

Այդպիսի բարեբախտ դժբախտություններից կարելի է համարել իմ վերջին հիվանդությունը, որի հետևանքով 25 օր մնացի Երևանի Լենինի անվան առաջին կլինիկական հիվանդանոցում, ուր հնարավորություն ունեցա մոտից ծանոթանալու սովետական բժշկության հրաշալի նվաճումներին, ինչպես նաև բոլոր քաղաքացիների համար անխտիր ձրի և անշահախնդիր դարմանումներին։

Լենինի անվան առաջին կլինիկական հիվանդանոցը քառահարկ մի հսկայական շենք է, ընդարձակ պարտեզի մեջտեղը կառուցված։ Բակում ներս մտնողին դիմավորում է Լենինի հոյակերտ արձանը՝ իր խորաթափանց նայվածքով։

Պրոֆեսոր Ռ. Գյանջեցյանը, որ ինձ դարմանող թերապևտիկ հիվանդությունների բաժանմունքի վարիչն է, պատկառելի մի անձնավորություն, որը մեծ ձեռնհասությամբ վարում է այդ բաժանմունքը, իրեն օգնական ունենալով բազմաթիվ բուժքույրեր ու բժիշկներ, այդ թվում դոցենտ Վարդուհի Բունիաթյանը, Շավարշ Ավագյանը, ասիստենտ Աննա Ավետիսյանը, օրդինատորներ Մանյա Եսայանը, Ռաֆիկ Ստամբոլցյանը և Քնարիկ Պետրոսյանը, որոնք ախտաճանաչության, դարմանումի և այլ մարզերում նվիրված աշխատանք են կատարում՝ ամոքելով ու բուժելով իրենց հսկողությանը հանձնված հիվանդներին։ Իսկ բժշկուհի Նինա Գյանջեցյանը, պրոֆեսորի դուստրը, երեք տարի զինվորական վիրաբույժի պաշտոն վարելուց հետո, արդեն մեկ տարի է, ինչ կատարյալ խղճմտությամբ կատարում է մեր՝ 4-րդ պալատի բժշկուհու աշխատանքը։

Երբ հիվանդը ընդունվում և ուղարկվում է ներքին հիվանդությունների բաժանմունքը, իսկույն տրվում է նրա դիագնոզը, ճշտվում հիվանդությունը։ Եվ ի պատիվ սովետական բժշկության պետք է ասել, որ ախտաճանաչությունը կատարվում է հրաշալի ճշգրտությամբ, գրեթե անսխալ։ Աննշան սխալներն ուղղվում են լրացուցիչ թեմաներով։ Այնուհետև սկսվում է բժշկությունը։ Եվ այս բոլորը ձրի, կատարելապես ձրի։ Հիվանդանոցում գործում է ատամնաբուժական կաբինետ, որն սպասարկում է բոլոր հիվանդներին, որոնք բժշկվելու հետ միաժամանակ ձրիաբար նորոգում են իրենց վնասված ատամները։

— Այս ինչպե՞ս,— շվարած կարող են հարցնել մեզ կապիտալիստական երկրներում ապրողները կամ արտասահմանից հայրենիք վերադարձած նոր քաղաքացիները։

Այո՛, վճռականապես կպատասխանենք մենք նրանց։ Այդ անժխտելի փաստ է։

Դեռ ավելին կա։

Բուժվող աշխատավորը, վերադառնալով իր աշխատավայրը, այնտեղից ստանում է հիվանդության օրերի լրիվ աշխատավարձը, որի համար ներկայացնում է հիվանդանոցի կողմից ստացած անհրաժեշտ փաստաթուղթ։

1500-ական թվականներին Անգլիայում մի օրենք կար, որի համաձայն հիվանդանոց մտնող բոլոր հիվանդները

[1] «Սովետական Հայաստան», Երևան, 1948 թ., № 8175։

պարտավոր էին, բացի բժշկի, դեղորայքի և սննդեղենի ծախսերից, կանխիկ վճարել նաև իրենց թաղման ծախսերը, որպեսզի մեռնելու դեպքում այդ փողով կատարեն նրանց թաղումը։ Այսպիսով, մարդկանց ֆիզիկապես մահացնելուց առաջ մահացնում էին բարոյապես։

Այդ օրվանից մինչև մեր օրերը ի՞նչ առաջադիմություն է կատարված կապիտալիստական երկրներում։

Ոչի՛նչ, կամ՝ գրեթե ոչինչ։

Դեռ այսօր էլ, 1948 թվականին, առաջադիմության և լուսավորության 20-րդ դարում, Ամերիկայում և կապիտալիստական այլ երկրներում բժշկական բոլոր քննությունները, բոլոր անալիզները, օպերացիաները, բոլոր սրսկումները կատարվում են վճարով և միայն վճարով։ Վա՜յ այն հիվանդին, որը փող չունի։ Կապիտալիստական երկրներում հիվանդը հիվանդանոց մտնելիս դարձյալ պարտավոր է 10—15 օրվա կամ մի ամսվա դեղորայքի, բժշկի, սննդեղենի, անալիզների վճարի ընդհանուր գումարը մուծել կանխիկ։ Իսկ օպերացիայի դեպքում՝ նոր և առանձին վճարում։ Այդ գումարը հասնում է 2 հազարից 5 հազարի, մինչև 10 հազար ռուբլու։ Եվ որ ամենից հրեշավորն է՝ այդ դարմանումի և օպերացիայի վճարումները պետք է կատարվեն անպայման կանխիկ։

Եգիպտոսում պատահեց մի դեպք։ Մի աշխատավոր հանկարծ կույր աղիքի օպերացիայի պետք ունեցավ։ Հիվանդանոցն ու օպերացիայի բժիշկը հիսուն ոսկի պահանջեցին։ Մարդը կարողություն չուներ, չկարողացավ վճարել այդ գումարը և մահացավ։ Շատ վատ արեցին նրա ընտանիքի անդամները, որ նրա տապանաքարի վրա չարձանագրեցին. «Մահացավ, որովհետև հիսուն ոսկի չուներ»...

Ուրիշ դեպք։ Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում մի համեստ բանվորի կին գալարվում էր երկունքի մեջ. դայակը ոչինչ անել չէր կարող։ Երկար գալարումներից և տանջանքներից հետո, նրա ամուսինը վազում է բժիշկ կանչելու։ Բայց որովհետև ժամանակը ուշ է, կեսգիշերից անց, բժիշկը պահանջում է կրկնակի վճար, այսինքն՝ տասը ոսկի։ Մարդը չունևոր է. երկար աղաչում, պաղատում է, բայց իզուր։ Վերջապես ճարահատ՝ խոստանում է տանը վճարել այդ տասը ոսկին, պայմանով, որ բժիշկը իրեն հետ գա և աղատե կնոջը։ «Փողը կանխիկ կբերես և ես քեզ հետ կգամ»,— լինում է բժշկի վերջնական խոսքը։ Խեղճ բանվորը ճարահատ ուուն է վազում՝ հարևաններից դրամ խնդրելու։ Բայց որքան մեծ է լինում իր ցավը, երբ տանը կնոջն արդեն մահացած է տեսնում։

Թողնենք ուրիշներին և վերցնենք ինձ հետ պատահածը։

Երբ սրանից երեք տարի առաջ սրտի տկարությամբ գրեթե մահամերձ անկողին ընկա՝ բուժվելու համար հարկ եղավ վճարել մեծ գումարներ։ Խորտակման առաջ էի կանգնած։ Հիվանդությանս այդ չորս ամիսների ընթացքում մի կոպեկ իսկ եկամուտ չունեցա, և բազմանդամ ընտանիքս ծանր պայմանների մատնվեց։ Իսկ այստեղ, մեր Սովետական Հայրենիքում, բանչինգ օր պառկած մնացի հիվանդանոցում, ձրի բուժվեցի՝ բժիշկների ու հիվանդապահների հոգածությամբ շրջապատված։

Ներկա լուսավորության դարում կապիտալիստական երկրներում, մասնավորապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում, տիրող սոսկալի պայմանների և վայրագ շահագործումը քաջալերող օրենքների մասին կարելի է երկար գրել։ ԱՄՆ-ում ծայրահեղության է հասնում բնիկ սևամորթների իրավազրկությունը։ Մինչ օրս կիրառվում է լինչի սոսկալի օրենքը, որի համաձայն երեք ամերիկյան քաղաքացի միասնաբար իրավունք ունեն որևէ սևամորթի խոշտանգելով ըսպանել կամ ծառից կախելով խեղդամահ անել։ Դեռ մինչև օրս այնտեղ մարդիկ արտոնված են փոքր երեխաների վաճառքով զբաղվել, վաճառքի հանել չքավոր մայրերի թըշվառ երեխաներին... Եվ որովհետև այժմ ԱՄՆ-ում հետզհետե նվազում է ծնունդը՝ այդ վաճառքի երեխաների գինն էլ օրեցօր բարձրանում է։ Նյու Ջերսիից 1947 թվականի հունիսի 19-ին տպագրված մի հեռագրի հաղորդման համաձայն, այդ երեխաների գինը բարձրացել է աղջկանը՝ 1500, տղայինը՝ 1700 դոլլարի։ Նյու-Յորքի շուկայում այդ գները հասել են մինչև 2 հազար 500 դոլլարի...

Իրեն դեմոկրատական անվանող ԱՄՆ-ի այս ամոթալի

երևույթների վրա մի նորն է ավելանում. ԱՄՆ-ից հայրենիք Սովետական Հայաստան վերադարձած Հ. Զուլոկյանի երեք երեխաները՝ Գևորգը, Եդվարդը և Ալիսան՝ տակավին մնում են ԱՄՆ-ում, կաթոլիկ քահանաների մոտ։ Նրանց չի թույլատրվում վերադառնալ հայրենիք իրենց ծնողների մոտ, որովհետև, ինչպես ամերիկյան դատարանումն է ասվել, այդ երեխաները, վերադառնալով Հայաստան, կարող են ընդմիշտ կորցնել ամերիկյան քաղաքացիության իրենց իրավունքը։ Այնտեղ Ամերիկայում փոխել են այդ երեխաների հայկական անունները, կոչելով՝ Ջորջ, Ադվորդ և այլն... Այս բոլորի մեջ ամենից զայրացուցիչն է Նյու-Յորքի նահանգի գերագույն դատարանի անդամ Կամբարդի ամբարտավան վերաբերմունքը։ Նա լկտիորեն հայտարարում է. «Եթե հորը թույլատրվի այդ երեխաներին տանել Սովետական Հայաստան, ապա պարզ է, որ ներկա պայմաններում երեխաները կարող են ընդմիշտ կորցնել ամերիկյան քաղաքացիության արտոնություններից «օգտվելու իրավունքը»»...

Հասկանալի է, պարոն Կամբարդ։ Մենք մեր սովետական երկրում ձեզ նման՝ երեխաների առուծախով չենք զբաղվում։ Մենք շատ լավ ենք իմանում ձեր հայտարարության իմաստը։ Մենք պահանջում ենք, որ այդ երեք անմեղ երեխաներին թույլատրվի միանալու իրենց ծնողներին և թող նրանք զրկվեն «ամերիկյան քաղաքացիության արտոնություններից օգտվելու իրենց իրավունքից»։ Այո՛, թող նրանք զրկվեն ամերիկյան քաղաքացիության «արտոնություններից»՝ գործադուրկներ դառնալու դրությունից, թող նրանք զրկվեն ամերիկյան մոնոպոլիստների օգտին թնդանոթի միս դառնալու կացությունից, թող զրկվեն վարձով ուսանելու և վճարով բժշկվելու դրությունից, թող նրանք զրկվեն անվերջ «կեղտոտ գաղթականությունից»-ի ստորացնող նախատինքը լսելու հարկադրանքից։ Նրանք հայրենիք վերադառնալով՝ կդառնան սովետական լիիրավ քաղաքացիներ, մի բան, որը պարծանք և պատիվ է այդ կոչումը կրողի համար։

Այսօր, հայրենիք վերադառնալով, ես հազարավոր հայրենադարձների հետ միասին երջանիկ հուզումի մեջ եմ։ Հրճվում եմ, երբ մտաբերում եմ, թե վերջնականապես ազատագրվել եմ կապիտալիստական երկրների վայրագ օրենքներից և շահագործման մեքենայություններից ու պատկանում եմ նոր՝ ազատ աշխարհին, սովետական աշխարհին, ուր մարդու շահագործումը մարդու կողմից հիմնովին ջրնջված, վերացված է։

Երևան, 1945 թ.։

ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ԱՏՈՐ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆԵՐԸ ՈՒՂՂՎԱԾ ՆԵՐԳԱՂԹԻ ԴԵՄ[1]

Թուրքիայի և նրա տերերի կամքով հայրենի հողից պոկված և աշխարհի բոլոր անկյունները ցիրուցան եղած արտասահմանի հայության երազը՝ ներգաղթը, իրականություն է դարձել։ Այդ կատարվեց շնորհիվ սովետական պետության մարդասիրական բարձր սկզբունքների և քաղաքականության։

Սովետական պետությունը 1945 թվականի նոյեմբերի 11-ի որոշումով հնարավորություն տվեց արտասահմանի հայությանը վերադառնալ իր մայր հայրենիքը։ Այդ ուրախալի լուրը ստացվելուց հետո արտասահմանյան գաղութներում ազգային խորհուրդները իսկույն աշխատանքի անցան և յուրաքանչյուր գաղութում ստեղծվեց ներգաղթի կոմիտե, որը սկսեց ցուցակագրել ներգաղթող բոլոր հայերին՝ առանց որևէ խտրականության։ Միայն Սիրիայի մեջ, ցուցակներ կազմելու համար, անմիջապես ստեղծվեցին 84 գրասենյակ և այնտեղ գտնվող հայության 80 տոկոսը տասն օրվա ընթացքում ցուցակագրվեց։

Միևնույն խանդավառությունը գոյություն ունի բոլոր գաղութներում անխտիր՝ սկսած Հունաստանից, Ֆրանսայից, Եգիպտոսից, Հաբեշստանից, վերջացրած հեռավոր Հընդկաստանով, ԱՄՆ-ով։

Սովետական Հայաստանի աշխատավորները խորն ըմբռնելով ներգաղթ կազմակերպելու գործի քաղաքական մեծ

[1] «Սովետական Հայաստան», Երևան, 1948 թ., № 59։

նշանակությունն ու իմաստը, անօրինակ խանդավառությամբ իրենց բոլոր միջոցներն ու հնարավորությունները տրամադրեցին ի նպաստ իրենց հայրենադարձ եղբայրների ու քույրերի։ Ներգաղթողների համար Հայաստանում սկսված բնակարանային շինարարությունը առաջ է տարվում մեծ թափով։

Այսպես, կարճ ժամանակվա ընթացքում, թե՛ արտասահմանյան հայ գաղութներում և թե՛ մայր հայրենիքում ներգաղթողների ինչպես մեկնելու, այնպես էլ ընդունելության պատրաստությունները կազմակերպվեցին մեծ ոգևորությամբ։

Ներգաղթի առաջին, ինչպես հաջորդ քարավանների խանդավառ ընդունելությունը Բաթումիի նավահանգստում, տասնյակ հազարավոր հայրենադարձ հայերին ցույց տրված ջերմ, դրկաբաց ընդունելությունը, սովետական իշխանության կողմից նաև ներգաղթածներին բնակարաններով, աշխատանքով, ուսումով և ապրուստի այլևայլ պայմաններով ապահովելը՝ այդ բոլորը թե՛ մամուլի միջոցով և թե՛ ռադիոյով հաղորդվեց աշխարհով մեկ։ Այդ լուրերը հիացմունք և զարմանք պատճառեցին ազատատենչ ժողովուրդներին, որոնք մոտիկից գիտեն հայ ժողովրդի դարավոր տառապանքը։ Զարմանք ու հիացմունք պատճառեցին, որովհետև սովետական պետությունը անսահման միջոցներ է ներդրել այդ գործի կազմակերպման համար։ Այդ բանը նա ձեռնարկեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Մինչդեռ Եվրոպայի շատ երկրներում մոլեգնում էին սովը, սանձարձակ համաճարակները, որոնք միլիոնավոր կյանքեր էին խլում։ Անգլիայի պետական գործիչներից մեկը խոստովանում է, որ անգլիական կառավարությունն անկարող է նման մասշտաբով մի ներգաղթ կազմակերպել։ Արդարև, Անգլիայում պատերազմը վերջանալուց հետո, 285 հազար զինվորական ընտանիք երկար ժամանակ անպատսպար մնում էին փլատակների մեջ։ Շփոթումի ու գարմացումի միևնույն արտահայտությունները եղան նաև Թուրքիայում, երբ տեղեկացան արտասահմանի հայության ներգաղթի մեծ մասշտաբների մասին։

Դաշնակները, հայ ժողովրդի ոխերիմ թշնամի դաշնակները, ներգաղթի հրճվեցուցիչ վկայությունները շարաշղուկ բուերի նման սառնությամբ, թշնամանքով ընդունեցին։ Միջազգային իմպերիալիզմի այդ վարձկաններն էին, որ հայության ներգաղթի փրկարար հրահանգի ու այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների դեմ անմիջապես շարժեցին իրենց բութ գրիչն ու նիզակը։ Մակաբույծի նման հայ ժողովուրդի արյունը ծծող և հայ ժողովուրդը իմպերիալիստական պետություններին վաճառող դաշնակցական ջոջերը անտեսելով, որ ներգաղթի հետևանքով անգամ իրենց շարքերից մարդիկ զանգվածաբար թողնում են ամեն ինչ, հրաժարվում են ամեն ինչից՝ հայրենիք գնացող քարավաններին միանալու համար, որոշեցին ամեն գնով խափանել ներգաղթը։ Նրանք սկսեցին հարվածել ներգաղթը կազմակերպելու համար աշխատող կամավորներին, իրենց մամուլի էջերից տիղմ ու թույն շպրտել ներգաղթի հետ կապված բոլոր անձերի հասցեին, հորինելով ստահոդ պրովոկացիաներ։

Դաշնակցականները բոլոր գաղութներում ներգաղթի կամավորներին հանձնում էին իմպերիալիստական կառավարությունների ձեռքը, նրանց համարելով սովետական գործակալներ։ Այդ մեքենայությունների զոհերից մեկն է հենց տողերիս գրողը։ Իմպերիալիզմի հայ ագենտները սպանեցին ներգաղթի գործի ակտիվ մասնակիցներ Ս. Գրիգորյանին և Աղազարյանին, ինչպես նաև Պ. Նատրյանին և ուրիշներին։ Նրանք դաշունահարեցին Սիրիայի և Լիբանանի ներգաղթի կենտրոնական կոմիտեի նախագահ ընկեր Հ. Դևեջյանին, որը բարեբախտաբար բուժվեց։ Դաշնակներն էին, որ հայրենիք դառնալու համար ցուցակագրված մասսաների մեջ սարսափ տարածելու համար Բեյրութի և Հալեպի թաղամասերում տեռորի էին ենթարկում ներգաղթող մարդկանց, անգամ հայրենիք վերադարձող նախկին դաշնակներին։

Իմպերիալիզմի այդ հլու ծառաները ներգաղթը խափանելու համար իրենց ծախված թերթերում տպագրում են ամեն տեսակի զրպարտություններ ներգաղթի աշխատանքների վերաբերյալ և Սովետական Հայաստանի հասցեին։ Այդ

նպատակին են ծառայում Հալեպի «Արևելք», Բեյրութի «Ազդարար», Կահիրեի «Հուսաբեր», Ֆրանսայում՝ «Հառաջ» և Ամերիկայում հրատարակվող «Հայրենիք» և այլ թերթուկները։

Դաշնակ շեֆերն ու թերթուկները մի նոր պրովոկացիա սարքեցին, երբ 1946 թվականի օգոստոսին «Ռոսիա» նավը Հունաստանից և Բուլղարիայից ներգաղթի քարավաններ փոխադրելու պատճառով 15 օր ուշ ժամանեց Բեյրութ, որտեղից նույնպես հայրենադարձներ պիտի վերցներ։ Դաշնակցական թերթերը այդ առթիվ գրում էին, թե նախորդ քարավանը փոխադրող «Պոբեդա» նավը Բաթումի չի հասել, որ նեղուցները փակվել են և ներգաղթը դադարել է, այլևս անօգուտ է ներգաղթի վրա հույս դնելը։ Ուրիշ անգամ հեգնանքով գրում էին, թե այսուհետև ներգաղթի նավերը ցամաքից, այսինքն՝ Դամասկոսից են գալու։

Բացի այս բոլորից, մենք տեղյակ ենք դաշնակցականների ավելի ստոր թշնամական արարքների, որ կատարում էին ներգաղթի ժամանակ՝ ուղղված ներգաղթի ու Սովետական Հայաստանի դեմ։ Սիրիայի և Լիբանանի փոստատարական վարչությունների մեջ աշխատող դաշնակցական պաշտոնյաները զգուշությամբ և խնամքով բաց էին անում հայրենիք վերադարձած հայերի ուղարկած ուրախ ու ջերմ նամակները և նրանց փոխարեն գրում էին տխուր, հուսահատական և զզջումի նամակներ և դրանք ուղարկում դեռևս օտարության մեջ գտնվող նրանց հարազատներին։ Դաշնակ պաշտոնյաները փոստից գողանում և ոչնչացնում էին «Սովետական Հայաստան» թերթի համարները։

Այսպես, իր չարաբաստիկ գոյության ամբողջ ընթացքում դաշնակցականները՝ այդ օտարերկրյա տերերին ծախված-ները, հայ ժողովրդի գլխին անհամար աղետներ բերեցին։ Մի կտոր արծաթի համար իրենց գարշելի ծառայությունն ամեն գույնի իմպերիալիստական պետություններին վաճառած և հայ ժողովրդի բոլոր թշնամիների հետ գործակցած դաշնակցականները, պարզ էր, որ ներգաղթի փրկարար ակտի առթիվ ևս թշնամական դիրք պիտի բռնեին։

Կոգնե՞ն արդյոք այդ պրովոկացիոն, թշնամական միջոցները, անպոր կատաղություններն ու դավաճանական արարքները դաշնակցականներին՝ մի փոքր իսկ աղդելու ներգաղթի հոյակապ, վիթխարի և համաժողովրդական շարժման վրա։

Իհարկե, ո՛չ։

Անհամար դավերով, դավաճանություններով ու ոճիրներով ծանրաբեռնված դաշնակցությունը դատապարտված է մահվան։ Նրա այուները մեկ-մեկ տապալվում են իրար ետևից։ Եվ դա պատմության վճիռն է։

Երևան, 10 մարտի, 1948 թ.։

ԵՐԳԻՇԱԼԸ

ՆՈՐ ԿՈՒՆԵԼԻԱԿԱՆՔ

Կունելիոսի դասը[1]

Եռագույնի խնդրին շուրջ մարտական գործունեության լծված ըլլալուս պատճառավ, բավական ատենե ի վեր Կունելիոս բարեկամիս հետ մեր հանդիպումները ընդհատված էին։

Ուստի «Կաֆե դը լա պե»[2] երթալով զինքը գտա իր սովորական սեղանին քով սուրճ խմելով զբաղած։ Առիթը հարմար նկատելով զվարթ «Բարի իրիկուն» մը գլուորեցի, նստա քովիկը և սկսա խոսիլ Ալեքսանդրիո մեր աղոց տարած եռագույնի հաղթանակին վրա, ուզելով իմանալ իր տեսակետը այս մասին։

— Զգե՛, Վիշապ, աստվածդ սիրես,— ընդմիջեց բարեկամս,— ես քեզի խելացի մեկը կկարծեի, բայց դուն ալ խենթերու բանակին կպատկանիս եղեր, որուն գլխավորները հայ չըլլալե զատ ամեն բան են։

— Ինչո՞ւ այդպես կըսես, Կունելիոս աղա, ընդհակառակը, անոնք «հայ օղլու հայեր» են քանի որ եռագույնի կատարի պաշտպաններն են,— վրա բերի, խոսքիս լուրջ առն մը տալով։

— Եռագույն մի՛ ըսեր, ախպար, կովախնձոր ըսե սրվոր, եթե գիտնայիր, թե անոր պատճառով ի՞նչ արյունա-

---

[1] «Արև», Կահիրե, 1933 թ., № 4409։

[2] «Խաղաղության կաֆե» (ֆր.)։

հեղութիւններ, ինչ կռիվներ կըլլան և օտար իշխանութեանց մոտ ինչ մատնութիւններ կատարված են վարկաբեկելով հայ անունը և այս բոլորը ձեր ղեկավարներուն ձեռքովը։ Հիմա ինձի ըսե տեսնեմ, թե ճշմարիտ հայ եղողը մինչև ազգուրացութեան կդիմե՞ եռագույն մը պարտադրելու համար ժողովուրդին կամքին հակառակ։ Եթե նույնիսկ այդ դրոշակը արժեք մըն ալ ներկայացներ՝ դուք ձեր տգեղ ընթացքովը անպատվեցիք զայն կռիվի ազդանշան դարձնելով և չեք մտածեր, թե ձեր հարուցած վեճերով օտարներու առջև որքա՞ն կտուժե ազգը։

— Ազգը մեզի չի հետաքրքրեր, եթե հիմերեն իսկ քանդվի, մեզ հետաքրքրողը եռագույնն է, որովհետև ասոր համոզված եղիր, սիրելի Կուռնելիոս, որ հայ ազգը առանց եռագույնի բան մը չարժեր, մինչ եռագույնը առանց հայ ազգին շատ բան կնշանակե։ Մեր գաղութին մեջ շատեր կրաժնեն մեր այս տեսակետը և անոնց պահած լռությունը անգամ ապացույց է, թե համամիտ են մեր գործելակերպին, հետևաբար ասկե անդին «անկցի՛ ազգը, կեցցե՛ եռագույնը»։ Այս է մեր կարգախոսը։— Այս ըսելով՝ ձեռքս սեղանին զարկի, ընդգծած ըլլալու համար վերջին խոսքերս։

— Եվ այս կարգախոսը տվողները դուք հայե՞ր կդավանիք, երբ եռագույնի սիրույն ազգը զոհելու պատրաստակամություն ցույց կուտան,— հարց տվավ բարեկամս։

— Ի՞նչպես հայեր են, քանի որ հայերեն կգրեն, հայերեն կկարդան և հայերեն կխոսին,— վրա տվի մեղմիվ։

— Ո՛չ, Վիշապ, ո՛չ, ամոնք բավական չեն մեկու մը հայ ըլլալը ապացուցանելու համար, մարդիկը իրենց արարքներեն կդատեմ ես, և որպեսզի ըսածիս համոզվիս, օրինակ մը պիտի բերեմ, ուստի մտիկ ըրե պատմելիք պատմությունը։— Ու այս ըսելով բարեկամս՝ Կուռնելիոս սկսավ պատմել.—Սողոմոն իմաստունի օրով ծերունի մեծատուն մը կար, որ ինը զավակներ ուներ, ութը մանչ և մեկ հատը աղջիկ։ Երբ աղջիկը հաղիվ տարվան մը ամուսնացած էր՝ ամուսնույն հանդեպ անհավատարիմ արարքի մեջ բռնվելով մորը քով կճամփվի, ուր աղջիկը մորը վիզը իյնալով, հեծկլտանոք կսկսի պատմել իր ունեցած ամոթը և կրած խայտառակությունը։ Մայրը մտիկ ընելե վերջ աղջկան պատմությունը, խիստ կերպով կհանդիմանե զայն, ըսելով, թե չափազանց անխոհեմ վարված էր զգուշություններ ձեռք չառնելով և թե՝ այդ կարգի սայթաքումներ ինքն ալ ունեցած է իր երիտասարդությանը ընթացքին այնքան հաճախակի, որ ճշտիվ չգիտեր, թե իր ինը զավակներեն որո՞նք իրենց հոր հարազատներն էին։

Այս խոսակցության ընթացքին ծերունի ամուսինը, որ հարակից սենյակին մեջ կգտնվեր, իրազեկ կըլլա ահռելի իրականության և քանի մը շաբաթ հետո սրտին ցավեն կմեռնի։

Մահվնե վերջ, երբ կտակը կբացվի, զավակները զարմանքով կտեղեկանան, թե իրենց հայրը ոչ մեկ կտակ կթողուր իր հարստութենեն, որովհետև չէր գիտեր, թե իր զավակներեն որո՞նք էին հարազատները և որովհետև այս եղելության առջև բոլոր եղբայրներն ալ ժառանգության տիրանալու մտոք իրենց հարազատությանը վրա կպնդեն, վեճը կսաստկանա և խնդիրը Սողոմոն իմաստունին առջև կրհանվի։

Սողոմոն իմաստուն նկատի չառներ շնացող մոր ցուցմունքները և կհայտարարե, թե ինք երթալով անոնց հոր գերեզմանին վրա կարգ մը արարողություններ պիտի կատարե և կպատվիրե ութը եղբայրներուն, որ վաղը իրեն ներկայանան։

Հաջորդ օր դարձյալ ութը ժառանգորդները կներկայանան ատյան, ուր Սողոմոն իմաստուն ութը գավազաններ պատրաստած էր կանխավ և կհրամայե, որ եղբայրներեն յուրաքանչյուրը գավազան մը առնելով, դատավորներու ընկերակցությամբ երթան իրենց հոր դամբանը, ուր ամենքը իրենց կարգին դամբանաքարին վրա գավազանի հարվածներ տալով ականջ դնեն ննջեցյալի ձայնին, որ պիտի որոշե հարազատ զավակները անհարազատներեն։ Հրամանը կկատարվի և տղաքը կառաջնորդվին գերեզմանին առջև։ Դատավորներեն մին կհրամայե, որ նախ անդրանիկը սկսի։ Ասիկա կատաղի հարվածներ կսկսի տեղացնել հոր գերեզմանին

վրա, շարունակ ականջ դնելով, թե ինչ պիտի լսե խորեն։ Բայց իզուր, գավազանը կկոտրվի և ոչինչ կլսվի։

Կարգը կուգա երկրորդին, որ նույնպես գավազանը կկոտրե առանց ձայն մը իմանալու։ Հետո երրորդ եղբայրը, հետո չորրորդը, բայց իզուր գավազանները կկոտրվին, ձայն չի լսվիր։ Երբ կարգը կուգա հինգերորդին՝ բոլոր ներկաներուն զարմանքը մեծ կըլլա, երբ կտեսնեն, թե տղան ձեռքի գավազանը մեկդի նետելով ծունկի կուգա գերեզմանին առջև և կսկսի հեծկլտանքով լալ։ Եղբայրները շափազանց հիմար կգտնեն անոր այս տկարությունը, տեսնելով թե ան չուզեր հետևիլ մյուսներուն։ Մնացյալ եղբայրները կշարունակեն գործը, և իրարու ետևե գավազանները կխորտակվին առանց ձայն մը, բառ մը լսելու գերեզմանեն։ Գավազանով հարցուփորձի գործողությունը լրանալուն՝ բոլորն ալ վերստին կառաջնորդվին Սողոմոնի առջև, որ իմանալե հետո, թե հինգերորդ տղան գավազանը նետելով ծունկի եկած և հեծկլտանոք լացած է, կհարցնե անոր, թե ինչո՞ւ չէ հետևած մյուսներուն։

— Ոչ, տեր արքա,— կպատասխանե արցունքներե խեղդված ձայնով մը,— ես չեմ կրնար հորս գերեզմանին վրա գավազան բարձրացնել, այսինքն՝ հայրս ծեծել, ես նախամեծար կհամարեմ հրաժարիլ ժառանգությունե, քան այս տխսակ անպատկառ արարքի մեջ գտնվիլ հորս հիշատակին հանդեպ։

Սողոմոն իմաստունին վճիռը. կռահեցիր կարծեմ,— շարունակեց Կուռնելիոս բարեկամս ծանրակշիռ շեշտով.— «Տվեք այդ մարդուն ամբողջ հարստությունը այս տղուն, ա՛յս է անոր միակ հարազատ որդին, հետևաբար միակ ժառանգորդը, իսկ մյուսները անհարազատներ են, թող մեկնին»։

Հիմա, Վիշա՛պ, առակս այս ցուցանե, թե բոլոր անոնք, որ կհանդգնին իրենց հոր, այսինքն՝ ժողովրդի վրա գավազան բարձրացնել՝ անոնք հայեր չեն, անհարազատներ են, կարծեմ հասկցար,— եղավ վերջին խոսքը Կուռնելիոս բարեկամիս։

Առարկություն չունեի ընելիք, հարվածը զորավոր էր և ես շափազանց վիրավորված էի, գլխարկս առի և առանց գիշեր բարի ըսելու մեկնեցա։

ԿՈՒՌՆԵԼԻՈՍ ԵՎ «ԵՌԱԳՈՒՅՆ»-Ը[1]

Ինչպես մեր մարտական կուսակցությունը, որ երբ հետին միտք մը ունի գործադրելիք՝ պատրվակ մը կստեղծե, նույնպես ալ ես «եռագույն»-ի հրատապ հարցին շուրջ Կուռնելիոս բարեկամիս կարծիքը շոշափելու համար՝ սա նեղացուցիչ տաքերուն իրեն գարեջուր մը հրամցնելը պատրվակեցի և միասին մտանք գարեջրատուն։

Փրփրագեղ գավաթներուն առջև քանի մը բռնաղբոսիկ կատակներ փոխանակելե հետո, կուլ տվինք պարունակությունը։

Խոսելու կարգը իմս էր։ Որքա՞ն ալ ուզեցի դեմքով հանդարտ երևիլ և սրտնեղությունս չհայտնել՝ բայց Կուռնելիոս բարեկամս, որ հին աղվես մըն է, կռահելով տխրությունս և այլայլված վիճակս, հարցուց.

— Խեր է Վիշապ. այդ ի՞նչ վիճակ է, հիվա՞նդ ես, ինչ ես։

— Ա՜խ Կուռնելիոս աղա, երանի՜. թե հիվանդ ըլլայի. հիվանդություն մը կդարմանվի, բայց այս հարվածը անդարմանելի է։

— Ո՞ր հարվածին մասին է խոսքդ, Վիշապ։

— «Եռագույն»-ը արգիլվեցավ, Կուռնելիոս աղա, ասկե ավելի մեծ հարված կըլլա՞ միթե։

— Կատա՞կ կընես, Վիշապ, եթե եռագույնը այնքան կսիրեիք, ինչո՞ւ պետք եղած ատեն չպաշտպանեցիք և ձգեցիք փախաք։

— Ատիկա խոսք չէ՛, Կուռնելիոս աղա, այն ատեն ձգեցինք փախանք, բայց հիմա, որ գործերնուս կուգա՝ կրկին օձիքին փականք, որովհետև ասիկա մեր վերջին զենքն էր մեր շարքերը խթանելու և մեր հակառակորդները հարվածելու համար։

[1] «Ալբ», Կահիրե, 1933 թ., № 4437։

— Այն ատեն, Վիշապ, այդպիսի կարևոր զենք մը ձեռքե չհանելու համար պետք էիք ամեն ջանք ի գործ դնել։

— Ի՞նչ կըսես, Կուռնելիոս աղա, միթե մնա՞ց միջոց մը որուն չդիմենք։ Նախ մեր հակառակորդները օտար իշխանությանց աչքին համայնավար ցույց տալու համար ահագին «ժուռնալ»-ներ տվինք, մեր «սևացրեք»-ի դրությունը մեր շարքերեն դուրս ամբողջ ազգին վրա տարածելով։ Հետո, ոնոնց ժողովները արգիլեցինք, թեյասեղանը փակել տվինք, իսկ փողոցներուն մեջ մեր բոլոր մարտական ուժերը շարժման մեջ դրինք, գլուխներ պատռեցի՛նք, կոնակներ դաշունահարեցի՛նք, աթոռներ խորտակեցի՛նք, ծեծեցի՛նք, փետտեցի՛նք, խարեցի՛նք, ստեցի՛նք, մատնեցի՛նք, զրպարտեցի՛նք, գրգռեցի՛նք, դրդեցի՛նք։ Նամակներով, հեռաձայնով սպառնացի՛նք, հայհոյեցի՛նք, բայց իզո՞ւր։ Որքա՞ն փոխվեր են ժամանակները։ Այս բոլոր միջոցները, որոնք ատեն մը այնքան լավ արդյունքներ կուտային, հիմա ոչ ոքի վախ կազդեն, Կուռնելիոս աղա, արդյոք տարանիս առնվա՞ծ է կըսես։

— Վիշապ, կերևի դուն չես կարդացած «Առյուծի մորթ հագնող էշը» առակը։ Մտիկ ըրե, որ ըսեմ։ Վայրի էշ մը կա եղեր, որ շարունակ անտառին մյուս կենդանիներուն կողմե կհալածվի եղեր։ Օր մը որջի մը մեջ սատկած առյուծի մորթ մը գտնելով՝ վրան կառնե ու կսկսի անտառին մեջ վազել։ Շուրջը գտնվող գազանները զայն առյուծ կարծելով կսկսին փախչիլ։ Ասոր վրա հաղթական էշը ուրախությունեն կսկսի երգել, այսինքն՝ զռալ։ Այս քաղցր երաժշտությունը իմացող գազանները կհասկնան, թե առյուծի մորթին տակ էշ մը պահված է, կուգան և վրայի մորթը վար առնելով տակի էշն ալ փառավորապես կճաշակեն... Հիմա Վիշապ դուք ալ...

— Զգե, աստվածդ սիրես, Կուռնելիոս աղա, ասոնք մըտիկ ընելու սիրտ չունիմ, միայն գիտցիր, որ հակառակ մեր կրած ջախջախիչ պարտության, դեռ չենք հուսահատած, ամեն գինով Կոմիտեի հրահանգը պիտի գործադրենք։ Եթե հոս չկրնանք պաշտպանել «եռագույն»-ը, Ազգերու Դաշնակցության ժողովին պիտի դիմենք, եթե հոն ալ չհաջողինք՝ Լահեի Բարձրագույն ատյանին։ Այդ ուղղությամբ իսկ գործի ձեռնարկած ենք և «Դրոշակի ֆոնդ» մը հաստատած, որմե մինչև այսօր երկու հարյուր ղրուշի պատկառելի գումար մը գոյացավ։

— Ինձի նայե, Վիշապ, նորեն ձևով մը խեղճ ժողովուրդին գրպանները պարպելու մի՛ սկսիք, բերաննիդ գոցեցեք և տեղերնիդ նստեցեք, ա՛յս է միակ խոհեմությունը։

— Հո՛, հո՛, այդ ըսածներդ տկար մարդու խոսքեր են Կուռնելիոս աղա, մենք խոհեմության հետ գործ չունինք և լսողներեն ալ չե՛նք։ Մի մոռնար, որ մենք էինք, որ մեր կառավարության օրերուն ափ մը զինվորներով ահագին Ռուսիային, Թուրքիային, Վրաստանին, Ադրբեջանին, քուրդին, Թաթարին դեմ պատերազմ հռչակեցինք։

— Էհ, հետևանքները մեջտեղն են, Վիշապ, ձեր խելագարությանց երեսեն ազգը շարաշար տուժեց, Հայաստանի երկու երրորդը Թուրքին հանձնելով փախաք և հիսուն հազար հայերուն ջարդվելուն ալ պատճառ եղաք։

— Այո, Կուռնելիոս աղա, ճիշտ է, մենք այնպես ուզեցինք, որ Թուրքը գա և զտած հայերը ջարդե, որովհետև որքան շատ հայ ջարդվի այնքան ավելի պահանջող կըլլանք մենք և Թուրքն ալ պարտական կըլլա մեզի. ա՛յս է մեր տեսակետը։ Եվ հետո կարելի՞ է ավելի մեծ զենք մը ունենալ, քան նահատակներուն հիշատակը, զոր օգնության կանչելով միայն կրնանք մեր «եռագոյն»-ը պարտադրել։

— Պռավո ձեզի, Վիշապ, ըսել է նախ ժողովուրդը ջարդել կուտաք, ետքն ալ կոկորդիլոսի պես արցունք կթափեք։

— Ի՞նչ ընենք, Կուռնելիոս աղա, երբ օրինավոր միջոցներով չենք կրնար մեր նպատակին հասնիլ, ապօրեն միջոցներու կդիմենք։ Մեր մեծանուն գրագետը ըսած է. «Արդարության հաղթանակը ուշ է լինում այս աշխարհում». ուրեմն երբ արդարությունը դանդաղ կգալե՝ կեղծիքի և զրպարտությունների կարճ ճամփով կուզենք շուտ հասնել մեր նպատակին։

— Եվ ո՞րն է, Վիշապ, ձեր այդ հասնելիք նպատակը։

— Կուռնելիոս աղա, այդ հարցումիդ պատասխանելը

թույլատրված չէ ինձի, սակայն դուն մեր մարդն ես, քեզմե չեմ պահեր, մտիկ ըրե։ Նախ և առաջ կուզենք գաղութահայության սրտեն արմատախիլ ընել ներկա Հայաստանը, ասոր համար է, որ գիշեր, ցերեկ կգրենք, կպոռանք, թե հոն սով կտիրե, թե կյանքը տաժանելի է և դեռ ասոնց նման շատ մը բաներ, զոր մեր թերթին մեջ անշուշտ կկարդաս ամեն օր։ Կուզենք նաև արգելք հանդիսանալ ներգաղթի անունով եղած հանգանակություններուն, որովհետև եթե գաղութահայությունը շարունակե այսպես կամաց-կամաց Հայաստան փոխադրվիլ, մեր վերջը անոթություն է։ Իսկ մյուս կողմանե, «եռագոյն»-ը պարտադրելով գաղութներուն, կուզենք պարզապես զանոնք մեր ցանցին մեջ առնել և ստիպել, որ մեզի պես խորհին, մեզի պես խոսին և մեզի պես գործեն, մեկ խոսքով մեր կույր հետևորդներ ըլլան։ Այն ատեն, կազմ ու պատրաստ պիտի սպասենք, մինչև՞ որ մեր ղեկավարները հարմար օրը հասած նկատելով, մեզ առաջնորդեն դեպի ազատություն կամ մահ, այսինքն՝ մեր թշնամիներուն հետ կռվելով կա՛մ կտիրանանք ծովե ծով ազատ և անկախ Հայաստանին և կամ կկործանենք վերջապես...։

— Ինձի նայե Վիշապ, այդ քու ըսածներուդ ամենքն ալ եղան և այնպիսի ատեն՝ երբ հայությունը իր ծննդավայրերուն մեջ ամփոփ հավաքական ուժ մը կներկայացներ և հետևանքները մեջտեղն են։ Մենք ազգովին հանձնվեցանք այդ ձեր ղեկավարներուն և տեսանք, թե ինչպե՞ս անոնք հայ ազգը անղեկ նավու մը պես արյունի ծովերեն տարին և ժայռերուն դեմ ջարդուփշուր ընելով ընկղմեցին, և հիմա այդ փոթորիկեն ճողոպրած խլյակները, որ գաղութներու մեջ կըմնան, դարձյալ կուզեք տանիլ և այս անգամ մնացածն ալ փչացնել, բայց ձեր փափագներուն պիտի չհասնիք։ Ճիշտ է, որ ատեն մը միամիտներ էինք, որ ազգովին ձեզի հետևեցանք, բայց միլիոն մը նահատակներու կյանքին գինովը սորվեցանք, թե որոնց հետ է մեր գործը։ Հետևաբար փորձվածը կրկին փորձելը հիմարություն է և անոնց խոսքերուն հավատացողները, Վիշապ, միայն քեզի պես հիմարներն են։

Այս ըսելով, Կուռնելիոս աղան գլխարկը և գավազանը առավ և դուրս ելավ։

Ուզեցի ետևեն վազել և ըսածներուն հաշիվը պահանջել, բայց գարսոնը[1] թեսս բռնելով խմած գարեջուրներնուս հաշիվը պահանջեց։ Ի՜նչ դժվար է եղեր քեզ հիմար անվանող մարդուն խմած գարեջուրին դրամը վճարելը...։

Ալեքսանդրիա, 1933 թ.։

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԸ ԿՈՒՌՆԵԼԻՈՍԻ ՀԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ[2]

Կուռնելիոս բարեկամիս հետ մեր վերջին խզումեն հետո, որքան ալ ջանացի ինքզինքս զսպել և այլևս չմտածել իր մասին, բայց մարտական թերթին[3] հանապազօրյա քաշքըշուկները և բոլոր ճշմարտությունները խեղաթյուրելու եղանակը, իմ ալ մեջս հակաճառելու և լսածներուս հակառակը պնդելու բուռն մարմաջ մը արթնցուցած ըլլալուն՝ որոշեցի երթալ Կուռնելիոս աղայի սովորական սրճարանը, ուր զինքը գտա թեյ խմելով զբաղած։

Պայմանագրական ձևակերպություններեն հետո, հանկարծ միտքս ինկավ ընկեր Անոթիին ըսածը թե՝ Կուռնելիոս աղան ալ արձանագրված էր Հայաստան երթալու համար։ Ուստի ձայնիս մեջ կրցածիս չափ անկեղծ շեշտ մը դնելով ըսի.

— Կուռնելիոս աղա, իմացա, որ Հայաստան երթալ փափագողներից մեկն ալ դուն ես եղեր և այժմեն իսկ արձանագրվել ես առաջիկա քարավաններուն մաս կազմելու համար։ Շիտակը ըսելով այս աստիճան խոշոր հիմարություն մը բնավ չէի սպասեր քեզմե։

Այս խոսքիս վրա, Կուռնելիոս աղան հեգնական ժպիտով մը հարցուց.

— Ինչե՞ն կհետևցնես, Վիշապ, ըրածիս հիմարություն ըլլալը։

— Կուռնելիոս աղա, այդ մասին հարցնելդ անգամ ա-

[1] Մատուցող (ֆր.)։
[2] «Արև», Կահիրե, 1933 թ., № 4510։
[3] Նկատի ունի «Հուսաբեր»-ը։

վելորդ է. Հայաստանն ալ երթալիք տե՞ղ է միթե, ես նախամեծար կհամարեմ Չինաստան երթալ, Հնդկաստան երթալ՝ քան թե Հայաստան։

— Բայց. Վիշապ, միթե մենք չէի՞նք Հայաստանի սիրույն դարերով արյուն արցունք թափողը, և հիմա որ ունեցանք մեր հայրենիքը, հիմա որ ունեցանք մեր կառավարությունը և կուզենք երթալ մեր երկիրը, որ օրեօր կշինվի, կշեննա՝ կելլեք հիմարություն կանվանեք մեր այս ընթացքը՝ շիտակը ես չեմ կրնար հասկնալ, թե ի՞նչ մտայնության կծառայեք դուք։ Կա՛մ այն է, որ հայրենասիրության ինչ ըլլալը չեք գիտեր և կամ ձեր երակներուն մեջ հայու արյուն չկա։

— Ընդհակառակը, Կուռնելիոս աղա, մենք ճշմարիտ հայու արյուն ունինք և ճշմարիտ աղգասերնե՞ր ենք։ Արդեն հազար անգամ ալ ըսած ենք, որ մեզմե զատ և մեր կուսակցությունեն դուրս գտնվողները մենք հայեր չենք նկատեր, ասոր համար ալ, և որովհետև ներկա Հայաստանը մեր կուսակցության ձեռքը չէ՝ ուրեմն Հայաստան չէ, այլ՝ Վայաստան։ Եվ մենք հանուն կարգապահության պարտավոր ենք գիշեր ցերեկ սովի, համաճարակի, տանջանքի և դեռ շատ մը նմանը չտեսնված բռնություններու շինծու և երևակայական պատմություններ ստեղծել՝ արգիլելու համար հոն մեկնիլ փափագողները, մանավանդ որ ամեն օր խումբ-խումբ փախչողներն ալ կհաստատեն մեր ըսածները։

— Եվ դուն կհավատա՞ս, Վիշապ, այդ փախստականներու առասպելին։

— Ինչպե՞ս թե չէ, Կուռնելիոս աղա, մեր թերթին մեջ անոնց լուսանկարները գետեղված են, տակն ալ իրենց անուններովը։

— Մի մոռնար, Վիշապ, որ Տեր-Զորի տարագրությունեն ազատագրվածներեն հազարավոր խմբակներ կան քաշված, ահա այդ լուսանկարներուն վերը շատ դյուրությամբ կարելի է գրել «Հայաստանեն փախածներ», իսկ տակն ալ քանի մը հայկական անուններ, Մարկոս Թորոսյան, Թորոս Մարկոսյան, պրծավ գնաց։ Եվ հետո, Վիշապ, մեկ սահմանագլուխեն մյուսը անցնիլը՝ լրագրին էջերը սուտերով մրոտելու չափ դյուրին գործ մը չէ. ինչպես առջի օր «Պալքանյան մամուլ»-ն ալ ձեր օձիքեն բռնած էր, ցույց տալով, թե շատ վրան բաց ֆիասքո մըն էր Կահիրեի մեջ նստած՝ գրիչի մեկ հարվածով 23 հազար հոգին սահմանեն անդին նետելը...

— Այո՛, Կուռնելիոս աղա, այդ կետը մեր ալ ուշադրությունը գրավեց և պահ մը շփոթության մատնվեցանք, և քանի որ ցամաքեն սահմանը անցնիլը անհնարին է, մենք ալ որոշեցինք այսուհետև օդային ճամփով փախցնելու միջոցներուն վրա մտածել և փախչողներուն ալ «օդային փախստականներ» անունը պիտի տանք։

— Ինձի նայե, Վիշա՛պ, կուզե՛ք օդային փախստականներ գրեցեք, կուզեք ստորերկրյա գրեցեք, կուզե՛ք ընդծովյա գրեցեք, այդ բոլորին ալ միլլիմ[1] տվող չկա։ Գաղութահայությունը միայն սա գիտե, թե Արարատի ստորոտը հայրենիք մը ունինք, որ կշինվի, կբարգավաճի և թե ամեն հայ պարտավոր է իր կարելին ընել, թե՛ նյութապես և թե՛ բարոյապես օժանդակելու համար անոր, որովհետև հոն է մեր բոլորիս տունը։ Իսկ անշուշտ կան մատի վրա համրվող ուղուրսուղներ[2], որոնք գաղութներու մեջ ձեր սորվեցուցած սոփաջիությանն[3] շնորհիվ ձրիակերության վարժված ըլլալնուն, երբ Հայաստան կերթան՝ հոն եկեղեցիներու կալված-ներ գրավել կամ առաջնորդներու մորուքը կտրել և կամ քաղաքական ժողովներու ատենապետները տեռորի ենթարկելով վարձք ստանալու հնարավորություն չունենալնուն կդժգոհին, և փոխանակ հայրենաշինության գործին լծվելով հայրենիքին օգտակար ըլլալու՝ կճողոպրին հայրենիքին։

Եվ դուք, Վիշապ, փոխանակ այդ վատերը իբրև դասալիքներ թուքի և մուրի առարկա ընելու՝ ձեր թերթին մեջ խմբագրականներով և երկարապատում հոդվածներով կփառաբանե՞ք, կպանծացնե՞ք, և օվսաննա՞ կերգեք, նկարագրի և իսառնվածքի համանմանություն մը տեսնելով ձեր և անոնց միջև։

---

[1] Գրոշ։
[2] Ջարարասիկ մարդ։
[3] Մահակավորություն։

— Այդ բոլոր ըսածներդ աղեկ, Կուռնելիոս աղա, բայց սա ալ պետք չէ մոռնաք, որ մարդ մը, երբ իր հայրենիքը կերթա՝ պետք է ճոխ և հանգիստ կյանք մը վարե։ Մենք ինչ պետք ունինք հոն երթալու և շինարարության լծվելու, քանի որ գաղութներու մեջ գտնվող բազմաթիվ ոչխարամիտներուն շնորհիվ այլևայլ «ֆոնտ»-եր հաստատելով մեր մտավորականները և մեր սոփաչիները կրնանք հանգի՞ստ ապրեցնել։

Ուստի նախ թող «Հայաստանչի»-ները երթան և շենցնեն, հարկավ օր մըն ալ առիթը կներկայանա և մենք «հայրենասեր»-ներս կերթանք և շինվածը քանդելով կապրվինք, մանավանդ որ այս մասին փորձառու մասնագետներ ալ ունինք։ Արդեն իսկ այդ ուղղությամբ մեր դիպլոմատ ընկերները մեծ ջանքեր կթափեն Պրոմեթեի հետ համագործակցաբար, իրականացնելու համար այս գեղեցիկ ուտոպիան։ Ահա թե ինչու համար, սիրելի Կուռնելիոս աղա, մենք չենք ուզեր այժմեն երթալ հոն և զրկանքի ու զոհողության ենթարկվիլ։

— Հապա Վիշապ, դեռ երեկ պատշգամը նստած թոքապատառ հայրենաշունչ երգ մը կերգեիր. «Հայաստանիս սիրույն համար փչոտ վայրերն կըլլան դրախտ, անոր սիրույն բանտն ալ դրվիմ պալատ է ան ինձ համար, ձեռքերս, ոտքերս շղթա զարնեն երջանկություն է ան ինձ համար» և այլն։

Հիմա ինձի կրնա՞ք բացատրել, Վիշապ, թե ի՞նչ օյինբազություն[1] է ասիկա, երբ մեկ կողմեն հայրենաշունչ երգերով կոկորդնիդ կպատռեք և հայրենասիրություն կծախեք՝ մյուս կողմեն ալ հայրենիքին դեմ կդավեք և Հայաստանը վարկաբեկելու համար ճիգ չեք խնայեր։

— Ա՜խ, Կուռնելիոս աղա, քու ալ խելքդ միտքդ զիս նեղը դնել է, կելլես այնպիսի հարցումներ կընես, որ մեր կարգապահական օրենքներուն դեմ է անոնց պատասխան տալը, բայց ես քեզմե չեմ ծածկեր, մտիկ ըրե ուրեմն։ Ձեզի հետ մեր ունեցած տարակարծություններուն և հակառակություններուն պատճառը այն է, որ ձեր և մեր տրամաբանության կենտրոնները տարբեր տեղեր կգտնվին։ Այսպես, երբ դուք ձեր զգացումներուն կանսաք և մտքով կտրամաբանեք ամեն բան, մենք ստամոքսի տրամաբանությամբ կմոտենանք բոլոր հարցերուն և ճիշտ ասոր համար է, որ շարունակ մեր տեսակետները կհակասեն ձերիններուն և փոթորիկը կպայթի։ Կռիվ մը կամ ոճիր մը պատահելուն՝ Նապոլեոն կըսեր կնոջը փնտրեցեք, մեր ալ ամեն նվիրական ձեռնարկի դեմ պայքար բանալնուս պատճառը՝ դրամը փնտրեցեք, մտիկ ըրե, Կուռնելիոս աղա, Ռաբլե կըսեր. «Մարդուս ամենամեծ թշնամին իր որովայնն է»։ Հայության ալ ներկա ամենամեծ թշնամին ո՛չ Թուրքն է և ո՛չ ալ ռուսը, այլ մեր շեֆերուն ստամոքսը։

Հիմա հասկցա՞ր, Կուռնելիոս աղա, թե ինչ է պատճառը, որ մեր խոսքերը չեն համապատասխաներ մեր գործերուն, թե երբ մենք ընկերվարություն կքարոզե՛նք և ընկերվարական Ռուսիան մեզի բարեկամություն կառաջարկե, մեր դարավոր թշնամու հետ դաշնագիրը կստորագրենք։ Մենք գիշերցերեկ Թուրքին «բորենի, արյունարբու գազան» կպոռանք՝ անդին Պրոմեթեի հետ կգրկախառնվինք և Հայաստանի դեմ կդավենք, երբ ամեն օր ներգա՞ղթ կաղաղակենք՝ անդին ներգաղթի կազմակերպիչները իբր համայնավար կմատնենք։

Երբ ամեն օր Հայաստանի մեջ կատարվող շինարարությունները կհրատարակենք և հայրենիքին օժանդակելու մասին կգրենք, մյուս կողմեն ալ ներգաղթի հանգանակություններուն դեմ բոյկոտ կհռչակենք։ Երբ «ոչ մեկ միլիմ Բարեգործականին» կգրենք՝ մյուս կողմեն առիթը չենք փախցներ անկե օգնություն մուրալու։ Երբ եկեղեցիներու նվիրականությունեն կճառենք, անդին եկեղեցականներու մորուքը կխուզենք։ Երբ Ազգային Սահմանադրության հանդեպ հարգանք կպահանջենք, մյուս կողմեն սոփաներով ժողովներու վրա կհարձակինք և գլուխներ պատռելով ենիչերիները կհիշեցնենք։ Հիմա հասկացա՞ր, Կուռնելիոս աղա։ Ա՜խ, զորն ասեմ և զորն խոստովանիմ։

— Է՜, շատ աղեկ, Վիշապ օղլում, ասոր մեկ ճարը նայելու է։

— Ինձի նայե, Կուռնելիոս աղա, ասիկա մեկ ճար ունի միայն, եթե դուք իսկապես կսիրեք ձեր ազգը և կուզեք վերջ դնել այս վեճերուն՝ պետք է, որ մեր պարագլուխներուն

[1] Խեղկատակություն։

կենսաթոշակ մը հատկացնեք, որպեսզի ձայներնին կտրեն։ Վերջապես այս մարդիկն ալ, իբրև մտավորականներ, հայ ազգը մինչև այս վիճակին հասցնելը և թափառաշրջիկներու վերածելը ահագի՜ն աշխատանք թափած են, և արդար ըլլալու համար պետք է ըսել, որ եթե շինելը հոգնության կկարոտի՝ քանդելն ալ առանց հոգնության չի կատարվիր, անանկ չէ՞, Կուռնելիոս աղա։

— Է՞, կեցցե՛ս Վիշապ, շիտակը ըսելով այս չքնաղ գաղափարը երբեք չպիտի կրնայի հղանալ։ Ժողովրդի մը աառաջադիմության սատարողներուն իբրև վաստակավոր թոշակ տրվիլը իմացած էի, բայց ժողովրդի մը գոյության դեմ դավողներուն կենսաթոշակ հատկացնելը քեզմե կիմանամ կոր...

Կուռնելիոս աղա անուշ ժպիտով մը ուսիս կամաց մը զարկավ և բաժնվեցանք իրարմե։ Եվ ես մինչև հիմա չկրցա հասկնալ, թե Կուռնելիոս աղային ժպիտը անկե՞ղծ էր. թե հեգնական...

Ալեքսանդրիա, 1933 թ.։

ԿՈՒՌՆԵԼԻՈՍ ԵՎ ՔՎԵՍԼԿՈՒԹՅՈՒՆԸ[1]

Կուռնելիոս բարեկամիս հետ երկար ժամանակե ի վեր տեսակցելու առիթ չէի ունեցած, որով բուռն փափագ մը կզգայի զինքը տեսնելու՝ հետը խոսակցելու համար։ Ուրախությունս մեծ եղավ, երբ զինքը գտա ծովահայաց սրճարանի մը առջև նստած և կլկլակ քաշելով զբաղած։ Առիթը ավելի քան հարմար էր զինքը համոզելու և իր քվեն կորզելու համար, որպեսզի բոլոր գաղութներու մեջ պարտությունից պարտություն գլտորվելե և խայտառակվելե ետք՝ գոնե սա Ալեքսանդրիայի ընտրությանց մեջ հաղթական ելլեինք մենք՝ դաշնակցականներս։

Ուստի, երբ անիկա զիս տակավին չէր նշմարած՝ մտքի արագ ամփոփումով մը ջանացի տարբեր կողմե սկսիլ խոսակցությունս, հետզհետե իր քվեին վրա եզրակացնելու համար ու մոտենալով և ուսին զարնելով.

— Բարև, Կուռնելիոս աղա,— ըսի,— լավ է կհուսամ ձեր ազնիվ որպիսությունը։

— Օ՜, բարև, Վիշապ, այս ի՞նչ անակնկալ հանդիպում, ի՞նչ ես եղած։ Հոգնած, ընկճված վիճակ մը ունիս։

Վա՛յ չար սատանա, ի՞նչպես ալ մեկ ակնարկով գուշակեր էր խորտակված տրամադրությունս և ընտրություններու ելքին համար այժմեն զգացած հուսահատությունս։ Ուստի կեղծել ջանալով՝—Ոչի՛նչ, Կուռնելիոս աղա, իտալո-հաբեշ վեճն է, որ զիս շատ կմտահոգե,— վրա բերի ժպտալով։

— Զգե, Վիշապ, քու ինչո՞ւդ պետք իտալո-հաբեշ վեճը. մենք մեզի նայինք, հայերուս համար նպաստավոր բան մը կա՞ ատոր մեջ, ա՛յդ է կարևորը։

Էվրի՞քա, այս հարցումը միտքս բան մը ձգած էր, որ զիս շփոթ կացութենես կփրկեր, այդ ալ Սըր Սամուըլ Հորի ճառն էր։ Ուստի եռանդով և շեշտակի իր աչքերուն մեջ նայելով ըսի.— Ահա ճի՛շտ ա՛յդ էր ըսելիքս, Կուռնելիոս աղա, մեզի համար շատ նպաստավոր բաներ կան։ Անգլիայի ներկայացուցչին փոքր ազգերու մասին խոսած արդարակորով ճառը կարդացիր անշուշտ։

— Ո՛չ...։

— Ուրեմն մտիկ ըրե, Կուռնելիոս աղա, Սըր Սամուըլ Հոր ճառ մը խոսած է, որ մեծ տպավորություն գործեց մեր շեֆերուն վրա, ճառ մը որուն մեջ մասնավորաբար շեշտած է փոքր ազգերու իրավունքներու մասին, թե աշխարհ պետք է արդարորեն բաժանվի բոլոր փոքր ազգերու միջև, որպեսզի խաղաղությունը տևական ըլլա։ Որով, ինչպես կտեսնես, Կուռնելիո՛ս աղա, հայ ազգն ալ փոքր ազգերու կարգին ըլլալուն՝ մե՛ր ալ իրավունքները մեզի պիտի վերադարձվին, ուրեմն մեր մարտական կուսակցության երազը եղող ծովից ծով Հայաստանին պիտի տիրանանք մոտ օրերս..., որով տարիներե ի վեր մեր մղած անհաշտ պայքարը և կատարած հղբայրասպանությունները իրենց բարերար արդյունքը տված կարելի է համարել..., որով ճիշտ կըլլա, որ դուն ալ քու քվեն մեզի տաս, որպեսզի սա ընտրություններուն մեջ մեր

[1] «Արև», Կահիրե, 1935 թ., № 5081։

կուսակցությունը հաղթանակե, որ աշխարհի միա՛կ ընկերվարական-ցեղակրոն-միջազգայնական-հեղափոխական- տեռորիստական-անիշխանական-ազգայնական, նաև մարտական կուսակցությունն է...։

— Ինձի կրնա՞ս ըսել, Վիշապ, թե ինչո՞ւ «մարտական» կկոչեք ձեր կուսակցությունը, արդյոք մարտ ամսվա՞ն մեջ ծնած ըլլալուն համար՝ թե մարտի խենթ հովերուն պես մեյ մը ազգայնական, մեյ մը միջազգայնական, մեյ մը ցեղակրոն, մեյ մը անիշխանական փչելուն համար...։

— Կաղաչեմ, Կուռնելիոս աղա, կատակը մեկդի թողդուն մեզի տուր քվեդ, կարծեմ մեր մեծ բարեկամության փոխարեն սա չնչին ծառայությունը չես գլանար ինձի, այնպես չէ՞։

— Ուրեմն, Վիշապ, ձեր «մարտ»-ական կուսակցությունը իր ջատագոված սկզբունքներուն մեջ անելիք չունենալով՝ հիմա ալ եկեղեցիին և բանկալին օձիքեն կուզե կառչիլ, որով իրավունք ուներ Քաջազնունին երբ կհայտարարեր, թե դաշնակցությունը այլևս անելիք չունի...։

— Կուռնելիոս աղա, թող հիմա Քաջազնունին, դուն տուր քվեդ մեզի և մեյ մը հաղթենք սա ընտրությանց մեջ և դուն պիտի տեսնես, թե մենք ի՞նչ հիանալի անելիքներ ունինք ծրագրված, որոնք ամբողջ հայության զարմանք պիտի պատճառեն։

— Էյ, լա՛վ, Վիշապ, ըսե ուրեմն սա ձեր անելիքները, որպեսզի ես ալ ըստ այնմ քվես ձեզի տամ...։

— Մտիկ ըրե, Կուռնելիոս աղա, նախ և առաջ որոշած ենք ամբողջ դպրոցական ծրագիրը հեղաշրջել ըստ մեր հեղափոխական պլատֆորմին, այսինքն՝ դպրոցական ծրագիրեն դուրս նետել բոլոր գիտությունները, բոլոր լեզուները, կրոնքը, բարոյագիտությունը և տակավին ասոնց նման դատարկ բաներ և անոնց տեղը դնել այնպիսի տարրեր, որոնք անհրաժեշտ են նոր սերունդեն ցեղակրոններ պատրաստելու համար։

— Քիչ մը ավելի պարզ խոսե, Վիշա՛պ, չհասկցա...։

— Օրինակի համար, մենք, Կուռնելիոս աղա, կուզենք, որ մեր ցեղակրոն տղերքը իբր թվաբանություն քիչ մը գումարում և քիչ մըն ալ բաժանում սորվին, զանազան և զարմանազան «ֆոնդ»-երե և գույնզգույն խաչերե գոյացած դրամներուն գումարը ընելու և զանոնք ընկերներու մեջ բաժնել կարենալու չափ։ Անկե դուրս մենք ուրիշ թվաբանության պետք չունինք։

Հետո, գրականության և ուղղագրության նման դատարկ բաները զանց կառնենք մենք և տղուն միայն իր անունը գրելու չափ գիր կսորվեցնենք՝ որպեսզի հարկ եղած պահուն Ալեքսանդրապոլի դաշնագրին նման թուղթի մը տակ իր ստորագրությունը կարենա դնել... լմնցավ գնաց...։

Հետո, մենք չենք ուզեր երաժշտության համար նոթերով և մանվածապատ ձայնանիշերով տղուն ուղեղը շարշրկելուղղակի «Մեր հայրենիք թշվառ անտեր»-ը կերգենք իբր երաժշտության դաս և տղաքը անմիջապես կսորվին, ինչպես որ անցյալ օր գինետան մը մեջ երգեցինք այս երգը այնպիսի եռանդով և միշտ կրկնելով, որ դուրսեն դիտող օտարներն անգամ սորվեցան և սկսան մեզի հետ երգել և պարել...։

Հետո, մենք ի՞նչ պետք ունենք ճշմարտության և ուղղամտության նման անիմաստ բաներ սորվեցնելու տղուն՝ երբ հազար անգամ փորձով հաստատած ենք, որ ստախոսության և կեղծիքի ճամփով կարելի է միևնույն արդյունքը ձեռք բերել և քիչ մըն ալ ավելի։

Բարոյագիտությունն ալ անիմաստ բան է մեզի համար, երբ անոր փոխարեն հայհոյանքի և անբարոյականության հիանալի համայնագիտարան մըն է մեր թերթին հավաքածոն։

Ազգային պատմությունն ալ մեր դպրոցներեն ներս շատ գեշ կիրառված է, Կուռնելիոս աղա։ Ինչո՞ւ կուզեք, որ մեր տղաքը անպայման Հայկեն սկսին և Արտաշես աշխարհակալի, Մեծն Տիգրանի, Վարդան զորավարի նման հինցած բաներ սորվին, երբ մեր նորագույն պատմության մեջ Խանասորի արշավանքին, Պանք Օթոմանին, Կարսի փախուստին և Ալեքսանդրապոլի դաշնագրին նման պանծալի և գյուցազնական դրվագներ կան սորվելիք։ Ճիշտ է, թե ատոնց հետևանքով հարյուր հազարավոր հայեր ջարդվեցան,

բայց... մենք ամենայն խնամքով զանց կառնենք այդ թվանշանները և այդ մասին խոսիլը...։

Իսկ աշխարհագրության համար ալ մենք կուզենք մեր աղոց սորվեցնել այն բոլոր կիրճերն ու ճամփաները, որոնք հարկավոր են Կարսեն արտասահման կծիկը դնելու համար...։

Գալով մարդակազմության՝ մենք կուզենք հաստատել մարդասպանության ճյուղ մը, որ իր մեջ կպարունակե նաև մարդակազմությունը։ Այսինքն թե, դաշույն մը ի՞նչպես պետք է գործածել և ո՞ւր մխել և ի՞նչպես մխել, ո՞ր մասերն են մարդս արագ մահացնող գործարանները, լյարդի՞ն, երիկամներո՞ւն, թե աղիքներուն պետք է մխել շեղբը՝ զոհը անձայն տապալելու համար, թե բաց վերքե մը արյունը ի՞նչ արագությամբ դուրս կժայթքե և ի՞նչ ընելու է անոր հետքերեն խուսափելու համար... Կուռնելիոս աղա, եթե մենք այս կարևոր գիտելիքները կանուխեն սորվեցուցած ըլլայինք մեր Սինկ-Սինկի սուրբերուն՝ անոնք այսօր իղուր տեղ նկուղները չպիտի պառկեին... Ինչ որ է, ավելի լավ է ուշ, քան՝ երբեք։ Ահա այս կարևոր աշխատանքները ի գլուխ հանելու համար նախ կուզենք դպրոցեն դուրս շպրտել բոլոր ուսուցիչները և անոնց տեղ մեր սոփայակիր հերոս ընկերները դնել, որպեսզի կիրարկված մեթոդները հաջողին։

— Հապա, Վիշապ, կրոնքը ի՞նչ կաղապարի մեջ պիտի խոթեք։

— Կրո՞նքը, հա՛, կրո՞նքը... Կուռնելիոս աղա, մենք անիկա շատո՞նց սրբած ենք մեր տետրակեն, երբ լավ գիտես, թե մենք եկեղեցոյ մեջ արքեպիսկոպոս մը խողխողելու[1] չափ առաջադիմած ենք արդեն, դուն ալ կեցեր կրոնքի մասին կխոսիս մեզի։

Կերևի հայտնած իմաստուն գաղափարներս լավ տպավորություն գործած էին Կուռնելիոս աղայի վրա՝ որ թաշկինակը հանելով քրտինքով ողողված դեմքը սրբեց և խորունկ հառաչանք մը հանելով ըսավ.

— Այն ատեն, Վիշա՛պ, այդ տղաքը տիպար ավազակներ, վկայալ ոճրագործներ պիտի ըլլան և դեմերնին ելլողը պիտի կողոպտեն ու պիտի սպաննեն. ասոր ի՞նչ կըսես։

— Ահա ճիշտ այդպես, Կուռնելիոս աղա, իրենց ազգակիցները կողոպտելով, սպաննելով հետզհետե վարժություն ձեռք պիտի ձգեն, որպեսզի օր մըն ալ թշնամիին դեմ երթալով, անոնց ունեցածը կողոպտեն ու զանոնք սպաննեն մեր իրավունքները ձեռք անցնելու համար...։

Խոսքս դեռ չէի ավարտած՝ երբ Կուռնելիոս աղան զորավոր կից մը տալով սեղանին՝ գետին տապալեց, գլխարկը իլեց և...

— Առեք ձեզի քվե, ըսելով քիթիս բերնիս ամուր մը թքավ ու հեռացավ։ Իր բերնեն դուրս թափող բառերու տեղատարափեն հստակորեն կլսեի «Սրիկանե՞ր, ոճրագործնե՞ր» բառերը։ Սմքած մնացի երկար ժամանակ, մինչև որ ընկեր Կարսեն Փախավյանը և ընկեր Դատարկկանգունին եկան և ուսիս զարնելով սթափեցուցին զիս։ Ու մենք դարձյալ ճամփա ընկանք մարդ խաբելով քվե կորզելու մեր հուսահատեցուցիչ պաշտոնը կատարելու համար։

Ալեքսանդրիա, 1935։

---

[1] Նկատի ունի 1933 թվականին Նյու-Յորքում, եկեղեցում արարողության պահին արքեպիսկոպոս Դուրյանի սպանությունը դաշնակ գանգստերների ձեռքով։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՆՈՐ «ԱՆԵԼԻՔ» ՄԸ[1]

Երգեցե՛ք տղերք,
Երգեցե՛ք քաջ-քաջ,
Դրամի սիրույն՝
Մենք կըլլանք սոխակ,

Երբ բալոնները[2]
Չեն ձգեր հասույթ
Մենք ալ ղոռ կուտանք
Երգահանդեսին...։

1 Տե՛ս «Սավառնակ», Կահիրե, 1937 թ., № 48։
2 Պարահանդես։

ԴԱՇՆԱԿ ՖՈՆԴԵՐՈՒ ԶՈՒԼԱՐԱՆ...[1]



1 Տե՛ս «Սավառնակ», Կահիրե, 1938 թ., փետրվար, № 5։

ԱՆ... ԾԱՆՈԹ ԸՆԴԾՈՎՅԱՆ ԿՓՆՏՐԵՆ...[1]



— Պարո՛ն նավապետ, պարո՛ն նավապետ, ահավասիկ անծանոթ ընդծովյան...

— Լռե՛, անպիտան, և այդ կողմը մի՛ նայիր... Երբ մենք վինքը չի տեսնենք՝ ան ալ մեզի չի տեսներ։

[1] Տե՛ս «Սավառնակ», Կահիրե, 1938 թ., փետր., № 7։

ԱԽՈՐԺԱԿԸ ՈՒՏԵԼՈՎ ԿԲԱՅՎԻ...[1]



Հեր Ֆյուհրեր.— Քիչ մըն ալ սպասեցեք, սա խորտիկն ալ վերջացնեմ, անկե վերջ պիտի տեսնվիմ ձեզի հետ...

[1] Տե՛ս «Սավառնակ», Կահիրե, 1938 թ., մարտ, № 11։

ՆՄՈՒՇ ՄԸ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ...[1]

Բարձր ընկերը.— *Դե՛հ, կոնծի՞ր, Օվանես ջան... համերաշխության կենացը... էսպիսի առիթներ շատ քիչ են պատահում...։ Ասում են, թե մենք հաշտվել չենք կարող... էլի՛, նրանք չեն հասկանում, թե մեր դրչամարտերը հետևանքն են կուսակցական տակտիկաների... թե մենք վաղուց համերաշխ ենք եղել...։*

Օվանես.— *Եթե իսկապես համերաշխ ապրենք, այն ատեն ի՞նչպես կարելի պիտի ըլլար անսպառ նյութ հայթայթել մեր հետաքրքիր և միամիտ ընթերցողներուն... օ՛ն, խմենք համերաշխության կենացը...։*

[1] *Տե՛ս «Սավառնակ», Կահիրե, 1938 թ., ապրիլ, № 16։*



Լուսինեն ինկող յուսածնոց խմբագիրը, որ չի գիտեր թէ ի՞նչ է Նոյեմբեր 29, եւ ո՞ւր կը գտնուի Ս. Հայասաց...

[1] *Տե՛ս «Սավառնակ», Կահիրե, 1945 թ., դեկտ., № 3։*

Դաշնակությանց հայրենիք մը Զուլուլանդի մեջ...[1]

(Մինասյան չվարդապետի «դիտակեն» դիտված...)

[1] *Տե՛ս «Սավառնակ», Կահիրե, 1946 թ., հունիս, № 28։*



Ներգաղթող հայը.—*Օ՛ն, հայրենակից, ես արձանագրվեցա ներգաղթին, Հայրենիք կերթամ, ելիր դուն ալ, միասին երթանք. հոն քու ալ զավակներուդ ալ ապագան ապահովված է։*

Տատանվող հայը.—*Բայց հոն այսպես հոգերե զերծ պիտի կրնա՞մ ըլլալ...։*

[1] *Տե՛ս «Սավառնակ», Կահիրե, 1946 թ., նոյեմբեր։*

ՆԵՐԳԱՂԹԸ

(ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿՅԱՆՔԵՆ)

ԶՈՆ

Զեզի՛, ո՞վ ցավատանջ մայրեր և դժբախտ քույրեր, որ ազգին տառապանքը շալկած դյուցազնաբար կդիմագրավեք կյանքի դաժան հարվածներում, ձեր աչքերը հայրենի նորածագ արևուն հառած:

Զեզի՛, ո՞վ որբացած երիտասարդներ, որ ձեր ծգտումներուն և բռիչքներուն մեջ խափանված, հոգեկան ու մտավոր զրկանքներու մեջ տվայտելով հանդերձ՝ հայրենիքի լուսապայծառ իրականությամբը խանդավառ և հոն վերադարձի հավատքով գոտեպնդված:

Զեզի՛, ո՞վ պապենական տուներեն և արտերեն արմատախիլ եղած, այժմ ալ գործազրկության և թշվառության դառնությունները հաշակող հայեր, որ ձեր հայրենիքին կարոտովը կտոչորիք և հերզաղթի մեծ օրվան կսպասեք անձկասիրտ. Զեզի կձեռնեմ ձեր առօրյա սպրումներեն քաղված այս էջերը:

Գ. Ս.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖՅԱՆ		42 տարեկան
ՄԱՐԻ ՍԱՐԱՖՅԱՆ	(Տիգրանի կինը)	35 տարեկան
ԶՎԱՐԹ	(Տիգրանի աղջիկը)	14 տարեկան
ՀԱԿՈԲԻԿ	(Տիգրանի որդին)	12 տարեկան
ԱՅՐԻ ԶԱՐՈՒՀԻ ՍԱՐԱՖՅԱՆ	(Տիգրանի մայրը)	60 տարեկան
ԳԵՂԱՄ ՍԱՐԱՖՅԱՆ	(Տիգրանի եղբայրը)	24 տարեկան
ՍԻՐԱՆՈՒՇ	(Դեղամի նշանածը)	20 տարեկան
ՆՈՒԲԱՐ	Տիգրանի աշխատակիցները և մտերիմները	35 տարեկան
ՄՈՒՇԵՂ		28 տարեկան
ԱՐՄԵՆԱԿ		32 տարեկան
ԱՐՇԱԿ		30 տարեկան
ՎԱՀՐԱՄ	(լրագրավաճառ)	28 տարեկան
ԳՈՐԾԱՐԱՆԻ ՀՍԿԻՉԸ		50 տարեկան
ԴՐԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ		48 տարեկան
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ		42 տարեկան

ԳԱՆՁԻՉ ՄԸ, ՏՂԵԿ ՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՎՈՐՆԵՐ։

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՎԱԾ

Տեսարանը կներկայացնե Փարիզի շրջականները մեքենական աշխատանոցի մը բաժանյակը: Ձախ պատին խորքեն՝ անցք մը, որ մուտքն է, իսկ աջ պատին խորքեն՝ ուրիշ անցք մը, որ մեքենաներու հարկաբաժինը կառաջնորդե: Խորքի պատին տակ կա աշխատանքի երկայն սեղան մը երեք գործավորի համար: Իսկ անցքերեն ասդին աջ և ձախ պատերուն տակ՝ ուրիշ երկու փոքր աշխատանքի սեղաններ մեյ-մեկ գործավորի համար: Ձախ սեղանին ավելի առջև կա աշխատանոցի երկոտանի նստարան մը երկու անձի համար: Պատերուն վրա կախված կան մեքենական գործիքներ կամ կտորներ, ատամնավոր անիվներ և այլն: Իսկ սեղաններուն վրա՝ զանազան գործիքներ, մուրճեր, խարտոցներ, կարկին, մետր և այլն:

Վարագույրը բացվելուն՝ աջ կողմեն մեքենաներու միօրինակ ժխորը կիմացվի անդադար: Խորքի սեղանին առջև լուռ կաշխատին՝ ձախեն սկսյալ՝ Նուբար, Արմենակ և Արշակ, կռնակնին աջ դուռին դարձուցած, նույնպես դեպի առաջ, ձախ սեղանին առջև կաշխատի Տիգրան՝ կռնակը խորքին: Բոլորն ալ գործավորի կապույտ զգեստներ հագած, գլուխնին քասքեթ[1], վրանին, ձեռքերնին մրոտած, մինչ ձախ դուռնեն ներս կմտնե Մուշեղ՝ նույնպես գործավորի զգեստներով, քիթը-բերանը և ձեռքերը մուրերուն մեջ անճանաչելի,

---

[1] Բանվորական գլխարկ։

մեքենական կազմած մը գրկած է, տնքալով Ֆառաջանա դեպի աջ կողմի սեղանը, որ իրեն է, ու անոր առջև վար կդնե ձեռքի ծանրությունը:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՏԻԳՐԱՆ, ՆՈՒԲԱՐ, ԱՐՄԵՆԱԿ, ԱՐՇԱԿ ԵՎ ՄՈՒՇԵՂ

ՄՈՒՇԵՂ.— (Ձեռքի ծանրությունը վար դնելե հետո զգեստին թևերով երեսի քրտինքը սրբելով) *Ո՜ւֆ... հոգիս եկավ։* (Կնեա և Տիգրանին դառնալով) *Է՜... այսօր նորեն կեսօր եղավ... Ա՛ս ըրե, ա՛ս վերցուր ըսելեն՝ բան մը չկրցա աշխատիլ։ Ետքեն ալ գործդ չես լմնցուցեր ըսելով հանդիմանություն մտիկ ըրե։*

ՏԻԳՐԱՆ.— (Բարեմույն և խնդում) *Նորեն ի՞նչ եղավ, Մուշեղ։*

ՄՈՒՇԵՂ.— (Սրտնեղած) *Առավոտուն հազիվ թե եկա՝ ըսին, թե ծխնելույզը վերեն խափանվեր է, և մուխը դուրս չի տար։ Երկա՜ր գավազան մը տվին ձեռքս, որպեսզի մինչև՝ ծխնելույզին գագաթը բարձրանամ և մուրերը վար թափեմ։ Ի՞նչ ընեմ. գավազանը առի և սկսա աստիճաններուն վրա կոխելով վեր բարձրանալ։ Կելլեմ, կելլեմ, չի՛ լմննար, կելլեմ, կելլեմ, կելլեմ, չի՛ լմննար։ Ճիշտ 228 աստիճան համրեցի, Տիգրան։ Ա՛լ վարեն անցնողները մրջյուններու պես կերևային։* (Ողորմուկ) *Ինչպե՜ս չինկա և կտոր-կտոր չեղա՝ դեռ կզարմանամ...*

ՏԻԳՐԱՆ.— (Աշխատելով) *Գոնե կարողացա՞ր բանալ արգելքը։*

ՄՈՒՇԵՂ.— (Դժգոհ) *Այո՛... Հազիվ թե մուխը վեր պոռթկաց՝ բոլոր մուրերը քիթիս բերնիս փակցուց։*

ՏԻԳՐԱՆ.— (Ցավակցելով): *Խե՜ղճ Մուշեղ...*

ՄՈՒՇԵՂ.— (Վրդովված և իր խեղճուկ վիճակը ցույց տալով Տիգրանին) *Նայե՛, Տիգրա՛ն, սա վիճակս նայե։*

(Հանկարծ ձախ դռան մեջ հսկիչը նշմարելով՝ շփոթած

կսկսի գործի: Ներս կուգա հսկիչը՝ բարձրահասակ, փոքր մորուքով և ակնոցով, որուն սև քորտոնը քովեն վար կախված է, գլուխը գործի քաֆեթ և վեհերոտ ու քննական նայվածք մը պտտցնելով բոլորին վրա, դանդաղ քայլերու կանցնի մեքենաներու բաժինը և կանհետի. պահիկ մը լուռ բոլորն ալ գլուխնին ծռած կաշխատին:)

ՆՈՒԲԱՐ.— (Լռությունը խզելով և առանց գլուխը գործեն վեր առնելու) *Տիգրա՛ն։*

ՏԻԳՐԱՆ.— (Նույնպես աշխատելով և առանց գլուխը վերցնելու) *Հրամմե։*

ՆՈՒԲԱՐ.— *Այս առավոտ գործի գալու միջոցիս Գարեգինին հանդիպեցա։ Խե՜ղճ տղան, տեսնես, այնպիսի խրդՀալի վիճակ մը ուներ։*

ՏԻԳՐԱՆ.— (Զարմացած) *Ի՞նչպես։*

ՆՈՒԲԱՐ.— (Տրտմորեն) *Վրան գլուխը պատառոտած և կոշիկները մաշած... ոտքին մատները դուրս թափած, գունատ... նիհար։*

ՏԻԳՐԱՆ — (Մտահոգ) *Ի՞նչ կըսես... խե՜ղճ Գարեգին։*

ՆՈՒԲԱՐ.— (Շարունակելով) *Եվ աղաչեց, պաղատեցավ, որ իրեն համար գործ մը ճարենք, չոր հացի մը դրամ շահելու համար։*

ՏԻԳՐԱՆ.— (Հետաքրքիր) *Բայց ի՞նչպես եղավ, որ գործեն հանեցին դինքը։*

ՆՈՒԲԱՐ.— (Տաժանելիորեն) *Չհանեցին... ինք պարտավորված ձգեց գործը։*

ՏԻԳՐԱՆ.— (Զարմացած) *Եվ ի՞նչու...*

ՆՈՒԲԱՐ.— *Գիտես, որ հայելիներու պատրաստության գործին մեջ կաշխատեր... որով հայելիներ կիտվածելու համար գործածված եռացած սնդիկին մուխը քայքայեց իր առողջությունը, մշտնջենապես թույնով ծանրաբեռնված մրթնոլորտի մեջ շնչելը քանդեց, թունավորեց իր թոքերը։ Ասկե ամիս մը առաջ՝ աշխատելու միջոցին հանկարծ գլխու պտույտ մը կունենա, գետին կիյնա, և բերնեն առատ արյուն կհոսի։ Զինք հիվանդանոց կփոխադրեն, հոն տասը օր մնալե հետո՝ դուրս եկած միջոցին բժիշկները խստիվ կարգիլեն իրեն առաջվան գործը շարունակել։* (Պահիկ մը լռելե

ետք նուսանատ ձայնով) *Եթե խեղճը շարունակել ալ ուզեր՝ չէր կրնար, քանի որ իրեն տեղը ուրիշ մը գործի առած էին արդեն։*

ՏԻԳՐԱՆ.— (Տրտմությամբ) *Խե՜ղճ Գարեգին...* (ու հանկարծ) *կարծեմ զավակներ ալ ունի։*

ՆՈՒԲԱՐ.— (Ընկճված) *Երե՜ք հատ... ամենեն մեծը ութ տարեկան։*

ՏԻԳՐԱՆ.— (Սահմոկած) *Երեք հատ զավա՜կ... ի՜նքը... և կի՜նը... հինգ հոգի՜... որոնք ապրուստ կուզեն։*

ՆՈՒԲԱՐ.— (Վրա տալով) *Ճի՛շտ այդպես, լալու չափ տխուր էր... և աղաչեց, որ գործ մը ճարենք այստեղ։*

ՏԻԳՐԱՆ.— (Սրտագին և միշտ աչքերը առանց գործին վրայեն վերցնելու) *Երանի թե կարելի ըլլար հոս իրեն գործ մը ճարել... բայց ինչպե՜ս... քանի որ մե՛նք ալ գործե հանվելու սպառնալիքին տակ կգտնվինք այստեղ... բայց ես պիտի ջանամ գործ մը գտնել իրեն։*

ՆՈՒԲԱՐ.— (Հոգածու և առանց աչքերը գործին վրայեն վերցնելու) *Եվ արժանի է այդպիսի աջակցության մը։*

ՏԻԳՐԱՆ.— (Վճռական) *Այո՛, այո՛, ջանք չի պիտի խնայեմ, որովհետև առաջին օրեն, որ ծանոթացա իրեն հետ, համակրանքս գրավեց։ Շա՛տ ընկերասեր տղա է։*

ՆՈՒԲԱՐ.— (Կորովի շեշտով) *Շատ ալ հայրենասեր...*

(Այս միջոցին հսկիչը վերադարձած է մեքենաներու հարկաբաժնեն և ներս մտնելով կկանգնի Տիգրանին ետեը, քիչ մը հեռուն: Նուբար և Տիգրան չեն նշմարած հսկիչը և կշարունակեն խոսակցիլ։)

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԵՎ ՀՍԿԻՉԸ

ՏԻԳՐԱՆ.— (Խոսակցությունը շարունակելով) *Եթե չեմ սխալիր, երեք տարի առաջ Ներգաղթի հանգանակության երկու հարյուր ֆրանկ արձանագրվեցավ։*

ՆՈՒԲԱՐ.— (Խանդավառ) *Հինգ հարյուր...*

ՏԻԳՐԱՆ.— (Ոգևորված) *Հինգ հարյո՜ւր...* (Զարմանքով)

Բայց օրավարձքով ապրող ընտանիքի հայր է, ի՜նչպես կարողացավ տալ այդ գումարը։

ՆՈՒԲԱՐ.— *Բարեկամե մը փոխ առավ և հետզհետե վճարեց։*

ՏԻԳՐԱՆ.— (Հիացած) *Ի՜նչ վեհանձնություն... Ուրեմն ներգաղթը եթե սկսի, ինքն ալ մեզի պիտի ընկերանա։*

ՆՈՒԲԱՐ.— (Ոգևորությամբ) *Արձանագրված է արդեն։*

ՏԻԳՐԱՆ.— (Խանդավառված ետին դառնալով) *Արձանագրվա՜ծ է* (Հսկիչը նշմարելով, հանկարծակի եկած՝ գործին կնայի):

ՆՈՒԲԱՐ.— *Այո՛։*

ՀՍԿԻՉԸ.— (Կշտամբական՝ Տիգրանին) *Դեռ երկար պիտի տևե՞ ձեր այս շատախոսությունը։*

ՏԻԳՐԱՆ.— (Նկուն՝ հսկիչին նայելով) *Կարծեմ ձեզի վնաս մը չունի։*

ՀՍԿԻՉԸ.— (Խիստ) *Բայց, բարեկա՛մս, հոս աշխատելու համար եկած եք և ոչ թե խոսակցելու։*

ՏԻԳՐԱՆ.— (Համոզիչ) *Կտեսնեք, որ կաշխատիմ արդեն։*

ՀՍԿԻՉԸ.— (Դժգոհ) *Գրեթե կեսօր է արդեն և առտվնե ի վեր երկու կտոր լմնցուցած եք միայն։*

ՏԻԳՐԱՆ.— (Ճգնելով) *Եվ գոհ չե՞ք։*

ՀՍԿԻՉԸ.— (Կտրուկ) *Բնականաբար ո՛չ։*

ՏԻԳՐԱՆ.— *Ինձմե առաջ Պիեռը կաշխատեր այս գործը և մինչև կեսօր երկու կտոր իսկ չէր կրնար լմնցնել։*

ՀՍԿԻՉԸ.— (Անդրդվելի) *Ատիկա պատճառ մը չէ, որ դուն անկե ավելի չարտադրես։ Դուք արևելքցիներդ ավելի չարքաշ եք և պետք է, որ ավելի արագ աշխատիք։*

ՏԻԳՐԱՆ.— (Զսպված) *Որպեսզի նվաղ վարձատրվինք։*

ՀՍԿԻՉԸ.— (Վճռական) *Ատիկա արդարացում մը չէ։*

ՏԻԳՐԱՆ.— (Բռնազբոսիկ) *Իրավունք ունիք* (Գլուխը կըկախե և կշարունակե աշխատիլ):

ՀՍԿԻՉԸ.— (Պահ մը ջղագրգիռ Տիգրանը դիտելե հետո, կերթա Նուբարին քով և կսկսի գործը քննել՝ անկյունաչափով գործին ուղղությունը փնտռելով: Հետո սեղանին վրայեն մեքենայի կտոր մը վերցնելե և քննելե հետո Նուբարին

ցույց տալով) *Այստեղ փոքր-ինչ ծուռություն կա։* (Մուրճը առնելով՝ կչանա շտկել։ Ու հանկարծ Նուբարին) *Եվ հետո, ձեզի ըսի անգամ մը, թե ծակված մասերը ավելի ողորկ պետք է ընել։ Հարկ չիկա փիլիսոփա ըլլալու այսքան պարզ բան մը միտք պահելու համար։*

(Վերի գործողությանց ընթացքին մեկ երկու ուրիշ գործավորներ մեքենաներու կտորներ, ձողեր և այլն կփոխադրեն մեկ դուռնեն մյուսը անցնելով։)

ՆՈՒԲԱՐ.— (Ուշադիր) *Շատ լավ, ձգեցեք, որ հղկեմ։* (Այս միջոցին կեսորվան դադարի զանգը կհնչե ներսեն՝ մեքենաներու հարկաբաժնեն։ Մեքենաներու ժխորն ալ հետզհետե կդադարի։ Հսկիչը շարունակելով և դեպի ձախ դուռը առաջանալու ձևով՝ կտրուկ) *երբոր լմնցնեք, հանելե առաջ կուզեմ տեսնել զանոնք։*

ՆՈՒԲԱՐ.— (Համակերպած) *Շատ լավ։*

(Հսկիչը դուրս կելլե։)

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԱՌԱՆՑ ՀՍԿԻՉԻ

ՏԻԳՐԱՆ.— (Զսպված սրտնեղությամբ ձեռքի խարտոցը մեկդի նետելով՝ ինքնիրեն) *Սարսափելի դրության մատնված ենք բոլորս ալ։* (Եվ սեղանին տակեն ճաշի ծրարը առնելով կուգա դեպի առաջ և գետին կնստի ճաշելու համար։ Նույնպես Մուշեղ, Արմենակ, Նուբար և Արշակ կնգեն գործերնին և սեղանին տակեն իրենց ճաշի ծրարները առնելով կուգան նստիլ։)

ՏԻԳՐԱՆ.— (Տեսնելով, որ եղբայրը կուշանա գալ, կերթա աջ դռան առջև՝ մեքենաներու հարկաբաժնեն զայն կանչելով) *Եղբա՜յր... Գեղա՜մ... ճաշի եկուր։* (Կվերադառնա և տեղը նստելով կպատրաստվի ճաշել։ Նուբար, Արմենակ և Արշակ ծրարները բացած են ու կճաշեն։ Ներս կուգա Գեղամ։)

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԵՎ ԳԵՂԱՄ

ԳԵՂԱՄ.— (Դեպի եղբայրը կառաջանա ու անոր քով, ծայրը կնստի և հանկարծ Մուշեղին մոռռած դեմքը կնշմարե ու կատակելով) *Այսօր նորեն կճառագայթես, Մուշեղ...* (Խնդալով) *չես գիտե՞ր, որ Բարիկենդանին երկա՞ր ժամանակ կա տակավին։*

ՄՈՒՇԵՂ.— (Սրտնեղած) *Դեռ ասիկա բան մը չէ, Գեղամ, մուրերը վար տալու ատեն վիճակս տեսնելու էիր։*

ԳԵՂԱՄ.— (Զարմացած, ժպտուն) *Ո՞ր տեղի մուրերը։*

ՄՈՒՇԵՂ.— (Շարժումով մը) *Մինելույզին բերնի մուրերը։*

ԳԵՂԱՄ.— (Զարմանքով) *Հե՞... մինչև հո՞ն բարձրացար։*

ՄՈՒՇԵՂ.— (Ողորմուկ) *Երբ կպահանջեն...*

ԳԵՂԱՄ.— (Զմայլագին) *Շիտակը, Մուշե՛ղ, բավական ամուր սիրտ ունիս եղեր։*

ՆՈՒԲԱՐ.— (Խանդավառ, Մուշեղին ուսին զարնելով) *Անշուշտ... գյուղացու զավակ է...* (Կխնդան։)

(Մուշեղ, որ սրտնեղ կերևի և դեռ չէր բացած ծրարը, բանալու ատեն հանկարծ կզգա, որ կոշիկին միջի գամը կնեղե, կհանե կոշիկը և մուրճ մը առնելով կնստի երեսը դեպի ձախ դուռը և կսկսի գամը կոտրել։ Ներս կուգա լրագրավաճառ Վահրամը՝ թևին տակ հայկական թերթեր, ձախ սրունքը կտրած է, անթացուպով կքալե։)

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԵՎ ՎԱՀՐԱՄ

ՎԱՀՐԱՄ.— (Ներս մտնելով ժպտագին) *Բարև՛ ձեզ հայրենակիցներ... բարի ախորժակ։*

(Ամենքն ալ, բացի Արշակեն) *Բարև՛ Վահրամ, բարի՛ եկար, հրամմե՛։*

ՎԱՀՐԱՄ.— (Տիգրանին, Գեղամին, Նուբարին, Մուշեղին

և Արմենակին մեյ-մեկ թերթ կուտա, կվճարեն: Արշակին մոտենալով) *այսօր հատ մը տա՞մ ձեզի...*

ԱՐՇԱԿ.— (Կարուկ) *Ոչ, ես քու հայերեն թերթիդ պետք չունիմ, ես թերթ ունիմ։*

ՎԱՀՐԱՄ.— (Բարեմույն) *Հոգ չէ, այսօր ալ հատ մը ասկե առեք, բան չեք կորսնցներ։*

ԱՐՇԱԿ.— (Բարկությամբ) *Չեմ ուզեր ըսի, կորսվե՛, ուրիշներուն տուր, աս ի՞նչ աներես մարդ ես դուն, պարապ տեղը չէ, որ ասված պատիժդ տվեր է։*

ՎԱՀՐԱՄ.— (Համակերպած) *Լա՛վ, լա՛վ, մի բարկանար, ահա կերթամ* (դուրս կելլե):

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԱՌԱՆՑ ՎԱՀՐԱՄԻ

ՏԻԳՐԱՆ.— (Վահրամին դուրս ելլելուն պես կես մը դեպի Արշակը ծռելով, գայթակղած) *Ինձի նայե, Արշակ, կզգուշացնեմ քեզ, որ ուրիշ անգամ այդպես նախատինքով չխոսիս այդ տղուն... որովհետև, երբ դուն կաբարեներուն*[1] *մեջ սաքսոֆոն կնվագեիր և պարուհիները կզվարճացնեիր, այդ տղան ատաղձի գործարանին մեջ չարաչար կաշխատեր իր ճակատին քրտինքովը մայրը ապրեցնելու համար և իր պարտականության ընթացքին մեքենական սղոցին զոհ տըվավ իր սրունքը։ Կարծեմ հոս ծիծաղելիք և այպանելիք բան չկա։*

ԱՐՄԵՆԱԿ.— (Զայնակցելով) *Ընդհակառա՜կը... Կարեկցության արժանի է իր վիճակը...*

ՆՈՒԲԱՐ.— (Ցավելով) *Խե՜ղճը... տակավին երիտասարդ ալ է։*

ՏԻԳՐԱՆ.— (Խորհրդավոր) *Երիտասարդ կամ ծեր... Կյանքի դաժան օրենքը երկուքն ալ հավասարապես կհարվածե...*

(Տիգրան, Գեղամ, Նուբար և Արմենակ թե՛ կճաշեն և թե՛ թերթերը ծունկերնուն կամ գետինը դրած աչքի կանցնեն: Զախ դռան մեջ կերևի Սիրանույշը, կիսովին ներս ծռած՝ ժպտալով:)

ՄՈՒՇԵՂ.— (Որ տակավին դռան կողմը դարձած՝ կոշիկով զբաղած է, հանկարծ Սիրանույշը նշմարելով) *Գեղա՛մ, նշանածդ։* (Բոլորն ալ դռան կողմը կդառնան:)

ՏԵՍԻԼ ՅՈԹԵՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԵՎ ՍԻՐԱՆՈՒՅՇ

ԳԵՂԱՄ.— (Թերթը ձգած դեպի Սիրանույշը աճապարելով՝ սիրալիր ժպիտով) *Բարև՛ Սիրանույշ...* (Ձեռքը կբռնե:)

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Ներս մտնելով՝ խանդավառ շեշտով) *Բարև՛, Գեղամ,* (մյուսներուն) *բարև՛ ձեզ... բարև՛, պարոն Տիգրան։*

ՄՈՒՇԵՂ, ԱՐՄԵՆԱԿ ԵՎ ԱՐՇԱԿ.— *Բարև՛, օրիորդ։*

ՏԻԳՐԱՆ.— *Հա, բարև՛, Սիրանույշ։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Տիգրանին) *Ի՞նչպես են տունեն, բոլորն ալ լա՞վ են։*

ՏԻԳՐԱՆ.— *Շնորհակալ եմ, ամենքն ալ հանգիստ են... երեկ գիշեր սպասեցինք, ինչո՞ւ չեկաք։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Այո՛, անհրաժեշտ կարելիքներ ունեի, չի կրցա գալ, բայց այս գիշեր պիտի գամ...*

ՏԻԳՐԱՆ.— *Այո՛, կսպասենք։*

ԳԵՂԱՄ.— (Գոռոզգին) *Բարի եկար, Սիրանույշ, այս ի՞նչ անակնկալ։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Եկա տեսնելու համար, թե կիրակի օրը Սենայի եզերքը նկարված պատկերնիս հաջող ելա՞ծ է։*

ԳԵՂԱՄ.— (Ձեռքեն քաշելով՝ խանդակաթ) *Լա՛վ, եկուր նստիր, որ ցուցունեմ։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Բայց շատ չի պիտի նստիմ... հյուսվածքեղենի մեծաքանակ ապսպրանք մը եկած է, բոլորս ալ կանուխ պիտի վերադառնանք աշխատանոց, որպեսզի հասցընենք։*

ԳԵՂԱՄ.— (Սիրազեղ) *Հոգ չէ... տակավին կանուխ է...*

---

[1] *Գիշերային խրախճանքի վայր։*

(Սիրանույշին ձեռքեն քաշելով՝ կուգան և առաջամասը դրված նստարանին վրա քովեքով կնստին։)

ՍԻՐԱՆՈՒՅՇ.—(Հետաքրքիր) *Տո՛ւր լուսանկարը, Գեղա՛մ, որ տեսնեմ ի՞նչպես ելած է...*

ԳԵՂԱՄ.— (Կատակելով) *Ավելի լավ է, որ չի տեսնես... բնա՛վ հաջողած չէ։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Հուսաբեկ) *Չէ՞...*

ԳԵՂԱՄ.— (Լուսանկարը գրպանեն հանելով և ցույց տալով) *Տե՛ս, ի՞նչ հիանալի է։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Զմայլած) *Իսկապե՞ս...* (խնդալով) *ի՞նչ աղվոր է... հեռավոր պարտեզներն ալ կերևան։*

ԳԵՂԱՄ.— (Կատակելով) *Կտեսնե՞ս, Սիրանույշ, դուն ինձմե ավելի գեղեցիկ ելած ես։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.—(Ժպտադեմ) *Զարաճճի... ամեն բանի մեջ կատակել կսիրես։* (Աղաչական) *Ինծի տո՛ւր, Գեղամ, ասիկա... կուզեմ քովս ունենալ և երբեմն վրան նայիլ։*

ԳԵՂԱՄ.— (Միշտ կատակելով) *Որպեսզի կարո՞տդ առնես։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Գորովագին) *Ինչո՞ւ չէ...* (Հանկարծ նոգածու) *Բայց ճաշդ կեր, Գեղամ... ճաշդ մոռցար։*

ԳԵՂԱՄ.— *Կարևորություն չունի... ես վերջն ալ կճաշեմ։*

ՆՈՒՐԱՐ.— (Կատակելով) *Հոգ մի՛ ընեք, օրիորդ Սիրանույշ, անիկա ձեր ներկայությամբ ալ կկշտանա։*

ՏԻԳՐԱՆ.— *Այնպե՛ս է, սիրո մեջ անոթությունը չի փընտրվիր։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Անդրդվելի) *Ո՛չ, ո՛չ, Գեղամ, կաղաչեմ, ելիր ճաշդ ըրե, չեմ ուզեր, որ իմ պատճառովս անոթի նըստիս։*

ԳԵՂԱՄ.— (Սիրալիր) *Դուն ալ մեզի հետ պիտի ճաշե՞ս։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Շատ շնորհակալ եմ, ես ճաշեցի և այնպես եկա։*

ԳԵՂԱՄ.— (Համակերպած) *Շատ լավ, քանի որ դուն ճաշած ես արդեն...* (Եղբորը քովը կնստի և կսկսի ճաշել։)

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Այո՛, այդպես... թե՛ կճաշեք և թե՛ միասին կխոսակցինք։* (Պայուսակին մեջեն ձեռագործ մը հանելով՝ կսկսի ասեղով աշխատիլ։)

(Մուշեղ կոշիկին շտկոտուքը նոր վերջացուցած է։ Կքակե ծրարը, ուրուն մեջ կա երկու շերտ հաց, բուղթի մեջ կտոր մը պանիր և խոշոր սոխ մը, որ բռունցքովը կսկսի ճզմել։)

ԱՐՄԵՆԱԿ.— (Հեգնելով) *Է՛, Մուշեղ, այսօր դարձյա՞լ պանիր հաց է ճաշդ։*

ՆՈՒՐԱՐ.— (Կատակելով) *Նաև սո՞խ... իր բոլոր կերակուրներուն անբաժան ընկերը...*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Աղաչավոր) *Այդպես մի՛ ըսեք... մեղք է տղան... կվիրավորվի...*

ԳԵՂԱՄ.— (Ժպտալով) *Ոչ, ան մեր կատակներեն չազդվիր, գիտե, որ մենք զինքը եղբոր պես կսիրենք։*

ՄՈՒՇԵՂ.— (Ցավագին) *Ի՞նչ ընեմ, եղբայր, բոլորդ ալ գիտեք, որ օրական առածս ութը ֆրանկ է... պետք է, որ ուտելիքիս, սենյակիս, հագուստ-կապուստիս բավեցնելեն ետք բան մըն ալ ավելցնելով Սուրիա քրոջս ղրկեմ... խեղճը այրի է, տարի մը կա, որ ամուսինը մեռավ, և հիմա երկու փոքրիկներովը նեղ դրության մատնված է...* (հառաչելով) *ա՜խ... եթե ես ալ չօգնեմ իրեն, բոլորովին պիտի շվարի խեղճը։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Կարեկցությամբ գլուխը շարժելով) *Խե՜ղճ Մուշեղ։*

ՄՈՒՇԵՂ.— (Շարունակելով) *Դեռ երկու շաբաթ առաջ հիսուն ֆրանկ ղրկեցի... Ի՞նչ ընեմ... երանի՞ թե կարողանայի ավելին ընել, որովհետև պարտական եմ իրեն...* (Փղձկալով) *փոքրիկ տարիքես որբ մնացած եմ, և ինքը լվացարարությամբ խնամած, մեծցուցած է զիս։* (Աչքերը կարբե։)

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Սրտագին) *Ապրի՛ս, Մուշեղ, շատ բարի քույր մը ունիս եղեր։*

ԳԵՂԱՄ.— *Ինքն ալ բարի սիրտ ունի, որ քրոջը զոհողությունները փոխարինել կճգնի։*

ՏԻԳՐԱՆ.— *Այո՛...* (Առջևի ծրարեն շերտ մը երշիկ կդնե Մուշեղին առջև։)

ՄՈՒՇԵՂ.— (Քաղցր) *Կերե՛ք, կաղաչեմ, ձերն ալ շատ չէ արդեն։*

ՏԻԳՐԱՆ.— (Մտերմական) *Է՜... հոգ չէ, հոս ձերը մերը չկա... այս հացը բոլորս միատեղ շահած ենք։*

ՄՈՒՇԵՂ.— Շնորհակալ եմ (կսկսի ուտել):

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Հետաքրքիր) *Ներգաղթի մասին բարի լուր մը կա՞, Գեղամ, թերթին մեջ։*

ԳԵՂԱՄ.— Չեմ գիտեր, տակավին չի կարդացի։ (Թերթ առջևն է, աչքովը կսկսի փնտրել:)

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Շարունակելով) *Աշխատանոցի ընկերուհիներես շատեր ներգաղթի սկսելուն կսպասեն և այդ մասին կհարցնեն ինձի շարունակ։*

ՆՈՒՐԱՐ.— (Ոգևորված) *Ուրախալի է, որ հայ կիներն ալ մեծապես կհետաքրքրվին իրենց հայրենիքովը։*

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Համոզված շեշտով) *Անշո՛ւշտ...*

ԳԵՂԱՄ.— (Աչքերը միշտ թերթին վրա) *Բայց այսօր ալ ներգաղթի մասին լուր մը չերևիր թերթին մեջ...*

ՏԻԳՐԱՆ.—(Նույնպես թերթին վրա փնտրելով) *Այո, այսօր ալ այդ մասին լուր մը չի կա։*

(Արդեն Նուբար, Մուշեղ և Արմենակ ալ թե՛ կուտեն և թե՛ իրենց թերթին հետևելու վրա են:)

ԱՐՄԵՆԱԿ.— (Միամիտ խնդուքով) *Կարդացի՞ք ոճիր-արկածը։* (Կկարդա) *Ժյուլիեն անունով երիտասարդ մը Մարիոն անունով աղջկան մը սիրահարված էր և կուզեր ամուսնանալ... բայց նյութական միջոցներե զուրկ ըլլալուն՝ հույսը դրած էր Ամերիկա բնակող մորաքրոջ ժառանգության վրա, որ հիսուն հազար դոլարի կհասներ։ Երիտասարդը, երբ տեղեկացավ, թե մորաքույրը իր հարստությունը իր խափշիկ սպասուհիին կտակեր է, հուսահատությունեն անձնասպան եղավ...* (Կխնդա, մյուսներն ալ կժպտին:)

ՏԻԳՐԱՆ.— (Աչքերը թերթին վրայեն վեր վերցնելով Արմենակին՝ լուրջ) *Այդ չէ, որ կհետաքրքրե զիս... երբ գաղութահայությանն առօրյա կյանքը ոճիր-արկած մըն է ինքնին՝ լուռ ողբերգություններու...*

ԱՐՄԵՆԱԿ.— (Իմաստակորեն) *Ես առաջին անգամ այս բաժինը կսիրեմ կարդալ՝ հասկանալու համար, թե ո՞վ ում սպաններ է, ո՞վ ում կողոպտեր է։*

ԳԵՂԱՄ.— (Վճռական) *Ես ալ թերթը ձեռքս առածիս պես կա՛մ ներգաղթի մասին լուր մը կփնտրեմ և կա՛մ Հայաստանի բաժինը կկարդամ՝ հասկնալու համար, թե հայրենիքիս մեջ ինչ նոր շինության հիմքերը դրված են և կամ ինչ նոր նվաճումներ կատարված են։*

ՍԻՐԱՆՅՈՒՇ.— (Ու Գեղամին ուսին վրայեն ծռած թերթին կնետելի ձայնակցելով) *Անշուշտ...*

ՏԻԳՐԱՆ.— (Գոհունակությամբ) *Հարկավ, ա՛յդ է էականը մեզի համար...*

ԳԵՂԱՄ.— (Խանդավառությամբ) *Ահավասիկ...* (կսկսի կարդալ) *«Հայաստանի էլեկտրական արտադրությունն է ութ հարյուր հազար կիլովատ կամ մեկ միլիոն ձիու ուժ։ Այս ուժին քառասուներկու հազար կիլովատը Զորագէսի կայանինն է։ Երկրորդ հսկան՝ Քանաքեռը՝ ութսունութ հազար կիլովատ պիտի ունենա։ Այդ երկու կայաններուն միացյալ ուժն է մեկ միլիոն երեք հարյուր հազար կիլովատ կամ մոտ հարյուր վաթսունհինգ հազար ձիու ուժ»։* (Արմենակին ուղղելով) *Ահա թե ինչ բան կհետաքրքրե զիս...*

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Խայտալով) *Հիանալի է... հիանալի...*

ՏԻԳՐԱՆ.— (Գոհունակությամբ) *Կեցցե՛ս...*

ՆՈՒԲԱՐ.— Ի՜նչ մեծ առաջադիմություն...

ՄՈՒՇԵՂ.— (Ուտելով և պիշ-պիշ մտիկ ընելով՝ զարմացած) *Կեցցե՛ս...*

(Արմենակ անտարբեր գլուխը վեր կառնե և դարձյալ թերթով կզբաղի: Իսկ Արշակ գրպանեն պրակ մը պատմրվածք հանելով՝ մեկուսի դարձած կկարդա:)

ՆՈՒԲԱՐ.— (Հանկարծ) *Ասիկա ալ կարդացի՞ր, Գեղամ...*

ԳԵՂԱՄ.— (Հետաքրքիր) *Ո՞ր մեկը...*

ՆՈՒԲԱՐ.— (Կարդալով) *«Շնորհիվ նախնական կրթության լայն տարածման, այժմ երկրում տիրում է կատարյալ գրագիտություն։ Առաջ, այսինքն՝ 1918 թվականից 1920 թվականի շրջանում, անգրագիտությունը կազմում էր հարյուրին 90։ Այժմ գոյություն ունեն 1197 նախնական և միջին դպրոցներ 222.400 աշակերտներով, նախորդ շրջանի 4 հազար 700 աշակերտների փոխարեն։ Իսկ նախադպրոցական հասակի կրթական հաստատությունները՝ մանկապարտեզները և մանկական հրապարակները, զբաղեցնում են 79.600 երեխաներ»...*

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Ուրախ թովալով) *Երեխաներուն հա-*

մար ալ, աստվա՜ծ իմ... երբ հոն երթանք ի՞նչ երջանկություն...

ՄՈՒՇԵՂ.— (Խանդավառված) Կեցցե՛ս, Նուբար։

ՆՈՒԲԱՐ.— (Ավելի ոգևորված) Կեցե՛ք... դեռ կա... (շարունակելով կարդալ) «Այժմ գոյություն ունին 47 արվեստագիտական և բանվորական դպրոցներ՝ տեխնիկում 10.228 ուսանողներով, որոնք արդեն իսկ շրջանավարտ ըրած են 4 հազար մասնագետներ»։ (Գոհունակությամբ վար կդնե թերթը։)

ՄՈՒՇԵՂ.— Օ՛, հո՜... սքանչելի՛ է...

ԳԵՂԱՄ.— (Զմայլած) Ի՞նչ հսկա առաջադիմություն։

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Խայտալով և ձեռքերը իրար զարնելով) Ա՛խ, ե՞րբ պիտի երթանք, աստված իմ, ե՞րբ պիտի երթանք։

ՆՈՒԲԱՐ.— (Համոզված շեշտով) Երբ որ ներգաղթը սկսի։

ԳԵՂԱՄ.— Է՜՜՜, մեյ մը, որ ոտքներիս հոն դնենք... ես միտքս դրած եմ, մասնագիտության մը պիտի հետևիմ... հոն մեզիպեսներուն համար մասնավոր ֆակուլտետներ կան... ցերեկները կաշխատինք և երեկոները կուսանինք... և ինչ որ հիանալի՛ է՝ բոլոր գիտելիքները հայերեն լեզվով կավանդվին։

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Ոգևորված, ընդմիջելով) Կիներու համար ալ կա անշուշտ, այնպես չէ՞, Գեղամ... ես ալ կհետևիմ...

ԳԵՂԱՄ.— Բնականաբար։

ՄՈՒՇԵՂ.— (Տենդագին ոգևորությամբ) Ե՛ս ալ, Գեղա՛մ, ե՛ս ալ այդ փափագը ունիմ... քեզի հետ միասին մասնագիտության մը կհետևինք, քանի որ ամեն ուսում, ամեն գիտություն հայերեն է, ալ ի՞նչ կուզենք։

ԳԵՂԱՄ.— (Վրա տալով) Անշո՛ւշտ... հոն գրելը, կարդալը ամբողջ հայերեն է... ես հոս միջոց մը գիշերային դասընթացներու հետևեցա մասնագիտություն մը սովորելու համար, բայց չի հաջողեցա։ (Ցավագին) մեր խոսած հատուկտոր ֆրանսերենը չի բավեց ցանկությունս իրագործել։

ՏԻԳՐԱՆ.— (Աչքերը թերթին վրայեն վերցնելով) Այո՛, հոս մարդ պետք է ֆրանսերեն լեզվին լավ տիրապետած ըլլա այդ տեսակ նպատակ մը ի կատար հանելու համար։

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Տրտմագին) Անտարակույս։

ԳԵՂԱՄ.— (Դառնորեն գլուխը շարժելով) Իսկ մենք... Ա՜խ... մեր պատանեկության ամբողջ շրջանը, որ բո՛ւն սովորելու տարիքնիս էր, տարագրության և գաղթականության ճամփաներուն մեջ անցուցինք... Ավա՜ղ... առանց դպրոցի երես տեսնելու...

ՏԻԳՐԱՆ.— (Թախծալից) Այո՛... Տարագիր և գաղթական նոր սերունդը նյութական թշվառության հետ միատեղ, մրտքի թշվառության մեջ ալ կտվայտի։

ԳԵՂԱՄ.— (Ցավագին) Այո՛... դժբախտաբար... (հանկարծ ոգևորվելով) բայց ես մտադրած եմ հոն այդ պակասը ամբողջացնեմ... գոնե հոն առատ են դպրոցները... գիրքերը... (հանկարծ Մուշեղին) Հա՛... գիրք ըսի միտքս ինկավ... ի՞նչ եղավ Մուշեղ քեզի տված գիրքս։

ՄՈՒՇԵՂ.— (Աղաչագին) Ա՜յ... դեռ չի կրցա վերջացնել...

ԳԵՂԱՄ.— Քեզի ըսեր էի կարծեմ, թե այդ գիրքը ինձի չի պատկանիր, Սարգիսինն է։ Երեկ տղան ինձի հանդիպեցավ և պահանջեց, որ վերադարձնեմ։

ՄՈՒՇԵՂ.— (Թախանձագին) Այո՛... կներես, Գեղամ... ժամանակ չունեցա կարդալու... գիշերները գործես կելլեմ, մոտավորապես ժամ մը կտևե ճամփան, որ տուն հասնիմ... գիտես որ հանրակառքի դրամ չեմ կրնար հատկացնել... քալելով կերթամ, այնպես որ, երբ սենյակս կմտնեմ, հոգնած, դաղրած հազիվ բան մը կուտեմ և անկողնիս վրա կերկննամ հանգչելու և քիչ մըն ալ կարդալու համար... ալ հոգնությունես աչքերս կգոցվին... քունս կտանի... (Ցավելով) Ա՜խ... ժամանակ չունիմ կանոնավոր բան մը կարդալու։

ՏԻԳՐԱՆ.— (Տխուր) Ճիշտ է... կյանքի բեռան տակ ընկրճված մեր երիտասարդությունը իր զարգանալու տարիքին մեջ ժամանակ ալ չունի բան կարդալու... (Գլուխը շարժելով) Ցավալի է ասիկա...

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Մեղմելով) Խե՜ղճ Մուշեղ...

ՄՈՒՇԵՂ.— (Ողորմուկ) Ի՞նչ ընեմ, օրիորդ Սիրանույշ, հանրակառքի ծախքերս անգամ կուզեմ խնայել, որ քրոջս...

(Հանկարծ հիշելով) *Ա՜յ... ի՞նչպես ալ մոռցեր էի...* (կսկսի գրպանները խառնել և տասը ֆրանկնոց մը հանելով) *Տիգրան, կաղաչեմ, սա տասը ֆրանկնոցը քեզի տամ, առջի երվան տվածիս քովը դիր, այդպիսով քսան ֆրանկ կունենամ քովդ, այնպես չէ՞...* (Տիգրան հաստատական շարժում մը կրնե) *մինչև հարյուր ֆրանկ կամբողջացնեմ և քրոջս կղրկեմ։*

ՏԻԳՐԱՆ.— (Հայրաբար) *Ապրի՛ս, Մուշեղ։*

ՄՈՒՇԵՂ.— (Ցավագին հառաչանքով մը) *Ա՜խ... այս երկիրը փորձության երկիր է երիտասարդության համար, մարդուս քով հավելյալ դրամ, որ գտնվի, այնքա՜ն ծախսի պատեհություններ կան մեջտեղ թափված որ... ամենեն կամքի տեր մարդն անգամ կմոլորի և ունեցածը կվատնե։ Հոնե դո՛ւն, Տիգրան, ընտանիքի հայր ես, վախնալու բան մը չունիս, գործեդ ելլելուդ պես շիտակ տուն կերթաս կնոջդ և զավակներուդ քովը... Բայց ես... առանձին եմ... անտեր եմ... այնպես որ կրնամ այս դրամները անխոհեմությամբ վատնել...* (ընկճված հառաչելով) *ա՜խ... երիտասարդություն... Օտարության լպրծուն մայթերուն վրա ի՞նչ ծուղակներ լարված են մեր առջև... ուր մարդ կգլորի, կընկղմի անդգալաբար, անգիտակցաբար։*

ՍԻՐՈՒԻՇ.— (Գորովագին) *Շա՜տ լավ կընես Մուշեղ, շատ լավ կընես։*

ԳԵՂԱՄ.— (Որ թերթը բռնած՝ թե՛ կկարդար և թե՛ Մուշեղին խոսքերուն կհետևեր, թերթը մեկ կողմ նետելով՝ ժպտագին) *Գիտե՞ս, Մուշեղ, եթե դուն քրոջդ օգնելու համար խնայողություն կընես, ես ալ իմ կարգիս իմ խնայողություններս ունիմ։* (Գրպանեն ստացականներու տրցակ մը հանելով) *Նայե՜...*

ՄՈՒՇԵՂ.— (Զմայլած) *Իրավո՛ւնք ունիս, սիրելի Գեղամ։*

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Խայտալով) *Սքանչելի՜ է, շա՛տ լավ կընես, Գեղամ։*

ԳԵՂԱՄ.— (Շարունակելով) *Եվ մինչև հիմա հինգական, տասնական ֆրանկ տալով երեք հարյուր ութսունհինգ վճարած եմ, լավ չէ՞, Մուշեղ։*

ՄՈՒՇԵՂ.— *Կեցցե՛ս, Գեղա՛մ, հիանալի՜ է։*

ԳԵՂԱՄ.— (Ոգևորված) *Ալ մինակությանս պահերուն մեկիկ-մեկիկ կթղթատեմ այս թերթիկները... ու կերևակայեմ... աչքիս առջև կբերեմ այս փոքրիկ դրամներով կատարված աշխատանքները... միտքովս կդեգերիմ այնտեղի շինության վայրերը... կառուցվող բնակարաններուն վրա իմ ալ համեստ զոհողություններուս հետքերը տեսնելու մտածումը կհուզե, կխանդավառե զիս, Մուշե՛ղ։*

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Բոցավառ) *Ա՜խ, Գեղա՛մ, ի՞նչ ալ աղվոր կպատմես։*

ՄՈՒՇԵՂ.— (Խանդավառված) *Կեցցե՛ս։ Գեղա՛մ ջան, հիանալի՜ տղա ես դուն, մեղք որ քիչ մը գինի չունինք այստեղ՝ կենացդ խմելու համար...*

ԳԵՂԱՄ.— (Դժգոհելով) *Է՜... թող... ես այստեղի գիններեն չեմ ախորժիր արդեն... մեջեն տեսակ-տեսակ թթուներու համ կուգա...* (Պայծառանալով) *ախորժակդ պահե, Մուշե՛ղ, երբ Հայաստան երթանք, հոն կուշտ կխմենք։*

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Ոգևորված) *Այո՛, այո՛, Արարատյան գինի...*

ԳԵՂԱՄ.— (Շարունակելով) *Գինիեն ալ քաղցր է անիկա, նեկտա՛ր է, նեկտա՜ր...*

ՄՈՒՇԵՂ.—(Խանդավառված) *Այո՛, հայկական նեկտար...* (Բոլորը կխնդան։)

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Հանկարծ թևի ժամացույցին նայելով) *Օ՜, այս որքա՜ն շուտ անցեր է ժամանակը, պետք է աճապարեմ։* (Ոտքի կելլե և ցավելով) *մե՜ղք... ի՞նչ ալ աղվոր, ուրախ-ուրախ հայրենիքի մասին կխոսեինք։*

ԳԵՂԱՄ.— *Հոգ չէ, Սիրա՛ն, գնա՛, որ գործեդ չուշանաս, ես գիշերը նորեն կպատմեմ քեզի այս բոլորի մասին։* (Մյուսները հաշի ծրարները կկապեն։)

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Խայտալով) *Այո՛, այո՛, չի մոռնաս... և ջանա, որ գիշերը կանուխ գաս, այնպես չէ՞։*

ԳԵՂԱՄ.— (Հանկարծ հիշելով) *Այո՛, իրավ... այս գիշեր կանուխ չպիտի կրնամ գալ, ժամը իններն...*

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Զարմացած) *Ինչո՞ւ...*

ԳԵՂԱՄ.— (Սիրալիր շեշտով) *Այսօր շորեքշաբթի է...*

գալ կիրակի օրվան նվագահանդեսին համար փորձ ունինք, մոռցա՞ր։

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Գողտրորեն խոժոռելով) Այս գիշեր ալ մի՛ երթար։

ԳԵՂԱՄ.— Ո՛չ, անկարելի է, երկու գլխավոր ջութակներեն մեկն ալ ես եմ... բայց՝ ժամը իններին տունը կըլլամ։

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Համոզված) Հոգ չէ... նայե որ իններեն ավելի չուշանաս, ես տունը կսպասեմ քեզի, այնպես չէ՞, պարոն Տիգրան։

ՏԻԳՐԱՆ.— (Խնդալով) Այդ մասին անհոգ եղիր Սիրանույշ, քանի որ գիշերը մեզի պիտի ըլլաս, ան վազելով տուն նուգա... գուցե իններեն ալ առաջ...

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Գոհունակ ժպիտով) Այո՛, այո՛, այդպես... (Ամենուն ալ) մնաք բարով, ուրեմն, մնաք բարով, Գեղամ։

ԳԵՂԱՄ.—(Ձեռքը բռնելով սրտագին) Ցտեսություն ըսե, Սիրանույշ, չէ՞ որ գիշերը դարձյալ պիտի տեսնվինք։

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Միասին դեպի դուռը առաջանալով) Այո՛, ցտեսությո՛ւն... (Կմեկնի։)

(Գեղամ դռան մեջեն ձեռքով հրաժեշտի սիրալիր շարժում մը ընելե հետո կվերադառնա իր տեղը։)

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԱՌԱՆՑ ՍԻՐԱՆՈՒՅՇԻ

ԱՐՄԵՆԱԿ.— (Ձսպված հետաքրքրությամբ, լռությունը խզելով) Է՞... Գեղամ... դուն, որ ախորժակդ Արարատյան գինիի պահած ես, երբ հարսանիքիս քեզի Բորդոյի գինի հրամցնեմ, պիտի մերժե՞ս, չպիտի՞ խմես, ուրեմն։

ԳԵՂԱՄ.— (Զարմացմամբ Արմենակին նայելով) Ի՞նչ հարսանիք...

ՆՈՒԲԱՐ.— (Կատակելով) Հա՛, հա՛... հասկցանք... ամուսնության մոտալուտ ծրագիրնե՞ր ալ ունիս մտքիդ մեջ։

ԱՐՄԵՆԱԿ.— (Լուրջ) Շատո՞նց ծրագրած եմ արդեն և թվականն ալ որոշած։

ԳԵՂԱՄ.— (Հետաքրքիր) Մոտե՞րս։

ԱՐՄԵՆԱԿ.— (Հանդարտ) Սեպտեմբեր 18-ին։

ՆՈՒԲԱՐ.— Երկու շաբաթե՛ն, ուրեմն։

ԱՐՄԵՆԱԿ.— (Վճռական) Այո՛։ (Պահ մը լռելով) Արշակը իր սաքսոֆոնը պիտի բերե արդեն։ Դո՛ւն ալ ջութակդ կբերես, Գեղամ, այնպես չէ՞, և պզտիկ խնջույք մը կընենք այդ գիշեր։

ԳԵՂԱՄ.— (Հետաքրքիր) Եվ ո՞վ է օրիորդը, ծանո՞թ է մեզի։

ԱՐՄԵՆԱԿ.— (Ցրտորեն) Այո՛... կճանչնա՛ք, ժորժեթը։

(Տիգրան, Գեղամ, Նուբար և Մուշեղ վրդովված՝ Արմենակին երեսը կնային, իսկ Արշակ միշտ անտարբեր՝ պրակին ընթերցումովը զբաղած է։)

ՆՈՒԲԱՐ.— (Ձսպված սրտնեղությամբ) Ուրեմն, տակավին անոր հե՞տն ես։

ԱՐՄԵՆԱԿ.— Ինչո՞ւ չէ։

ՆՈՒԲԱՐ.— Որովհետև ճիշտ չէ՛, որ դուն այդ վատահամբավ օտարուհուն հետ ամուսնանաս։

ԱՐՄԵՆԱԿ.— (Անփույթ) Եվ ի՞նչ անպատեհություն կա։

ՆՈՒԲԱՐ.— (Համոզել ճգնելով) Անպատեհությունները բազմաթիվ են, սիրելի՛ բարեկամս... որոնց մասին կարծեմ ասկե առաջ ալ խոսեցա քեզի... (Լրջորեն) կերևի չես համոզված... բայց մեյ մը, որ կարդվիս, այն ատեն կհասկրնաս։

(Այս միջոցին Արշակ պրակին ընթերցումը դադրեցուցած է և խոսակցության ընթացքին կհետևի։)

ԱՐՄԵՆԱԿ.— (Անդրդվելի) Հոս համոզվելիք բան չկա... ան ինձ կսիրե, ես ալ՝ զինքը, որով շատ պարզ է, որ երջանիկ կըլլանք։

ՏԻԳՐԱՆ.— (Դայթակղած՝ ընդմիջելով) Եվ ի՞նչպես կուզես երջանիկ ըլլալ կնոջ մը հետ, որ նախ՝ կյանքի և մարդկանց մասին ուրիշ հասկացողություններ ունի և, բացի այդ, լեզուդ չի խոսիր, բարքերդ չճանչնար, ցավդ չհասկնար։

ՆՈՒԲԱՐ.— (Խորհրդավոր) Այդ կարգի անհամապատասխան ամուսնությունները ցավալի թյուրիմացություններու

(Սիրանույշին ձեռքեն քաշելով՝ կուգան և առաջամասը դրված նստարանին վրա քովեքով կնստին։)

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Հետաքրքիր) *Տո՛ւր լուսանկարը, Գեղա՛մ, որ տեսնեմ ի՞նչպես ելած է...*

ԳԵՂԱՄ.— (Կատակելով) *Ավելի լավ է, որ չի տեսնես... բնա՛վ հաջողած չէ։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Հուսաբեկ) *Չէ՞...*

ԳԵՂԱՄ.— (Լուսանկարը գրպանեն հանելով և ցույց տալով) *Տե՞ս, ի՞նչ հիանալի է։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Զմայլած) *Իսկապե՞ս...* (խնդալով) *ի՞նչ աղվոր է... հեռավոր պարտեզներն ալ կերևան։*

ԳԵՂԱՄ.— (Կատակելով) *Կտեսնե՞ս, Սիրանույշ, դուն ինձմե ավելի գեղեցիկ ելած ես։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.—(Ժպտադեմ) *Չարաճճի... ամեն բանի մեջ կատակել կսիրես։* (Աղաչական) *Ինծի տո՛ւր, Գեղամ, ասիկա... կուզեմ քովս ունենալ և երբեմն վրան նայիլ։*

ԳԵՂԱՄ.— (Միշտ կատակելով) *Որպեսզի կարո՞տդ առնես։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Գորովագին) *Ինչո՞ւ չէ...* (Հանկարծ հոգածու) *Բայց ճաշդ կեր, Գեղամ... ճաշդ մոռցար։*

ԳԵՂԱՄ.— *Կարևորություն չունի... ես վերջն ալ կճաշեմ։*

ՆՈՒԲԱՐ.— (Կատակելով) *Հոգ մի՛ ընեք, օրիորդ Սիրանույշ, անիկա ձեր ներկայությամբ ալ կկշտանա։*

ՏԻԳՐԱՆ.— *Այնպե՛ս է, սիրո մեջ անոթությունը չի փընտրվիր։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Անդրդվելի) *Ո՛չ, ո՛չ, Գեղամ, կաղաչեմ, ելիր ճաշդ ըրե, չեմ ուզեր, որ իմ պատճառովս անոթի նըստիս։*

ԳԵՂԱՄ.— (Սիրալիր) *Դուն ալ մեզի հետ պիտի ճաշե՞ս։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Շատ շնորհակալ եմ, ես ճաշեցի և այնպես եկա։*

ԳԵՂԱՄ.— (Համակերպած) *Շատ լավ, քանի որ դուն ճաշած ես արդեն...* (Եղբորը քովը կնստի և կսկսի ճաշել։)

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Այո՛, այդպես... թե՛ կճաշեք և թե՛ միասին կխոսակցինք։* (Պայուսակին մեջեն ձեռագործ մը հանելով՝ կսկսի ասեղով աշխատիլ։)

(Մուշեղ կոշիկին շոկոտուքը նոր վերջացուցած է։ Կքակե ծրարը, որուն մեջ կա երկու շերտ հաց, թուղթի մեջ կտոր մը պանիր և խոշոր սոխ մը, որ բոունցքովը կսկսի ճզմել։)

ԱՐՄԵՆԱԿ.— (Հեգնելով) *Է՞, Մուշեղ, այսօր դարձյա՞լ պանիր հաց է ճաշդ։*

ՆՈՒԲԱՐ.— (Կատակելով) *Նաև սո՞խ... իր բոլոր կերակուրներուն անբաժան ընկերը...*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Աղաչավոր) *Այդպես մի՛ ըսեք... մեղք է տղան... կվիրավորվի...*

ԳԵՂԱՄ.— (Ժպտալով) *Ոչ, ան մեր կատակներեն չազդվիր, գիտե, որ մենք զինքը եղբոր պես կսիրենք։*

ՄՈՒՇԵՂ.— (Ցավագին) *Ի՞նչ ընեմ, եղբայր, բոլորդ ալ գիտեք, որ օրական առածս ութը ֆրանկ է... պետք է, որ ուտելիքիս, սենյակիս, հագուստ-կապուստիս բավեցնելեն ետք բան մըն ալ ավելցնելով Սուրիա քրոջս ղրկեմ... խեղճը այրի է, տարի մը կա, որ ամուսինը մեռավ, և հիմա երկու փոքրիկներովը նեղ դրության մատնված է...* (հառաչելով) *ա՞խ... եթե ես ալ չօգնեմ իրեն, բոլորովին պիտի շվարի խեղճը։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Կարեկցությամբ գլուխը շարժելով) *Խե՞ղճ Մուշեղ։*

ՄՈՒՇԵՂ.— (Շարունակելով) *Դեռ երկու շաբաթ առաջ հիսուն ֆրանկ ղրկեցի... Ի՞նչ ընեմ... երանի՞ թե կարողանայի ավելին ընել, որովհետև պարտական եմ իրեն...* (Փրղնկալով) *փոքրիկ տարիքես որբ մնացած եմ, և ինքը լվացարարությամբ խնամած, մեծցուցած է զիս։* (Աչքերը կարբե։)

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Սրտագին) *Ապրի՛ս, Մուշեղ, շատ բարի քույր մը ունիս եղեր։*

ԳԵՂԱՄ.— *Ինքն ալ բարի սիրտ ունի, որ քրոջը զոհողությունները փոխարինել կճգնի։*

ՏԻԳՐԱՆ.— *Այո՛...* (Առջևի ծրարեն շերտ մը երշիկ կդնե Մուշեղին առջև։)

ՄՈՒՇԵՂ.— (Քաղցր) *Կերե՛ք, կաղաչեմ, ձերն ալ շատ չէ արդեն։*

ՏԻԳՐԱՆ.— (Մտերմական) *Է՞... հոգ չէ, հոս ձերը մերը չկա... այս հացը բոլորս միատեղ շահած ենք։*

ՄՈՒՇԵՂ.— Շնորհակալ եմ (կսկսի ուտել):

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Հետաքրքիր) *Ներգաղթի մասին բարի լուր մը կա՞, Գեղամ, թերթին մեջ։*

ԳԵՂԱՄ.— Չեմ գիտեր, տակավին չի կարդացի։ (Թերթը ասջևն է, աչքովը կսկսի փնտրել:)

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Շարունակելով) *Աշխատանոցի ընկերուհիներես շատեր ներգաղթի սկսելուն կսպասեն և այդ մասին կհարցնեն ինձի շարունակ։*

ՆՈՒՐԱՐ.— (Ոգևորված) *Ուրախալի է, որ հայ կիներն ալ մեծապես կհետաքրքրվին իրենց հայրենիքովը։*

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Համոզված շեշտով) *Անշո՛ւշտ...*

ԳԵՂԱՄ.— (Աչքերը միշտ թերթին վրա) *Բայց այսօր ալ ներգաղթի մասին լուր մը չերևիր թերթին մեջ...*

ՏԻԳՐԱՆ.—(Նույնպես թերթին վրա փնտրելով) *Այո, այսօր ալ այդ մասին լուր մը չի կա։*

(Արդեն Նուբար, Մուշեղ և Արմենակ ալ թե՛ կուտեն և թե՛ իրենց թերթին հետևելու վրա են:)

ԱՐՄԵՆԱԿ.— (Միամիտ խնդումով) *Կարդացի՞ք ոճիր-արկածը։* (Կկարդա) *Ժյուլիեն անունով երիտասարդ մը Մարիոն անունով աղջկան մը սիրահարված էր և կուզեր ամուսնանալ... բայց նյութական միջոցներե զուրկ ըլլալուն՝ հույսը դրած էր Ամերիկա բնակող մորաքրոջ ժառանգության վրա, որ հիսուն հազար դոլարի կհասներ։ Երիտասարդը, երբ տեղեկացավ, թե մորաքույրը իր հարստությունը իր խափշիկ սպասուհիին կտակեր է, հուսահատությունեն անձնասպան եղավ...* (Կխնդա, մյուսներն ալ կժպտին:)

ՏԻԳՐԱՆ.— (Աչքերը թերթին վրայեն վեր վերցնելով Արմենակին՝ լուրջ) *Այդ չէ, որ կհետաքրքրե զիս... երբ գաղութահայությանն առօրյա կյանքը ոճիր-արկած մըն է ինքնին՝ լուռ ողբերգություններու...*

ԱՐՄԵՆԱԿ.— (Իմաստակորեն) *Ես առաջին անգամ այս բաժինը կսիրեմ կարդալ՝ հասկանալու համար, թե ո՞վ ում սպաններ է, ո՞վ ում կողոպտեր է։*

ԳԵՂԱՄ.— (Վճռական) *Ես ալ թերթը ձեռքս առածիս պես կա՛մ ներգաղթի մասին լուր մը կփնտրեմ և կա՛մ Հայաստանի բաժինը կկարդամ՝ հասկնալու համար, թե հայրենիքիս մեջ ինչ նոր շինության հիմքերը դրված են և կամ ինչ նոր նվաճումներ կատարված են։*

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Ոտ Գեղամին ուսին վրայեն ծռած թերթին կիսեսի ձայնակցելով) *Անշուշտ...*

ՏԻԳՐԱՆ.— (Գոհունակությամբ) *Հարկավ, ա՛յդ է էականը մեզի համար...*

ԳԵՂԱՄ.— (Խանդավառությամբ) *Ահավասիկ...* (կսկսի կարդալ) *«Հայաստանի էլեկտրական արտադրությունն է ութ հարյուր հազար կիլովատ կամ մեկ միլիոն ձիու ուժ։ Այս ուժին քառասուներկու հազար կիլովատը Զորագէսի կայանինն է։ Երկրորդ հսկան՝ Քանաքեռը՝ ութսունութ հազար կիլովատ պիտի ունենա։ Այդ երկու կայաններուն միացյալ ուժն է մեկ միլիոն երեք հարյուր հազար կիլովատ կամ մոտ հարյուր վաթսունհինգ հազար ձիու ուժ»։* (Արմենակին ուղղելով) *Ահա թե ինչ բան կհետաքրքրե զիս...*

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Խայտալով) *Հիանալի է... հիանալի...*

ՏԻԳՐԱՆ.— (Գոհունակությամբ) *Կեցցե՞ս...*

ՆՈՒՐԱՐ.— *Ի՜նչ մեծ առաջադիմություն...*

ՄՈՒՇԵՂ.— (Ուտելով և պիշ-պիշ մտիկ ընելով՝ զարմացած) *Կեցցե՞ս...*

(Արմենակ անտարբեր գլուխը վեր կառնե և դարձյալ թերթով կզբաղի: Իսկ Արշակ գրպանեն պրակ մը պատմրվածք հանելով՝ մեկուսի դարձած կկարդա:)

ՆՈՒՐԱՐ.— (Հանկարծ) *Ասիկա ալ կարդացի՞ր, Գեղամ...*

ԳԵՂԱՄ.— (Հետաքրքիր) *Ո՞ր մեկը...*

ՆՈՒՐԱՐ.— (Կարդալով) *«Շնորհիվ նախնական կրթության լայն տարածման, այժմ երկրում տիրում է կատարյալ գրագիտություն։ Առաջ, այսինքն՝ 1918 թվականից 1920 թվականի շրջանում, անգրագիտությունը կազմում էր հարյուրին 90։ Այժմ գոյություն ունեն 1197 նախնական և միջին դպրոցներ 222.400 աշակերտներով, նախորդ շրջանի 4 հազար 700 աշակերտների փոխարեն։ Իսկ նախադպրոցական հասակի կրթական հաստատությունները՝ մանկապարտեզները և մանկական հրապարակները, զբաղեցնում են 79.600 երեխաներ»...*

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Ուրախ թռվռալով) *Երեխաներուն հա-*

մար ալ, աստվա՜ծ իմ... երբ հոն երթանք ի՞նչ երջանկություն...

ՄՈՒՇԵՂ.— (Խանդավառված) Կեցցե՛ս, Նուբար։

ՆՈՒԲԱՐ.— (Ավելի ոգևորված) Կեցցե՛ք... դեռ կա... (շարունակելով կարդալ) «Այժմ գոյություն ունին 47 արվեստագիտական և բանվորական դպրոցներ՝ տեխնիկում 10.228 ուսանողներով, որոնք արդեն իսկ շրջանավարտ ըրած են 4 հազար մասնագետներ»։ (Գոհունակությամբ վար կդնե թերթը։)

ՄՈՒՇԵՂ.— Օ՛, հո՜... սքանչելի՛ է...

ԳԵՂԱՄ.— (Զմայլած) Ի՞նչ հսկա առաջադիմություն։

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Խայտալով և ձեռքերը իրար զարնելով) Ա՛խ, ե՞րբ պիտի երթանք, աստված իմ, ե՞րբ պիտի երթանք։

ՆՈՒԲԱՐ.— (Համոզված շեշտով) Երբ որ ներգաղթը սկսի։

ԳԵՂԱՄ.— Է՜՜՜, մեյ մը, որ ոտքներիս հոն դնենք... ես միտքս դրած եմ, մասնագիտության մը պիտի հետևիմ... հոն մեզիպեսներուն համար մասնավոր ֆակուլտետներ կան... ցերեկները կաշխատինք և երեկոները կուսանինք... և ինչ որ հիանալի՛ է՝ բոլոր գիտելիքները հայերեն լեզվով կավանդվին։

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Ոգևորված, ընդմիջելով) Կիներու համար ալ կա անշուշտ, այնպես չէ՞, Գեղամ... ես ալ կհետևիմ...

ԳԵՂԱՄ.— Բնականաբար։

ՄՈՒՇԵՂ.— (Տենդագին ոգևորությամբ) Ե՛ս ալ, Գեղա՛մ, ե՛ս ալ այդ փափագը ունիմ... քեզի հետ միասին մասնագիտության մը կհետևինք, քանի որ ամեն ուսում, ամեն գիտություն հայերեն է, ալ ի՞նչ կուզենք։

ԳԵՂԱՄ.— (Վրա տալով) Անշո՛ւշտ... հոն գրելը, կարդալը ամբողջ հայերեն է... ես հոս միջոց մը գիշերային դասընթացներու հետևեցա մասնագիտություն մը սովորելու համար, բայց չի հաջողեցա։ (Ցավագին) մեր խոսած հատուկտոր ֆրանսերենը չի բավեց ցանկությունս իրագործել։

ՏԻԳՐԱՆ.— (Աչքերը թերթին վրայեն վերցնելով) Այո՛, հոս մարդ պետք է ֆրանսերեն լեզվին լավ տիրապետած

ըլլա այդ տեսակ նպատակ մը ի կատար հանելու համար։

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Տրտմագին) Անտարակույս։

ԳԵՂԱՄ.— (Դառնորեն գլուխը շարժելով) Իսկ մենք... Ա՜խ... մեր պատանեկության ամբողջ շրջանը, որ բո՛ւն սովորելու տարիքնիս էր, տարագրության և գաղթականության ճամփաներուն մեջ անցուցինք... Ավա՜ղ... առանց դպրոցի երես տեսնելու...

ՏԻԳՐԱՆ.— (Թախծալից) Այո՛... Տարագիր և գաղթական նոր սերունդը նյութական թշվառության հետ միատեղ, մըտքի թշվառության մեջ ալ կտվայտի։

ԳԵՂԱՄ.— (Ցավագին) Այո՛... դժբախտաբար... (հանկարծ ոգևորվելով) բայց ես մտադրած եմ հոն այդ պակասը ամբողջացնեմ... գոնե հոն առատ են դպրոցները... գիրքերը... (հանկարծ Մուշեղին) Հա՛... գիրք ըսի միտքս ինկավ... ի՞նչ եղավ Մուշեղ քեզի տված գիրքս։

ՄՈՒՇԵՂ.— (Աղաչագին) Ա՜յ... դեռ չի կրցա վերջացնել...

ԳԵՂԱՄ.— Քեզի ըսեր էի կարծեմ, թե այդ գիրքը ինձի չի պատկանիր, Սարգիսինն է։ Երեկ տղան ինձի հանդիպեցավ և պահանջեց, որ վերադարձնեմ։

ՄՈՒՇԵՂ.— (Թախանձագին) Այո՛... կներես, Գեղամ... ժամանակ չունեցա կարդալու... գիշերները գործես կելլեմ, մոտավորապես ժամ մը կտևե ճամփան, որ տուն հասնիմ... գիտես որ հանրակառքի դրամ չեմ կրնար հատկացնել... քալելով կերթամ, այնպես որ, երբ սենյակս կմտնեմ, հոգնած, դաղրած հազիվ բան մը կուտեմ և անկողնիս վրա կերկննամ հանգչելու և քիչ մըն ալ կարդալու համար... ալ հոգնությունես աչքերս կգոցվին... քունս կտանի... (Ցավելով) Ա՜խ... ժամանակ չունիմ կանոնավոր բան մը կարդալու։

ՏԻԳՐԱՆ.— (Տխուր) Ճիշտ է... կյանքի բեռան տակ ընկրճված մեր երիտասարդությունը իր զարգանալու տարիքին մեջ ժամանակ ալ չունի բան կարդալու... (Գլուխը շարժելով) Ցավալի է ասիկա...

ՍԻՐԱՆՈՒՇ.— (Մեղքնալով) Խե՜ղճ Մուշեղ...

ՄՈՒՇԵՂ.— (Ողորմուկ) Ի՞նչ ընեմ, օրիորդ Սիրանույշ, հանրակառքի ծախքերս անգամ կուզեմ խնայել, որ քրոջս...

(Հանկարծ ճիշելով) *Ա՜յ... ի՞նչպես ալ մոռցեր էի...* (կսկսի գրպանները խառնել և տասը ֆրանկնոց մը հանելով) *Տիգրան, կաղաչեմ, սա տասը ֆրանկնոցը քեզի տամ, առջի երվան տվածիս քովը դիր, այդպիսով քսան ֆրանկ կունենամ քովդ, այնպես չէ՞...* (Տիգրան հաստատական շարժում մը կընե) *մինչև հարյուր ֆրանկ կամբողջացնեմ և քրոջս կղրկեմ։*

ՏԻԳՐԱՆ.— (Հայրաբար) *Ապրի՛ս, Մուշեղ։*

ՄՈՒՇԵՂ.— (Ցավագին հառաչանքով մը) *Ա՜խ... այս երկիրը փորձության երկիր է երիտասարդության համար, մարդուս քով հավելյալ դրամ, որ գտնվի, այնքա՜ն ծախսի պատեհություններ կան մեջտեղ թափված որ... ամենեն կամքի տեր մարդն անգամ կմոլորի և ունեցածը կվատնե։ Գոնե դո՛ւն, Տիգրան, ընտանիքի հայր ես, վախնալու բան մը չունիս, գործեդ ելլելուդ պես շիտակ տուն կերթաս կնոջդ և զավակներուդ քովը... Բայց ես... առանձին եմ... անտեր եմ... այնպես որ կրնամ այս դրամները անխոհեմությամբ վատնել...* (ընկճված հառաչելով) *ա՜խ... երիտասարդություն... Օտարության լպրծուն մայթերուն վրա ի՞նչ ծուղակներ լարված են մեր առջև... ուր մարդ կգլորի, կընկղմի անդգալաբար, անգիտակցաբար։*

ՍԻՐՈՒՅՇ.— (Գորովագին) *Շա՜տ լավ կընես Մուշեղ, շատ լավ կընես։*

ԳԵՂԱՄ.— (Որ թերթը բռնած՝ թե՛ կկարդար և թե՛ Մուշեղին խոսքերուն կհետևեր, թերթը մեկ կողմ նետելով՝ ժպտագին) *Գիտե՞ս, Մուշեղ, եթե դուն քրոջդ օգնելու համար խնայողություն կընես, ես ալ իմ կարգիս իմ խնայողություններս ունիմ։* (Գրպանեն ստացականներու տրցակ մը հանելով) *Նայե՜...*

ՄՈՒՇԵՂ.— (Զմայլած) *Իրավո՛ւնք ունիս, սիրելի Գեղամ։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Խայտալով) *Սքանչելի՜ է, շա՛տ լավ կընես, Գեղամ։*

ԳԵՂԱՄ.— (Շարունակելով) *Եվ մինչև հիմա հինգական, տասնական ֆրանկ տալով երեք հարյուր ութսունհինգ վճարած եմ, լավ չէ՞, Մուշեղ։*

ՄՈՒՇԵՂ.— *Կեցցե՛ս, Գեղա՛մ, հիանալի՜ է։*

ԳԵՂԱՄ.— (Ոգևորված) *Ալ մինակությանս պահերուն մեկիկ-մեկիկ կթղթատեմ այս թերթիկները... ու կերևակայեմ... աչքիս առջև կբերեմ այս փոքրիկ դրամներով կատարված աշխատանքները... միտքովս կդեգերիմ այնտեղի շինության վայրերը... կառուցվող բնակարաններուն վրա իմ ալ համեստ զոհողություններուս հետքերը տեսնելու մտածումը կհուզե, կխանդավառե զիս, Մուշե՛ղ։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Բոցավառ) *Ա՜խ, Գեղա՛մ, ի՞նչ ալ աղվոր կպատմես։*

ՄՈՒՇԵՂ.— (Խանդավառված) *Կեցցե՛ս։ Գեղա՛մ ջան, հիանալի՜ տղա ես դուն, մեղք որ քիչ մը գինի չունինք այստեղ՝ կենացդ խմելու համար...*

ԳԵՂԱՄ.— (Դժգոհելով) *Է՜... թող... ես այստեղի գինիներեն չեմ ախորժիր արդեն... մեջեն տեսակ-տեսակ թթուներու համ կուգա...* (Պայծառանալով) *ախորժակդ պահե, Մուշե՛ղ, երբ Հայաստան երթանք, հոն կուշտ կխմենք։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Ոգևորված) *Այո՛, այո՛, Արարատյան գինի...*

ԳԵՂԱՄ.— (Շարունակելով) *Գինիեն ալ քաղցր է անիկա, նեկտա՛ր է, նեկտա՜ր...*

ՄՈՒՇԵՂ.— (Խանդավառված) *Այո՛, հայկական նեկտար...* (Բոլորը կխնդան։)

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Հանկարծ թևի ժամացույցին նայելով) *Օ՜, այս որքա՜ն շուտ անցեր է ժամանակը, պետք է աճապարեմ։* (Ոտքի կելլե և ցավելով) *մե՜ղք... ի՞նչ ալ աղվոր, ուրախ-ուրախ հայրենիքի մասին կխոսեինք։*

ԳԵՂԱՄ.— *Հոգ չէ, Սիրա՛ն, գնա՛, որ գործեդ չուշանաս, ես գիշերը նորեն կպատմեմ քեզի այս բոլորի մասին։* (Մյուսները ճաշի ծրարները կկապեն։)

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Խայտալով) *Այո՛, այո՛, չի մոռնաս... և ջանա, որ գիշերը կանուխ գաս, այնպես չէ՞։*

ԳԵՂԱՄ.— (Հանկարծ ճիշելով) *Այո՛, իրավ... այս գիշեր կանուխ չպիտի կրնամ գալ, ժամը իններն...*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Զարմացած) *Ինչո՞ւ...*

ԳԵՂԱՄ.— (Սիրալիր շեշտով) *Այսօր չորեքշաբթի է...*

գալ կիրակի օրվան նվագահանդեսին համար փորձ ունինք, մոռցա՞ր։

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Գողտրորեն խոժոռելով) Այս գիշեր ալ մի՛ երթար։

ԳԵՂԱՄ.— Ո՛չ, անկարելի է, երկու գլխավոր ջութակներեն մեկն ալ ես եմ... բայց՝ ժամը իններին տունը կըլլամ։

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Համոզված) Հոգ չէ... նայե՛ որ իններեն ավելի չուշանաս, ես տունը կսպասեմ քեզի, այնպես չէ՞, պարոն Տիգրան։

ՏԻԳՐԱՆ.— (Խնդալով) Այդ մասին անհոգ եղիր Սիրանույշ, քանի որ գիշերը մեզի պիտի ըլլաս, ան վազելով տունն նուգա... գուցե իններեն ալ առաջ...

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Գոհունակ ժպիտով) Այո՛, այո՛, այդպես... (Ամենուն ալ) մնաք բարով, ուրեմն, մնաք բարով, Գեղամ։

ԳԵՂԱՄ.—(Ձեռքը բռնելով սրտագին) Ցտեսություն ըսե՛, Սիրանույշ, չէ՞ որ գիշերը դարձյալ պիտի տեսնվինք։

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Միասին դեպի դուռը առաջանալով) Այո՛, ցտեսությո՛ւն... (Կմեկնի։)

(Գեղամ դռան մեջեն ձեռքով հրաժեշտի սիրալիր շարժում մը ընելե հետո կվերադառնա իր տեղը։)

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԱՌԱՆՑ ՍԻՐԱՆՈՒՅՇԻ

ԱՐՄԵՆԱԿ.— (Զսպված հետաքրքրությամբ, լռությունը խզելով) Է՞... Գեղամ... դուն, որ ախորժակդ Արարատյան գինիի պահած ես, երբ հարսանիքիս քեզի Բորդոյի գինի հրամցնեմ, պիտի մերժե՞ս, չպիտի՞ խմես, ուրեմն։

ԳԵՂԱՄ.— (Զարմացմամբ Արմենակին նայելով) Ի՞նչ հարսանիք...

ՆՈՒԲԱՐ.— (Կատակելով) Հա՛, հա՛... հասկցանք... ամուսնության մոտալուտ ծրագիրնե՞ր ալ ունիս մտքիդ մեջ։

ԱՐՄԵՆԱԿ.— (Լուրջ) Շատո՞նց ծրագրած եմ արդեն և թվականն ալ որոշած։

ԳԵՂԱՄ.— (Հետաքրքիր) Մոտե՞ր։

ԱՐՄԵՆԱԿ.— (Հանդարտ) Սեպտեմբեր 18-ին։

ՆՈՒԲԱՐ.— Երկու շաբաթե՛ն, ուրեմն։

ԱՐՄԵՆԱԿ.— (Վճռական) Այո՛։ (Պահ մը լռելով) Արշակը իր սաքսոֆոնը պիտի բերե արդեն։ Դո՛ւն ալ ջութակդ կբերես, Գեղամ, այնպես չէ՞, և պզտիկ խնջույք մը կընենք այդ գիշեր։

ԳԵՂԱՄ.— (Հետաքրքիր) Եվ ո՞վ է օրիորդը, ծանո՞թ է մեզի։

ԱՐՄԵՆԱԿ.— (Ցրտորեն) Այո՛... կճանչնա՛ք, ժորժեթը։

(Տիգրան, Գեղամ, Նուբար և Մուշեղ վրդովված՝ Արմենակին երեսը կնային, իսկ Արշակ միշտ անտարբեր՝ պրակին ընթերցումովը զբաղած է։)

ՆՈՒԲԱՐ.— (Զսպված սրտնեղությամբ) Ուրեմն, տակավին անոր հե՞տն ես։

ԱՐՄԵՆԱԿ.— Ինչո՞ւ չէ։

ՆՈՒԲԱՐ.— Որովհետև ճիշտ չէ՛, որ դուն այդ վատահամբավ օտարուհուն հետ ամուսնանաս։

ԱՐՄԵՆԱԿ.— (Անփույթ) Եվ ի՞նչ անպատեհություն կա։

ՆՈՒԲԱՐ.— (Համոզել ճգնելով) Անպատեհությունները բազմաթիվ են, սիրելի՛ բարեկամս... որոնց մասին կարծեմ ասկե առաջ ալ խոսեցա քեզի... (Լրջորեն) կերևի չես համոզված... բայց մեյ մը, որ կարդվիս, այն ատեն կհասկրնաս։

(Այս միջոցին Արշակ պրակին ընթերցումը դադրեցուցած է և խոսակցության ընթացքին կհետևի։)

ԱՐՄԵՆԱԿ.— (Անդրդվելի) Հոս համոզվելիք բան չկա... ան ինձ կսիրե, ես ալ՝ դինքը, որով շատ պարզ է, որ երջանիկ կըլլանք։

ՏԻԳՐԱՆ.— (Դայթակղած՝ ընդմիջելով) Եվ ի՞նչպես կուզես երջանիկ ըլլալ կնոջ մը հետ, որ նախ՝ կյանքի և մարդկանց մասին ուրիշ հասկացողություններ ունի և, բացի այդ, լեզուդ չի խոսիր, բարքերդ չճանչնար, ցավդ չհասկնար։

ՆՈՒԲԱՐ.— (Խորհրդավոր) Այդ կարգի անհամապատասխան ամուսնությունները ցավալի թյուրիմացություններու

հետևանքով շատ անգամներ եղերական վախճաններու հանգած են. ասոր վստա՛հ եղիր, Արմենակ։

ԳԵՂԱՄ.— Միթե այդպես չեղա՞վ Արամին պարագան։ Խե՜ղճ տղան ժաքլին անուն վատահամբավ կնոջ մը հետ ամուսնացավ, որը կրցած էր շատ ճարպկորեն ծածկել գողերու հետ ունեցած հարաբերությունները և գողցված գողոնները Արամին խանութը կպահե եղեր առանց անոր գիտակցության։ Մինչև որ օր մըն ալ ոստիկանությունը հետապնդելով կիսուզարկե Արամին խանութը և գողցված իրեղենները հոն գտնելով՝ կձերբակալե զայն իբր մեղսակից։ Խեղճ տղան բանե լուր չուներ, բայց ի՞նչ օգուտ, երեք տարվան տաժանակիր աշխատության դատապարտվեցավ ու հիմա տարի մըն է թիարանն է։

ՄՈՒՇԵՂ.— (Խնդալով) Ժաքլինին հետ ամուսնանալ ուզելուն՝ թիարանին հետ ամուսնացավ, չըսե՞ս...

ԳԵՂԱՄ.— Այո՛։

ՄՈՒՇԵՂ.— (Հանկարծ հիշելով) Հա՛, Գեղա՛մ, կհիշե՞ս, երկու տարի կա, Հովհաննեսը որ գինիի գործարանը կաշխատեր...

ԳԵՂԱՄ.— (Ընդմիջելով) Այո՛, այդ խեղճ տղան ալ Ժոզեֆին անունով աղջկան մը սիրահարված էր, և անկյունի գինեպան Վերնիեն ինք ուզելով տիրանալ այդ աղջկան՝ երկուստեք հակառակությունը կսրվի, և օր մըն ալ, կռվի մը ընթացքին, Հովհաննես աթոռի հարված մը իջեցնելով՝ Վերնիեին գլուխը կպատռե, մարդը երեք ամիս հիվանդանոց պառկելով, Հովհաննեսն ալ տակավին բանտն է։

ՆՈՒԲԱՐ.— (Ցավելով) Ի՜նչ ալ գեղեցիկ երիտասարդ էր, մե՛ղք եղավ։

ՄՈՒՇԵՂ.— (Ինքնավստահ) Ես գոնե, իմ մասիս խոսելով, օտարուհու հետ չեմ ամուսնանար. ասիկա կխրատե քույրս ալ միշտ իր նամակներուն մեջ։

ԱՐՄԵՆԱԿ.— (Համոզիչ շեշտով) Ինչո՞ւ այդպես կըսեք, տղա՛ք, բացառություններ կրնան գտնվիլ ամեն ազգի մեջ ալ, բայց օտարները չեն դադրիր բարի մարդիկ ըլլալե. անոնք միշտ ալ օգնած են մեզի և եղբայրական ձեռք երկարած՝ ամեն անգամ որ դժվարին պայմաններու մեջ գտնված ենք։

ԳԵՂԱՄ.— (Ընդվզելով) Եվ ատոր համար պետք է, որ օտարուհու հե՞տ ամուսնանաս։ Ճիշտ է, ուրիշ ժողովուրդներու մեջ ալ կան ազնիվ, հայրենասեր կանայք։

ՏԻԳՐԱՆ.— (Բորբոքելով) Եվ եթե ամեն հայ քեզի պես մտածեր և վատահամբավ օտարուհու մը հետ ամուսնանար, կրնա՞ս ըսել, թե ո՞ւր կերթար ծայրը և ի՞նչ կըլլար հայության վիճակը։

ԳԵՂԱՄ.— (Համոզված շեշտով) Օ՛, հո՜, շատո՜նց կորսված և պատմության անցած կըլլար։

ՆՈՒԲԱՐ.— Եվ այսօր, փոխանակ մեր լայնածավալ հայրենիքի բազմազգ ընտանիքին մեջ իր խաղաղ կյանքով ապրող և ստեղծագործող ժողովրդի համբավը վայելելու, թանգարաններու զարդ դարձած պիտի ըլլար։

ԱՐՄԵՆԱԿ.— (Արդարանալ ճգնելով) Այդպես մի՛ ըսեք, ժորժեթը լավ աղջիկ է։

ՏԻԳՐԱՆ.— (Դառնությամբ շարունակելով) Միթե լավ հայ աղջիկներ կպակսի՞ն մեր ծանոթներուն մեջ... Աղավնին, Հայկուհին, Շաքեն, ասոնք բոլորն ալ շատ պարկեշտ աղջիկներ են, որոնք կրնան քեզի զմայլելի կին դառնալ և մորդ համար ալ՝ հարգատ զավակ։ (Համոզիչ շեշտով) Ահավասիկ երջանկությունը։

ԱՐՄԵՆԱԿ.— (Անդրդվելի) Բայց անոնք ժորժեթին գեղեցկությունը չունին։

ՏԻԳՐԱՆ.— (Զսպված բարկությամբ) Արմենա՛կ, ամուսնության համար արտաքին գեղեցկությունները արժեք չեն ներկայացներ, ներքին, հոգեկան գեղեցկություններն են կարևոր, և քանի որ մտադրած ես ամուսնանալ, ջանա՛ ներքին գեղեցկություններ, ներքին արժանիքներ փնտրել ընտրությանդ մեջ, եթե չես ուզեր զղջալ... և հետո, տեսնենք, ի՞նչ բանի մեջ ժորժեթեն տգեղ կգտնես մեր հայ աղջիկները։

ԱՐՄԵՆԱԿ.— (Իմաստակորեն ավելացնելով) Եվ չափազանց ամոթխած...

ՏԻԳՐԱՆ.— Ճի՛շտ է, անոնք ամոթխած են և ժորժեթներու նման համարձակ շարժուձևեր չունին, բայց մի՞թե ատոր մեջն իսկ չի կայանար անոնց արժանիքը, ինչո՞ւ կմոռնաս, որ անոնք քույրերն են այն զմայլելի հարսերուն և մատղաշ կույսերուն, որոնք հենց ժողովրդին պատիվը դահիճներուն ձեռքեն փրկելու համար ձեռք-ձեռքի բռնած, երգելով՝ Եփրատի մռնչող հորձանքներուն մեջ գահավիժեցան, դյուցազնորեն մահը արհամարհելով։ (Խռովագին) Ա՜խ, եթե դուն կարողանայի՛ր հաղորդակցիլ անոնց զգացումներուն, անոնց կարապի մելամաղձոտ նայվածքներուն մեջ դյուրավ պիտի կարողանայիր կարդալ անոնց հոգիներուն խորը մրխացող ընդվզումը զիրենք հայրենի օջախներեն արմատախիլ ընելով, իրենց սիրելիներեն բաժնած և սարսափներու ու զրկանքներու մեջ տրորած վայրագ բռնության դեմ։

ՆՈՒՔԱՐ.— (Զսպված հուզումով) Դժբախտնե՞ր...

ՏԻԳՐԱՆ.— (Ոգևորված և վճռական) Հայ աղջիկնե՞րը... Հա՜յ ժողովրդի դարավոր տառապանքը շալկած խաչակրուհիներ են անոնք, Արմենա՛կ, գիտցի՛ր, որ հայ կիները տառապանքի օրերուն իրենց ամուսնու քո՛վնիվեր տառապած, թշվառության ու զրկանքի օրերուն անոր սև հացը բաժնած, սուգի օրերուն զայն մխիթարած, անոր հետ լացած, ըմբոստության օրերուն կռվի մեջ զայն խրախուսած, անոր զինակիցը հանդիսացած, անոր հրագեններուն վառոդ և վերքերուն վիրակապ հայթայթած, հաղթանակի օրերուն անոր հետ խանդավառված, ջարդի և տարագրության օրերուն միշտ ամուսնու և զավակներուն քով, աննահանջ, ջարդարարներուն դեմ զանոնք պաշտպանած, անոնց հետ մաքառած և ի վերջո իրենք ալ դաշունահար՝ անոնց դիակներուն վրա տապալած, իրենց արյունը իրենց սիրելիներուն արյան հետ խառնելով...

ԳԵՂԱՄ.— (Ոգևորված՝ ընդմիջելով) Իսկ այսո՛ր ալ հայ կիները ռուս մեծ ժողովրդի և մյուս հանրապետություններու հերոսական քույրերու և եղբայրներու հետ միասին աշխատանքային նորանոր սխրանքներ կգործեն և առաջադիմության ջահակիրը դարձած են աշխարհի վրա։

ՏԻԳՐԱՆ.— (Շարունակելով) Անոնք ոչ միայն հարգանքի, այլ պաշտպանելու արժանի ասպետուհիներ են դարձած։

ՆՈՒՔԱՐ.— Անշո՛ւշտ...

ՄՈՒՇԵՂ.— (Հաղթական) Է՜հ, ի՞նչ կըսես, Արմենա՛կ։

ԱՐՄԵՆԱԿ.— (Անտարբեր կլոռ։)

ՏԻԳՐԱՆ.— (Զայրագին) Հա՛, ուրեմն անդրդվելի՛ ես մտայնությանդ մեջ, ըսել է իզո՛ւր անցան տված օրինակներս ու խրատականներս։

ՄՈՒՇԵՂ.— Զգե՛, Տիգրա՛ն, սիրելիս, ետքեն ինք պիտի զղջա։

ԱՐՇԱԿ.— (Որ ջղայնոտած մտիկ կրնե այս բոլորը, ճանկարձ բարկանայք) Բայց ձգեցե՛ք, եղբայր, ձեր ինչո՞ւն պետք, դուք բոլորդ ալ զարմանալի մարդիկ եք, ատիկա ձեզի վերաբերյալ խնդիր մը չէ, և դուք իրավունք չունիք ուրիշի վրա բռնություն բանեցնելու, ամեն մարդ ազատ է իր հասկցած ձևով խորհելու և գործելու...

ՏԻԳՐԱՆ.— (Կշտամբական՝ ընդմիջելով) Եվ դուն, որ այսօր զայն պաշտպանելու կձգտիս, վաղը, վախնամ, անոր օրինակեն քաջալերված՝ անոր ընթացքին հետևիս։

ԱՐՇԱԿ.— (Կտրուկ և սպառնական) Այդ ալ ինձի կվերաբերի։

ՏԻԳՐԱՆ.— (Գայթակղած՝ վճռական) Է՜հ, անօգուտ է. օտարության ծոցին մեջ ցիրուցան եղած հայ ժողովուրդը պիտի փշանա, եթե օր առաջ իր հայրենիքին մեջ չամփոփվի, եթե ներգաղթը ժամ առաջ չի գա մեզ ազատել այլասերումի այս թունավոր ժանիքներեն։

ՆՈՒՔԱՐ.— (Համոզված և մտահոգ) Այո՛, հայությունը այսուհետև իր հայրենիքին մեջ միայն կրնա հայ ապրիլ, Հայաստանն է մեր...

ԱՐՇԱԿ.— (Զայրացած՝ ընդմիջելով) Այս ի՞նչ տարօրինակ մարդիկներ եք դուք, այս ամեն անգամ Հայաստանի՞ խոսքը պիտի ընեք անպայման...

ՏԻԳՐԱՆ.— (Ընդմիջելով և վճռական) Անպայմա՛ն։ Որովհետև հո՛ն է հայության ամբողջ ապագան, և ցավալի է, որ քեզի պեսները տակավին չեն ըմբռնած այսքան պարզ ճշմարտություն մը... (Հանդարտ, այլ անդրդվելի) երբ մեկ կողմեն գաղութահայությունը թշվառության և այլասերումի

ճիրաններուն մեջ կգալարվի ու ամեն օր քայլ մը ևս կընկղմի անստուգության մեջ, անդին հայրենիքի մեջ հսկայական նվաճումներու ճամփուն մեջ կառաջադիմեն։

ԱՐՇԱԿ.— (Հեգնական) Կառաջադիմե՞ն... Նախ տեսնենք, թե իրա՞վ են այդ բոլորը։

ՏԻԳՐԱՆ.— (Վրդովագին) Հա՛, գիտեմ, քեզի համար հայրենիքի մասին լավ խոսող բոլոր հայերը ստախոսներ են, բայց անդին այդ ամենը տեսնող օտարներն ալ միևնույն խրախուսիչ վկայությունները կուտան, ասոր ի՞նչ կըսես։

ԱՐՇԱԿ.— (Սմքած կլոր։)

ՆՈՒԲԱՐ.— (Արշակին) Տեր-Զորի դեղին ավազներն անգամ ծաղկեցնող այս զմայլելի ժողովուրդը, շատ պարզ է, որ կրնա նաև իր հայրենիքը շենցնել, ասոր վստահ եղիր։

ԳԵՂԱՄ.— (Ոգևորված՝ ընդմիջելով) Եվ ավելի՛ մեծ խանդավառությամբ և ավելի՛ մեծ թափով...

ԱՐՇԱԿ.— (Բարկացած) Է՜, կաղաչեմ, մի ջանաք զիս համոզել, եթե այդքան լավ տեղ մրն է, դո՛ւք ելեք գացեք, ես հանգիստ և գոհ եմ այստեղի կյանքես։

ԳԵՂԱՄ.— Խե՜ղճ Արշակ... Եվ դուն կյանք կկոչես ասիկա, որ զրկանքներու շղթա մըն է ինքնին։ (Զեռքով ցույց տալով) այս խոնավ պատերուն մեջ, ուր արևուն լույսը բնավ մուտք չի գործեր, այս վատառողջ օդը, որ ամեն օր կշնչենք, կամավոր բանտարկյալներեն ի՞նչ տարբերություն ունինք, խոսե՛։

ՄՈՒՇԵՂ.— (Ծիծաղելով՝ Արշակին) Սա դեմքիդ գույնը նայե անգամ մը և ըսածներուն պիտի համոզվիս։

ԱՐՇԱԿ.— (Զղազրգիռ՝ Մուշեղին) Է՜ լռե՛։

ԳԵՂԱՄ.— (Ոգևորված շարունակելով) Բայց, երբ հայրենիքի մեջ ըլլանք, ի՜նչ երջանկություն, հոն ցամաք հացը անգամ քաղցր է և հիանալի ուժ է մարդուս համար... Որովհետև մենք այդ հողին զավակն ենք և այդտեղի կլիմային տակ միայն կրնանք աճիլ։

ՄՈՒՇԵՂ.— Այո՛, այո՛, ես կհիշեմ իմ ծննդավայրին գեղեցկությունները։

ԳԵՂԱՄ.— (Շարունակելով) Ալ ի՜նչ զմայլելի տեսարաններ... Վայրի բնության ի՜նչ հրաշալիքներ...

ՄՈՒՇԵՂ.— (Շարունակելու ձևով) Թթենիի անտառնե՜ր, ջրվեժնե՜ր...

ԱՐՇԱԿ.— (Գալարվելով) Է՜, նորեն ինձի բարկացուցիք, և ստամոքսիս ցավը բռնեց, ձգեցե՛ք սա խոսքերը։

ԳԵՂԱՄ.— (Խնդալով) Քու ստամոքսիդ ցավն ալ հոն կբուժվի, երբ Արզնիի աղբյուրներեն խմես։ (Բոլորը կխընդան։ Գեղամ շարունակելով) Հապա, Մուշեղ, շինվող նոր ավաններեն բարձրացող գաջի և կրի թարմ բույրերը, որ ամեն վայրկյան կծծես... Երբ բացաստաններու և դալարախիտ հովիտներու մեջեն կանցնիս, վայրի ծաղիկներու հոտն է, որ կպաշարե շնչառությունդ, կթափանցե թոքերուդ խորը, կվերանորոգե էությունդ։ Անդին դաշտերուն վրա տրակտորներու աշխույժ երթևեկը կհրավիրե ուշադրությունդ։ Սարալանջերուն վրայ սիրուն գառնուկներ կարածին, և անոնց ոտքերուն ներքև սառ ջուրերով գլգլան առվակներ կցոլանան։ Ա՜խ, այս բոլորը հրաշալի՛ են, հրաշալի։

ՏԻԳՐԱՆ.— (Ոգևորված) Իսկապես, զմայլելի է մեր երկրին բնությունը։

ՄՈՒՇԵՂ.— (Հափշտակված) Հապա այդ մեծ լիճը, Գեղա՛մ... Ի՞նչ էր անունը։

ՆՈՒԲԱՐ.— Սևանա լիճ։

ՄՈՒՇԵՂ.— (Խանդավառ) Այո՛, այո՛, Սևանա լիճ։

ԳԵՂԱՄ.—Ո՜հ, այո՛, Սևանա լիճը, որ սիրտն է մեր երկրին։ Ա՛լ անոր վրա նավարկող կարմիր ձկնորսները, փոթորիկներու դեմ անոնց խիզախումները, անոնց որսացած ձուկերուն գեղեցկությունը...

ՄՈՒՇԵՂ.— (Խանդավառված՝ ընդմիջելով) Այո՛, Իշխան ձուկը...

ԳԵՂԱՄ.— (Շարունակելով) Որոնք շարժուն արծաթի կտորվանքներու նման ձեռքերդ կգգվեն, նավակը կլցվին, ուրիշներ կսահին, ջուրը կփախչին՝ քիչ հետո դարձյալ ուռկանին մեջ վերադառնալու համար։ (Բոցավառված) Ի՜նչ գեղեցիկ է այս ամենքը և ի՜նչ հրճվանք է այդ զվարթ տեսարանը դիտելը։ Հապա այդ ձկնորսներուն վերադարձը... Իրիկվան վերջալույսի կարմիր ցոլքերեն լուսավորված և իրենց հոգնության մեջ վարձատրված, նավակներուն վրա մե՛ր թ

կերգեն, մե՛ր կպարեն... Հապա անոնց գվարի սուլոցները, ծովափը շարված զիրենք սպասող մանուկներուն, ծերերուն իրենց վերադարձի ողջույնները, որ կուղղեն։ (Ջերմեռանդորեն) *Հավատացե՛ք, հավատացե՛ք, ասոնք հայու մը կյանքը կրկնապատկող, քառապատկող ազդակներ են, որոնք բառերով չեն բացատրվիր, խոսքով չեն նկարագրվիր, այլ կզգացվին միայն... Ես հոն չեմ ապրած, այս բոլորը չեմ տեսած, բայց հավատա՛, Նուբար, բնազդով կզգամ, հոգիիս աչքերովը կտեսնեմ դանոնք... մինչև՞ որ սեփական աչքերովս ալ տեսնելու արժանանամ...*

ՏԻԳՐԱՆ.— (Ոգևորված) *Ապրի՛ս, եղբայր։*

ՄՈՒՇԵՂ.— (Խայտալով) *Գեղա՛մ... Գեղա՛մ... ա՛լ երբ հայրենիք երթանք, հոն կուգա նաև քույրս իր զավակներովը... Այլևս իրարու կմիանանք, այնպես չէ՞։*

ԳԵՂԱՄ.— *Անշո՛ւշտ։*

ՄՈՒՇԵՂ.— *Ո՞հ, իմ անուշիկ քույրս... Լևոնիկը, փոքրիկ Արաքսին... որքա՞ն կարոտցեր եմ. տարիներով հեռու ապրելե ետք ա՛լ իմ քովս պիտի ըլլան. ի՞նչ մեծ երջանկություն...* (Փղձկալով) *ասիկա մտաբերելը անգամ կհուզե էությունս* (աչքերը կարբե):

ԳԵՂԱՄ.— *Այդ երջանկությունը, Մուշե՛ղ, ոչ միայն քեզի համար պիտի ըլլա, այլ աշխարհի ամեն կողմ ցրված հայության համար ալ, որոնք դեռ պանդուխտ կապրին՝ իրենց սիրելիներեն զրկված, անոնց կարոտովը ղեղուն, և որոնք հետզհետե Հունաստանեն, Ֆրանսայեն, Ամերիկայեն հասնող իրենց քույրերը, եղբայրները և մայրերը պիտի գտնեն, պիտի գրկեն, պիտի համբուրեն կարոտի և երջանկության կայլակներով ողողելով անոնց այտերը։*

ԱՐՇԱԿ.— (Առհամարհոտ) *Գացե՛ք, գացե՛ք, դեռ ի՞նչ կեցեր եք։*

ՄՈՒՇԵՂ.— (Հավատավոր) *Անշո՛ւշտ պիտի երթանք։*

ԳԵՂԱՄ.— (Վճռական) *Անմիջապե՛ս, որ ներգաղթը ըսկըսի։*

ՄՈՒՇԵՂ.— (Խանդավառ) *Եվ ես, Գեղամ, շիշ մը օղի կառնեմ շոգենավին մեջ միասին խմելու համար։*

ԳԵՂԱՄ.— (Ուրախ) *Ես ալ ջութակ կնվագեմ...*

(Այս միջոցին ներսեն աշխատանքի զանգակը կենչե դադարին վերջանալը հայտարարելով, և դարձյալ ներսեն մեքենաներու ժխորը կսկսի: Հետզհետե ամենքն ալ ճաշի ծրարները վերցնելով ոտքի կելլեն:)

ՆՈՒԲԱՐ.— (Ոտքի ելլելով և խոսակցությունը շարունակելու ձևով՝ հրճվագին) *Պարելն ալ ինձմե...*

ՏԻԳՐԱՆ.— (Որ ոտքի ելած է՝ խնդալով) *Նավուն մեջ գտնվողներն ալ մեզի հետ միասին կզվարճացնենք։*

ՄՈՒՇԵՂ.— (Ոգևորված) *Ահա այդպե՞ս...*

(Ժպիտ, խնդուք: Բոլորն ալ կշարժին իրենց տեղերը գրավելու համար:)

ԳԵՂԱՄ.— (Հազիվ երկու քայլ առաջացած՝ հանկարծ վերադառնալով եղբորը՝ տրտմորեն) *Այսօր դարձյալ մեքենաներու հարկաբաժինը դրին գիս։*

ՏԻԳՐԱՆ.— (Տխուր) *Ինչո՞ւ։*

ԳԵՂԱՄ.— (Դժգոհ) *Որովհետև Անթուանը այսօր ալ չեկավ։*

ՏԻԳՐԱՆ.— (Մտատանջ) *Բայց դուն այդ գործին վարժությունը չունիս* (Զախ դռան մեջ կտեսնե հսկիչը, որ կանգնած է հրամայական նայվածքով: Բոլորը կլռեն և գործի կսկսին: Տիգրանն ալ դեպի իր աշխատանքի սեղանը առաջանալով՝ խուլ ձայնով) *Գնա՛, և ուշադրություն ըրե...*

(Գեղամ ընկնված՝ աջ դուռնեն մեքենաներու հարկաբաժինը կուղղվի: Հսկիչը անշարժ կանգնած է՝ խիստ նայվածքով դիտելով բոլորը: Պահ մը ամենքն ալ կաշխատին՝ մին խարտոցով, ուրիշ մը մուրճով, ուրիշ մը սղոցով: Ներս կմտնե հսկիչը:)

ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԴ

ՏԻԳՐԱՆ, ՆՈՒԲԱՐ, ԱՐՄԵՆԱԿ, ԱՐՇԱԿ, ՄՈՒՇԵՂ ԵՎ ՀՍԿԻՉԸ

ՀՍԿԻՉԸ.—(Դեպի Մուշեղը առաջանալով և գետնին վրա անոր բերած մեքենական կազմածը ցնցելով՝ Մուշեղին) *Ասիկա ձեռքի գործեղ ավելի կարևոր է և պետք է այսօր լմննա։*

ՄՈՒՇԵՂ.— (Ձեռքի աշխատանքը կնգե և մոտենալով) *Ո՞ր մասը կուզեք, որ նորոգեմ։*

ՀՍԿԻՉԸ.— (Հեղինակավոր) *Նախ քակե այս վրայի մասը և ջանա երեսի ժանգերը մաքրել։* (Քիչ մը ևս մեքենային մեջը նայելե և բնելե հետո) *այս ագուցված մասը լավ հղկված չըլլալուն՝ օդը դուրս կփախչի, պետք է լավ մը մաքրվի և փայլի։*

ՄՈՒՇԵՂ.— *Շա՛տ լավ։* (Գործի կսկսի ձեռքի խարտոցով։)

ՀՍԿԻՉԸ.— (Պահ մը անոր աշխատության հսկելե հետո՝ խիստ շեշտով) *Խարտոցին վրա թափ տո՛ւր, որպեսզի ուտե։*

ՄՈՒՇԵՂ.— (Ավելի ուժով և արագ բսելով) *Այսպե՞ս։*

ՀՍԿԻՉԸ.— (Տիրական) *Այո՛, այդպե՛ս։* (Կթողու Մուշեղը և կերթա ձախ դուռնեն ներս։ Պահիկ մը հետո կվերադառնա, ձեռքը մեքենական ատամնավոր անիվ մը բռնած, մեջտեղը ծողով և Տիգրանին առջև կանգնելով՝ կտրուկ) *Հատ մը ասոր նմանը պիտի շինվի, միայն թե չափերը կտարբերին։* (Տիգրան կթողու գործը և ուշադիր կդիտե հսկիչին բերած կտորը։ Հսկիչը շարունակելով) *Հիմա չափեցե՛ք տեսնեմ՝ ինչ է ասոր երկայնքը։*

ՏԻԳՐԱՆ.— (Անապարանոք սեղանին վրայի գործիքները ասդին հրելով՝ կգտնե մետրը և չափելով) *Քսանհինգ սանտիմ։*

ՀՍԿԻՉԸ.— (Կտրուկ) *Մյուսը պիտի ըլլա երեսունութ, գրեցե՛ք։*

ՏԻԳՐԱՆ.— (Շտապով գրպանները կփնտրե և կտոր մը թուղթ ու մատիտ հանած՝ գրելով) *Երեսունութ։*

ՀՍԿԻՉԸ.— *Վարի մասը չափեցե՛ք։*

ՏԻԳՐԱՆ.— (Չափելով) *Յոթ։*

ՀՍԿԻՉԸ.— *Մյուսը պիտի ըլլա հինգ։*

ՏԻԳՐԱՆ.— (Գրելով) *Այո՛, հինգ։*

ՀՍԿԻՉԸ.— *Հիմա հաստությունը չափեցե՛ք։*

ՏԻԳՐԱՆ.— (Չափելով) *Չորս սանտիմ և վեց միլիմետր։*

ՀՍԿԻՉԸ.— (Հետզհետե դեպի Տիգրանը ծռելով) *Մյուսը պիտի ըլլա չորս և երկու միլիմետր։*

ՏԻԳՐԱՆ.— (Գրելով) *Այո՛։*

ՀՍԿԻՉԸ.— (Ուշասեռ) *Իսկ մեջտեղի անիվը պետք է*

անկյունավոր ատամներով ըլլա վաթսուն ատամ։ (Այս միջոցին ներսեն մեքենաներու խառնակ ժխոր մը կլսվի՝ արկածի մը տպավորությունը ձգող, և խուլ ձայն մը՝ հոգեվարքի հոնդյունները նման։ Ներսը խուլ իրարանցում։ «Դադրեցուցե՛ք մեքենաները... գոցեցե՛ք շոգին» ձայները հազիվ կլսվին։ Տիգրանի դեմքը կպրկվի, կուզե ետ դառնալ, բայց հսկիչը խիստ և անտարբեր կշարունակե իր բացատրությունները։ Մինչ Նուբար, հետո Արմենակ, Արշակ և Մուշեղ պահ մը անհամբեր ականջ կդնեն հնչող ձայներուն և հետզհետե մեքենաներուն հարկաբաժինը կերթան։ Հսկիչը կլանված՝ շարունակելով) *իսկ ասիկա ունի 48 ատամ։ Ուրեմն, այս շրջագիծը փոխանակ 48 մասի բաժանելու՝ վաթսուն մասի պիտի բաժանենք։ Կարծես ուրիշ անգամ հատ մը շինած ենք այս գործեն։ Պետք է խնամք տանիք, որ ատամները իրարու հավասար ըլլան և հեռավորությունները՝ միօրինակ,* (Տիգրան անհանդարտ և մտատանջ է, բնկերներուն մեկնիլը չէ տեսած։ Կուզե ետ դառնալ և չի կրնար։ Հսկիչը խիստ է։ Ներսեն մեքենաներու աղմուկը դադրած է արդեն, հսկիչը զբաղված կշարունակե) *այլապես գործը անկատար կըլլա և տարված աշխատանքն ալ՝ անօգուտ։ Այս անգամ անիվները չի դառնալով՝ կրնան գործիքներուն ամբողջությունը խանգարել։ Անիվներուն ճառագայթները ջանա՛ ավելի հաստ շինել, որպեսզի ճնշումին դիմադրեն։ Ասոր համար պետք է երկաթը լավ հալած և արագ թափված ըլլա...*

(Այս միջոցին ներս կուգան երկու-երեք գործավոր և Նուբար. այլայլված վիճակ մը ունին և Տիգրանին մոտենալով) *Տիգրա՛ն...* (Տիգրան ետ կդառնա։ Նուբար Տիգրանին օձիքեն, մեկ գործավորն ալ թևեն ուժգին բռնելով) *Տիգրա՛ն, քիչ մը դուրս եկուր...* (Կուզեն դեպի ձախ դուռը քաշկոտել և դուրս տանիլ։ Տիգրան կընդդիմանա։ Ուժգին կառչած է սեղանին, ծունկերը կթոտած՝ շփոթ և հանկարծակիի եկած) *ի՞նչ կա...* (Գործավորը և Նուբար կքաշկոտեն ու ճիգ կընեն զայն անջատել սեղանեն։ Տիգրան սարսափահար՝ անոնց այլայլված դիմագիծը նշմարելով՝ պաղատագին ձայնով) *կաղաչեմ, ըսեք, ի՞նչ պատահեցավ...* (Գործավորը և Նուբար

դեռ կմաշկոտեն: Տիգրան դիմադրելով՝ անշարժ գամված է և ադիոդորմ ձայնով) *ա՜խ, ըսե՛ք, ի՞նչ պատահեցավ...* (Ու հանկարծ կռահելով և պոռթկալով) *ա՜հ, արդյո՞ք...* (Մեկդի հրելով գործավորը և Նուբարը՝ դեպի աջ դուռ կխոյանա, Նուբարն ալ ետևեն: Տիգրան հազիվ դռան առջև հասած, արդեն երկու գործավոր գլխիկոր և համր քայլերով ներս կբերեն պատգարակ մը, որուն մեջ պառկած է Գեղամը անշարժ: Սառ լռություն:)

ՏԻԳՐԱՆ.— (Պահ մը սարսափահար կընկրկի ու հազիվ պատգարակին մեջ ճանչցած իր եղբայրը՝ հեծկլտախառն աղաղակով) *Գթություն... (Եվ հեծկլտալով) ա՜խ... ա՜խ... Գեղա՜մ... եղբա՛յրս, սիրելի՛ս... ի՞նչ եղավ քեզի...* (Վրան կնետվի պատգարակին՝ զոր վար կդնեն: Տիգրան պատգարակին ասդիի կողմն է, Գեղամին վրա իյնալով և զայն երկու ուսերեն բռնած՝ կիսովին վեր վերցնելով) *ըսե՛... Գեղա՜մ... եղբա՜յրս... ըսե՛, ի՞նչ եղար, խոսե՛* (կնեկեկա): (Գեղամին գլուխը կախ է դեպի ետև: Ճակտին ոսկերը հայտնապես կերևին խոշոտանգված մասեր և սև ճմլումներ: Իսկ բերանն վազող արյան կարմիր գիծը մինչև ականջին վարի մասը կերկարի և կզակին ետին կանհետի: Զգայազուրկ է: Մյուսները շուրջն են տխուր և քարացած: Մուշեղ պատգարակին մյուս կողմը ծունկի եկած է և կիսովին ծռած Գեղամին վրա՝ կուլա: Տիգրան հեծկլտագին շարունակելով) *ա՜խ... խոսե՛, կաղաչե՛մ... Գեղա՛մ, եղբա՛յրս, խոսե՛:*

ԳԵՂԱՄ.— (Կես մը աչքերը բանալով՝ նվաղուն ձայնով) *Սիրանո՜ւշ... Սիրանո՜ւշ...*

ՏԻԳՐԱՆ..— (Լալով հևիհև) *Այո՛... Գեղամ, Սիրանուշը... որ քեզ շատ կսիրե...*

ԳԵՂԱՄ.— (Դանդաղ, այլ խռովագին) *Ես... կմեռնի՛մ... հայրենիքիս... կարոտը... սրտիս մեջ...*

ՏԻԳՐԱՆ.— (Գալարատանջ պոռալով) *Ո՛չ, դուն չի՛ պիտի մեռնիս... Այդ անկարելի՛ է, որ հոս՝ օտարության ծոցը թողեմ քեզի:*

ԳԵՂԱՄ.— (Ցավատանջ լալով) *Կը... մեռ... նիմ...*

ՏԻԳՐԱՆ.— (Աղիողորմ ու հեծկլտախառն աղաղակով) *Ո՛չ... դուն պիտի ապրիս, Գեղամ... մենք միասին հայրենի՛ք պիտի երթանք:*

ԳԵՂԱՄ.— (Հեծկլտագին և ընդհատ) *Գացե՛ք, ըսե՛ք... հայրենիքս կերտող... իմ եղբայրներուս... թե ես կմեռնի՛մ... ցավելով... որ չիրցա հայրենիքիս ծառայել...* (Գլուխը կիյնա: Մեռավ: Ամենքն ալ տխուր, գլխարկները կհանեն և կուլան:)

ՄՈՒՇԵՂ.— (Որ ծունկի եկած էր, գլխարկը երկու ձեռքերուն մեջ տրորելով՝ լալագին) *Ա՜խ, Գեղամ ջան... երանի թե ես մեռնեի քո տեղը:*

ՏԻԳՐԱՆ.— (Որ դեռ բռնած է Գեղամին մարմինը և չի կրնար հավատալ անոր մահվան, հանկարծ թող տալով, ծունկերուն վրա կանգուն, երկու ձեռքերովը գլուխը ճմլելով՝ աղեպատառ աղաղակով) *Ափսո՜ս... մեռա՜վ... հայրենի հողին մեջ թաղվելու երջանկությո՛ւնն ալ չունեցավ...*

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՎԱԾ

Տեսարանը կներկայացնե Տիգրանին բնակարանը, որ խեղճուկ սենյակ մրն է գաղթականի, դիմացի պատին մեջտեղը կախված է Գեղամին մեծադիր նկարը, որ դեպի ձախ շեղակի կժպտի, գլուխը քասքեթով, հին շրջանակի մեջ: Լուսանկարին աջ քովը պատուհան մը, որուն մեկ ապակին կոտրած և թուղթ փակցված է: Սենյակին մուտքը աջ պատի խորքեն: Սենյակին ձախ անկյունը, խորքի պատին երկայնքին՝ խեղճուկ անկողին մը, երկու փայտե սնդուկներու վրա շինված, մեջը պառկած է Հակոբիկը, գլուխը ձախ պատին: Հիվանդ է: Իսկ ավելի առջև, ձախ պատին տակ, խշտյակի մը վրա նստած է Զարուհի, Տիգրանին ծերունի մայրը՝ կրծկրտած: Դիմացը, Գեղամի նկարին տակ, խեղճուկ պահարան մը, որ իբր սեղան ալ կծառայե: Վրան՝ ջուրի կոտրած փարշ, գավաթ, հին թեյաման մը, թեյի գավաթ մը, շիշ մը և սրվակ մը հիվանդին առարկաները կկազմեն: Պատուհանին և անկողնին միջև կա հին աթոռ մը: Սենյակին առաջամասը, դեպի աջ, հասարակ քառանկյուն սեղան մը, քովը երկու աթոռներ, փսիաթները ծակված և փրթված:

Վարագույրը բացվելուն՝ գիշեր է: Սեղանին վրա կվառի մոմ մը, որ լմննալու վրա է: Պարապ շիշ մը իբրև աշտանակ կծառայե մոմին: Մեծ մայրը նստած է խշտյակին վրա, կոնակը շալ մը, վիզը ծուռ, կմրափե: Հիվանդ Հակոբիկը կենանա: Զվարթ պատառոտուն շրջազգեստ մը հագած է, ոտքերն ալ պատռած կոշիկներ, սեղանին ձախ կողմը, աթոռին վրա նստած և թուղթի մը վրա գրեթե պառկած՝ ձեռքը մատիտ՝ գրելով զբաղված է: Իսկ մայրը՝ Մարին, նույնպես մաշած շրջազգեստ և ցած կրունկներով հին կոշիկներ հագած՝ սեղանին աջ կողմը, աթոռին վրա նստած՝ պատռած գուլպա մը կկարեցնե: Սառ լռություն:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԶԱՐՈՒՀԻ, ՄԱՐԻ, ԶՎԱՐԹ ԵՎ ՀԱԿՈԲԻԿ

ԶՎԱՐԹ.— (Դանդաղությամբ քանի մը բառ գրելե ետք) *Մա՛յր,* (կարդալով) *Զվարթը բարի աղջիկ մըն է։ Բարին Ռ-ո՞վ կգրվի, թե Բ-ով։*

ՄԱՐԻ.— *Բ-ով, աղջի՛կս։*

ԶՎԱՐԹ.— (Մատը բերնին թրջելով՝ մատովը կավրե Ռ-ն և մատիտով դանդաղորեն Բ-ի կվերածե: Մեկ երկու բառ ևս գրելե վերջ՝ մորը) *Զմեռը Զ-ո՞վ կգրվի, թե Ց-ով։*

ՄԱՐԻ.— *Զ-ով։*

ԶՎԱՐԹ.— (Ուրախ) *Այո՛, ճիշտ է։* (Քանի մը բառ ևս գրելե հետո ցավագին ձայնով) *մա՛յր, անոթի եմ։*

ՄԱՐԻ.— (Գորովագին շեշտով) *Այո՛, աղջի՛կս, քիչ մը ևս համբերե, հիմա հայրդ ուր որ է կուգա* (Զվարթ գլխիկու կլնե: Մարի ձեռքին գործը սեղանին վրա ձգած ելլելով՝ մրտատանջ և անձկագին) *ա՜խ, Աստվա՜ծ իմ, ի՞նչու այսքան ուշացավ, արդյոք արկա՞ծ մը պատահեցավ։* (Եվ դեպի Հակոբիկը առաջանալով՝ Զարուհիին) *մա՛յր, կաղաչեմ, այդպես մի՛ քնանար, պիտի մսիս։*

ԶԱՐՈՒՀԻ.— (Ողորմուկ) *Ո՛չ, զավա՛կս, չեմ քնանար։*

ՄԱՐԻ.— (Հակոբիկին մոտենալով և ճակտին ու ձեռքերուն տաքությունը քննելով՝ խռովագին) *Տաքությունը դեռ կշարունակե...* (Տխուր կմոտենա պատուհանին և դուրսը քննելով՝ հուսահատ) *դեռ երևացած չունի...* (Երկինքը նայելով), *դուրսը լուսցած է արդեն, Զվա՛րթ, աղջի՛կս, մոմը մարե՛, պարապ տեղը չսպառի։* (Զվարթ մոմը կմարե: Մարի դեպի Հակոբիկին մոտ դրված աթոռը առաջանալով՝ ցավագին) *ա՜խ... այս որքան ձախորդ օրերու մնացեր ենք, մայրիկ... մեզի պես գաղթական մարդոց համար գոնե հաջող*

գործերու շրջան մը բացվեր, ի՞նչ կըլլար, բայց ո՞ւր է... արդեն աշխատանքով շահվածը պարզ ապրուստ մը հազիվ կապահովեր մեզ, և այժմ գործազրկությունն ալ ուրիշ հարված մը մեզի պես տունեն տեղեն խլվածներուն համար... քանի ամիսներե ի վեր անգործությունը, որ սկսավ, գրեթե անտանելի դարձուց մեր կյանքը... Խեղճ ամուսինս, այն օրեն ի վեր, որ զինք գործե դադրեցուցին, շվարած, մոլորած վիճակ մը ունի, ամեն կողմ դիմեց, ամեն դուռ զարկավ, բայց անօգուտ... Գործ չունի՛նք, գործ չենք կրնար տալ քեզի, կըսեն առանց խղճալու, որ այն մարդը, որուն աշխատելու իրավունք կզլանան, ընտանիք մը ունի ապրեցնելիք։

ԶԱՐՈՒՀԻ.— (Ողորմուկ) Այո՛, զավա՛կս, մարդիկ խիղճ ըսվածը մոռցեր են իրենց շուրջիններուն հանդեպ։ Բնավ հոգ չեն ըներ իրենց նմաններուն տառապանքը։ Բավական է, որ իրենք հանգիստ ապրին ու վայելեն։ Այդ է կարևորը իրենց համար։ (Մարի տխուր գլուխը կշարժե։ Ձարունի պանիկ մը լուռ՝ շարունակելով) ես մարդոցմե հույսս կտրած եմ, զավա՛կս... Աստվա՜ծ թող հասնի մեզի պես շվարածներուն...

ՄԱՐԻ.— (Հուզված) Ա՜խ մայր... ամեն անգամ, որ գործի համար կատարած դիմումներեն ետ կդառնա ձեռնունայն, տեսնելով իր ընկճված հուսահատ վիճակը՝ սրտես արյուն կերթա, ճիգ կընեմ շփոթանքս ծածկելու համար, կջանամ ժպտուն երևալ և կրցածիս չափ կմխիթարեմ զինքը, բայց... աշխատանքի արգելքեն իր մեջ արթնցած արդար զայրույթը զինք կատաղության կտանի, ու այլևս չուզեր մխիթարվիլ... Զինքը հուսահատությունեն դուրս քաշելու համար ըսածներս կարծես ավելի կնեղեն զինքը և կբորբոքեցնեն իր բարկությունը... Աստվա՜ծ իմ, չեմ գիտեր, ի՞նչպես խոսիմ, ի՞նչպես վարվիմ իրեն հետ, որպեսզի իր տառապանքը թեթևցնեմ։

ԶԱՐՈՒՀԻ.— (Մայրաբար) Միշտ քաղցրությամբ, զավա՛կս, մեղմությամբ խոսելով իրեն հետ։

ՄԱՐԻ.— (Ընկճված) Այո՛, մա՛յր, բայց երեկ տանտերը եկավ սենյակին վարձքը պահանջելու համար և ըսավ, որ գալուն իմաց տամ իրեն։ Ու հիմա չեմ գիտեր, թե ի՞նչպես տեղեկացնեմ իրեն այս լուրը... քաջությունը կպակսի ինձ, մա՛յր։

ԶԱՐՈՒՀԻ.— (Գորովագին) Մի՛ սրտմտիր, աղջի՛կս, հարկավ չսպասված տեղեն օգնություն կհասնի մեզի։ (Պանիկ մը լուռ՝ շարունակելով) չեմ գիտեր... Տիգրանին այսքան ուշանալը ինձ այնպես ենթադրել կուտա, թե հաջողություն մը ունեցած է, տեղե մը գործ մը ճարած է անպայման...

ՄԱՐԻ.— (Խռովագին) Ա՛խ, երանի՛ թե, մայր, երանի՜ թե... (Պանիկ մը լուռ, սպասողական վիճակ։ Ձվարբը սեղանին վրա կքնանա։)

ԶԱՐՈՒՀԻ.— (Լռությունը խզելով) Գիտե՞ս, Մարի՛, Սիրանույշը երեկ գալ խոստացած էր, բայց չեկավ... Այնքա՜ն կարոտցած եմ զինքը...

ՄԱՐԻ.— Այո՛, մայր։ Բայց կերևի մադամը[1] չէ թույլատրած։ Զարմանալի կին մըն է և սաստիկ ջղային։ Ինչ ընե խեղճ աղջիկը, ամեն բանի համակերպելով է, որ հոն կշարունակե աշխատիլ։

ԶԱՐՈՒՀԻ.— Խե՜ղճ փոքրիկս։

ՄԱՐԻ.— Ան ալ երբ գործեն հանվեցավ, շա՜տ տառապեցավ, մինչև որ այդ գործը գտավ։ Այդ ահագին տունը կարգի պիտի դնե, պիտի ավլե, պիտի մաքրե, ճաշն ալ ինքը կեփե։ Եվ այս ամենը՝ պնակ մը կերակուրի և պառկելիք անկյունի մը փոխարեն։

ԶԱՐՈՒՀԻ.— (Ցավագնորեն) Խե՜ղճ Սիրանույշ... Բախտ չունի եղեր... եթե բախտ ունենար, և Գեղամս չմեռներ, մինչև հիմա ամուսնացած կըլլար և ուրիշներու ծառա ըլլալե ալ ազատված։ Ա՜խ... խե՜ղճ Գեղամս, դժբա՜խտ զավակս... (Կուլա։)

ՄԱՐԻ.— (Աղաչական) Մա՛յր, մի՛ վերակոչեր դառն հիշատակները, որոնք քեզ այս տարիքիդ մեջ տառապեցնելե զատ բանի չեն ծառայեր։

ԶԱՐՈՒՀԻ.— (Հանդարտելով) Իրավունք ունիս, աղջի՛կս, բայց մոր սիրտը... (Դուռը կբացվի, ներս կմտնե Նուբար՝ գլուխը քասկեթ՝ օձիքը ցուրտեն վեր դարձուցած։)

[1] Տիրուհին։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԵՎ ՆՈՒԲԱՐ

ՆՈՒԲԱՐ.— (Դռան մոտիկ կանգնելով՝ մտահոգ) *Բարի լո՛ւյս, տիկին Մարի։* (Քիչ մը ավելի բարձր) *բարի լո՛ւյս, մայրի՛կ։*

ՄԱՐԻ.— (Շփոթված ոտքի կանգնելով) *Բարի լույս, պարոն Նուբար...*

ԶԱՐՈՒՀԻ.— *Բարի լո՛ւյս, զավա՛կս...*

ՆՈՒԲԱՐ.— (Մարիին) *Ո՞ւր է Տիգրանը։*

ՄԱՐԻ.— (Մտատանջ) *Տակավին չեկավ...*

ՆՈՒԲԱՐ.— (Զարմացած) *Երեկվանե՞ ի վեր։*

ՄԱՐԻ.— (Անձկանոք) *Այո՛... Արդյոք բա՞ն մը պատահած է։*

ՆՈՒԲԱՐ.— (Ընկճված) *Ո՛չ, չեմ կարծեր։* (Պահիկ մը մտածելե ետք) *ի՞նչպես եղավ Հակոբիկը։*

ՄԱՐԻ.— (Հիվանդին մոտենալով և տխրությունը ճնշելով) *Դեռ կշարունակվի, ամբողջ ճակատը տաքության մեջ կայրի։*

ՆՈՒԲԱՐ.— (Ձեռքը դուռին տանելով, պահիկ մը շփոթ և անշարժ մնալե հետո՝ կտրուկ) *Լա՛վ, ես կերթամ, մնաք բարով։* (Կմեկնի։)

ՄԱՐԻ.— *Երթաք բարով։*

ԶԱՐՈՒՀԻ.— *Երթաք բարո՛վ, զավա՛կս։*

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԱՌԱՆՑ ՆՈՒԲԱՐԻ

ՄԱՐԻ.— *Ա՜խ, մա՛յր, որքա՜ն բարի տղա է սա Նուբարը և որքա՜ն կհետաքրքրվի մեր դժբախտ վիճակովը։ Եթե ան չըլլար, ի՜նչ պիտի ըլլար մեր վիճակը, հո՛ս, այս օտարության մեջ, որ անկյուն մը նետված, մոռցվածներու կնմանինք։*

ԶԱՐՈՒՀԻ.— *Ի՜նչ բանի համար եկած է։*

ՄԱՐԻ.— *Եկած էր հարցնելու թե...* (Դռան բացվիլը տեսնելով՝ խոսքը կկտրե։ Պառկած։ Ներս կմտնե Տիգրանը դանդաղ քայլերով։ Գլուխը քասքեթ, ժակետին օձիքը վեր դարձուցած։ Հուսահատ վիճակ մը ունի։ Գլուխը կախ, նայվածքը գետին հառած։ Հայտնի կերևեր, որ տեսակ մը ամոթ կզգա գործ չի գտած և հաց բերել կարողացած չըլլալուն համար։)

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԵՎ ՏԻԳՐԱՆ

ԶՎԱՐԹ.— (Դռան բացվելեն կարթնա և հորը մտնելը տեսնելով կելլե և վրան վազելով) *Հայրի՜կ...* (Բայց ձեռքերը պարապ տեսնելով և հաց չի բերած ըլլալը կռահելով կընկրկի և հուսահատ ձայնով մը) *Հաց չբերի՞ր, հայրի՛կ...* (Տիգրան լուռ է։ Զվարթը հուսախաբ իր տեղը կնստի։ Տիգրանը լուռ և դանդաղ քայլերով մինչև սենյակին մեջտեղը կառաջանա և խորունկ շունչ մը կառնե։)

ՄԱՐԻ.— (Որ հիվանդին մոտ կանգնած անձկությամբ զայն կդիտեր՝ գորովագին շեշտով մը) *Ո՞ւր ես, Տիգրա՜ն, սիրելի՛ս, ի՞նչու այսքան ուշացար, ամբողջ գիշերը անքուն քեզի սպասեցինք, դուրսեն լսվող ոտքի ձայներուն ականջ դնելով շարունակ, որ միգուցե դուն ես եկողը, բայց իզո՜ւր։*

ՏԻԳՐԱՆ.— (Կոնակը Մարիին, հուսահատ) *Շա՜տ հեռուները գացեր էի... գործ փնտրելու համար...*

ՄԱՐԻ.— (Աղապատագին) *Հաջողեցա՞ր գտնե...*

ՏԻԳՐԱՆ.— (Տրտում, բացասական կերպով գլուխը կըշարժե և հետո ցավագին ձայնով) *Մինչև հեռավոր ագարակները գացի... խնդրեցի՛, աղաչեցի՛, որ գտնե հացի մը գինով աշխատանք մը տան ինձի, բայց...*

ՄԱՐԻ.— (Անձկությամբ) *Եվ ի՞նչ եղավ...*

ՏԻԳՐԱՆ.— (Հուսաբեկ) *Ոչի՛նչ... ոմանք վռնդեցին, ուրիշներ ավելի ազնիվ՝ գործ չունինք, պարո՛ն, պատասխանեցին։*

ՄԱՐԻ.— Դրամ չունեիր, ի՞նչպես կարողացար ետ դառնալ։

ՏԻԳՐԱՆ.— Քալելով... ամբողջ գիշերը քալել եմ...

ՄԱՐԻ.— (Ցավագին) Այս ցրտին... Չի վախցա՞ր, որ կհիվանդանաս...

ՏԻԳՐԱՆ.— (Դառն ժպիտով) Հիվանդանա՞լ... այդ չէ, որ կվախցնե դիս... (տխուր) դժբախտության մեջ մարդ ցուրտին դեմ ավելի տոկուն կդառնա, բարեբախտաբար... կամ դժբախտաբար... (Պահիկ մը լուռ և հետո) կարծես մահն ալ կարհամարհե զայն...

ՄԱՐԻ.— Անոթի՞ ես։

ՏԻԳՐԱՆ.— Ո՛չ։

ՄԱՐԻ.— Ի՞նչ կերար։

ՏԻԳՐԱՆ.— Ոչի՛նչ։

ՄԱՐԻ.— Ուրե՞մն...

ՏԻԳՐԱՆ.— (Անտարբեր) Կարևորություն չունի... անոթության հետ շատոնց հաշտված եմ արդեն... (Եվ հետո՝ տխուր) ես ինձմե ավելի ձեզ կմտածեմ, որ երեկվնե ի վեր բան մը չեք կերած։

ՄԱՐԻ.— (Սրտագին) Մեզի հոգ մի ըներ, Տիգրա՛ն, սիրելի՛ս։

ԶԱՐՈՒՀԻ.— (Ողորմուկ) Հոգ չէ՛, զավա՛կս...

ՏԻԳՐԱՆ.— (Դառնորեն) Լա՛վ... ձեզի հոգ չընեմ... դուք կհասկնաք իմ կացությունս, բայց այս փոքրիկները, որ երեկվնե ի վեր բան մը չեն կերած... (Տխուր, գլուխը շարժելով՝ ինքնիրեն) եթե կարողանայի գոնե կտոր մը հաց բերել Զվարթիս և քիչ մըն ալ մածուն Հակոբիկիս համար... ամեն ճիգ ըրի, բայց անօգուտ եղավ... (Ու կես մը Մարիին դառնալով, որ միշտ Հակոբիկին մոտ կանգնած է) ի՞նչպես եղավ Հակոբիկը...

ՄԱՐԻ.— (Տխուր) Տաքությունը դեռ կշարունակե։ Երանի՜ թե քիչ մը քացախ ունենայինք մարմինը և գլուխը շփելու համար։

ՏԻԳՐԱՆ.— Զվա՛րթ, աղջի՛կս, գավաթ մը առ վերի դրացուհիին գնա և քիչ մը քացախ խնդրե (հետո ինքնիրեն)

Զվարթ... ի՞նչ հեգնանք այս անունն ալ, անոթի և տխուր աղջկան մը համար...

ԶՎԱՐԹ.— (Ցավագին) Բայց ես կամշնամ, հայրի՛կ... երեկվնե ի վեր երկու անգամ բան ուզեցի, անգամ մը ալյումետ[1], անգամ մըն ալ շաքար։

ՏԻԳՐԱՆ.— (Հայրաբար) Հոգ չէ, աղջի՛կս... Այս անգամ ալ գնա... Տիկին Սաթենիկը բարի կին է և չի մերժեր... Մանավանդ, երբ իրեն ըսես, թե եղբայրդ տաքության մեջ պառկած է և մարմինը շփելու համար պիտի գործածենք այդ քացախը... (Զվարթ, խեղճուկ, պահարանին վրայեն թեյի գավաթը կառնե և կերթա)։

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԱՌԱՆՑ ԶՎԱՐԹԻ

ՏԻԳՐԱՆ.— (Ինքնիրեն) Թշվառությունը սևերես է. անգործ մնալես ի վեր քանի՜ անգամներ մանր-մունր բաներ խնդրեր ենք իրմե, վերադարձնելու խոստումով և չենք կարողացեր վերադարձնել։ (Գլուխը շարժելով) լավ որ այս ազնիվ կինն ալ մեզի դրացի գտնվեր է... (Ձեռքերը վեր բարձրացնելով) այս ի՞նչ կացություն է, և ի՞նչ պիտի ըլլա մեր վերջը այսպես անգործ... Ե՞րբ պիտի կարողանանք դուրս ելլել այս թշվառություններն...

ԶԱՐՈՒՀԻ — (Խուլ ձայնով) Է՜, ասոր ալ փառք տուր, զավա՛կս...

ՏԻԳՐԱՆ.— (Դառն քմծիծաղով մը) Ի՞նչ բանի փառք տամ, մա՛յր...

ԶԱՐՈՒՀԻ.— (Մայրական շեշտով) Հիշե՛, զավակս, որ տարագրության ատեն Տեր-Զորի ճամփաներուն վրա ի՞նչ ահռելի օրերու մեջ կապրեինք...

ՏԻԳՐԱՆ.— (Տխուր ժպիտով) Այո՛, մա՛յր... բայց մեր այսօրվան կացությունը ինչո՞վ կտարբերի անվե։ Եթե Տեր-Զորի խորերը, ավազներու անսահման ամայությանը մեջ կընկղմեինք, հոս ալ քաղաքին անօգուտ ընդարձակությու-

[1] *Լուցկի (Ֆր.)։*

նը չէ՞, որ կտարածվի մեր առջև։ Եթե աքսորի ճամփաներ-ուն վրա մեր տանջանքներն ու հեծկլտուքները լսող քարեր միայն կգտնեինք մեր շուրջը, միթե հո՛ս ալ մեր տառապանքները միևնո՛ւյն անտարբերությամբ լսող քար սրտեր չէ՞, որ կգտնենք։ Եթե հոն ջարդվելու մղձավանջը կհալածեր մեզ, այսօր ալ անոթի մեռնելու հեռանկարը չէ՞, որ կսարսափեցնե մեզի։

ԶԱՐՈՒՀԻ.— Համբերությո՛ւն, զավա՛կս, աստված մեծ է։

(Դուռը կզարնվի և բացվելով ներս կմտնե Գանձիչը։ Նիհար, բարձրահասակ, ակնոցներով, երկայն վերարկու և գլխարկ հագած, թևին տակ պայուսակ մը։)

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

ՏԻԳՐԱՆ, ՄԱՐԻ, ԶԱՐՈՒՀԻ, ՀԱԿՈԲԻԿ ԵՎ ԳԱՆՁԻՁԸ

ԳԱՆՁԻՁԸ.— (Դռան առջև կանգնած, գլխովը կտրուկ բարև մը տալով և պայուսակին մեջեն ընկալագիրը հանելով՝ Տիգրանին) *Ձեր սենյակին վարձքը չեք վճարած, կհաճի՞ք վճարել։* (Տիգրան, որ անոր կողմը դարձած է, հանկարծակիի եկած, լուռ և անշարժ կնայի։)

ԳԱՆՁԻՁԸ.— Պատասխանեցե՛ք։

ՏԻԳՐԱՆ.— (Մտամոլոր) *Ձունի՛մ, պարո՛ն...*

ԳԱՆՁԻՁԸ.— (Կտրուկ) *Լա՛վ։* (Ընկալագրին վրա կարձանագրե և պայուսակին մեջ դնելե վերջ թևին տակ առնելով՝ խիստ) *երեկ եկա, հոս չկայիք։ Հիմա ալ չե՛ք ուզեր վճարել։ Այսօր ձեր վերջին պայմանաժամն է պարո՛ն։ Կա՛մ կվճարեք, կա՛մ սենյակը կհանձնեք։ Այլապես ստիպված պիտի ըլլամ օրենքով դուրս նետել ձեր կարասիները։ Մնա՛ք բարով* (կմեկնի)։

ՏԵՍԻԼ ՅՈԹԵՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԱՌԱՆՑ ԳԱՆՁԻՁԻ

ՏԻԳՐԱՆ.— (Կված է. պահ մը նայվածքը դռան գամված մնալե հետո, աչքերը դանդաղ հետզհետե սենյակին շուրջը դարձնելով՝ խորտակված ձայնով) *Մեր կարասինե՞ր... Միթե կարասի՞ մնաց...* (Աչքերովը փնտրելով) *երանի թե ծախելիք բան մը ունենայի... և այս ամսականն ալ վճարեի։ Բայց ամեն բան ծախեցինք, վերջացավ արդեն...*(Այս միջոցին Հակոբիկը գլուխը վեր առնելով) *մա՛յր, ջուր կուզեմ...* (Մայրը ջուր կուտա)։

ՏԻԳՐԱՆ.— (Նայվածքը Հակոբիկին վրա կեցնելով և պահ մը խորհելով, որ հիվանդն ալ միասին փողոցը պիտի մնա՝ հետզհետե մորը դառնալով և պահ մը վարանելե ետո) *Մա՛յր, տո՛ւր ջութակը, որպեսզի ծախեմ։*

ԶԱՐՈՒՀԻ.— (Խեղճուկ) *Ի՞նչ ըսիր, զավա՛կս...*

ՏԻԳՐԱՆ.— Գեղամին ջութակը, մա՛յր, որպեսզի տունին վարձքը վճարեմ։

ԶԱՐՈՒՀԻ.— (Ձախ ձեռքով հովիկը դրված ջութակին տուփը շոյելով) *Ո՛չ... Ո՛չ... զավակիս ժամացույցը ծախեցինք արդեն... հիմա իբրև հիշատակ իր ջութակը մնաց... Խնայե՛, զավա՛կս, գոնե ա՛ս մի ծախեր... որովհետև ասիկա մոտս ունենալով՝ անոր ամբողջ հիշատակները քովս ունենալ կկարծեմ։*

ՏԻԳՐԱՆ.— (Աղաչատագին) *Կաղաչե՛մ, մա՛յր, տո՛ւր, տո՛ւր, որ տանիմ ծախեմ և վարձքը վճարեմ, այլապես այս գիշեր դուրս նետված պիտի ըլլանք և այս ցուրտին փողոցը պիտի մնանք, հիվանդ Հակոբիկը գիրկերնիս...*

ԶԱՐՈՒՀԻ.— (Լալով) *Ձե՛մ կրնար տալ...* (Մարի ալ Հակոբիկին անկողնին ծայրը նստած՝ կուլա։ Տիգրանը հուսահատ ձևեր կառնե։ Ներս կուգա Զվարթը։)

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԵՎ ԶՎԱՐԹ

ԶՎԱՐԹ.— (Քացախը բերած է, ձեռքի գավաթը մորը կուտա և հորը դառնալով) *Հայրի՛կ, դիմացի էպիսիեն սեթ ֆրան սենքանթ կուզե կոր*[1]... (Տիգրան կպրկվի։)

ՄԱՐԻ.—Հայերե՛ն խոսե, աղջի՛կս, նպարավաճառը յոթուներ

[1] *Նպարավաճառը յոթ ֆրանկ հիսուն լ ուզում (ֆր.)։*

դեռ ֆրանկ կուզե կըսեն։ (Զվարթը գլխիկոր կերթա ֆենստի սեղանին մյուս կողմը աթոռին վրա և թեերը սեղանին վրա ծալելով կպառկի։)

ՏԻԳՐԱՆ.— (Նպարավաճառին պահանջքեն մտրակված՝ երկու քայլ դեպի մայրը կանցնի և պոռալով) *Տո՛ւր, մա՛յր, կաղաչե՛մ...*

ՁԱՐՈՒՀԻ.— (Կարծելով, թե Տիգրան ջութակը պիտի առնե, արագ շարժումով զայն գետնեն կվերցնե և մանուկ մը գրկելու ձևով սև տուփը գրկած օրորելով) *Ո՛չ... ո՛չ... չե՛մ կրնար տալ... ասիկա անոր խոսուն հիշատակն է... չե՛մ կրնար տալ,* (լալով) *ասիկա իր մանկությունը կհիշեցնե ինձի...*

ՏԻԳՐԱՆ.— (Ցավագին և աղաչանքով) *Ա՜խ, կհասկնա՛մ, մայրի՛կ, կհասկնամ։ Բայց կխնդրեմ, որ դուն ալ զիս հասկընաս և գթաս իմ վրաս։ Մա՛յր, խորհե՛ անգամ մը, որ եթե Գեղամը քո զավակդ էր, որուն համար այնքա՜ն կցավիս և չես ուզեր հիշատակեն բաժանվիլ՝ միթե ես ալ քո զավակդ չե՞մ... անկե ավելի՛ դժբախտ, անկե ավելի՛ կարեկցության արժանի։ Քանի որ անգա՛մ մը մեռավ, մեռավ և ազատվեցավ... Իսկ ե՞ս,* (լալով) *ավա՜ղ, ամեն օր կմեռնիմ...* (կգալարվի)։

ՄԱՐԻ.— (Հեծկլտալով, աղապատագին) *Տո՛ւր, մա՛յր... տո՛ւր...*

ՁԱՐՈՒՀԻ.— (Խորտակված) *Առե՛ք։*

(Տիգրան գրեթե հափշտակելով կառնե մորը ձեռքեն ջութակին տուփը և զայն սեղանին վրա դնելով՝ տխուր կբանա կափարիչը։ Մեջեն էջ մը նոտա կերևի։ Կամաց-կամաց կհանե ջութակը և ձեռքին մեջ դանդաղ կդարձնե, մտամոլոր նայվածք մը ունի։ Կարծես հետզհետե անցյալի հիշատակները կհիշե։ Հետո մատովը հարված մը կուտա լարին, որ կթրթռա։ Հուզված գլուխը կշարժե։ Լուռ տառապանք։ Հետո կարծես կոխոտելով այդ մտածումները, ջութակը տուփին մեջ դնելով՝ արագ կգոցե և տուփը թևին տակ սեղմելով ետ կդառնա, որ մեկնի։ Հանկարծ կտեսնե Գեղամին նկարը և հանցավորի պես պահ մը զայն դիտելե հետո՝ գրեթե փախչելով դուրս կշտապե։)

ՄԱՐԻ.— (Տիգրանին ետևեն նայելով և ցավագինորեն գլուխը շարժելով) *Խե՜ղճ ամուսինս... Քու ազնիվ և զգայուն հոգիդ ինչպե՜ս պիտի դիմադրե այս անլուր տառապանքներուն։* (Տխուր՝ Հակոբիկին մոտենալով) *ա՜խ, դժբախտ զավակս, դեռ տաքության մեջ կայրի։ Երանի թե այս քացախը քիչ մը զովացներ դինքը։* (Եվ ձեռքի քացախովը կրկրսի անոր մարմինը շփել։ Ներս կմտնե Սիրանույշ. պարզ սև շրջազգեստ մը հագած է, տխուր և դժգույն։)

ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԴ

ՁԱՐՈՒՀԻ, ՄԱՐԻ, ԶՎԱՐԹ, ՀԱԿՈԲԻԿ ԵՎ ՍԻՐԱՆՈՒՅՇ

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Ներս մտնելով՝ Մարիին) *Բարև՛, քույրի՛կ։* (Կհամբուրվին։ Հակոբիկը պառկած տեսնելով) *անցած ըլլա, ի՞նչ ունի Հակոբիկը։*

ՄԱՐԻ.— (Ընկճված) *Հիվանդ է, սաստիկ տաքության մեջ կայրի։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Խե՜ղճ Հակոբիկ։* (Մարիին) *բայց անցյալ օրը պզտիկ անհանգստություն մըն էր ունեցածը։*

ՄԱՐԻ.— *Այո՛, բայց հետզհետե սաստկացավ, քիչ մը քացախով կշփեմ, որպեսզի զովանա։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Խեղճ փոքրիկ...* (Զարուհիին դառնալով) *բարև մայրի՛կ։ Ի՞նչպես ես։* (Ձեռքը ֆհամբուրե։)

ՁԱՐՈՒՀԻ.— *Աղեկ եմ, Սիրանույշ աղջիկս, բարի եկար...* (Այտերեն կհամբուրե։)

ԶՎԱՐԹ.— (Սիրանույշին մոտ երթալով) *Բարև՛, Սիրանույշ։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Գորովագին) *Բարև՛ Զվարթ* (Կհամբուրե։ Զվարթ դարձյալ կերթա, սեղանին վրա ծռած լուռ կպառկի։)

ՁԱՐՈՒՀԻ.— (Մտահոգ) *Դուն ի՞նչպես ես, Սիրանույշ աղջիկս։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Սրտաբեկ) *Է՜, մայրիկ, մի՜շտ հոգնած։*

ՁԱՐՈՒՀԻ.— *Համբերություն, զավակս։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Հակոբիկին դառնալով ժպտագին) *Ո՞րքան ալ բարի է, ձայն հանած չունի։*

ՄԱՐԻ.— (Խուլ ձայնով) *Կարողություն չունի խոսելու։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Խե՜ղճ Հակոբիկ։* (Մարիին) *գոնե կրցա՞ք բժշկի մը ցուցունել։* (Մարի ցավագնորեն գլուխը կերերցնե հասկցնելու համար, թե ոչ։)

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Վրդովագին) *Ի՞նչ... պարոն Տիգրանը տակավին առանց գործի՞ է։*

ՄԱՐԻ.— (Տրտմորեն) *Այո՛։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Մտահոգ) *Խե՜ղճ մարդ։*

ՄԱՐԻ.— (Քովի աթոռը ցույց տալով) *Նստե՛, Սիրան։* (Սիրանույշ կնստի) *Ո՞ւրկե կուգաս այսպես։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Այս գիշեր մադամս պարահանդես պիտի երթա, դերձակուհիին քով շրջազգեստ մը ունի լմննալիք, ինձի ղրկեց, որ գոտիին մասին բացատրություն մը տամ դերձակուհիին։ Այդ առիթեն օգտվելով եկա ձեզ տեսնել։*

(Զարուհի և Սիրանույշ մեկուսի կխոսին լուռ։)

ԶՎԱՐԹ.— (Կամաց մը մոր fովը կերթա և գալարվելով ցավագնորեն) *Մա՛յր, անոթի եմ, շա՜տ անոթի եմ...*

ՄԱՐԻ.— (Քաղցր) *Գիտեմ, աղջիկս, քիչ մը ևս համբերե, հայրդ գնաց, հիմա կուգա։*

ԶՎԱՐԹ.— (Աղաչական) *Եվ հաց պիտի բերե՞...*

ՄԱՐԻ.— *Այո՛, աղջիկս։*

ԶՎԱՐԹ.— *Երեկ ալ այդպես ըսիր մա՛յր, բայց վերադարձին չէր բերած...*

ՄԱՐԻ.— *Այո՛, աղջիկս, դրամ չուներ, բայց այս անգամ պիտի բերե։*

ԶՎԱՐԹ.— *Անպատճառ պիտի բերե՞...*

ՄԱՐԻ.— *Այո՛, աղջիկս, պիտի բերե։* (Զվարթ դարձյալ կերթա աթոռին վրա տխուր կկծկտի։ Մարի վերջացուցած է հիվանդին խնամքը և վերմակը անոր շուրջը կսեղմե։)

ԶԱՐՈՒՀԻ.— (Հոգածու խոսակցությունը շարունակելով բարձրաձայն) *Այնպես է աղջիկս, դուն դեռ երիտասարդ ես, տառապանքը շատ դեշ կազդե երիտասարդներուն վրա...*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Խոսքը Մարիին ուղղելով) *Պարոն Տիգրանը դո՞ւրս ելավ։*

ՄԱՐԻ.— *Այո՛։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Մտահոգ) *Դարձյա՞լ գործ փնտրելու համար։*

ՄԱՐԻ.— (Հուսաբեկ) *Ա՛լ հուսահատած է, աղջիկս, գործ գտնել անկարելի է...*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Խե՜ղճ մարդ, ո՞վ գիտե որքա՞ն ընկճված է։*

ՄԱՐԻ.— *Շա՜տ, շա՛տ ընկճված է, Սիրանույշ։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Եվ ի՞նչ կմտածե ընել։*

ՄԱՐԻ.— (Տխուր) *Ոչի՛նչ, շվարած մնացած է, իր ամբողջ հույսը ներգաղթն է,*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Ցավագնորեն) *Ա՜խ, այո՛, ներգաղթը... գոնե շուտ սկսեր, ա՛լ երթայինք, ազատվեինք այս կյանքեն։*

ՄԱՐԻ.— (Դառնորեն) *Այո՛... երթա՜նք, ազատվինք... բայց ո՞ւր է... դեռ լուր մը չկա... երանի թե շուտ սկսեր ներգաղթը... այն է մեր միակ փրկությունը, ուրիշ ելք չունինք...* (Պահիկ մը լուռ մնալե հետո) *երեկ տիկին Պայծառը եկած էր, հուսալով, որ միգուցե ներգաղթի մասին բարի լուր մը կիմանա մեզմե, բայց, իզո՜ւր, անոր ալ երկու զավակները ամիսներե ի վեր անգործ են։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Տխուր գլուխը շարժելով) *Խեղճե՜ր...* *Եվ դեռ քանինե՞ր կան այս ողբալի դրության մատնված. ներգաղթն է մեր բոլորին փրկությունը...* (Պահիկ մը լուռ և հետո) *ա՜խ, չես կրնար երևակայել քույրի՛կ, Գեղամիս մահեն ի վեր այնքա՞ն պաղած եմ այս տեղերեն, որ ժամ առաջ կուզեմ հեռանա՜լ, հայրենիքս երթալ, հոն աշխատիլ, անոր կյանքովը ապրիլ, անոր կատարած նվաճումներովը մխիթարվիլ։*

ՄԱՐԻ.— *Եվ ի՜նչ քաղցր մխիթարանք։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Երբ որ ներգաղթը սկսի, ինձի մինակ չպիտի թողուք, ձեր հետը պիտի տանիք, այնպես չէ՞, քույրի՛կ։*

ՄԱՐԻ.— *Անշո՜ւշտ, Սիրանույշ, դուն մեր ընտանիքին մեկ անդամը կհամարվիս։*

ԶԱՐՈՒՀԻ.— (Որ վերի խոսակցությանց կհետևեր մերթ ընդ մերթ գլուխը շարժելով) *Արդեն ես միշտ կըսեմ ատիկա, զավակս...*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— Աղոթե՛, մայրիկ՛, դուն բարի կին ես, աղոթե, որ ներգաղթը շուտո՛վ սկսի։

ՁԱՐՈՒՀԻ.— Կաղոթե՛մ, աղջի՛կս, կաղոթեմ... դուն ալ բարի ես, քեզի համար ալ կաղոթեմ, որ Գեղամիս պես քեզ սիրող բարի երիտասարդ մը խնդրես ձեռքդ, որ անոր ցավը մոռնաս...

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Սրտաբեկ) *Ո՜հ, ո՛չ, մա՛յր... ես այդ մասին մտածելու կարողություն իսկ չունիմ... գրեթե վեց ամիս է, որ զայն կորսնցուցի, կարծես այսօր մեռածի պես կկսկծա սիրտս...* (Կուլա։)

ՁԱՐՈՒՀԻ.— (Ողորմուկ) *Իհարկե... կհասկնամ, աղջի՛կս, այնքա՜ն աղնիվ, մանավանդ այնքան երիտասարդ ալ էր...* (Աչքերը կարբե։)

ՄԱՐԻ.— (Գուրգուրոտ՝ Սիրանույշին մազերը շոյելով) *Մի՛ լար, Սիրանո՛ւյշ, աղջի՛կս, մեղք ես, մաղամդ աչքերդ կարմրած տեսնելով նորեն պիտի պոռա, պիտի բարկանա քեզի։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Աչքերը սրբելով) *Ա՛հ, այո՛, իրավունք ունիք։* (Մարիին) *ա՜խ, քույրի՛կ, չեք կրնար երևակայել ի՞նչ անտանելի բան է սրյունող սրտի մը դեմ նետված կշտամբանքը։*

ՄԱՐԻ.— (Ցավակցելով) *Այո՛, այո՛, կհասկնամ...*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Արտասուքեն խեղդված ձայնով) *Վիշտս թեթևցնելու համար լալու իրավունքեն ալ զրկված եմ այնտեղ։*

ՄԱՐԻ.— (Գլուխը շարժելով) *Խե՜ղճ Սիրանույշ։*

ՁԱՐՈՒՀԻ.— Համբերությո՛ւն, աղջիկս...

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Աչքերը սրբելով և ոտքի ելլելով) *Երթամ, կուշանամ, հիմա ղիս կինտրեն* (Զարուհիեն, Մարիեն և Զվարթեն հրաժեշտ առնելով) *Հակոբիկին ալ անցած ըլա, պարոն Տիգրանին ալ հարգանքներս։*

ՄԱՐԻ.— Շնորհակալ եմ։ (Մինչև դուռը ընկերանալով) *Նորեն, երբ առիթ ունենաս եկո՛ւր, Սիրանո՛ւյշ, կսպասենք։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— Այո՛, անմիջապես, որ առիթ ունենամ։ (Կմեկնի։)

ՄԱՐԻ.— (Դուռը կգոցե և վերադառնալով) *Խե՜ղճ աղջիկ,*

վիշտը օրեօր կմաշեցնե զինքը։ Աքսորի ճամփաներուն վրա որբ մնալեն ի վեր հազի՜վ նոր սկսած էր խնդալ և հիմա... չբացված թառամեցա՜վ։

ՁԱՐՈՒՀԻ.— Դժբախտ զավակս... (Մարիին) *գոնե բան մը չբսեիր մեր վիճակին մասին...*

ՄԱՐԻ.— Եվ ի՜նչ կրնայի ըսել իրեն, ի՜նչպես բացատրել մեր վիճակը... խե՜ղճ Սիրանույշ... արդեն իր վիշտը իրեն կբավե, մեր ցավերն ալ իմանալով ավելի ես տառապե՞ր։

(Դուրսեն կլսվի Նուբարին ձայնը) *Ահա հոս է, դոկտոր։ Հրամմեցե՛ք, անցե՛ք դոկտոր...* (Մարի հանկարծակիի եկած և շվարած՝ կուզե սենյակը կարգի դնել։ Աջ ձախ կշարժի և պահարանին մոտ գտնվող աթոռը Զարուհիին և անկողնին միջև կդնե, պատին տակ։ Նուբար և բժիշկը ներս կմտնեն։)

ՏԵՍԻԼ ՏԱՍԵՐՈՐԴ

ՁԱՐՈՒՀԻ, ՄԱՐԻ, ԶՎԱՐԹ, ՀԱԿՈԲԻԿ, ՆՈՒԲԱՐ ԵՎ ԴՈԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ԴՈԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ.— (Բարձրահասակ, սև վերարկու հագած, ակնոցներով, գլխարկը հանելով՝ Մարիին լուրջ) *Բարև՛, տիկին* (և հիվանդին մոտենալով) *այս փոքրի՞կն է հիվանդը։*

ՄԱՐԻ.— (Որ բարևելե ետք մեկ կողմ կանգնած է) *Այո՛, դոկտոր...*

ԴՈԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ.— Եվ ի՞նչ ունի։

ՄԱՐԻ.— Երեք օրե ի վեր տաքություններն աչքերը չէ բացած։

ԴՈԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ.— Տաքությունը հանկա՞րծ սկսավ, թե նախապես քիչ մը անհանգստություն կզգար արդեն։

ՄԱՐԻ.— Այո՛, դոկտո՛ր, վեց-յոթ օր առաջ թեթև տաքություն և դող մը ուներ։

ԴՈԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ.— Ախորժակ ունի՞։

ՄԱՐԻ.— Ո՛չ։

ԴՈԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ.— (Հակոբիկին վերմակը բանալով

նախ որովայնը տեղ-տեղ կսեղմե, հետո բազկերակը քննելով) *Լա՛վ։* (Գրպանեն ջերմաչափը կհանե։ Թափ տալով կը-դառնա Հակոբիկին և կչանա թևին տակ տեղավորել։ Դուռը կբացվի, ներս կմտնե Տիգրան, թևին տակ երկու կտոր հաց։ Հայտնի կերևի, որ խոշոր հաց մրն է, երկուքի բաժանված։ Պահ մը դռան առջև կանգնած կնիա և շվարած կդիտե սենյակին խորքը կատարվածը։ Նուբար և Մարի բժշկին ետևը կանգնած են կոնակնին դուռին։ Զեն տեսած Տիգրանին մուտքը։ Իսկ Զվարթ անոթի կմրափե սեղանին վրա։)

ՏԵՍԻԼ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԵՎ ՏԻԳՐԱՆ

ՏԻԳՐԱՆ.— (Գրեթե անձայն առաջանալով՝ հացերը սեղանին վրա կդնե։ Զվարթ աչքերը բանալով՝ հացին վրա կհարձակի և կսկսի ուտել։ Տիգրան լրիվ Նուբարին կմոտենա և թևեն բռնած դեպի սենյակին առաջամասը քաշելով՝ անաբեկ ձայնով) *Ո՞վ է այս մարդը...*

ՆՈՒԲԱՐ.— *Բժիշկ բերի։*

ՏԻԳՐԱՆ.— (Վրդովագին) *Բայց ես դրամ չունիմ, ի՞նչպես պիտի վճարեմ։*

ՆՈՒԲԱՐ.— *Հոգ մի՛ ըներ, ես իրեն խոսած եմ։*

ՏԻԳՐԱՆ.— (Սփոփանքի խորունկ շունչ մը քաշելով՝ կը-թողու Նուբարին թևը։ Նուբար դարձյալ կերթա բժշկին ետին կկանգնի։ Իսկ Տիգրան՝ դանդաղ բժիշկին մոտենալով) *Բարև՛ դոկտոր...* (Կկանգնի մորը և հիվանդին միջև։)

ԴՈԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ.— (Տիգրանը նշմարելով) *Դուք այս փոքրիկին հա՞յրն եք։*

ՏԻԳՐԱՆ.— (Տխուր) *Այո՛։*

ԴՈԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ.— (Պահիկ մը վերջ) *Դուք ո՞րտեղացի եք։*

ՏԻԳՐԱՆ.— *Պարտիզակցի։*

ԴՈԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ.— *Հա՞, Պարտիզակցի՞... ես պատերազմի սկիզբը զինվորական պաշտոնով գտնվել եմ Պարտիզակի մեջ և հոն վարժարաններու այցելու բժիշկ էի։* (Տիգ-

ռան՝ համաձայն՝ գլուխը կշարժե։ Բժիշկը հանկարծ հետաքրքիր շեշտով մը) *Ի՞նչյան կկոչվիք։*

ՏԻԳՐԱՆ.— *Սարաֆյան*

ԴՈԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ.— (Ձեռքը ճակատը տանելով և մը-տաբերելու ձևով) *Ներեցեք որ ըսեմ... այդ միջոցին Պարտիզակի մեջ մեծահարուստ Կարապետ էֆենդի Սարաֆյան մը ճանչցած եմ, ազգային վարժարանի հոգաբարձու էր, դուք անոր...*

ՏԻԳՐԱՆ.— (Ընկճված) *Հայրս էր։*

ԴՈԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ.— (Շփոթված) *Դուք անոր զավա՞կն եք։*

ՏԻԳՐԱՆ.— *Այո՛, դոկտոր։*

ԴՈԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ.— (Տիգրանին վիճակին խղճալով՝ տխուր գլուխը կշարժե ու հանկարծ) *Հիմա ո՞ւր կգտնվի ձեր հայրը։*

ՏԻԳՐԱՆ.— *Տեղահանության առաջին շրջանին մեզմե պատելով տարին սպանեցին։*

ՋԱՐՈՒՀԻ.— (Որ նստած տեղեն խոսակցության կհետևվեր, երբեմն-երբեմն գլուխը կշարժեր՝ հանկարծ հառաչելով) *Ա՜խ...*

ԴՈԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ.— (Շարունակելով) *Ու ձեր հարըստությունեն, ստացվածքներեն բան մը չկրցա՞ք ազատել։*

ՏԻԳՐԱՆ.— (Տրտմագին) *Ոչինչ, ամենքն ալ կողոպտվեցավ, փչացավ։*

ՆՈՒԲԱՐ.— (Քմծիծաղով մը) *Է՜... Օտար ափերու վրա մեր շահածն ալ, մեր շինածն ալ ուրիշներու սեփականությունն է։*

ԴՈԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ.— (Զարուհին ցույց տալով) *Այս տատիկը ձեր մա՞յրն է։*

ՏԻԳՐԱՆ.— *Այո՛, դոկտո՛ր, մայրս է։*

ՋԱՐՈՒՀԻ.— (Հուսահատ ձևով մը) *Իր զավակներուն տառապանքներուն լո՞ւռ հանդիսատեսը...*

ԴՈԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ.— (Ցավագնորեն գլուխը երերցնելով պահ մը սենյակին խեղճությունը և հոն տիրող թշվառությունը աչքե անցնելե հետո կդառնա Հակոբիկին ու թևին տակեն ջերմաչափը հանելե և քննելե ետք գրպանը դնելով,

կնանե դեղագիրներու տետրակը և կսկսի գրել: Հետո բերբը փրցնելով և Տիգրանին երկարելով) *Հրամմեցե՛ք։ Եղածը սաստիկ պաղառություն մըն է, որ պետք է խնամքով դարմանեք։ Իսկ եթե տաքությունը շարունակե, ինձի դարձյալ կիմացնեք։*

ՏԻԳՐԱՆ.— (Որ գլուխը կախ, դեղագիրը ձեռքը բռնած, առանց շարժվելու մտիկ կրներ այս ամենը՝ հանկարծ պոռթկալով) *Բայց, դոկտո՛ր... ես ձեր ըսածները ընելու ի վիճակի չեմ... այս դեղագիրը շինել տալու դրամ չունիմ ես։ Ամիսներե ի վեր անգործության մեջ կտառապիմ... ունեցածը, չունեցածս ծախեցի, հուսալով, որ գործ մը կգտնեմ և կամ ներգաղթը կսկսի... բայց ոչ գործ գտա և ոչ ալ ներգաղթեն լուր մը կա տակավին...* (Ձեռքովը Նուբարը ցուցնելով) *Նուբարը, որ եղբոր մը չափ ազնիվ է մեզ հանդեպ, իր խնայողություններեն մաս առ մաս փոխ առի և չկրցա վերադարձնել... հիմա ինքն ալ մեզի հետ չքավորության մատնված է...* (Նուբար անփույթ շարժում մը կրնե: Մարի կուլա:) *Դեռ երեկ առավոտ, կանուխեն ճամփա ընկա, ոտքով քառասուն մղոն ճամփա կտրել եմ... ամբողջ շրջակաները, ագարակները, գործարանները դեղերեցա, գործ մը գտնելու համար։ Անօգուտ եղավ։ Հիմա քիչ առաջ տանտերը եկավ, վարձքը պահանջեց, այլապես այս գիշեր փողոց պիտի նետեմ ձեզ ըսելով սպառնաց... բան չունեի ծախելիք...* (Ձեռքով Դեղամին լուսանկարը ցուցունելով) *և եղբայրս...* (բժիշկը կարճ ակնարկ մը կնետե պատկերին վրա), *որ մեքենաներու տակ խոշտանգվելով մեռավ...* (Ձարուհի հանկարծ հառաչելով) *Ա՜խ...* (Տիգրան շարունակելով) *անոր միակ հիշատակը եղող ջութակը սատկված տարի և հարյուր ֆրանկի ծախեցի... 90 ֆրանկով սենյակին վարձքը վճարեցի... և շաբաթներե ի վեր ալ* (ձեռքը փողոցին ուղղությամբ երկարելով) *նպարավաճառին պարտքս եղող յոթուկես ֆրանկը տվի, որ ամեն օր ետեսս կվազեր, օձիքս կբռներ* (լալով) *և ինձի գո՛ղ կպոռար,* (հեծկլտալով) *ա՜խ, ինձի գող կպոռար... իսկ մնացած երկուքուկես ֆրանկով ալ ահավասի՛կ...* (դեպի սեղանը շտապելով, ուր Ձվարթը ագահորեն ուտելով զբաղված է, առջևեն հացերը խլելով և բժշկին ցույց տալով) *կտոր մը հաց միայն կրցա բերել...* (վերջապես սեղանին վրա դնելով հացերը և դեպի բժիշկը առաջանալով) *ըսե՛ք, խնդրեմ, դո՛ւք ըսեք, ալ ի՞նչպես կրնամ ձեր գրած դեղերը շինել տալ...* (թույլ, կնգե, որ դեղագիրը վար իյնա) *և ձեր պատվերները գործադրել...* (Ձարդեն մորը և հիվանդին միջև դրված աթոռին մոտեցած է, որուն վրա կիյնա և ձեռքերովը երեսը գոցելով՝ կհեծկլտա, կհնկեկա: Նուբար մոտեցած է Տիգրանին և կչանա մխիթարել:)

ԴՈԿՏՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ.— (Տխուր, ծռելով և դեղագիրը գետնեն վերցնելով՝ Մարիին) *Այս դեղագիրը ես հոս մոտերը ծանոթ դեղարանե մը շինել կուտամ։ Թույլ կուտա՞ք, որ օրիորդը ինձի ընկերանա, որպեսզի իրեն հանձնեմ զանոնք։*

ՄԱՐԻ.— (Աչքերը սրբելով) *Սիրո՛վ, դոկտոր, և շատ շնորհակա՛լ ենք։* (Բժիշկը, տխուր, կմեկնի:)

ՁՎԱՐԹ.— (Որ շվարած ոտքի կանգնած է և ձեռքերովը զգեստին պատառատուն մասերը գոցել կնգնի՝ մորը դարձած, աղապատագին ձայնով) *Մա՜յր...*

ՄԱՐԻ.— (Խանդակաթ) *Հոգ չէ, զավակս, եղբորդ համար է...* (Ձվարթ, ընկճված, բժիշկին կհետևի):

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ՏԻԳՐԱՆ, ՆՈՒՐԱՐ, ՄԱՐԻ, ՁԱՐՈՒՀԻ ԵՎ ՀԱԿՈԲԻԿ

ՆՈՒՐԱՐ.— (Տիգրանը վերցնել ջանալով) *Ելի՛ր, Տիգրա՛ն, ելի՛ր, այդպես մի՛ լար, հուսահատությունը լավ բան չէ։* (Թևեն բռնած կվերցնե և բերելով սեղանին քով՝ աթոռին վրա կնստեցնե: Տիգրան սեղանին կոթնած թույլ կուլա, երբեմն-երբեմն ցավագնորեն գլուխը շարժելով: Նուբար հացերը և մոմը վերցնելով՝ ետեի պահարանին վրա կդնե և վերադառնալով՝ կնստի սեղանին մոտ մյուս աթոռին վրա՝ Տիգրանին ձախ կողմը: Մարի, տխուր, ճին շրջազգեստ մը առած և հիվանդին ոտքին կողմը նստած կկարկտե:)

ՆՈՒՐԱՐ.— (Պահիկ մը տրտում մնալե հետո) *Հանդարտե՛, Տիգրան, հանդարտե՛, միայն մենք չենք, որ կտառապինք։* (Տիգրան հետզհետե կհանդարտի: Նուբար շարունա-

կելով) շատ տեղերու մեջ ալ մեր տղաքը շատ վատ դրության մատնված են, անգործության պատճառով։

ՏԻԳՐԱՆ.— (Թեև հանդարտած, բայց հուզված ձայնով) Դո՛ւն ինչ ըրիր... Ալթունյաններուն դիմել մտադրած էիր՝ դիմեցի՞ր։

ՆՈՒԲԱՐ.— Անօգուտ եղավ։

ՏԻԳՐԱՆ.— Ինչո՞ւ համար։

ՆՈՒԲԱՐ.— Մարդու պետք չունին ըսին... և հետո, հայ գործատերեր կան, որոնք օտարներ կնախընտրեն աշխատցընել...

ՏԻԳՐԱՆ.— (Գլուխը շարժելով) Տարօրինակ բան... մինչ մեր աշխատած գործարանին մեջ, հայերը չարքաշ ժողովուրդ են, ավելի լավ կաշխատին կըսեին, կհիշե՞ս...

ՆՈՒԲԱՐ.— Այդ այդպես է, ընդհանրապես մերիններեն ավելի օտարները կրցած են հասկնալ և գնահատել հայուն արժանիքները։

ՏԻԳՐԱՆ.— Կհասկնամ... այդ ալ հոգեկան այլասերումի մեկ երևույթն է։

ՆՈՒԲԱՐ.— (Պահիկ մը լուռ և հետո) Արմենակն ալ վերջապես ամուսնացեր է Ժորժեթին հետ։

ՏԻԳՐԱՆ.— (Ցավագնորեն գլուխը շարժելե հետո՝ տաժանելիորեն) Մուշեղեն ի՞նչ լուր կա...

ՆՈՒԲԱՐ.— Մեզի հետ գործե հանվելեն ի վեր անոր վիճակն ալ ցավալի է... խեղճ տղան ոչինչ կրնա օգնել իր քրոջը, որ Բեյրութի մեջ գաղթականներուն քանդվելուն հետևանքով անպատսպար մնացեր է. խեղճ կինը իր թշվառությունը պարզող այնպիսի սրտապատառ նամակներ գրած է, որոնք Մուշեղ ինձի կարդալու ժամանակ տղու մը պես կուլար։

ՏԻԳՐԱՆ.— Հունաստանի մեջ ալ հայությունը դժվարին պայմաններու մեջ կգտնվի...

ՆՈՒԲԱՐ.— Նույնը նաև Ամերիկայի մեջ։

ՏԻԳՐԱՆ.— (Տխուր՝ գլուխը շարժելով) Ափսո՞ս... այս զմայլելի ժողովուրդը, որ իր տարագիր, արմատախիլ վիճակին մեջն անգամ հանճարներ կարտադրե, դարերու ընթացքին ճնշումներու և բռնություններու տակ տրորվելե

հետո, այսօր ալ աշխարհի չորս անկյունները ցրիվ-ցրիվ եղած, գործազրկության մեջ կհյուծվի, անոթի մեռնելու սարսափովը կապրի և հուսահատության մատնված, այլասերումի կեր կըլլա։

ՆՈՒԲԱՐ.— Այո՛, ցավալի է, ցավալի է գաղութահայության վիճակը։

ՏԻԳՐԱՆ.— (Դառնորեն) Երևակայե՛ անգամ մը, Նուբար, թե երբ հայրենիքի մեջ բոլոր ուժերը, բոլոր արժանիքները դասավորվելով, ստեղծագործ աշխատանքի կհատկացվին, ասդին գաղութներու մեջ նյութական, բարոյական և ֆիզիկական արժեքներու ի՞նչ ահավոր կորուստներ կարձանագրենք, ուժի և էներգիայի ինչ ահռելի մսխում մըն է, որ ամեն օր մեր մկաններեն և մեր ուղեղներեն կհոսի և անիմաստ կերպով կվատնվի, կփչանա, որոնք հայրենիքին ու ներգաղթին ի նպաստ գործածվելով ի՞նչ հրաշքներ կարելի էր իրականացնել։ Հապա սա զմայլելի երիտասարդությունը, որ կաճի, որուն մեջ ծլող, բողբոջող այնքան տաղանդներ կան, որոնք դասավորվելով, գնահատվելով ի՞նչ տիրական արվեստագետներ և ի՞նչ զմայլելի վարպետներ կրնային ըլլալ։ Մինչ այսօր, անծանոթ անկյուններու մեջ լքված, անտեսված և կամ կտոր մը հացի ստրուկը դարձած կխամրին, կփչանան։ Ցեխերու մեջ նետված մարգարիտնե՞ր... (Ցավագնորեն գլուխը շարժելե ետո՝ վճռական շեշտով) չէ՛, այս ժողովուրդը պիտի հյուծվի, պիտի փչանա օտար ափերու վրա, եթե օր առաջ իր հայրենիքին մեջ չամփոփվի, եթե ներգաղթը, փրկարար ներգա՛ղթը չգա մեզ դուրս քաշելու այս անդունդին եզրեն... (Ներս կմտնե Արշակ, երկու ձեռքերը տափատին գրպանները։ Մյուսներեն ավելի մաքուր հագնված է, գլուխը նոր քասքեթ, վիզը փայլուն շալ, շրջուն ի վրա սիգարեթը կմխա։)

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԵՎ ԱՐՇԱԿ

ԱՐՇԱԿ.—(Տիգրանի և Նուբարի մտահոգ կերպարանքը նշմարելով, ինքնագոհ և հեգնող քմծիծաղով մը) Գրավ կդնեմ, որ դարձյալ ներգաղթի մասին կխոսեիք։

ՏԻԳՐԱՆ.— (Սրտնեղ) *Ո՛չ...*

(Արշակ կերթա հիվանդին մոտ գտնվող աթոռը կառնե և սեղանին աջ կողմը դնելով կնստի: Հիմա Տիգրան և Արշակ սեղանին երկու ծայրերն են՝ դեմ դիմաց, իսկ Նուբար սեղանին ետև՝ երկուքին մեջտեղը: Այս միջոցին ներս կուգա Զվարթը, դեղերը բերած է և մորը կհանձնե: Մարի դգայ մը դեղ կխմցնե Հակոբիկին: Իսկ Զվարթ Զարուհիին մոտ կնստի և գլուխը անոր ծունկերուն վրա դնելով կպառկի: Մեծ մայրը իր կոնակի շալը անոր վրա կծածկե:)

ԱՐՇԱԿ.— (Հեգնական շարունակելով) *Ըսե՛ք, ըսե՛ք, մի՛ պահեք:*

ՏԻԳՐԱՆ.— (Կտրուկ) *Ինչո՞ւ այդքան կհետաքրքրվիս:*

ԱՐՇԱԿ.— (Մեքենական) *Զարմանալի բան, կուզեմ գիտնալ, թե ինչ մտադրած եք ընել, որպեսզի ըստ այնմ գուցե խորհուրդ մը տամ ձեզի:*

ՆՈՒԲԱՐ.— (Սրտնեղած) *Զգե՛ղ, եղբա՛յր, մենք քո խորհուրդներուդ պետք չունինք, և դուն չես կրնար հասկնալ մեր մտահոգությունները:*

ԱՐՇԱԿ.— *Ներգաղթին սկսելուն կսպասեք, որպեսզի մեկնիք, այնպես չէ՞:*

ՏԻԳՐԱՆ.— *Այնպես է:*

ՆՈՒԲԱՐ.— (Արշակին) *Ի՞նչ կա որ. ներգաղթի մասին նոր լո՞ւր մը իմացար:*

ԱՐՇԱԿ.— *Պարապ խոսքերով ժամավաճառ մի՛ ըլլաք, եղբայր, ո՛չ ներգաղթ կա սկսելիք, և ո՛չ ալ խոհեմություն է այդքան հեռուները երթալը:*

ՏԻԳՐԱՆ.— (Զսպված սրտնեղությամբ) *Եվ դուն խոհեմությո՞ւն կհամարես ինձի պես ձեռքը ոտքը բռնող մարդոց հոս անոթի, անգործ նստիլը, երբ այնտեղ հայրենիքս կըկերտվի: Քանի դեռ ուժս տեղն է, և բազուկներս կբռնեն, կերթամ և զանոնք հայրենիքիս շինարարությանը, բարգավաճումին և առաջադիմությանը կտրամադրեմ:*

ԱՐՇԱԿ.—(Ծաղրական) *Սքանչելի՜ է, շինարարությո՞ւն... բարգավաճո՞ւմ... առաջադիմությո՞ւն...*

ՏԻԳՐԱՆ.— (Խոսքը կտրելով) *Լռե՛, ստոր, դարերով տառապած ժողովրդի մը երկունքի հիասքանչ պտուղն է, որ*

կհեգնես: Վա՜յ մեզի, եթե ամեն հայ քեզի պես մտածեր. իզո՛ւր լացած պիտի ըլլային մայրերը, իզո՛ւր թափված պիտի ըլլային այնքան անմեղ արյուններ:

ԱՐՇԱԿ.— *Եթե ինձի համոզելու համար է, որ կխոսիս այդ քարոզը՝ պարապ աշխատանք է կատարածդ:*

ՏԻԳՐԱՆ.— *Ես քեզ համոզելու պետք չունիմ, արդեն դուն ոչ մեկ բանի կհավատաս:*

ՆՈՒԲԱՐ.— (Արշակին) *Դուն կարդացե՞ր ես Բաֆֆու «Խենթը»...*

ԱՐՇԱԿ.— *Այո՛:*

ՆՈՒԲԱՐ.— *Որով կարդացեր ես նաև անոր վերջավորության Վարդանին երազը, թե դպրոցները կծաղկին, թե աշխատանքի երգը կհնչե ամեն կողմ, թե կյանքը կեռա, կժըպտի...*

ԱՐՇԱԿ.— (Խոսքը կտրելով) *Անոնք երևակայությո՞ւն են, երա՞զ են, բարեկա՛մս:*

ՏԻԳՐԱՆ.— (Ամեհի) *Ահա այդ երազը կենդանի իրականություն է այսօր բետոնով և պողպատով շաղված:*

ԱՐՇԱԿ.— (Միծաղելով) *Ես ալ կարծեցի, որ Վարուժանի բանաստեղծություններեն կտոր մը պիտի արտասանես:*

ՏԻԳՐԱՆ.— (Ցավագնորեն գլուխը շարժելով) *Իրավունք ունիս ծաղրելու... Քու հոգուդ անծանոթ զգացումներ են սոսնք... Ա՜խ, եթե հետաքրքվեիր, եթե հասկնայիր աշխարհի ամեն կողմը ցրված հայության ողբալի կացությունը, եթե գիտնայի՜ր, թե գաղութներու մեջ հայությունը թըշվառության և այլասերումի ճիրաններուն մեջ ինչպիսի՜ դանդաղ, այլ հաստատ կազմալուծումի մեջ կմխրճվի, վըստահ եմ, որ այսքան անմտորեն չպիտի վերաբերվեիր ներգաղթի հարցին հանդեպ:*

ԱՐՇԱԿ.— *Ի՞նչ կա, ի՞նչ է պատահեր:*

ՏԻԳՐԱՆ.— (Բորբոքած) *Այսո՛ր, սիրելի բարեկամս, Բեյրութի և Հալեպի շրջականները Տեր-Զորի սպանդեն ճողոպրած հազարավոր հայեր կան, որոնք այնպիսի ահավոր թշվառության մեջ կապրին տակավին, որոնք տեսնողը նախամարդը պիտի հիշեր: Հո՛ն, թիթեղյա տնակներու և քուրջերով ագուցված վրաններու տակ ձմռան ցուրտը այնպիսի՜*

ուժգնությամբ ներս կխուժե, որ մայրեր, իրենց փոքրիկները պատսպարելու համար հարկ եղած հագուստեղենն ու անկողինը չունենալուն ճարահատ, հողին մեջ փոս մը կփորեն և իրենց փոքրիկները հոն կպառկեցնեն ցուրտին դեմ պատսպարելու համար, այնպես որ կյանքը փոխանակ օրորոցով սկսելու, գերեզմանով կսկսին... Այսօր ամեն կողմ, գաղթականներու մեջ, հայության կյանքը խեղճության ահռելի տեսարան մը կպարզե, ուր թշվառությունը ավերներ կգործե թե՛ ֆիզիկական և թե՛ բարոյական կրկնակ մարզերու մեջ... (Արշակին մեկ շարժումին վրա) այո՛... և բարոյական մարզի մեջ, քանի աղքատը հաց չունի, քանի հարուստը կիրք ունի... Աթենքի մեջ, Ֆիքսի և Լիբազմայի գաղթականներուն մեջ տիրող համատարած թշվառության և կյանքի տարրական պայմաններու չգոյության պատճառով, ծաղիկ սերունդին հարյուրին 15-ը թոքախտով վարակված է։ Հո՛ս, Ֆրանսայի մեջ, նաև Ամերիկա, օտարներու և օտարուհիներու հետ կնքված անհամապատասխան ամուսնությունների թիվը հետզհետե կաճի։ Դեռ երեկ, երբ գործ փնտրելու համար Ալֆորվիլի կողմերը գացած էի, սարսափով դիտեցի, որ փողոցներու մեջ հայ պատանիներ իրարու հայերեն անուններ կուտային, զիրար Գրիգոր, Մարտիրոս կկոչեին, բայց ֆրանսերեն կխոսեին, ֆրանսերեն կհայհոյեին... հայեր, կենդանի մարտիրոսներ, որոնք բառ մը հայերեն չէին գիտեր... Տակավին ուրիշ տեղեր, թշվառության մատնված դեռատի մայրեր իրենց ընտանիքը ապրեցնելու համար ստնտու կըլլան, իրենց նորածնին սեփական կաթը օտար մանուկներու տալ կհոժարին, որպեսզի պատառ մը հաց գտնեն... (Պոռթկալով) այս ա՛չք պատռող, սի՛րտ պատռող իրողությանց առջև ալ ինչպե՛ս չկառչիլ հիմնական դարմանին և ներգաղթ չպռռալ, ալ ինչպե՛ս չփնտրել փրկության լաստը և հայրենիք շաղաղակել...

ԱՐՇԱԿ.— (Որ հետզհետե խնդալու փափագ մը կզգար, բայց ինքզինքը կզսպեր՝ հանկարծ ջղային խնդուք մը փրցնելով) Աստվա՛ծ վկա, Տիգրան, այս վիճակիդ մեջ ճի՛շտ անոթի փիլիսոփաներու կնմանիս։

ՏԻԳՐԱՆ.— (Դառնորեն գլուխը շարժելով) Գիտե՛մ...

դուն այս ժողովրդին տառապանքը կհեգնես... Քեզ ի՞նչ փույթ, երբ ուրիշներ անոթի կտառապին, բավական է, որ ամեն միջոց ներելի է քեզի, ստամոքսդ պարարտացնելու համար։

ԱՐՇԱԿ.— (Բարկանայր ոտի կանգնելով) Եթե այդքան դյուրին բան է, դո՛ւն ալ ըրե։

ՏԻԳՐԱՆ.— (Ընդվզելով) Ես ստորին միջոցներու ընդունակությունը չունիմ։

ԱՐՇԱԿ.— Քանի որ այդպես է, լռե՛ և տեղդ նստիր։

ՏԻԳՐԱՆ.— (Վեռական) Ո՛չ, ես հայրենիքս պիտի երթամ։

ԱՐՇԱԿ.— (Նախատական) Որովհետև հիմարին մեծն ես։

ՆՈՒԲԱՐ.— (Որ այս վիճաբանության դժգոհությամբ կնետուեր, հանկարծ «հիմար» բառին վրա զայրանալով) է՞... Արշա՛կ, անտանե՛լի ես... (Բարկացած կմեկնի։ Մարի վիճաբանության տաքանալուն վրա ձեռքի կարը ձգած՝ անձկագին ոտի կանգնած է։)

ՏԻԳՐԱՆ.— (Բռունցքը սեղանին զարնելով) Պիտի երթամ...

ԱՐՇԱԿ.— (Բորբոքած՝ սպառնական) Բայց երբ օր մը իրարու հանդիպինք, նայե՛ որ չզղջաս։

ՏԻԳՐԱՆ.— (Անդրդվելի) Պիտի երթամ...

ԱՐՇԱԿ.— (Կատաղի՝ դեպի դուռը դիմելով) Իսկ ես տեղես չեմ շարժիր։ (Դուրս կելլե։)

ՏԻԳՐԱՆ.— (Ձայրագին) Կորսվե՛։ Արդեն հայրենիքը քեզիպեսներուն պետք չունի։ (Նստած՝ մռայլ կենա։)

ՏԵՍԻԼ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԱՌԱՆՑ ՆՈՒԲԱՐԻ ԵՎ ԱՐՇԱԿԻ

ՄԱՐԻ.— (Արշակին մեկնումին վրա սեղանին մոտենալով և մեղմիվ ձեռքը Տիգրանին ուսին վրա դնելով՝ գորովագին) Սիրե՛լիս...

ՏԻԳՐԱՆ.— (Վրդովագին) Կտեսնե՞ս, Մարի՛, հայ մը, որ իր հայրենիքին դեմ խոսելե հաճույք կզգա։

ՄԱՐԻ.— (Շատ խաղցր) *Հանդարտե՛, Տիգրա՛ն, սիրելի՛ս, այդպես մի՛ վրդովիր։*

ՏԻԳՐԱՆ.— (Աղաչատագին) *Ա՜խ, Մարի՛, տարագրության սարսափները ու գործազրկության պատճառով կրած հոգեկան տանջանքներս այնքան չեն ընկճած, այնքան չեն տառապեցուցած զիս, որքան հայրենիքիս դեմ նետված այս նախատինքները, որոնք սիրտս կծակեն, էությունս կհարվածեն։*

ՄԱՐԻ.— (Սրտագին) *Կարևություն մի՛ տար, սիրելի՛ս, անոնց ըսածներուն և բարկությամբ մի՛ խոսիր անոնց հետ, այլ ջանա միշտ քաղցրությամբ խոսիլ, վարվիլ, խորհե՛, որ դարերու ստրկության տակ ճնշված ժողովրդի մը զավակներն են անոնք և հոգեպես ճնշված՝ ազատագրության կկարոտին։*

ՏԻԳՐԱՆ.— *Ա՜խ, Մարի՛, չես գիտեր որքա՜ն տառապած եմ հայրենիքի սերը արծարծելու համար անոնց ներսդին, բայց, ավա՜ղ, երբ հայրենիքի մասին կխոսիմ, զիս կըծաղրեն, երբ ներգաղթի մասին կխոսիմ, նախատինքի և ծիծաղի առարկա կդարձնեն զիս, անբաննե՛ր...*

ՄԱՐԻ.— *Դժբախտնե՜ր, Տիգրան, մանավանդ որ հանցանքը իրենցը չէ, անոնք խորապես հայրենասերներ են, բայց մոլորեցնող ղեկավարներու անգիտակից զոհեր են դարձած, որով՝ կարեկցության ալ արժանի...*

ՏԻԳՐԱՆ.— (Տրտմագին) *Իրավո՛ւնք ունիս, Մարի։*

ՄԱՐԻ.— *Եվ հակառակ իրենց արտահայտություններուն, անոնք իրենց տառապած մարմնույն մեջ ազնիվ հոգի մը կկրեն, և ես վստահ եմ, որ զղջումի զգացումը չի՛ պիտի ուշանա խլրտիլ անոնց ներսիդին։*

ՏԻԳՐԱՆ.— (Հուզված) *Ա՜խ, Մարի՛, որքա՜ն վեհանձն ես։*

(Հանկարծ դուրսեն կլսվի կանացի հուզիչ երգ մը, հրստակ և տպավորիչ։)

Իմ Հայրենիք զիս կկանչե,
Հեռու եմ Հայաստանեն.
Հայու որդուն չի վայելեր,
Հեռանալ Հայաստանեն, հեռանալ Հայաստանեն։

ՏԻԳՐԱՆ.— (Երգը սկսելուն՝ վերացած, կես մը կանգնելով և կտրուկ ձայնով՝ Մարիին) *Ո՞վ է այսպես երգողը...*

ՄԱՐԻ.— (Նուրարին աթոռին վրա նստելով) *Վերի դրացուհին, տիկին Սաթենիկը։* (Մտիկ կրնե։)

ՏԻԳՐԱՆ.— (Կես մը կանգնած վիճակի մեջ անշարժ մրտիկ ընելով՝ հետզհետե կհուզվի, ու երբ երգը կդադրի՝ հեծկըլտագին ձայնով) *Իմ... Հայրենիք... զիս... կկանչե... հեռու եմ... Հայաստանեն...* (Ու հանկարծ ետին դառնալով և մեծ ժեստով մը) *ա՜խ, իմ սիրակա՛ն եղբայրներս... դո՛ւք, որ մեզմե ավելի բախտավորներ եք, որովհետև, երբ ձեր աչքերը բանաք, Արարատի ձյունափայլ գագաթը կդիտեք, հայրենի զուլալ ջուրերը կխմեք և անոր վարդաբույր օդը կծծեք. դո՛ւք, որ բոլոր արգելքները, բոլոր դժվարությունները խորտակելով, փլատակներեն և քարուքանդ տարածություններեն ծաղկյալ հայրենիք մը կհարուցանեք... դո՛ւք, որ դարերե ի վեր Արթիկի մեջ քնացող տուֆեն աշխատանքի և մտքի պալատներ կկանգնեք և դարերե ի վեր Ալավերդիի մեջ քնացող պղինձեն էլեկտրական ցանցեր կհյուսեք և հայրենիքը լույսերու մեջ կողողեք... դուք, որ ձեր ոտքերուն տակ մարմարները կսպիտականան ձեր փառքը քանդակելու համար, և ձեր քալվածքներուն ներքև պղինձները կկարմրին ձեր հանճարին հաղթանակները շեփորելու համար... գիտցե՛ք, գիտցե՛ք, որ ձեր մոտ պիտի գամ ո՜վ իմ սիրական եղբայրներս, ձեր քրտինքով ողողված արևակեզ վզին պլլվելու և ձեր աշխատանքից կոշտացած ձեռքերը համբուրելու համար... այո՛, պիտի գամ, իմ քրտինքս ձերինին խառնելու, միաններուս ուժը ձերինին միացնելու և ձեզի հետ միասին կողքկողքի հայրենի վերաշինության մեծ խրախճանքին մասնակցելու համար...* (Կամաց-կամաց առչև դառնալով՝ խորտակված ու հեծկլտագին ձայնով) *բայց ո՞ւր է ներգաղթը... ա՜խ... ինչո՞ւ այսքան կուշանա...* (Հետզհետե իր տեղը նըստելով) *և եթե դեռ երկար պիտի ուշանա՜, ի՞նչ պիտի ըլլա մեր վիճակը։* (Սեղանին վրա պառկած կուլա։)

ՄԱՐԻ.— (Տիգրանին վրա հակելով՝ գորովագին) *Ելի՛ր, Տիգրա՛ն, սիրելի՛ս, հանդարտե՛, մի՛ հուզվիր, մի՛ լար այդպես...* (Տիգրան կհեկեկա) *գթա՛ ծերունի մորդ վրա, գթա՛*

մեր վրա, որ քեզի հետ կտառապինք... (Կերթա եռևի դառանին վրայեն հացը և կոտրած փարշով ջուրը կբերե և սեղանին վրա դնելով) *ա՛ռ, կտոր մը հաց կեր, անոթի ես, դեռ բան մը չես կերած, հուսահատությունը լավ բան չէ, այսքան համբերեցինք, քիչ մը ևս պիտի տոկանք, հարկավ ներգաղթը պիտի սկսի։*

ՏԻԳՐԱՆ.— (Գլուխը դանդաղ վերցնելով՝ կառնե հացը և կտոր մը փրցնելով ու մորը երկարելով) *Ա՛ռ, մայրի՛կ, կտոր մըն ալ դուն կեր, դուն ալ անոթի ես...* (հացը մորը տալե ետք, ցավագնորեն) *գիտեմ, մա՛յր, գիտեմ... մանկությանս օրերեն սկսյալ այնքա՜ն լավ բաներով մեծցուցիր զիս... ամեն բանի լավը կկերցնեիր, ամեն բանի լավը կհագցնեիր... և հիմա, ներե՛, մայր, ներե՛, որ կտոր մը հաց միայն ունիմ քեզի տալիք և կտոր մը խշտյակս մնաց քեզի իբր անկողին...* (Տխուր կսկսի ուտել։)

ՋԱՐՈՒՀԻ.— (Հուսահատորեն) *Հո՛գ չէ, դավակս, դուք զիս մի մտածեք...* (Հանկարծ դուրսեն կլսվի Նուբարին ձայնը։ Նախ հեռուեն և հետզհետե մոտեն) *Տիգրա՜ն... ներգաղթը... Տիգրա՜ն... ներգաղթը, ներգաղթը...* (Տիգրան այլայլված մտիկ կընե։ Նույնը նաև Մարի։ Ներս կվազե Նուբար։)

ՏԵՍԻԼ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ ԵՎ ՆՈՒԲԱՐ

ՆՈՒԲԱՐ.— (Պոռալով, հևիհև) *Տիգրա՛ն, ներգաղթը, ներգաղթը։*

ՏԻԳՐԱՆ.— (Շփոթած) *Ի՞նչ է, Նուբար, ի՞նչ եղեր է ներգաղթը...*

ՆՈՒԲԱՐ.— (Խանդավառությամբ) *Ներգաղթը սկսավ, ներգաղթը սկսավ, շո՛ւտ, պիտի երթանք։*

ՏԻԳՐԱՆ.—(Ոգևորված) *Հե՞... ներգաղթը սկսա՞վ... ե՞րբ, ի՞նչպես...*

ՆՈՒԲԱՐ.— *Այո՛, այո՛... ներգաղթը սկսավ... շո՛ւտ բրեք, պիտի երթա՛նք...*

ՄԱՐԻ.— *Ի՞նչ երջանկություն...*

ՏԻԳՐԱՆ.— (Նուբարին թևերեն բռնած ցնցելով) *Սխալ չըլլա, լավ գիտե՞ս, ուրկե՞ իմացար։*

ՆՈՒԲԱՐ.— (Հևալով) *Հիմա ՀՕԿ-ի դռան առջև գեկուցը գրած են։ Գրիգորը, Արտաշեսը, Մուշեղը, բոլորն ալ կերթան կոր... Շո՛ւտ բրեք, շո՛ւտ բրեք...*

ՏԻԳՐԱՆ.— (Հրճվանքով Նուբարին փաթաթվելով և երեսները համբուրելով) *Ա՜խ, ներգաղթը սկսավ, Հայրենիք կերթանք...*

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԵՐԵՔՈՒԴ ԱՐԱՐՎԱԾ

Տեսարանը կներկայացնե խորհրդային հայրենիքի մեջ Տիգրանի բնակարանին մեկ սենյակը: Դիմացը լայն պատուհան, որտեղից Արարատի լայնանիստ և պայծառ տեսարանը կերևի: Սենյակին աջ ու ձախ կողմերեն երկու դուռ: Աջ դուռը փողոցի մուտքն է, իսկ ձախ դուռը ուրիշ սենյակ մը կառաջնորդե: Դեպի ձախ անկյունը շեղակի դրված սեղանին վրա փոքր ռադիո մը, որուն քով դեպի պատուհանը գրադարան մը՝ զանազան գիրքերով: Գրադարանին վերև կախված է հայելի մը, իսկ հայելիին վերև մեծ Լենինի նկարը՝ շքեղ շրջանակի մեջ: Պատուհանեն ետք, դեպի աջ՝ պահարան մը, վրան ջուրի շիշ, գավաթ, շիշ մը գինի, պտղաման՝ խնձորով լեցուն, անուշեղենի պահածո տուփ և նուրբ տերևներով թաղար մը: Պահարանին վերև Դեղամին նկարը՝ նոր շրջանակով ազուցված: Սենյակին մեջտեղը քառանկյուն սեղան մը՝ գեղեցիկ ծածկոցով, վրան ծաղկաման՝ ծաղիկներով լեցուն: Սենյակին մեջ կա երկու թիկնաթոռ և վեց աթոռ՝ գեղեցիկ և նաշակավոր: Թիկնաթոռները՝ ռադիոյի երկու կողմերը, երեք աթոռները՝ սեղանին շուրջը, իսկ մնացյալ երեքը՝ պատուհանին և պահարանին մոտերը, պատին տակ:

Վարագույրը բացվելուն՝ ցերեկ է: Ձախ դռան և ռադիոյին միջև գտնվող թիկնաթոռին վրա նստած է Զարուհին, կոկիկ հագնված և սանրված, գունավոր բրդե թելով հագուստ կհյուսե Զվարթին: Իսկ Մարի բացգույն ծաղկավոր

շրջազգեստ հագած է և մեջտեղի սեղանին վրա ծաղիկները կարգի դնելով հանդերձ՝ մորը հետ հանելի խոսակցության մեջ է:

ՏԵՍԻԼ ԱՒԱՋԻՆ

ԶԱՐՈՒՀԻ ԵՎ ՄԱՐԻ

ՄԱՐԻ.— (Ժպտագին) *Ա՜խ, մա՛յր, անկարելի է այդ ամեն գեղեցկությունները պատմելով հասկցնել։ Պետք է տեսնել, պետք է տեսնել, մա՛յր։*

ԶԱՐՈՒՀԻ.— *Քիչ մը պատմե, աղջիկս, որ մտիկ ընեմ։*

ՄԱՐԻ.— *Ա՜խ, մայր, Սիսիանի վերև, այդ ժայռերուն մեջեն անցնող գալարուն ճամփաները, վայրի խոտերու և տատասկներու փունջերով զարդարված... Վարը, մա՛յր, քառասուն մետր խորությամբ կմռնչե Որոտան գետը... Տեսնես ի՞նչ զմայլելի տեսարան մըն է այդ բարձունքեն ծռիլ և գետը դիտելը... անոր հստակ ջուրերը, անոր արձակած ճերմակ փրփուրները, որ եզերքը քերելով կսահին։ Ավելի անդին, մա՛յր, կտարածվի նոր շինված ճամփան՝ հանգստավետ և ուղիղ, որ հետզհետե լեռան շրջանը ընելով վար կիջնե։ Հոն, Աղքենդի հովիվները մեզի պատմեցին, թե ի՞նչ հերոսական աշխատանք տարած են հոն բնակվող գյուղացիները՝ այդ ճամփան շինելու համար, բայց այսօր անոր բարիքները կվայելեն։ Ճամփուն վերջավորության կսկսին զմրուխտագեղ դաշտերը, կանաչ թավշի տպավորություն ձգելով մարդուս վրա, ավելի անդին՝ խիտ և բարձր խոտերով մարգագետիններ, որոնց մեջ կովերը կարածին. ի՞նչ հիանալի սնունդ նրանց համար, այդ հյութեղ և յուղոտ խոտերը ծամելնուն է, որ այսքան հիանալի կաթ կարտադրեն։ Հետզհետե մոտենալով, մա՛յր, հասանք թթենիի պարտեզները, ուր անուշիկ կիներ շերամներու սնունդին խնամք կտանեին։ Տիգրանը կատակի համար շերամ մը դրավ վզիս վրա։ (Խնդալով) աստված իմ, այնպես մը վախցա... Բայց այդ կիները վարժված են, մայր, չեն վախնար։*

ԶԱՐՈՒՀԻ.— (Մայրական) Անշո՛ւշտ, աղջի՛կս, շերամն ալ վախնալիք բա՞ն է։

ՄԱՐԻ.— (Շարունակելով) Բավական քալեցինք, մա՛յր, այդ թթենիներու զով շուքին մեջեն, ուր ամբողջ տարածությունը գույնզգույն վայրի ծաղիկներով ծածկված՝ զվարթի գորգի մը տպավորություն կթողուր մեր վրա։ Այնքա՞ն գեղեցիկ ծաղիկներ էին, մա՛յր, որ անոնց վրա չկոխելու համար զգուշությամբ կքալեինք, ու անոնք կարծես հասկնալով մեր զգուշավորությունը՝ կծռեին և մեր ոտքերը կհամբուրեին։ Ավելի անդին ընկույզի անթիվ հսկայական ծառեր կան՝ հաստարեստ բուներով և անտեսանելի կատարներով, իսկ հեռուն՝ հորիզոնին վրա հայկական լեռներու շղթան կարծես հավերժահարսերու նման ձեռք-ձեռքի բռնած կպարեն...

ԶԱՐՈՒՀԻ.— Այգիներու կողմը չգացի՞ք, աղջիկս։

ՄԱՐԻ.— Այո, գացինք, մա՛յր. հիանալի այգիներ կան անհատնում տարածության վրա, որոնք սարերու լանջերը կզարդարեն իրենց թրթռուն տերևներովը, ա՛լ հեռահետ քանի կայարանին մոտենանք, կսկսին դեղձի և ծիրանի ընդարձակ պարտեզները, որոնք անտառի մը տպավորությունը կձգեն վրադ։ Տեսնես, մա՛յր, սա գարնան եղանակին ճերմակ և վարդագույն ծաղիկներով բեռնավորված ծառերուն գեղեցկությունը... (Վերացած) ա՜խ, ի՜նչ դյութական տեսարան, մա՛յր... Պարտիզպանները երբ իմացան, որ նորեկ հայրենադարձներ ենք՝ շատ ուրախացան և խնդրեցին, որ ամառը՝ պտուղներու ժամանակ, դարձյալ երթանք և վայելենք։ Հոն նստանք և նախաճաշ ըրինք, արդեն ամեն կողմե զուլալ առվակներ կգլգլան, անոնց ջուրերեն ալ խմեցինք։ Քիչ մը ավելի ցածը, պարտեզները վարդերով ողողված են, և մեղուներու ժխորը լեցուցած է մթնոլորտը։ Ա՛լ ի՜նչ կակաչներ, մա՛յր, որոնք կարծես ներկայությունեդ կշիկնեն։ Հապա շուշաններուն գեղեցկությո՞ւնը, որոնք իրենց անմեղությունը կհրամցնեն դիտողին։ Ես և Տիգրանը բավական մը քաղեցինք անոնցմե և միասին առինք, բայց ճանապարհին դպրոցական տղաներուն բաժնեցինք։ Ի՜նչ անուշիկ փոքրիկներ էին, մա՛յր, տեսնես, կխաղային, կվազվզեին, թուփերուն մեջ, ծառերուն վրա հազարավոր թռչուններուն ճռվողյունը կխառնվեր վարը խաղացող մանկանց ձայներուն հետ, իսկ անդին՝ դարբիններուն սալը կհնչեր, աշխատանքի կշռույթը բնության ներդաշնակության մեջ, ու մենք, հիացումով համակված, կայարան հասանք և շոգեկառքը առնելով վերադարձանք։

ԶԱՐՈՒՀԻ.— (Գորովագին) Շատ ուրախ եմ, աղջիկս, հիանալի պտույտ մը ըրեր եք։

ՄԱՐԻ.— Այո, մայր, ուրիշ օր դարձյալ պիտի երթանք. դուն ալ միասին։ Եթե Նուբարը և Սիրանույշն ալ գան՝ ավելի հաճելի կըլլա ընկերովի, այնպես չէ՞։

ԶԱՐՈՒՀԻ.— Անշո՛ւշտ, աղջի՛կս, եթե զբաղում չունենան՝ անոնք ալ մեզի կընկերանան։

ՄԱՐԻ.— Այո՛, մա՛յր։

ԶԱՐՈՒՀԻ.— Գիտե՞ս, Մարի, աղջիկս, երբ մտաբերեմ, այնքա՞ն կուրախանամ Նուբարին և Սիրանույշին ամուսնության վրա։ Երկուքն ալ բարի և ազնիվ են, որքա՞ն ալ իրարու հարմար...

ՄԱՐԻ.— Այո՛, մա՛յր, շա՞տ երջանիկ են իրարմով. արդեն Նուբարը խոստացավ մեզի, օր մը միասին Զվարթնոց պիտի երթանք ավերակները դիտելու։ Կպատմեն, թե, մա՛յր այդ խոշոր սյուները քնացող հսկաներու պես պառկած կըհանգչին եղեր, որոնք պեղումներու ընթացքին՝ մուրճի հարվածներուն տակ կարթննան այժմ և ի լույս աշխարհ կելլեն։ Շատ հետաքրքրական հնություններ կան եղեր հոն, և Թորոս Թորոմանյան տարիներով թանկագին ուսումնասիրություններ կատարեր է այնտեղ։ Մայր, ի՜նչ թանկագին անձնավորություն մըն է եղեր Թորոմանյան։

ԶԱՐՈՒՀԻ.— Այո, աղջիկս, հայ ազգը միշտ ալ իր ծոցեն տաղանդավոր զավակներու ծնունդ տված է։

ՄԱՐԻ.— (Կատակելով) Եվ քեզի պես անուշիկ մայրիկներն են, որ ծնունդ տված են անոնց, մա՛յր...

(Դռան էլեկտրական զանգը կհնչե։ Մարի գիրքը ձգելով՝ կերթա դուռը բանալ։ Ներս կմտնե երիտասարդ բժիշկ մը՝ ֆովը օգնականով, որուն ձեռքը կա դեղերու պայուսակ մը՝ վրան կարմիր խաչով։)

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ, ԲԺԻՇԿԸ ԵՎ ԻՐ ՕԳՆԱԿԱՆԸ

ԲԺԻՇԿԸ.— (Ներս մտնելով) *Բարև՛, ընկերուհի։*

ՄԱՐԻ.— (Ժպտագին) *Բարև՛, ընկեր, ի՞նչ կկամենայիք։*

ԲԺԻՇԿԸ.— *Առողջապահական սպասարկության կողմից ենք գալիս և ցանկանում ենք իմանալ, թե ինչպե՞ս է ձեր ընտանիքի անդամների առողջությունը,*

ՄԱՐԻ.— (Սրտագին) *Ա՜... շատ շնորհակալ եմ, բոլորս ալ լավ և առողջ ենք։*

ԲԺԻՇԿԸ.— (Գրպանեն տետրակ մը հանելով և վրան արձանագրելով) *Քանի՞ անձից է բաղկացած ձեր ընտանիքը։*

ՄԱՐԻ.— *Վեց, ընկեր։*

ԲԺԻՇԿԸ.— *Խնդրում եմ, տվեք անունները։*

ՄԱՐԻ.— *Տիգրան։*

ԲԺԻՇԿԸ.— (Գրելով) *Ազգանո՞ւնը։*

ՄԱՐԻ.— *Սարաֆյան։*

ԲԺԻՇԿԸ.— (Գրելով) *Քանի՞ տարեկան։*

ՄԱՐԻ.— *Քառասուներկու։*

ԲԺԻՇԿԸ.— (Գրելով) *Հետո՞։*

ՄԱՐԻ.— *Մարի։*

ԲԺԻՇԿԸ.— (Գրելով) *Քանի՞ տարեկան։*

ՄԱՐԻ.— *Երեսունհինգ։*

ԲԺԻՇԿԸ.— (Գրելով) *Հետո՞։*

ՄԱՐԻ.— *Մայրս՝ Զարուհի, վաթսուն տարեկան։*

ԲԺԻՇԿԸ.— (Գրելով) *Այո, հետո՞։*

ՄԱՐԻ.— *Աղջիկս՝ Զվարթ, տասնչորս տարեկան։*

ԲԺԻՇԿԸ.— (Գրելով) *Այո, հետո՞։*

ՄԱՐԻ.— *Մանչս՝ Հակոբ, տասներկու տարեկան և նորածինը՝ Գեղամը, երեք ամսական։*

ԲԺԻՇԿԸ.— (Վերջացնելով) *Շատ լավ։ Ուրեմն երեխաները բոլորն էլ առո՞ղջ են։*

ՄԱՐԻ.— *Այո՛, ընկեր, շատ առողջ են։*

ԲԺԻՇԿԸ.— *Ծաղիկի, կեղծմաշկի և տիֆի դեմ պատվաստվա՞ծ են։*

ՄԱՐԻ.— *Այո՛, ընկեր։*

ԶԱՐՈՒՀԻ.— (Որ ձեռքի գործը հյուսելով հանդերձ մերթ ընդ մերթ կհետևեր խոսակցությանը՝ հանկարծ գլուխը վեր առնելով) *Բոլորս ալ առողջ ենք, պարոն, մեր երկրին օդը, ջուրը մեծապես նպաստեց մեզի։ Մինչև հիմա ոչ մեկ անհանգստություն ունեցանք։*

ԲԺԻՇԿԸ.— (Խնդալով) *Շատ ուրախ եմ, մայրիկ։* (Զարուհիին և Մարիին) *մնաք բարով ուրեմն։* (Դեպի դուռը կառաջանա։)

ՕԳՆԱԿԱՆԸ.— *Մնաք բարով* (բժշկին կհետևի)։

ԶԱՐՈՒՀԻ.— *Երթաք բարով, զավակներս։*

ՄԱՐԻ.— (Մինչև դուռը առաջնորդելով) *Երթաք բարյա՜վ...* (Անոնց մեկնելեն հետո մորը դառնալով) *Ի՛սկապես, մայր, հոս գալերնես ի վեր ո՛չ մեկ անհանգստություն ունեցանք։*

ԶԱՐՈՒՀԻ.— *Անշուշտ, աղջիկս, ես ալ ինքզինքս առաջնեյե շատ առողջ կզգամ։* (Պահիկ մը հետո) *Մարի, աղջիկս, ռադիոն բաց, տեսնենք ի՞նչ կա այսօր։*

ՄԱՐԻ.— (Ռադիոն կլարե, և անա Կոմիտաս վարդապետի շենշող երգերեն «Հորովելը» կսկսի հնչել).— *Օ՜... ի՜նչ լավ... Կոմիտաս վարդապետի երգերեն...* (Ռադիոյին մոտիկ նստելով և ժպտագին մտիկ ընելով) *և ի՜նչ հիանալի երգիչներ ունինք... ի՜նչպես ալ տպավորիչ կերգեն։*

ԶԱՐՈՒՀԻ.— (Ձեռքի գործը դադարեցուցած և հիացմամբ մտիկ ընելով) *Այո՛, Մարի՛, ես այս երիտասարդին ձայնը շատ սիրած եմ։*

ՄԱՐԻ.— *Քնքուշ է, մա՛յր։*

ԶԱՐՈՒՀԻ.— *Այո՛...* (Հազիվ թե երգը վերջացած՝ դռան զանգը կհնչե)։

ՄԱՐԻ.— *Դո՞ւռն էր, մայրիկ։* (Դեպի դուռը շտապելով կբանա։ Ներս կմտնե բնակարանային վարչության ներկայացուցիչը, բարձրահասակ, վերարկուով անձնավորություն մը։)

ԶԱՐՈՒՀԻ, ՄԱՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ.— (Ներս մտնելով) Բարև՛, ընկերուհի՛։

ՄԱՐԻ.— (Չի ճանչնալով) Բարև ընկեր...

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ.— (Մտերմիկ) Ես, ընկերուհի՛, բնակարանային վարչության ներկայացուցիչն եմ, եկել եմ տեղևկանալու, թե ինչպե՞ս են ձեր կյանքի պայմանները։

ՄԱՐԻ.— Ո՜հ, այո, ընկեր, շնորհակալ եմ, շատ հանգիստ ենք։

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ.— (Առաջանալով և Զարուհին նշմարելով) Բարև՛, մայրիկ, ինչպե՞ս եք, հանգի՞ստ եք։

ԶԱՐՈՒՀԻ.— Շնորհակալ եմ, զավա՛կս, շատ հանգիստ եմ։

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ.— (Մարիին) Ինչպե՞ս եք, ընկերուհի, գո՞հ եք ձեր բնակարանից։

ՄԱՐԻ.— Այո՛, ընկեր, շատ գոհ ենք։

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ.— Քանի՞ անձից է բաղկացած ձեր ընտանիքը։

ՄԱՐԻ.— Վեց։

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ.— Եվ քանի՞ սենյակ ունեք։

ՄԱՐԻ.— Երկու սենյակ և խոհանոց մը։

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ.— (Մտահոգ) Թվում է, մի քիչ խճողված եք, ընկերուհի։

ՄԱՐԻ.— Հոգ չէ, ընկեր, գիտենք, որ բնակարանի դժվարություն կա տակավին։

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ.— Այո, ընկերուհի, բայց անմիջապես, որ նոր բնակարաններ ավարտվեն՝ չորս սենյականոց մի բնակարան կփոխադրվեք։

ՄԱՐԻ.— Բայց մենք չենք նեղվիր, ընկե՛ր, շատ հանգիստ ենք։

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ.— Շատ ազնիվ եք, ընկերուհի, որ այդպես եք մտածում, բայց պետք չէ մոռանաք, որ ձեր ընտանիքի պես բազմանդամ մի ընտանիքի համար, լինի՛ առողջական, լինի՛ հարմարությունների տեսակետից՝ դժվար է խճողված ապրելը։

ՄԱՐԻ.— Ո՛չ, ընկեր, ամենևին, մեր խճողված ըլլալը բնավ կարևորություն չունի մեզ համար։ Մենք սիրով կհանդուրժենք այդ խճողումը, որպեսզի նոր շինված ընդարձակ բնակարաններուն մեջ կարողանաք ավելի մեծ թիվով հայրենադարձներ տեղավորել, կարելի եղածին չափ շատ ընտանիքներ բերելով արտասահմանեն, որովհետև անոնք անգործ են և թշվառության մեջ կտվայտին։ (Պլուխը երերցնելով) ա՜խ, ընկե՛ր, ահռելի՝ է անոնց վիճակը, գթացեք անոնց։ (Լալով) մենք այդ խեղճությունը ապրեցանք և գիտենք, մենք տառապանքի և դառնության բաժակը ցմրուր քամեցինք և կհասկնանք անոնց սարսափելի կացությունը։

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ.— Հանդարտեցե՛ք, ընկերուհի, մենք գիտենք այդ բոլորը։

ՄԱՐԻ.— Այո՛, ընկեր, բայց դուք ձեզի դիմողներուն կացությունը միայն կրնաք գիտնալ։ Հապա անոնք, որ լուռ կտառապին և հուսահատության անդունդը հասած են, որոնք չեն խոսիր, բայց կուլան, չեն պոռար, բայց կգալարվին և իրենց հայրենիքին կարոտովը կտոչորին և անկյունները կծկտած կմխան, ներգաղթի օրվան սպասելով անձկանոք...

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ.— Իրավունք ունեք, ընկերուհի, ահա դրա համար է, որ մենք մեր կարելին անում ենք, որպեսզի նրանց համար էլ բնակարաններ պատրաստենք։

ՄԱՐԻ.— Շատ և շո՛ւտ շինեցեք, ընկեր, որովհետև ժամանակը ամենամեծ թշնամին է անոնց, պետք է շուտ փրկել զանոնք։

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ.— Շատ ազնիվ եք, ընկերուհի, որ ուզում եք ձեր նմանների թարգմանը լինել։ Բայց ինձ (ժամացույցին նայելով) կներեք, որ ժամանակը լրացել է և պետք է մեկնեմ։ Անհոգ եղեք, ընկերուհի, ես ես իմ կողմից կարելին կանեմ ձեր ցանկությունները առավելագույն չափով իրականացնելու համար։

ՄԱՐԻ.— (Հեծկլտախառն ձայնով) Կաղաչե՜մ...

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ.— Մնաք բարո՛վ, ընկերուհի, մնաք բարո՛վ, մայրիկ։

ՄԱՐԻ.— Երթաք բարո՛վ, ընկեր։

ԶԱՐՈՒՀԻ.— (Որ վերի խոսակցության ընթացքին ցավագնորեն մերթ ընդ մերթ գլուխը կերերցներ) *Երթա՞ք բարով, զավակս։* (Ներկայացուցիչը կմեկնի։)

ՄԱՐԻ.— Ա՜խ, մա՛յր, եթե մեր խորհրդային կառավարությունը չըլլար, ի՞նչ պիտի ըլլար արտասահմանում գըտնվող հայության վիճակը։

ԶԱՐՈՒՀԻ.— Ծնողազուրկ որբուկներե տարրերություն չպիտի ունենային անոնք, աղջի՛կս։

ՄԱՐԻ.—Այո՛, ճշմարի՛տ է, մա՛յր։ (Դուռը կրացվի, ներս կմտնե Տիգրան։)

ՏԵՍԻԼ ՁՈՐՐՈՐԴ

ԶԱՐՈՒՀԻ, ՄԱՐԻ, ՏԻԳՐԱՆ

ՏԻԳՐԱՆ.— (Աշխատանքի շապիկով, վիզը բաց և բևերը տոբբված, ձեռքը փոքրիկ վանդակ մը, մեջը թռչնիկ մը, զոր սեղանին վրա դնելով և Մարին գրկելով խանդավառ) *Վերջացա՛վ, Մարի՛, վերջացա՛վ։*

ՄԱՐԻ.— (Ժպտագին) *Ի՞նչ բան...*

ՏԻԳՐԱՆ.— Երկու հազար ութը հարյուր հեկտար տարածությունը, որ տասնհինգ օրվան մեջ պիտի հերկեինք, տասնմեկ օրվան մեջ լրացուցինք, Մարի՛։

ՄԱՐԻ.— Ո՜հ, հիանալի է...

ՏԻԳՐԱՆ.— Տեսնես, Մարի, իմ տրակտորիս հետ միասին ուրիշ ութը տրակտորներ այնպե՛ս արագ կսուրային դաշտերուն վրայեն երգելով, որ այգիներու մեջ աշխատող գյուղացիները սքանչացած մեզ կդիտեին։

ՄԱՐԻ.— Ուրեմն, հիմա ավարտա՞ծ է բոլորովին։

ՏԻԳՐԱՆ.— Այո՛, Մարի, ավարտած է, և վաղը գարնանացանը պիտի սկսինք։ Տեսնե՛ս, Մարի, այնքան լավ հերկված է հողը և այնքան լավ խառնված, որ փափուկ և թարմ ակոսները արևուն տակ փռված սերմերուն կսպասեն անհամբեր։ Բրիգադիրը, որ աշխատանքներուն կհսկեր, բացված կանոնավոր շերտավորումները դիտելով բսավ, որ այս տարի բերքը անցյալ տարվնե շատ ավելի առատ պիտի ըլլա։

ՄԱՐԻ.— Ո՜հ, ի՛նչ երջանկություն։ Ուրեմն, վաղը ցա՞նքը պիտի սկսիք։

ՏԻԳՐԱՆ.—Այո՛, Մարի՛, վաղը արշալույսին պետք է, որ մեկնիմ, և շուտով ամբողջ տարածությունը ցանված կըլլա։ Արդեն ջրանցքներուն մեջ ջուրը խուժած է, ակոսներուն ծածկվելուն կսպասեն, որպեսզի թող տան։

ՄԱՐԻ.— Ուրեմն, այդքան աշխատանքեն ետքը հոգնած ըլլալու ես, Տիգրան։

ՏԻԳՐԱՆ.— Ո՛չ, Մարի, ամենևին հոգնած չեմ զգար ինքզինքս։ Հայրենի հողին վրա աշխատիլը այնպիսի՛ երջանկություն մըն է մարդուս համար, որ ես, որ նախապես գործարաններու մեջ անմիջապես հոգնած կզգայի ինքզինքս, այժմ այնպիսի՛ եռանդով կաշխատիմ, որ հոգնության ինչ ըլլալը մոռցած եմ։

ՄԱՐԻ.— Իրավունք ունիս, Տիգրան։ (Վանդակը նշմարելով) *այս ի՞նչ է, ի՛նչ ալ գեղեցիկ թռչուն է։*

ՏԻԳՐԱՆ.— Այնպես չէ՞, Մարի, Հակոբիկին համար բերի։ Հիմա որ դպրոցեն վերադառնա, որքա՞ն պիտի ուրախանա։

ՄԱՐԻ.— Դասերուն մեջ ալ շատ առաջադեմ է։

ՏԻԳՐԱՆ.— Այո՛, այս նվերը զինքը վարձատրելու համար առի արդեն։ (Վանդակը մոռը ցույց տալով) *կտեսնե՞ս, մայր, Հակոբիկին համար է։*

ԶԱՐՈՒՀԻ.— Շատ աղվոր է, զավակս, ով գիտե որքա՞ն պիտի ուրախանա։

ՏԻԳՐԱՆ.— (Մարիին) *Բայց ո՞ւր է փոքրիկը...*

ՄԱՐԻ.— Ներսը կքնանա։ (Դուռը կրացվի, ներս կմտնե Հակոբիկ։)

ՆՈՒՅՆՔ ԵՎ ՀԱԿՈԲԻԿ

ՀԱԿՈԲԻԿ.— (Դիրքերը ձեռքը ետեւ վազելով) *Հայրի՛կ հայրի՛կ,* (ձեռքի տետրակը բանալով) *այսօր թվաբանությունից և աշխարհագրությունից «գերազանց» եմ ստացել տե՛ս...*

ՏԻԳՐԱՆ.— (Դրկելով և համբուրելով) *Ապրի՛ս, զավա՛կս, շատ ուրախ եմ։ Ես ալ դասերուդ մեջ առաջադեմ ըլլալդ գիտնալով տե՛ս...* (վանդակը ձեռքը բռնած ցույց տալով) *քեզի ինչ առի...*

ՀԱԿՈԲԻԿ.— *Ա՜... թռչուն մը... ինձի համա՞ր առիր ասիկա, հայրիկ։*

ՏԻԳՐԱՆ.— *Այո՛, մանչս, որպեսզի անոր հետ խաղաս։*

ՀԱԿՈԲԻԿ.— (Տրտմագին) *Ո՛չ, հայրիկ, մեղք է թռչունը, ես անոր հետ խաղալ չեմ ուզեր։*

ՏԻԳՐԱՆ.— *Ինչո՞ւ, զավակս, ամեն օր անոր ուտելիք կուտաս, ջուր կուտաս և կզվարճանաս, տե՛ս, ի՛նչ աղվոր է։*

ՀԱԿՈԲԻԿ.— *Ո՛չ, հայր, ոչ, մեղք է թռչունը, թողունք, որ երթա։*

ՏԻԳՐԱՆ.— *Ինչո՞ւ, Հակոբիկ, ես քեզի համար առի, որպեսզի պահես։*

ՀԱԿՈԲԻԿ.— *Ո՛չ, հայր, ես չեմ ուզեր զայն պահել, զրկրոցեն մեզի սորվեցուցին, որ պետք չէ կենդանիները տանջել։*

ՏԻԳՐԱՆ.— *Բայց մենք զայն չենք տանջեր, զավակս։*

ՀԱԿՈԲԻԿ.— *Ինչպե՞ս, անիկա բանտարկված է հիմա, հայրիկ, բան մը չէ բրած, որ զայն այդպես բանտարկած եք։ Եթե քեզի ալ, հայրիկ, առանց բան մը ընելու բանտարկեին, պիտի ուզեի՞ր։ Ետ տուր իր ազատությունը, կաղաչեմ, հայրիկ, տո՛ւր որ զայն արձակեմ, որպեսզի իր փոքրիկներուն քով վերադառնա։*

ՏԻԳՐԱՆ.— (Վանդակը երկարելով) *Ա՛ռ, զավակս։*

ՀԱԿՈԲԻԿ.— (Վանդակը առնելով պատուհանին կմոտենա և արձակելե հետո՝ ուրախությամբ) *Գնա՛ց...* (Մարի հիացած գլուխը կշարժե։)

ՏԻԳՐԱՆ.— *Ապրի՛ս, զավակս, շատ լավ ըրիր, որ արձակեցիր խեղճ կենդանին։*

ՀԱԿՈԲԻԿ.— (Ուրախ) *Հայրի՛կ, այսօր նոր ոտանավոր մը սորվեցա, կուզե՞ս մտիկ ընել...*

ՏԻԳՐԱՆ.— *Անշո՛ւշտ, զավակս, ըսե, որ մտիկ ընենք։*

ՀԱԿՈԲԻԿ.— (Կսկսի արտասանել) *ԲՈՒՔԸ*

Ով է այնտեղ դուրսը ոռնում, երգ է երգում ու լալիս,
Երգ է երգում երկարուձիգ և սանձարձակ պար գալիս.
Գիտեմ, գիտեմ այն խելահեղ բուքն է հանդես կատարում.
Դևերի հետ պար է գալիս լայնածավալ դաշտերում։
Հե՞յ բուք, փրի՛ր, շնչի՛ր ուժգին, սփռիր ճերմակ հաստ սավան,
Ու նրանով ծածկի՛ր համակ անտառ և դաշտ և ավան,
Որքան կուզե շունչդ սաստիկ և ահավոր թող լինի,
Մենք չենք սարսի, մենք հո՛ւր ունենք և՛ հաց ունենք և՛ գինի։
Մենք նորաշեն մի տուն ունենք Արարատի փեշերին,
Տաք է այնտեղ, լույս է այնտեղ, այս ցուրտ ձմեռ գիշերին,
Աշխատանքի տունն է նա մեր, ազատության օրորան,
Ցար ոսոխից սուր ու բահով կպաշպանենք մենք նրան։
Ու մենք կապրենք մեր նոր տան մեջ կուշտ, ժպտերես, անխռով,
Դու չես քանդի, ձյունամրրիկ, մեր տունն ամուր պատերով.
Փչի՛ր, շնչի՛ր, խոր գիշերին, ծածկիր սար-ձոր ու կածան,
Արարատի փեշերի տակ մենք տուն ունենք անկործան։

ՏԻԳՐԱՆ.— (Հակոբիկը գրկելով՝ խանդակաթ) *Այո՛, զավա՜կս, Արարատի փեշերի տակ մենք տուն ունենք անկործա՜ն։*

ԶԱՐՈՒՀԻ.— (Խանդավառված) *Ապրի՛ս, թոռնիկս։*

ՄԱՐԻ.— *Կեցցե՛ս, Հակոբիկ, իմ խելացի մանչուկս։*

ՏԻԳՐԱՆ.— *Հիմա ըսե տեսնեմ, Հակոբիկ, այս գեղեցիկ ոտանավորին համար քեզի աղվոր նվեր մը կուզեմ առնել, ի՞նչ կուզես, որ բերեմ քեզի։*

ՀԱԿՈԲԻԿ.— *Ինձի տուփ մը կարկին առ, հայրիկ, ես կուզեմ ճարտարապետ ըլլալ և շատ շատ տուներ շինել, որպեսզի դուրսը գտնվող հայերն ալ գան և թշվառությունից ազատվեն։*

ՏԻԳՐԱՆ.— *Ապրի՛ս, զավակս, ապրի՛ս, որ այժմեն իսկ*

տառապող ազգակիցներուդ օգտակար ըլլալու մասին կը-մտածես։

(Ներս կմտնեն Սիրանույշ և Նուբար։ Սիրանույշ հագած է զվարթ շրջազգեստ մը, մազերը ազատ սանրված, իսկ Նուբար՝ աշխատանքի հագուստով։)

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ, ՆՈՒԲԱՐ ԵՎ ՍԻՐԱՆՈՒՅՇ

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Ներս մտնելով ժպտագին) *Բարև ձե՛զ...* (Մարիին) *քույրիկ։*

ՄԱՐԻ.— *Օ՜, Սիրանույշ, բարի եկաք։* (Կհամբուրվին։)

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Հակոբիկը համբուրելե վերջ) *Ինչպե՞ս եք, ընկեր Տիգրան։*

ՏԻԳՐԱՆ.— *Ուրախ եմ, Սիրանույշ։* (Ձեռք կսեղմեն։ Զարուհի հրնվագին, ոտքի կանգնած զանոնք կդիմավորե։ Մեջքը գրեթե ուղիղ է։)

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Զարուհիին) *Ինչպե՞ս ես, մայրիկ, քեզի շատ կարոտցանք։*

ԶԱՐՈՒՀԻ.— *Ես ալ ձեզի կարոտցա, զավակս։* (Կհամբուրվին։)

ՆՈՒԲԱՐ.— (Նույնպես բոլորը բարևելե ետք, ուրախությամբ Զարուհիին ուսին զարնելով) *Օ՜, մայրիկ, այս ամեն գալուս քեզի ավելի երիտասարդ կգտնեմ, մեջքիդ ծուռությունը բոլորովին շտկված է։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Այո՛, այո՛, այս որքա՜ն շտկված ես, մա՛յր։*

ԶԱՐՈՒՀԻ.— (Գոհունակությամբ գլուխը շարժելով) *Անշո՛ւշտ, զավակներս, հայրենիքիս օդը, ջուրը այնքան կազդուրիչ է, որ շատ նպաստեց ինձի։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Մարիին) *Մենք ալ մնաք բարովի եկած ենք ձեզի, այսօր մեր արձակուրդը կսկսի և օդափոխության*

ընթացքին, ամիս մը, Սևանի գեղեցկությունները պիտի վայելենք։

ՄԱՐԻ.— *Շատ լավ մտածած եք, Սիրանույշ, Սևանա լիճին եզերքը երթալը։ Մեր ալ արձակուրդը օգոստոսին է. հավանական է, որ մենք ալ հոն երթանք։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Այո, շատ զմայլելի տեսարաններ կան եղեր հոն, լիճին շուրջը։* (Հանկարծ) *ո՞ւր է փոքրիկը, կքնա՞։*

ՄԱՐԻ.— *Այո, ներսը կքնանա։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Գողտրորեն խոժոռելով) *Մե՜ղք... որքան ալ կարոտցեր եմ, կուզեի սիրել, համբուրել։*

ՄԱՐԻ.— *Հոգ չէ, Սիրան, արդեն շատ դժվարությամբ քնացուցի։ Երբ որ վերադառնաք՝ այն ատեն ավելի մեծցած կտեսնես։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Ա՜խ, քույրիկ, ինչ լավ ըրիք, որ անունը Գեղամ դրիք։*

ՏԻԳՐԱՆ.— *Այո... տարաբախտ եղբորս հիշատակին...*

ՆՈՒԲԱՐ.— *Անշո՜ւշտ, մեր կորսված հոգեհատորները պետք է, որ կյանքի վերակոչենք։*

ՏԻԳՐԱՆ.— (Գլուխը երերցնելով) *Ինչպես որ ավերակները հոս կվերաշինվին, նույնպես ալ մեր կորսնցուցած սիրելիները հոս կվերապրին...*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Հանկարծ) *Բայց ո՞ւր է Զվարթը, դեռ չի՞ վերադարձեր դպրոցեն։*

ՄԱՐԻ.— *Առավոտուն կանուխեն մեկնեցավ. պիոներական ջոկատով լեռներու վրա պտույտ պիտի կատարեն այսօր, բայց քիչ հետո կուգան։*

ՆՈՒԲԱՐ.— (Զարուհիին) *Արարատի ձյունափայլ գագաթը կդիտե՞ս երբեմն, մայրիկ։*

ԶԱՐՈՒՀԻ.— *Այո՛, զավա՛կս, ամեն առտու, որ պատուհանները կբանամ, անոր տեսքեն կզմայլիմ։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Պատուհանին մոտենալով և դիտելով զմայլագին) *Օ՜, ի՜նչ հիանալի է... հայության անցյալի փառքերուն, անոր դարավոր տառապանքներուն, իսկ այսօր ալ անոր հոյակապ վերազարթնումին կենդանի վկան, Արա-*

յատը, որ վեհափառորեն բազմած է ձյունե պսակը գլխուն վրա։

(Տիգրան և Նուբար սեղանին մոտ կնստին։ Հակոբիկ իր դասագիրքը բացած է արդեն սեղանին վրա և դասը կսերտե։ Սիրանույշ, Մարի և Ջաուսի ռադիոյին մոտիկ նստած՝ սիրալիր խոսակցության մեջ են։)

ՏԻԳՐԱՆ.— (Ժպտագին) *Ուրեմն, այսպես, Նուբար, Գեղամա լեռներու գագաթը պիտի բարձրանաք, լիճին գեղեցկությունները վայելելու համար։*

ՆՈՒԲԱՐ.— *Այո, Մեսրոպը, որ ինձի հետ կաշխատի, հիանալի պատմություններ կընե Սևանի կյանքեն։*

ՏԻԳՐԱՆ.— *Եվ թարմ ձուկերը պիտի վայելեք։*

ՆՈՒԲԱՐ.— *Այո, բայց դիս հետաքրքրողը ավելի անոր կողերեն բացված ջրվեժներն են, ուրկե ջուրը գոռալով վար կսահի։*

ՏԻԳՐԱՆ.— *Բնականաբար, երբ 1925 մետր բարձրությունեն վար կիջնե։*

ՆՈՒԲԱՐ.— *Հապա ջրվեժին ստորոտը շինված ջրանցքներու այն զմայլելի ցանցը, որոնց միջոցով այդ ջուրերը կբաժանվին հերկված տարածություններու վրա...*

ՏԻԳՐԱՆ.— *Արյան երակներուն նման, որոնք հայրենիքին մարմինը ոռոգելու կծառայեն։*

ՆՈՒԲԱՐ.— *Եվ ի՜նչ հիանալի բուսականություն մըն է, որ զրաված է բոլոր դաշտերն ու պարտեզները, հաստաբերձ դեղձենիներեն մինչև լուբիայի ցողունները։ Այո՛, և այդ պարտեզներուն շրջակայքը դեղնած գարիի հասկերը կանանչ տարածություններու վրա ոսկի կարկատաններու երևույթը կպարգևեն դիտողին։*

ՏԻԳՐԱՆ.— (Հանկարծ՝ ժպտագին) *Մուշեղը ինչպե՞ս է, բավական օր է տեսած չունինք։*

ՆՈՒԲԱՐ.— *Դեռ երեկ դիշեր մեզի էր, ան ալ մեքենադիտական դասընթացքը լրացուց և այժմ վկայականի քննություններուն կպատրաստվի, շատ զբաղված է։*

ՏԻԳՐԱՆ.— *Վա՜յ, Մուշեղ, վա՜յ, որքան ալ փափագ ուներ ուսանելու, վերջապես նպատակին հասավ...* (Պահիկ

մը լուռ ու հանկարծ) *մենք ալ այսօր վերջացուցինք տրակտորային աշխատանքները։*

ՆՈՒԲԱՐ.— *Ինչ շուտ։*

ՏԻԳՐԱՆ.— *Այո, տասնհինգ օրվան աշխատանքը տասնմեկ օրեն ավարտեցինք։*

ՆՈՒԲԱՐ.— *Մե՜ծ հաջողություն։*

ՏԻԳՐԱՆ.— *Վաղն ալ բամբակի ցանքը պիտի սկսինք։ Պետք է շուտով վերջացնենք, ջրանցքները ջուրով ողողված են, ցանված տարածություններուն վրա բաց պիտի թողվին։*

ՆՈՒԲԱՐ.— *Անցյալները, Տիգրան, Մեսրոպը, որ Սարդարաբադի ջրանցքին բացումին ներկա գտնվեր է, շատ հուզիչ եղելություն մը պատմեց։ Անմիջապես, որ ջուրը բաց թողուցին և գոռալով սկսավ վար սահիլ, կըսե, հոն հավաքված բազմությունը՝ մեծեր, երեխաներ, կիներ, բոլորն ալ ուրախ բացականչություններով կսկսին ջրանցքին երկայնքեն ջուրին ընթացքն ի վար վազել։ Հանկարծ հեռվեն կնշմարեն, որ ջրանցքին եղերքը մեկը նստած է և ծունկերն ալ ջրանցքին մեջ երկարած։ Բոլորն ալ կսկսին պոռալ, որպեսզի մարդը ծունկերը վեր քաշե և ջուրեն չթրջվի, բայց ան տեղեն չի շարժիր։ Շարունակ պոռացինք, բայց անօգուտ եղավ. ու երբ մոտը հասանք, տեսանք, որ նստողը Ծերունի կույր մըն էր, ջուրը արդեն եկած հասած էր ու իր ոտքերը թրջելով կսահեր, կանցներ, կըսե Մեսրոպ։ Երբ իրեն կըհարցնեն, թե ինչո՞ւ համար իրենց ձայները լսելով հանդերձ չէր քաշած ծունկերը՝ «Աչքերս կույր ըլլալուն, չպիտի կարենայի տեսնել ջուրին հասնիլը, որով ոտքերս ջրանցքին մեջ կախեցի, որպեսզի հայրենիքիս դաշտերը ոռոգող ջուրին հրճվանքը զգամ հոգիիս մեջ», կպատասխանե ծերունին։ Ու մենք տեսանք, որ, կըսե Մեսրոպ, խեղճ ծերունին ուրախությունեն թե՛ կուլար և թե՛ կխնդար։*

ՏԻԳՐԱՆ.— *Խե՜ղճ ծերունի... ժողովրդի անթեղված հայրենասիրությունն է, որ կբոցավառի անոր ալևոր կուրծքին տակ։*

ՆՈՒԲԱՐ.— *Այո՛, զմայլելի է մեր ժողովուրդին հայրենաշինության համար ցույց տված ջերմեռանդ նվիրումը և աշ-*

խատանքի բոլոր մարզերուն մեջ կատարած խանդավառ առաջադիմությունները։ Ես, որ ինքնաշարժով ըրած փոխադրություններուս ընթացքին շատ ավելի լայն պատեհություններ ունիմ երկրին արդյունաբերական կյանքին և կատարած նվաճումներուն մոտեն ծանոթանալու, հաճախ հիացումով ականատես կըլլամ մեր աշխատավոր եղբայրներուն ըրած հերոսական ճիգերուն։ Ասոր հիանալի մեկ ապացույցը այն է, որ Սևանի վրա երթևեկող նավերուն մեքենական սարքավորումը այսօր ամբողջությամբ հոս կպատրաստվի արդեն, մեր հայ աշխատավորներուն մտքին և մուրճին շնորհիվ։ Ասկե առաջ, մեքենական աշխատանոցին մեջ չորս շարժիչով մոտորներ միայն կպատրաստվեին, իսկ այժմ յոթը շարժիչով մոտորներու շինությունը ընթացիկ աշխատանք դարձած է այստեղ։ Ցեմենտի գործարանը, մանավանդ, համատարած եռուզեռի մեջ է ամեն օր՝ բարձրացող հիմնարկներու և ավարտելու վրա եղող կառուցվի և ուրիշ գործարաններու ցեմենտ հայթայթելու համար։ Դեռ վերջերս, երբ հոն գացած էի ցեմենտի փոխադրության գործով, զմայլելի իրողության մը ականատես եղա։ Երեկո էր և դադարի ժամը մոտալուտ, որով բոլոր գործավորները աշխույժով կաշխատեին ցեմենտի փոխադրությունը ապահովելու համար։ Երբ հանկարծ դադարի զանգակը հնչեց։ Փոխադրության գործը վերջացած չըլլալուն՝ շատեր դժկամությամբ կձգեին իրենց գործերը և մեկնելու կպատրաստվեին։ Հանկարծ զարմանքով նկատեցին, որ տակավին տասը վայրկյան ունեին դադարի համար և թե հսկիչը սխալմամբ կանուխ հնչեցուցած էր զանգակը։ Ընդվզումի բուռն ալիք մը սկսավ բարձրանալ ամեն կողմե։ Բոլորը միաբերան գոռային, կբողոքեին հսկիչին այս զանցառությանը համար, որ հանդգնած էր զիրենք տասը վայրկյան առաջ խլել իրենց աշխատանքեն։ Իսկույն բոլորը մեկ գործի լծվեցան ու տասը վայրկյանը չըրացած՝ փոխադրության գործը ապահովված էր արդեն։

ՏԻԳՐԱՆ.— (Խանդավառված) *Հե՜յ, ձեր հոգուն մատաղ, աշխատանքի հերոսներ։*

ՆՈՒԲԱՐ.— (Ոգևորված շարունակելով) *Պղնձի արդյունաբերությունն ալ մեծ թափով առաջ կընթանա։ Հոն ալ զմայլելի աշխատավորություն մը իր հերոսական առաջադիմություններուն կենդանի ապացույցները կարձանագրե ամեն օր։ Այնպես որ մեր մեծագույն վիպագիրներեն, նկարիչներեն ու քանդակագործներեն մի քանիսը ամիսներե ի վեր հոն՝ պղնձահանքերուն մեջ կմնան, այդտեղի գործավորներուն հետ կողք-կողքի կաշխատին, անոնց աշխատանքի փուլերուն կծանոթանան, անոնց կյանքի պայմանները մոտեն կուսումնասիրեն, որպեսզի անոնց հերոսությանը վրա զգայացունց վեպեր արտադրեն, կտավներ նկարեն կամ քանդակներ կերտեն։ Այո՛, այսօր մեր երկիրը աշխատանքի ազնիվ մրցակցության հոյակապ դաշտի մը վերածված է, ուր մտքի և բազուկի աշխատավորներ զիրար կգերազանցեն, իրենց ստեղծագործություններովը զիրա՛ր կհմայեն, զիրա՛ր կներշնչեն։*

ՏԻԳՐԱՆ.— *Մեր երկրի չքնաղ բնությունն ալ հսկա ներշընչարան մըն է ինքնին, մեր մտածումի և աշխատանքի եղբայրներուն համար։*

ՆՈՒԲԱՐ.— *Իսկապե՛ս, հոս բնությունը հրաշալի՛ է, անզուգակա՛ն է։ Իզուր չէ, որ մեր երգիչները «Երկիր դրախտավայր» կկոչեն մեր հայրենիքը։*

ՏԻԳՐԱՆ.— (Թախծալից) *Ա՜խ, ո՞ւր էր, որ մեր արտասահմանի եղբայրներն ու քույրերն ալ գային և անոնք ալ մեզի հետ հրճվեին, մեզի հետ վայելեին իրենց հայրենիքին գեղեցկությունները։*

ՆՈՒԲԱՐ.— (Տրտմագին) *Այո... խեղճե՜ր... որ իրենց հայրենիքին հրապույրներեն և կատարված նվաճումներու ցնծատոներեն զրկված կապրին օտար հորիզոններու տակ։*

(Այս միջոցին հեռվից Կլսվին փողերու ձայներ, որոնք հետզհետե կմոտենան՝ պիոներական տողանցի մը մոտենալը հայտարարելով։ Սենյակին մեջ գտնվողները դեպի պատուհանը վազելով) *Զվարթը կուգա, Զվարթենց ջոկատն է։* (Ներս կմտնե Զվարթ։)

ՆՈՒՅՆՔ ԵՎ ԶՎԱՐԹ

ԶՎԱՐԹ.— (Հագած է պիոներական շրջազգեստ մը, կարմիր վզկապով. ոտքն ի վար կախված է պղնձե փողը: Ձեռքին մեջ գեղակազմ գիրք մը և հորը ոտքով վազելով) *Հայրի՛կ, հայրի՛կ, նոր գիրք մը ես։* (Սիրանույշին հետ համբուրվելով) *ահագին բազմություն խոնված էր և իրարմե կհափշտակեին, հազիվ կարողացա հատ մը ձեռք գցել։*

ՆՈՒԲԱՐ.— *Բանաստեղծներու և գրագետներու ի՜նչ հիանալի հույլ մըն է, որ սկսած է աճիլ մեր երկրին մեջ։*

ՏԻԳՐԱՆ.— (Գլուխը շարժելով՝ խորհրդավոր) *Ինչպես որ դարերե ի վեր ծարավ տարածություններ ջուրով ողողվելով մրգաստաններու կվերածվին, նույնպես ալ դարերե ի վեր ուսման պապակը ունեցող ժողովուրդին ուղեղը գիրով ողողվելով, մտածումի և ստեղծագործության կորիզներու կվերածվի...*

ԶՎԱՐԹ.— (Հանկարծ՝ խանդավառությամբ) *Ա՜... նայեցե՛ք, Երևանի մասին ի՜նչ հիանալի բանաստեղծություն մը գրված է այստեղ...* (Կկարդա. մյուսները մտիկ կընեն:)

Ինչքա՜ն հույսեր, ինչքա՜ն լույսե՛ր, իմ թանկագին Երևան,
Քո վառ սրտում ինչքա՜ն հույսե՛ր, իմ թանկագին Երևան։
Դու լույս քաղաք, կյանքդ խաղաղ, դու մի չքնա՜ղ մրգաստան,
Քո լի այգում մրգեր ու սե՛ր, իմ թանկագին Երևան։

ՆՈՒԲԱՐ.— (Խանդավառված) *Կեցցե՛ս, Զվարթ, հիանալի՛ է։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Բոցավառ) *Որքա՜ն հարազատ գրություն։*

ԶԱՐՈՒՀԻ.— *Այո, շատ գեղեցիկ է։*

ՄԱՐԻ.— *Եվ որքա՜ն ալ տպավորիչ։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Ոտքի ելլելով և Նուբարին մոտենալով) *Նուբա՛ր, սիրելի՛ս, երթանք։*

ԶԱՐՈՒՀԻ.— *Հոգ չէ, քիչ մը վերջն ալ կերթաք։* (Նուբար և մյուսները ոտքի կելլեն:)

ՄԱՐԻ.— *Կեցեք, միասին ճաշենք և հետո գացեք։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Ո՛չ, շատ շնորհակալ ենք, պետք է որ մեկնինք, հազիվ պայուսակները պատրաստելու ժամանակ ունինք, պետք է, որ երեկոյան շոգեկառքին հասնինք։*

ՄԱՐԻ.— *Մենք ալ գիշերը թատրոն պիտի երթանք։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Այո՛, հիանալի են մեր թատրոնի ներկայացումները։ Մեր փոխարեն ևս ծափահարեցեք։*

ՄԱՐԻ.—(Հրճվագին) *Որեմն այսպես, վաղը Սևանա լիճին եզերքը։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Ուրախ) *Այո և ձեզի միշտ պիտի հիշենք և պիտի գրենք։*

ՄԱՐԻ.— *Այո՛, Սիրան, նամակ որ գրեք՝ մի մոռնաք ձեր հոն քաշված լուսանկարներեն զրկել մեզի։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Անշո՛ւշտ։* (Կհամբուրվին:)

ՏԻԳՐԱՆ.— (Կատակելով) *Սիրա՛ն, առատ-առատ իշխանաձուկ կերեք։*

ԶԱՐՈՒՀԻ.— (Գորովագին) *Ձեզի տեսնեմ, զավակներս, ուրախ-ուրախ վայելեցեք։*

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— *Այո՛, մայրի՛կ, այո՛։* (Կհամբուրվին: Մյուսներեն ալ հրաժեշտ կառնե: Նույնը նաև Նուբար:)

ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Դեպի դուռը առաջանալու միջոցին հանկարծ կանգ առնելով Գեղամի ճկարին առջև և ցավագին նայվածքով մը) *Ո՜ւր ես, Գեղա՛մ,* (ձեռքով) *եկո՜ւր... մենք քո երազած օրե՛րդ կապրինք։ Հիմա իմեկնինք Գեղամա լեռը բարձրանալու համար... եկո՜ւր, եկո՜ւր, ահա մենք կերթանք հոն, լիճին եզերքը անցնելու մեր օդափոխության շրջանը և վայելելու այն բոլոր գեղեցկությունները, որոնց մասին դուն կխոսեիր այնքա՜ն համոզումով և խանդավառությամբ։* (Աչքերը սրբելով) *խե՜ղճ Գեղամ...* (Տիգրան, Մարի, Զարուհի և Նուբար Սիրանույշին ետին կանգնած՝ Գեղամին ճկարը դիտելով՝ տխուր գլուխնին կշարժեն:)

ԶԱՐՈՒՀԻ.— (Աչքերը սրբելով) *Դժբա՜խտ զավակս...*

ՆՈՒԲԱՐ ԵՎ ՍԻՐԱՆՈՒՅՇ.— (Բոլորին) *Մնաք բարո՜վ, մնաք բարո՜վ ձեզ։*

ԱՄԵՆՔՆ ԱԼ.— *Երթաք բարյա՜վ, բարի ճանապարհ...*

(Սիրանույշ և Նուբար կմեկնին: Տիգրան և Զարուհի ի-

ռենց տեղերը կվերադառնան: Մարի, Զվարթ և Հակոբիկ դռան առջև կանգնած ձեռքով հրաժեշտ տալե վերջ, դուռը գոցելով ներս կուգան: Հակոբիկ իր տեղը կնստի:)

ՄԱՐԻ.— Զվա՛րթ, աղջի՛կս, սեղանին վրայեն ծածկոցը վերցուր, որ ճաշենք։

(Զվարթ սեղանին ծածկոցը կվերցնե և ճաշի ներմակ ծածկոցը փռելով, ծաղկամանը վերստին սեղանին մեջտեղը կդնե: Հետո պահարանին մեջեն պնակներ, գավաթներ, պատառաքաղներ, դգալներ և անձեռոցներ բերելով՝ կշարե սեղանին վրա և ներս երթալով կբերե կողովով հաց, պանիր, կարագ և այլն, որոնք սեղանին վրա կկարգադրե: Մարի ալ գինիի շիշը, խնձորներով լեցուն պտղամանը և անուշեղենի պահածո տուփը կշարե սեղանին վրա: Տիգրան, Զվարթին բերած գիրքը թղթատելով զբաղված է: Դռան զանգակը կհնչե: Զվարթ կբանա դուռը: Ներս կմտնե պատանի մը:)

ՊԱՏԱՆԻՆ.— (Առաջանալով՝ Տիգրանին) Բարև՛ ձեզ։

ՏԻԳՐԱՆ.— Բարև՛, մա՛նչս...

ՊԱՏԱՆԻՆ.— Երկու հայեր եկած են արտասահմանից և Մարաֆյանների բնակարանն են փնտրում, հասկացա, որ ձեզ են ուզում տեսնել՝ այստեղ առաջնորդեցի։

ՏԻԳՐԱՆ.— (Շփոթված ոտքի ելլելով) Եվ ի՞նչ է անոնց անունը։

ՊԱՏԱՆԻՆ.— Չգիտեմ։

ՏԻԳՐԱՆ.— Ո՞ւր կգտնվին հիմա։

ՊԱՏԱՆԻՆ.— (Ձեռքով ցույց տալով) Դուրսը սպասում են։

ՏԻԳՐԱՆ.— Լավ, շատ շնորհակալ եմ։ (Եվ դեպի դուռը առաջանալով) *Հրամմեցե՛ք, ներս հրամմեցեք։*

ՊԱՏԱՆԻՆ.— Մնաք բարո՛վ։ (Կմեկնի:)

(Ներս կմտնեն Արմենակ և Արշակ, տխուր, անհանգիստ, երկայն վերարկու հագած, մորուքնին բուսած և ծոմրոտկած գլխարկներով: Տիգրան չէ կրցած ճանչնալ զանոնք և զարմացական նայվածքով կդիտե:)

ՆՈՒՅՆՔ, ԱՐՄԵՆԱԿ ԵՎ ԱՐՇԱԿ

ԱՐՄԵՆԱԿ.— (Ցավագնորեն Տիգրանին նայելով) Չկրցա՞ր ճանչնալ մեզ, Տիգրան...

ՏԻԳՐԱՆ.— (Իր անունը լսելով՝ կցնցվի և ուշադրությամբ քննելե եռք հանկարծ) Արմենա՞կ, Արշա՞կ... (Թևերը կբանա: Արմենակ և Արշակ հեծկլտալով թևերուն մեջ կնետվին: Տիգրան շարունակելով) *Այս ի՞նչ անակնկալ... ե՞րբ հասաք այստեղ։*

ԱՐՇԱԿ.— (Խռովագին) Օտարության մաշեցնող մթնոլորտին մեջ չկարողացա՞նք տոկալ, Տիգրա՞ն...

ԱՐՄԵՆԱԿ.— (Լալահառաչ) Ա՜խ, Տիգրան, օտար և անհամապատասխան ամուսնությունը դժբախտության անդունդնե՞րը գլորեց զիս... Երբ դրամ ունեի և իր քմահաճույքները կգոհացնեի, զիս կսիրեր... բայց երբ խնայողություններս հատան, այլևս չուզե՞ց ճանչնալ զիս... ու հիմա հալածվածի մը պես հայրենիքիս ծոցին մեջ կապաստանիմ...

ԱՐՇԱԿ.— (Ցավագին) Տիգրա՞ն, Տիգրա՞ն, պարասրահներու աղմկալի մթնոլորտին մեջ, խաղասեղաններու շուրջը անցուցած գիշերներս հյուծեցի՞ն, սպառեցի՞ն իմ երիտասարդությունս... Այժմ եկա հայրենիքիս կյանքի աղբյուրներեն նոր կյանք խմելու...

ԱՐՄԵՆԱԿ.— Տիգրա՞ն, Տիգրա՞ն... մենք կուզենք հայրենիքին ծառայելո՞վ մխիթարվիլ...

ՏԻԳՐԱՆ.— (Հուզված՝ գլուխը շարժելով) Այո՛... հայրենիքը կյանքի և մխիթարության անհատնում աղբյո՛ւր մըն է բոլո՞ր շվարածներուն, բոլո՞ր հալածվածներուն, բոլո՞ր դժբախտներուն համար...

ՄԱՐԻ.— (Երկու պնակ ևս ավելցնելով սեղանին վրա) Տիգրա՛ն, ճաշը պատրաստ է, հրամմեցեք։ (Ներս կերթա կերակուրը բերելու:)

ՏԻԳՐԱՆ.— Հրամմեցե՛ք, միատին պիտի ճաշենք։ (Սեղանին մոտ կնստի: Արշակ և Արմենակ ալ գլխարկնին հանելով կնստին սեղանին շուրջը:)

ՋԱՐՈՒՀԻ.— (Սեղանին մոտ նստելով՝ Արշակին և Արմենակին) *Բարի եկեր եք, զավակներս...*

ԱՐՇԱԿ ԵՎ ԱՐՄԵՆԱԿ.— *Բարի տեսանք, մայրի՛կ։*

ՋՎԱՐԹ.— (Ջարունիին մոտ նստելով) *Բարի եկած եք։*

ՄԱՐԻ.— (Ներսեն կրեն սանով կերակուրը և շերեփով կսկսի պնակներուն մեջ լցնել, հետո թիկնաթոռը մոտեցնելով) *Բարի եկած եք։* (Նստելով՝ գավաթներուն մեջ գինի կլեցնե, և կսկսին ճաշել։)

ԱՐՄԵՆԱԿ.— *Ներե՛, Տիգրան եղբայր, ներե՛, որ մենք քո խրատներուդ դեմ շարժելով այնքա՜ն ցավցուցած ենք քեզ։*

ԱՐՇԱԿ.— *Կներես, Տիգրան, որ քեզ շա՜տ վշտացուցած ենք մենք...*

ՏԻԳՐԱՆ.— *Է՜, կարևորություն չունի... Այդ բոլորը մոռայլ անցյալին կպատկանի այլևս, որ չարաշուք գերեզմանի նման փակված է մեզ համար... Այժմ մենք լուսավոր ներկան կապրինք և պետք է փառահեղ ապագայի մասին մտածենք։* (Գավաթը վերցնելով և անոնց գավաթներուն զարնելով) *օ՛ն, ուրեմն, խմե՜նք մեր երկրի Արարատյան գինիեն. բարի եկեր եք, հազա՜ր բարով։* (Մյուսներն ալ գավաթները վեր բարձրացնելով) *Բարի տեսանք, Տիգրան, բարի տեսանք։* (Տիգրան շարունակելով) *Խմե՜նք սիրեցյալ հայրենիքին կենացը։*

ԱՐՄԵՆԱԿ ԵՎ ԱՐՇԱԿ.— *Կեցցե՛ մեր վերաշինվող խորհրդային հայրենիքը։* (Գավաթները կպարպվին, Մարի վերստին կլեցնե զանոնք։)

ՏԻԳՐԱՆ.— *Գոնե հանգստությամբ կարողացա՞ք ճամփորդել։*

ԱՐՄԵՆԱԿ.— (Տրտմագին) *Նյութական միջոցներ չունենալնուս՝ շատ դժվարություն կրեցինք, մինչև որ Բուլղարիա հասանք և Վառնայեն՝ շոգենավի մեջ գործավոր արձանագրվելով՝ կարողացանք հոս հասնիլ։*

ՏԻԳՐԱՆ.— (Խուր գլուխը շարժելե հետո) *Ինչպե՞ս է այնտեղի մեր եղբայրներուն վիճակը...*

ԱՐՇԱԿ.— *Բոլո՞րն ալ, Տիգրան, դժվարին կացության մատնված՝ «Հայրենի՞ք» կաղաղակեն, ներգաղթի փրկարար օրվա՛ն կսպասեն անհամբեր...*

ԱՐՄԵՆԱԿ.— *Պետք է փրկե՞լ զանոնք, Տիգրան, պետք է հայրենիքին մեջ ամփոփել մեր դժբախտ աղգակիցները, որոնք, ավա՜ղ, գործազրկության, թշվառության ճիրաններուն մեջ դեռ կտվայտի՜ն...*

ՏԻԳՐԱՆ.— (Ընկճված) *Այո, իրավունք ունիք...* (Հանկարծ խրոխտ) *այժմ, որ ներգաղթի հրատապ հարցը դրվա՛ծ է հայ ժողովրդի առաջ, և այժմ, որ մեր հայրենիքին մեջ կյանքը կեռա, ավերակներեն նոր ավաններ կբարձրանան, տրակտորները կճռնչեն, էլեկտրական հոսանները կգոռան, պիոներուհիներ Արագածի բարձունքեն հայուն առավոտը կհնչեցնեն, գործարաններու ծխանները իբրև վիթխարի փողեր հայ ստեղծագործ հանճարը կպանծացնեն՝ ամեն հայ իր հայրենասիրության մեջ ցնցելով, զանգվածային ներգաղթը շուտով պիտի սկսի ա՛նպայման... Ու այն ատեն, մենք բոլորս ալ, գրկաբաց, երգելով, պիտի երթանք դիմավորել հայրենադարձ քարավանները, մեր հոգեհատորներուն հայրենիք վերադարձը շնորհավորելով։* (Գավաթը բարձրացնելով և դեպի Լենինի նկարը) *խմե՜նք, ուրեմն, մեր բարգավաճող խորհրդային հայրենիքին, անոր իմաստուն ղեկավարներուն և անոր ստեղծագործ ժողովրդին, ինչպես նաև արտասահմանի մեր հայրենակարոտ եղբայրներուն և քույրերուն շուտափույթ վերադարձին կենացը։*

Կեցցե՜ մեր վերաշինվող հայրենիքը, որ վեհաթռիչ կսավառնի առաջադիմության ճամփուն վերև, և կեցցե՜ ներգաղթը...

ԲՈԼՈՐԸ ՄԻԱՍԻՆ.— (Գավաթները բարձրացնելով) *Կեցցե՛ ներգաղթը...* (Գավաթները կպարպվին։)

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գառնիկ Սվազլյան (1904—1948 թթ.)— Ա. Թադեոսյան . . 3

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ո՞ր օրվան կսպասենք 9
Անցյալն դեպի ապագան 12
Չեզի՛, ալեբանդրիացիներ, ոտքի՛, առնական կեցվածքով . . 16
Մենք, բանաարկյալներս 20
Բաց նամակ «Հուսարեր»-ի խմբագրության 26
Շիթ մը արցունք 27
Պետք է զարնել նշտարակը 31
Պոռթկացե՛ք, հայ զգացումներ 36
Արթնցող շարքայինները մոլորեցնելու համար դաշնակ շեֆերու նոր
խարախապացությունը 39
Վիրանտեն կվերադառնամ 42
Հայրենադարձը Սիրիա—Լիբանանեն 49
Սփյուռքահայությունը և ներգաղթը 62
Արթնցիր, Շուշանիկ, Նոյեմբեր 29 է այսօր 65
Նոյեմբեր 29-ին 67
Ներգաղթի իմաստն ու արժեքը 70
Ճառ արտասանած Բաթումիի նավահանգստում 78
Ողջույն սովետական հաղթական բանակին 79
Սովետական Հայրենիքում բժշկությունը ձրի է, իսկ Ամերիկայո՞ւմ 82
Դաշնակների սուր պրովոկացիաները ուղղված ներգաղթի դեմ . 87

ԵՐԳԻՄԱՆՔ

Նոր կուռնելիականք

Կուռնելիոսի դասը 95
Կուռնելիոս և «եռագույն»-ը 99
Տեսակցություն մը Կուռնելիոսի հետ Հայաստանի մասին . . 103
Կուռնելիոս և թվարկությունը 108
Մաղրանկարներ 114
Ներգաղթը 123

Գառնիկ Մարկոսի Սվազլյան

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԱՄԱՐ

Խմբագիր՝ Ս. Կ. Խաչատրյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Ա. Խուդիկյան
Տեխ. խմբագիր՝ Ե. Ա. Ախիրյան
Վերստ. սրբագրիչ՝ Ջ. Կ. Աղասյան,
Ա. Ս. Միրզոյան

ՎՖ 10020 *Գատվեր՝ 1978* *Տիրաժ՝ 3000*

Հանձնված է արտադրության 8/XI 1964 թ.։
Ստորագրված է տպագրության 17/VIII 1965 թ.։
Թուղթ՝ 84×108 1/32։ Տպագր. 13,25 մամ., = 10,86 պայմ. մամ.,
հրատ. 8,8 մամ.+1 ներդիր։
Գինը 46 կ.։

ՀՍՍՌ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի
պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության
Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան փ. 91։